



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Mr. Ushwamitray  
Digitized by srujanika@gmail.com  
A - I  
U.T. 1904

891.99

Q - 42

774

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

3666

ՃՈՂՈՎԱՆՈՒ

ԵՐԿԵՐԻ

ՀԱՅՈՒ ԱԴԱԶԻՆ

(պատկերներ)

Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀՀՀՀՀՀՀՀ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՀՈՒ

1904

891.99

Q-42

Ա. Ա. Հ. Պ. Ո Ւ Ն Ե Պ Ե.

07 JUN 2005

6 DEC 2010

# ԺՈՂՈՎԱՆՈՒ ԵՐԿԵՐԻ

ՀԱՅՈՐ Ա. ԽԱԶԻԿԻՆ

(պատկերներ)

Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՔԻՆ

ԳՐԱԸ



Ա. ՊԵՏԵՐԲՈՂԻԴ  
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»

1904

5.02.2013

18.264

„ՊՈՒՏ-ԸՄ ԿԱՌ“

Петербургъ, 20-го Июня 1904 года.

Աշնան սկիզբն էր, մի պարզ, լուսնկայ գիշեր։ Սուրմալուի գաւառում տարուայ այդ ժամանակ գիշերները բաւական ցուրտ է լինում։ Իզուր չէ գիւղացին ասում. «Սատուածածնին իշխ'ր բակը, Սուրբ Խաչն արա՛, մտի՛ր ծակը»։

Բ... գիւղում այնքան ցուրտ էր արդէն, որ զրառում քնած մի մարդ էլ չը կար։ Նեղ, ծուռու ձուռ փողոցներում երթևեկութիւնը դադարել էր։ Այս ու այն դրան մօտ, կտուրի վրա, դէզերի ծայրին գամփոները գլուխն ու մոռթը ահազին թաթերի վրա դրած շնթռկել, նստել էին, սպասելով կասկածաւոր ստուերի կամ ուշացած անցուորականի, որ վրա վազեն։ Սրթուն էին և բօստանցիները և դեռ չը բաղան ալդիների պահապանները, որոնք իրանց ողորմելի չարդախների վրա կուչ եկած, չուած աչքերով տշխատում էին որոշել մի հեռաւոր կասկածելի առարկայ, որ գողի

3629-2002



Скоропечатня, Лештуковъ, 4.

նմանութիւն ունենար: Երբեմն նրանք, իրանց ներկայութիւնը և զգաստութիւնը ցոյց տալու համար, կամ գուցէ և վախից, «հայ-հով» էին կանչում: Եւ ամեն տնդամ, երբ դաշտից գալիս էր այդ ժայնը, գիւղի շները հաջոց ու ունոց էին բարձրացնում: Եւ ապա, մի կարճ միջոցից յետոյ, գարձեալ համատարած լռութիւն էր ալիրում:

Կէս զիշերը մօտ էր, օդն աւելի և աւելի ցրտանում էր:

Այդ ժամին արթուն էր միայն մի ընտանիք, երեք հոգուց բաղկացած: Դրանք Բ... զիւղցի չէին, այլ գաղթականներ, որոնք նոյն օրն էին հասել այդ կողմերը: Խոկապէս գաղթական անուանել էլ չէր կարելի: Գաղթական ասելով հասկանում ենք մի այնպիսի վիճակ, երբ հեռուից եկողներն ունեն գոնէ մի պարկ, մի փալաս, հագած են գոնէ մի պատառուած վերարկու, ծակծկուած տրեխներ: Բայց սրանք բոլորովին զուրկ էին այս ամենից: Սրանք մերկ էին, այս բառի բուն նշանակութեամբ, եթէ զգեստ չը համարենք շորերի այն ծուէնները, որոնք կախկախուած էին նրանց վտիտ ծարմինների վրա, անկարող լինելով ծածկել նրանց մերկութիւնը: Դուք տեսել էր գալիք բերանից զօրով խլած դառը, առանց դմակի, հիւանդ, արխւնու և կիսա-

մեռ... Այդպէս էին այդ գաղթականնները, գեռեղմաններից զուրս քաշած դիակներ և ոչ կենդանի մարդիկ:

Նրանց բնակարանն է մի մարագ՝ ծուռ, ոլորուած պատերով, որոնցից մէկը փլել է, թուլ տալով, որ լուսնի լոյսը ներս թափանցի: Բորբոսնած դարմանը, որ կապած է խոնաւ պատերին, մի անախորժ հոտ է տարածել. փլած պատերի կողմը գերանները քաշ են ընկել և ամեն մի ըստի սպառնում են վայր թափուել: Առաստաղից քաշ ընկած սարդի սատալններ՝ դարմանի հետ խճճուած՝ մի զզուելի ծածկոցով պատել են որմերը և գերանները: Եւ երեք խեղները ողորմութիւն ստացած, այս անկիւնը իրանց պատսպարան են համարում: Գոնէ լուսինը իր պաղ արծաթի շիթերի ցնցուղներով արար աշխարհի հետ լուսաւորում է այս մարագի ներսն էլ և այնտեղ ծուարածները տեսնում են միմեանց դէմքերը...

Խոնաւ ու բորբոսնած լատակի վրա զրգգուած ցնցուտինների մէջ նստած է մի միջահասակ կին, վլուխը կրծքին կախած: Դէմքի վրա միս չը կալ. ամեն ինչ—լոգնածութիւն, սարսափ, վիշտ, հիւանդութիւն նկարուած է այդտեղ: Նրա չորացած, կիսամերկ ծնկների վրա հոգեվարքի մէջ պառկած է 4—5 տարե-

կան մի երեխայ, նոյնպէս մաշուած, նոյնպէս կիսամերկ: Մահն արդէն կնիքը դրել է նրա վրա: Սրանց կողքին, ձեռքերը թևերի տակ դրած՝ մնկների վրա ընկած է մի տղամարդ, որ ուշադիր, անթարթ աչքերով դիտում է երեխայի դէմքը, հետեւում է նրա հետզհետէ նուազող շնչառութեանը, երբեմն խոր հառաչանքի հետ տրորելով մնկները: Քաղցր է, ի հարկէ, զաւակը ծնողների համար: Մի օր նա կը մեծանայ, իրանց սև օրերի նեցուկը, պահապան հրեշտակը կը գառնայ. և այն ժամանակ կը մոռացուեն դառն հոգսերը, անցուն անցկացրած գիշերները: Բայց որչափ թանկ է այն զաւակը, որի կեանքը փրկելու համար անբաղդ ծնողը ստիպուած է եղել իբրև մի անդին բեռ վերցնել նրան իր ուսերի վրա և փախչել հարիւրաւոր վերստեր, ծորեր կարել, լեռներ բարձրանալ, ահաւոր ալրերում գիշերեւ: Այսպէս էր այդ փոքրիկը Բ... զիւզը հասել:

Գիշերուայ սառն հովը վլած պատի բացուածքից առատ հոսանքով վիզում է դէպի այս մարագի ներսը: Ցուրտ է, մրսում են խեղճերը: Մայրն աշխատում է իր հագի ծուէններով ձաձկել հիւանդ և մերկ մանուկի վտիտ մարմինը. երեկի նա էլ մրսում է, գուցէ կարելի լինի զրանով տաքացնել նրա

հետզհետէ սառչող արիւնը... Բայց իղուր. ծուէնները իրար վրա չը հաւաքուեցին, և խեղճը յուսահատուած, ամբողջ մարմնով կռացաւ երեխայի վրա, յուսալով քամու առաջն այսպիսով փակել: Հալրը, որ մինչեւ այդ ժամանակ ապուշ կտրած աչքերով դիտում էր այդ բոլորը, յանկարծ ուշքի եկաւ, հանեց իր վրայից զզզզուած միակ արխալուղը և զցեց երեխայի վրայ, իսկ ինքը մնաց համարեա մերկ, որովհետեւ կեղտոտ շորի այն կտրը, որը որպէս թէ նրա շապիկն էր, ծածկում էր խեղճի միայն մէջը, բաց թողնելով մազոտ կուրքն ու թևերը: Իսկ երբ քամին շարժում էր մէջը այդ շորը, այն ժամանակ թշուառը ամբողջապէս մերկանում էր: Անսահման վիշտը բթացը էր մրսելու զգացողութիւնը:

Լուռ էին.

— Մարէ՛, պուտ-ըմ կաթ, յանկարծ կոչեց երեխան, լայն բանալով աչքերը, որոնք կրկին փակուեցին:

Մարդ ու կին իրար երես նայեցին ակամայ և երկուսի աչքերն էլ լցուեցին արտասուքով:

— Եաման մարդ, — ասաց կինը, — էլի էսա տան գուռ զարկ, խայ բրիստոնեայ են, պուտըմ կաթ ուզի՞ր, ասա խիւրնտի խըմար ի, մի թորդ իմ ճիժ թամարզու մեռնի:

— Վախ, վախ կնիկ, ես ինչող էնիմ, ես դոր էրթամ, կես գիշեր ի, զըմմէն քնուկ են, ընծի վով դուռ կը բանայ:

Կրկին տիրեց լոռւթիւն, միայն ճպուռոր պատի ճեղքից ծղրտացնում էր, և մուկը մի ինչ որ խոռոչում կրծում էր իր պաշարը մի անախորժ խոռոց հանելով. իսկ մրսեցնող քամին փչում էր ու փչում, թեթև ոլսլոց առաջացնելով առաստաղից կախկախուած եղէների և սարդի ոստայների մէջ,

— Պուտ-ըմ կաթ, նորից կանչեց երեխան, կրկին բաց արեց աչքերը, մի վայրկեան յառեց մօր երեսին և էլի փակեց:

Մի անդամ էլ մարդ ու կին արտասուալից աչքերով միմեանց նայեցին: Մարդն այս անգամ ոչինչ չասաց, չորացած ձեռքերով սրբեց այտերի վրա կախուած արտասուքի երկու խոշոր կաթիլները, «վախ, վախ» կանչեց, վեր կացաւ տեղից, վերցրեց պատի մօտ դրած իր մահակը, իր միակ զէնքը, վերցրեց և այն խեցար, որ ծառալում էր նրանց իրրե չուր խմելու աման: Այդպէս նա դուրս թռաւ մարադի փլած պատից: Նա զլիսաբաց էր:

Ո՞ւր գնալ: Լուսինը իր պաղ ճառագայթներով ողողել էր ամբողջ գիւղը: Բայց կայ մէկը, որ նրան հասկանայ: Մի բոպէ նա մո-

ռայաւ թէ ինչու է ալդտեղ կանգնած: Վերացաւ այս աշխարհից, տարուեց այնտեղ, ուր նրա տունն էր, նրա արտերը: Տեսաւ նա իր պստիկ Մարտօին, կարմրաթուշ նազօին... Դրանց դիակները մնացին այնտեղ...

— Պուտ-ըմ կաթ, կրկին հնչուեց նրա ականջին:

Նա ցնցուեց. պէտք էր կաթ ճարել: Նա շարժուեց դէպի առաջին տունը, ուր ապրում էր մի պառաւ ալրի կին: Նա կանգ առաւ դռան մօտ, մտածում էր՝ արդեօք խփի՞, թէ ոչ: Իսկ եթէ գուրս գան, հայնոյանք-ներով ճանապարհ դնե՞ն իրան... Զէ՞ որ նա մի տկոր զարիք է:

— Պուտ-ըմ կաթ...

Այս ձայնը նրա ականջի մէջ է: Դա նրա երեխայի օրհասական վերջին ցանկութիւնն է: Նա մոռացաւ երկիւղ, ամօթ: Մահակը նրա ձեռքում բարձրացաւ և մի ահազին հարուածով իշաւ զրան վրա: Դուռը ահաւոր դպրդոց հանեց, և շների ընդհանուր հաջոց բարձրացաւ: Դարձեալ հարուած, կրկին ճորնոց: Վերջապէս բակում յայտնուեց պառաւը:

— Ո՞վ է, ծայն տուեց նա:

— Ես եմ, մարէ, — պատասխան եղաւ զրսից: — Խայ քրիստոնեայ եմ, գաղթական.. դուռը բաց:

— Վախ, վախ կնիկ, ես ինչդ էնիմ, ես դոք  
էրթամ, կէս զիշեր ի, զըմմէն քնուկ են, ընծի  
վով գուռու կը բանայ:

Կրկին տիրեց լոռութիւն, միայն ճպուռը  
պատի ճեղքից ծղրտացնում էր, և մուկը  
մի ինչ որ խոռոչում կրծում էր իր պաշարը  
մի անախորժ խոռոց հանելով. իսկ մրսեցնող  
քամին փչում էր ու փչում, թէթև ոլսոց  
առաջացնելով առաստաղից կախկախուած  
եղէզների և սարդի ոստայնների մէջ,

— Պուտ-ըմ կաթ, նորից կանչեց երեխան,  
կրկին բաց արեց աչքերը, մի վայրկեան յա-  
ռեց մօր երեխին և էլի փակեց:

Մի անգամ էլ մարդ ու կին արտասուա-  
լից աչքերով միմեանց նայեցին: Մարդն այս  
անգամ ոչինչ չասաց, չորացած ձեռքերով սրբ-  
րեց այտերի վրա կախուած արտասուքի  
երկու խոշոր կաթիլները, «վախ, վախ» կան-  
չեց, վեր կացաւ տեղից, վերցրեց պատի մօտ  
դրած իր մահակը, իր միակ զէնքը, վերցրեց  
և այն խեցատը, որ մառալում էր նրանց  
իրրե չուր խմելու աման: Այդպէս նա դուրս  
թռաւ մարադի փլած պատից: Նա զլխա-  
բաց էր:

Ուր զնալ: Լուսինը իր պաղ ճառագալթ-  
ներով ողողել էր ամբողչ զիւղը: Բայց կա՞  
մէկը, որ նրան հասկանայ: Մի բոպէ նա մո-

ռացաւ թէ ինչու է ալդտեղ կանգնած: Վե-  
րացաւ այս աշխարհից, տարուեց այնտեղ, ուր  
նրա տունն էր, նրա արտերը: Ծեսաւ նա իր  
պստիկ Մարտօին, կարմրաթուշ նազօին...  
Դրանց զիակները մնացին այնտեղ...

— Պուտ-ըմ կաթ, կրկին հնչուեց նրա ա-  
կանջին:

Նա ցնցուեց. պէտք էր կաթ ճարել: Նա  
շարժուեց դէպի առաջին տունը, ուր ապ-  
րում էր մի պառաւ ալրի կին: Նա կանդ  
առաւ դռան մօտ, մտածում էր՝ արդեօք  
խփի՞, թէ ոչ: Իսկ եթէ դուրս դան, հայեռանք-  
ներով ճանապարհ դնե՞ն իրան... Զէ՞ որ նա  
մի տկոր դարիք է:

— Պուտ-ըմ կաթ...

Այս ձայնը նրա ականջի մէջ է: Դա նրա  
երեխալի օրհասական վերջին ցանկութիւնն  
է: Նա մոռացաւ երկիւդ, ամօթ: Մահակը  
նրա ձեռքում բարձրացաւ և մի ահազին  
հարուածով իշաւ զրան վրա: Դուռը ահաւոր  
դղրդոց հանեց, և շների ընդհանուր հաջոց  
բարձրացաւ: Դարձեալ հարուած, կրկին ժորն-  
չոց: Վերշապէս բակում յայտնուեց պառաւը:

— Ո՞վ է, ծայն տուեց նա:

— Ես, մարէ, — պատասխան եղաւ  
դրսից. — Խայ! Քըիստոնեալ եմ, գաղթական..  
դուռը բաց:

Պառաւը բաց արեց դուռը, և տեսնելով  
զիխաբաց ու մերկ մարդուն առաջը կանգնած,  
սարսափեց ու զարհուրելի նիչ արձակելով,  
փախաւ տուն, դուռը յետեից փակելով։

Նոր միայն խեղճ մարդը նկատեց իր մեր-  
կութիւնը, իր սարսափելի տեսքը։ Նրա  
մարմնով մի սարսուռ անցաւ, մի՞թէ այժմ  
ցուրտն ազգեց։ Մի կարճ ժամանակ նա մնաց  
քարացած կանգնած, բայց յանկարծ ուշըի  
եկաւ, և վախենալով՝ որ մի դուցէ ազմուկի  
վրա մարդիկ հաւաքուեն և իրան դողի աեղ  
ընդունեն, նա սկսեց փախչել դէպի մի  
ուրիշ կողմ։ Սոսկալի էր նրա դրութիւնը։  
Քամին ծածանում էր նրա թիկունքի վրա  
ընկած շորի կտորը և դիզացած մազերը։ չորս  
կողմից վրա յարձակուեցին շները և շրջա-  
պատեցին նրան։ Նա հազիւ էր կարողա-  
նում մահակով պաշտպանել իր մերկ մարմի-  
նը կատաղի գաղաներից։ Մէջքը դէմ տալով  
մի պատի, նա կանդ առաւ և շարունակելով  
պաշտպանուել շներից, առանց այլ ևս երկար  
մտածելու ծեծեց մի դուռ։ Մի տղամարդ  
դուրս եկաւ, բաց արեց դուռը։

— Եաման ախպէր, քեզի մեռնիմ, խայ  
քրիստոնեալ եմ, և երկրի մարդ եմ, էրէխայ  
մը ունիմ, հողեվարքի մէջ է, պուտ-ըմ կաթ  
կուզի։ մէկ նար արա քո էրէխու սադաղէն,

Աածնւ սիրուն... Խէրու էսօր իրեք խարիր  
օչխար թասլիմ էրի իմ չօբընին, մրկայ իմ  
ճիժ պուտ-ըմ կաթ ուղելով կը մեռնի։

Աղաչանքը սրտաշարժ էր, տեսարանը յու-  
ղիչ Գիւղացին բերեց կաթը, ածեց նրա խե-  
ցատի մէջ և նանապարհ դրեց։

Նա շտապեց դէպի մարագը, աչքի լոյսի  
պէս տանելով այն չնչին հեղուկը, որ այնքան  
դժուարութեամբ էր ձեռք բերել։ Նա առաջ  
էր սլանում, գործ զնելով իր թուլացած ոտ-  
ների վերջին ոյժը։ Բայց դեռ տեղ չէր հասել,  
երբ մի սրտամորմոք ծայն լսեց գիշերային  
լուսութեան մէջ։

— Եաման լաօ, եաման լաօ...

Նա ցնցուեց ամբողչ մարմնով։ Այլ ևս կաս-  
կած չը կար, որ թշուառութիւնը սարսափելի  
հարուածը իշեցրել էր... Նա աւելի արադա-  
ցրեց իր քալիկը, և ահա մարագի դրանն է...»

— Եաման լաօ, եաման լաօ, գոչում էր  
կինը՝ մազերը փետելով։

Նրա գրկում պառկած էր յաւիտենական  
խաղաղ քնով այն փոքրիկ արարածը, որ այն-  
քան քիչ ապրեց այս անիրաւ աշխարհում,  
բայց այնքան շատ տեսաւ, շատ կրեց, շատ  
տանջուեց։

Թշուառ հայրը կանգ առաւ մարագի դրա-  
նը, անհուն վշտով նայեց չարաբախտ կնոջը

և մեռած երեխային։ Զեռքը դողաց, խեցատը  
վայր ընկաւ ծեռքից և սպիտակ հեղուկը  
թափուեց խոնաւ, բորբոսնած յատակի վրա։  
Նա դէն շպրտեց իր մահակը, ընկաւ անշնչա-  
ցած դիակի վրա և ծի այնպիսի աղաղակ  
արծակեց, որից ամենասրտոտ մարդն անգամ  
կը դողար։ Կուտակուած զայրովթի և յուսա-  
հատութեան պոռթկումն էր դա, որ որոտազին  
դուրս թռաւ վշտերով լի կրծքից։

Իսկ լուսինը՝ շարունակում էր պայծառ  
փայլել և լուսաւորել թշուառութեան այդ  
զաւակներին։

Է՞հ, ինչե՞ր չի լուսաւորել նա...

1896 թ.

„ՓԱԼԱԳ ՎՈՒՐԴՈՒԽԻՆԻ“ \*)

Գեղեցիկ է Բարթողեան լեռնաշղթան։ Ալէ-  
զարդ Մասիսի փէշերից կախուած են ալդ  
լեռները, որպէս անհոգ, ծիծաղկոտ մանուկ-  
ների մի ահազին խումբ, որոնք բռնել են ի-  
րանց պառաւ ու հսկալ մօր փէշերից, պատ-  
րաստուելով մի մանկական զուարժալի պար  
սարքել։ Բայց ծերունի մօր սառն անտարբե-  
րութիւնը, մռայլ ու ահաւոր տեսքը կարծես  
բեեռել է նրանց իրանց տեղերում և խեղճե-  
րը կոտրուած, ընկնուած նրա սառցային  
հայեացըի ճնշող ոլժի տակ, քարացել են  
մնացել իրանց մի անգամ բռնած դիրքի մէջ,  
մէկը միւսի պոչից բռնած, մէկը միւսի ուսին  
կոթնած, թեերին բարձրացած, սպասելով  
դաժան մօր բարեհան, քաշալերող ժպտին,  
որ մէկէն ի մէկ շարժուեն, ցատկեն և պար

\*) «Ձաւադ վաւրդունի» նշանակում է բախտի դառն հա-  
րուածին ենթարկուած մարդ։

գան: Բայց անցնում են տարիներ և դարեր, նրանք մնում են մի և նոյն դիրքի մէջ, իսկ մայրը, ալէզարդ դլուխն ու ճակատը դէմ տուած երկնքի շանթ ու կայժակներին, շարունակում է պահպանել խորհրդաւոր լոռութիւն: Ե՞րբ պէտք է ժպտալ...

Զմեռը, երբ Մասիսը իր մարմնի բիւրաւոր խոցերն և ուռուցքները ծածկում է ձիւնի սպիտակ սաւանով, Բարթողեան լեռների ալիքաւոր և գեղանկար բարձրութիւնները, հետեւելով իրանց զառամեալ մօղը, նոյնպէս ծածկւում են ձիւնի հաստ շերտով: Բարդ բարդ իրար վրա անկանոն ծեռվ դիզուած ձերմակ ամպերի մի շարք են ներկայացնում նրանք, կամ յօդնած ուղտերի մի ահազին կարաւան, որ երկար ճանապարհից յետոյ հանգիստ է առնում: Բազմաթիւ կիրճեր և արահետներ կան այդ շղթայի զանազան տեղերում, որոնցով տարուայ միւս ժամանակներում երթևեկում են մենաւոր ճանապարհորդները, բազմաթիւ աւազակներ և մաքսանենդ մարդիկ: Բայց ձիւնի հաստ ծածկոցը լցնում է այդ բոլոր կիրճերն ու շաւիզները և կազմում է մի դաւաճան, կորսուաբեր հարթութիւն, որ ամեն բոպէ իր տակ կարող է բանալ ահաւոր անդունդներ, անսպասելի խոռոչներ, և կուլ տալ այն յանկուդն ճանապար-

հորդին, որ սիրտ է արել մէն մենակ ձմեռ ժամանակ կտրել, անցնել այս լեռնաշղթան:

Սոսկալի է ձմեռն այդ լեռներում: Քանի քանի թշուառներ են իրանց դլուխը մատաղ տուել նրա մթին խորխորատներում, քանիսին բուքն է խեղդել կամ ցրտատառ արել, քանիսն են խորասուզուել ձիւնապատ վիճերի մէջ և իրանց սառը գերեզմանը գտել ձիւների կոյտերի տակ: Իսկ աւազակների զնդակներով տապալուածները: Ահա թէ ինչու՝ տարուայ այդ ժամանակում ոչ ոք սիրտ չի անում երեալ այդ զաժան վայրերում, ոչ ոք չի կամենում կեանքը վտանգի ենթարկել, անցնել այդ շղթան: Ոչ մի կենդանի շունչ չի խանդարում այդ զարհուրելի տեղերի սպանիչ խաղաղութիւնը, բացի սոված, թափառական գալերից, որոնք իրանց ոռնոցը խառնում են բբարեր քամիների վզվոցին:

Ահա Սինակայ սարերը, գագաթից մինչեւ փէշերը նրանք ծածկուած են ձիւնի հաստ շերտով: Սինակայ սարեր... Բարթողեան լեռնաշղթայի մէջ ամառ ժամանակ գեղահրաշ դրախտ են ներկայացնում սրանք իրանց հարուստ բուսականութեամբ և հազարաւոր կաթնահամ աղբիւրներով, որոնք կազմում են սքանչելի վտակներ ծաղկաւէտ հովիտներում: Իսկ այժմ... ձմեռնամուտի արեգակը մօտ է

մայր մտնելու և նրա վերջին ճառագայթները երկուս, անվստահ կերպով զարկուելով ճերմակ ձիւնի սառուց կտրած մակերեսիթին՝ բեկրեկուում և ակնախտիղ փայլ են արծակում. խղճուկ, մեռելային փայլ, մեռնող բնութեան տխուր ժայիտն է սա... Երեկոյեան քամին խաղում է ձիւների հետ և կամաց-կամաց ցուրտը սաստկանում է:

Սլդ իսկ բովէին լեռան կատարին ձիւնի սպիտակութեան վրա յայտնուում են մի քանի շարժուն, ու ստուերներ: Սոված գալերի մի վոհմակ է դա արգեօք, որ ցած է գալիս դեպի գաշտի գիւղերը գիշերային յարծակումով կատաղի քաղցը յագեցնելու համար: Ստուերները, թէե խիստ գանդաղ, բայց ցածնում են անդագար: Ահա նրանք արդէն լեռան կրծքին են և զարմանք. դրանք ոչ թէ գազաններ, այլ մարդիկ են, մի խղճալի, մի թշուառ ընտանիք: Ո՞վ կարող էր երեակայել, անգամ, որ այսպիսի ժամանակ, այն էլ օրուայք այս պահուն, որ և է մարդ սիրա կանի երեալ այդ լեռներում:

Սուշեից գնում է մի նորասի կին, բռնած տաս տարեկան մանուկի ծեռը, իսկ դրանց յետեից գանդաղ ու վախկոտ քայլերով իշնում է մի տղամարդ, հիւանդ, վիրաւոր: Բարբարոս թշնամու գնդակը չախշախել է

նրա աչ ուսը, և այդ պատճառով աչ ծեռը կողքից անշարժ կախուած է մնացել, մինչդեռ ձախ ծեռքով անդադար աշխատում է փակել արեան հոսանքը: Բայց իզնւր... լեռան կատարից մինչև վիրաւորը սպիտակ փայլուն ձիւնի վրա ծղում է մի կարմրագոյն ժապաւէն, որ արեան կաթիներից է կազմուած: Վիրաւորի թշուառ կեանքի մնացորդն է սա, որ կաթիլ կաթիլ քամւում է Սինակայ սարերի մէջ, բայց չը նայելով դրան, նա գերմարդկային ճիգեր գործ դնելով իր վրա, յուսահատ քայլում է:

Սրեգակն արդէն մայր մտաւ. նրա վերջին ճառագայթներն էլ քաշուեցին լեռների ձիւնապատ գագաթներից: Վերջալոյսի փայլն էլ հետզհետէ պակասեց և վերջապէս, երեկոյեան մուլլը, որպէս մի համատարած քօղ, եկաւ պարուրելու լեռներն ու ծորերը, ու մի գժուային վիճակ ստեղծեց այս թշուառ հանաւարհորդների համար: Քամին սաստկացաւ. յուրտն անտանելի է, իսկ խեղճերը մերկ են, շատ մերկ, քանի՛ անգամ թալանուեցին: Նրանց ստները վաղուց են գաղարել ցուրտ լգալուց. ստներ չեն զբանք, այլ մի զոյգ իսկակեր, որպնք թոյլ կերպով գիմահար տալով՝ շաշում են իրանց խղճուկ բեռները: Եւ այդպէս շարունակում են իշնել: Լուռ են. միայն

ձիւնն է անդադար սարսռեցնող ճռճող հանում նրանց ուժասպառ ոտների տակ:

Եւ գեռ ինչե՞ր են քաշել նրանք մինչև այստեղ հասնելը: Ահա թշուառ վիրաւորի ոտները յանկարծ թաղուեցին ծիւնապատ խոռոչի մէջ և նա երեսի վրա վայր ընկաւ՝ մի սոսկալի հառաչ արձակելով իր վերքի ցաւից: Չիւնի մէջ թաղուած, նա անզօր նիդեր է դործ դնում ոտքի կանգնելու, թրպրտում է, որպէս վիրաւոր թուչուն, մինչև որ խեղճ կինը յետ է դառնում, բարձրացնում է նրան, և կրկին քայլում են...

Երկինքը հետզհետէ ծածկում է թուխպերով. խաւարը տիրում է ամեն կողմ: Ահա կինը կանգ առաւ, մէկ վերե նայեց երկնքին, ուր ամպերի ճեղքերից երեսում էին մի քանի աստղեր, նայեց իր շուրջը տիրող խաւարին, նայեց դէպի լերան ստորոտը և մի ծանր ախքաշեց... Նա գիշերելու տեղ էր փնդրում: Անհնարին էր այդպէս հասնել մարդկային բնակութեան: Բայց ուր գիշերել...

— Կարապետ, ի՞նչդ էնենք,—դարձաւ նա դէպի իր ամուսինը մի խղճալի, յուսահատ ծայնով,—մութն ընկաւ, կը վախնամ բռւք էլ էղնի, էսա ճիժ չը գինայ քէլէլ, ես լէ չեմ գինա էսօր շլկել, ծնկներս կը ծռին:

Ամուսնու պատասխանն եղաւ մի վշտալից և երկար «ախ»: Իսկ քամին շարունակում էր սաստկանալ, ամպերը կուտակւում էին: Բոլոր նշաններից երեսում էր, որ բնութիւնը մի արտասովոր բան է պատրաստում, մի այնպիսի բան, որը ամեն մի կենդանի արարած բնագդումով նախազգում է, սարսափում շտապում է թագնուել ուր և լինի:

— Կարապետ, ապա ի՞մալ կեղնի, կրկնեց կինն իր հարցը:

Անյոյս, սարսափելի վիճակը նրա աչքերի վաղուց ցամաքած աղբիւրակներից մի քանի կաթիլ արտասուք քամեց, որոնք կախուեցին արտևանունքներից և իսկոյն սառցային փոքրիկ գնդակներ դառան: Խեղճ... Նա գիտէր որ իր վիրաւոր ամուսինը ուժասպառ է և անզօր, բայց դարձեալ կոչումն էր անում դէպի տղամարդի խելքն ու կարողութիւնը:

— Իմա՞լ կեղնի, կնի՞կ, — կոչեց նուազած ձայնով թշուառ ամուսինը, — աղաչնք Աստծուն, որ էսա տեղ մեր խօքին առնի, մէ խետ փրթինք... Ես ի՞նչ էնիմ, ո՞ր չուրն ընկնիմ, ես լէ չիմ դինա քելել, չեմ տայ ի՞նչ տի էնենք: Եաման Աստուած, մէկ ճար: Վերջին խօսքին նա աչքերն ուղղեց դէպի երկինք:

Բայց երկինքն անողոք էր. նրա վրա մի ժպտուն կտոր չէր մնացէլ: Ահարկու ամպերը կամաց-կամաց ժողովուեցին և ծածկեցին ամբողջ երկնակամարը: Հսկայ Մասիսի թիկունքից լուսինը ամօթխած հարսի պէս ցոյց տուեց իր գէմքը, փորձեց իր պաղ, կաթնային ճառագայթներով լուսուորել ծիւնապատ լեռների կատարները, բայց իզուր. նրա լոյսի պաղ ցնցուղները կորան, անհետացան մթին ամպերի անհուն խաւարի մէջ և նա մի անթափանցիկ շղարշով շտապեց քօղարկել իր փալուն դէմքը: Իսկ քամին փչում է այնպիսի կատաղութեամբ, կասես ուխտել է այս հսկայ լեռները փուլ բերել, և գետնին հաւասարեցնել: Լուսինը մէկ էլ փորձեց իր ճառագայթները թափել ահաւոր վայրերի և թշուառ ճանապարհորդների վրա. ահա նա իտ քաշեց իր երեսի քօղը, մի տխուր մեռելային լոյս սփռեց ահաբեկուած բնութեան և մոլորուած թշուառների վրա, կրկին թագնուեց չարանճի մանկան պէս, դարձեալ նայեց ամպերի պատառուածքից և ապա խսպառ ծածկուեց՝ համատարած խաւարի, փոթորկալից ամպերի, ցրտաշունչ հողմերի իշխանութեանը յանձնելով զարհուրած բնութիւնը և նրա հետ միասին այն դժբախտ արարածներին, որոնց ճակատագրին հաճելի

է եղել այս ահաւոր ժամին մէն մենակ ծգել այս անժանօթ լեռների մէջ իրանց անհուն վշաի, անսահման թշուառութեան հետ: Սկսուեց Բարթողեան լեռների զարհուրելի բուքը: Երեք հոգիներն արդէն մի ձորակի մէջ են. այլ ևս ոչ մի հնար չը կայ շարժուելու, նրանք հեշտութեամբ կարող են կարցնել իրար. ճանապարհը չը դիտեն: Երեքն էլ բրոնում են միմեանց ձեռքից, փորձում են դարձեալ մի քանի քայլ անել, բայց երեխան քաշ է ընկնում:

— Մարէ՛, ոռներս փետցան, եաման, չեմ զինայ քէլէլ, մարէ — մրմնչում է երեխան, կծկուելով մօր կողքին:

Կանդ են առել, վիրաւորը նոյնպէս անկառող է առաջ զնալ: Նա երերւում է, աչք է ածում ձորակի շուրջը, մինչդեռ կատաղի քամին շաչում է, ոռնում, ծիւնի հսկայական պտոյտներ է կազմում երկնքում: Այսպիսի դէպքերում ճանապարհորդները սովորաբար տեղն ու տեղը նստում են, թաղւում են ծիւնի տակ՝ կամ ապրելու, կամ մեռնելու համար: Այդպէս վճռեցին անել և այս ճանապարհորդները, երբ յանկարծ նրանց աչքովն ընկաւ մի հսկայ ժայռ, որ ծիւների ընդհանուր մակերեւոյթից դուրս ցցուած էր մնացել: Յոյսի մի նշոյլ ծագեց խեղճերի սրտում.

ով զիտէ, գուցէ հնարաւոր լինի նրա տակը մի խոռոշում կծկուել մինչև լոյս: Երեքն էլ միաժամանակ վերջին ճիգերն են հաւաքում, իրար բաշքելով դիմում են դէպի այդ ժայռ: Ահա նրանք վերջապէս իրանց ցանկացած տեղումն են, զգուշութեամբ անցնում են ժայռի յետեր, բամու հակառակ կողմը, և անսպասելի կերպով կանգ են առնում մի այրի բացուածքի առաջ: Ո՞վ կը սպասէր. սա արդէն մի երկնացին պարզե, մի փրկութիւն էր: Առանց մտածելու, առանց տատանուելու երեքն էլ մտնում են այդ այրը և ուժասպառ վայր են ընկնում հէնց այրի բացուածքի առաջ:

Խաւար է այրի ներսը, խաւար, որպէս այնտեղ ապաստան գտած թշուառների սև սրտերը: Ամեն մի ձայն, ոտքի մի թեթև շարժում սարսեցուցիչ արծագանք է հանում այրի խորքերում և հազար ու մի այլանդակ ձայներով կրկնում է, ասես այնտեղ, ներսերում, գեերը ճիւաղացին քրքիչ են բարձրացնում թշուառութիւնը ծաղրելով: Ապաստանուածները կծկում են իրար մօտ. Երիտասարդ վիրաւորը պառկում է ուժասպառ, երեխան կպչում է մօրը: Տիրում է մի ահաւոր լուռթիւն, որ էլ աւելի սոսկալի է դառնում ճնշող խաւարի մէջ և որ երբեմն-երբեմն մի-

այն վրդովում է վիրաւորի ցաւալի հառաչանքներով և ցրտահար մանկան մրմունչներով: Իսկ դրսում կատաղի քամին ոռնալով զարկում է ալրի ժայռին և այնտեղից երբեմն-երբեմն ձիւնի մանր փոշին շփում է, ներս է աժում խեղճերի վրա:

Քամու ահաւոր ծայների մէջ մանաւանդ մի տիսուր, նուաղած, սրտամորմոք հնչիւն առանձնապէս սոսկում է պատճառում կնոշը: Ա՛խ, այդ ձայնը, այդ ձայնը... Արդեօք երբ և իցէ նրա ականջում կը լո՞ի այդ սպանիչ նվիզը: Խնձօք չէր տայ նա՝ այդ ձայնը չը լսելու համար... Ալդպէս էր անքում նրա փոքրիկ Սաթօն, հինգ տարեկան երեխան, երբ անօրէնները նրան հորի մէջ գլորեցին և հողով ծածկեցին: Օ՛, մի ամբողջ օր Մայնը հնչւում էր գետնի տակից: Ա՛խ ինչեր էր անում զարհուրած երեխան, երբ նրան խելովի մօր գրկից, բաշ տուին դէպի հորը: Քարերն անգամ կարտասուեին նրա ճչից, բայց նրանք անողոք մնացին: Իգո՞ւր խեղճ մայրը վազում էր դէպի հորը, իգո՞ւր դահիճների ոտներն էր համբուրում, նրա հոգու հատորը հողի տակ փչեց իր վերջին շունչը, իսկ նրա ձայնը գեռ լսւում է լսւում է...

Ցուրտ է, շատ ցուրտ: Դողում են խեղճերը. կամաց-կամաց նուազում են վիրաւորի

հառաջանքները և մանուկի մրմունչները. մենակ կինն է հսկում սրանց վրա, պահպանում է, որպէս իր աչքի լոյսը: Նա ականջ է դնում նրանց ծայներին, ամեն մի հերթին շնչառութեանը, հառաջանքներին: Արդէն կէս զիշերը վաղուց անցել է, դրսի բուքը հրէշաւոր չափեր է ընդունել. վիրաւորն ու երեխան վերջապէս իսպառ լռում են: «Երեխ քնեցին», մտածում է կինը և աշխատում է աւելի մօտ կպչել իր զաւակին, որ դոնէ իր մարմնով տաքացնի նրա սառած մարմինը: Յանկարծ նա յիշում է, որ քնած մարդը հեշտութեամբ է ցրտատար լինում: Այս միտքը նրան սարսափեցնում է, և նա վճռում է քնածներին զարթեցնել, կամացուկ հրում է վիրաւոր ամուսնուն, որ զարթնի: Բայց նա միայն ցնցւում է և հազիւ լսելի ձայնով տնքում է ու լռում: Երեխային է ցնցում, նա էլ անշարժ, անծայն է: Տէր Աստուած, ի՞նչ պէտք է անել: Ճարր կտրած՝ նա մթութեան մէջ խարխափելով գտնում է երեխայի ծեռները. ախ, ի՞նչ սառն են: Նա մօտեցնում է իր բերանին և աշխատում է իր շնչով տաքացնել մանուկի սառած անդամները. փչում է ու փչում, բայց ինքն էլ ոյժ չունի, ինքն էլ մօտ է սառչելու, և երեխայի ծեռները մնում են առաջուալ պէս սառած, փետացած: Ամուսնու

ծեռքն է գտնում, նա էլ է սառած: Ապա իր ամբողջ մարմնով կռանում է թանգագին մարմինների վրա՝ մէշքը դէմ տալով քածու հոսանքին... Խեղճ, նա աշխատում է ինչպէս լինի, փրկել սրանց և այդ հոգսի մէջ նա չի էլ զգում անտանելի ցուրտը, չի էլ լսում քամու կատաղի ոռնոցը, բացի այն ողորմելի, այն սրտահմլիկ հնչիւնից, որ այնպէս նման է իր Սալթօի մահամերծ նվազցին:

Նա էլ աւելի մօտ է կծկում պառկած մարմիններին, մօտ, աւելի մօտ: Տէր Աստուած, ի՞նչ սառն են սրանք... Ի՞նչպէս պազել են սրանց մարմինները... Խաւարի մէջ, առանց ոչինչ տեսնելու, նա շօշափում է նրանց կուրծքը, մէշքը, դէմքը. ամեն տեղ մեռելային սառնութիւն... Յանկարծ նրա մտքում ծնում է մի սոսկալի կասկած, չարագուշակ նախազգացումը տիրում է նրա սրբատին:—«Մի՛ գուցէ իր զոյգ սիրելիները ցրտատած եղած, մեռած լինեն. չէ՞ որ խեղճ Կարօն ամբողջ ճանապարհին արիւնաքամ եղաւ, իսկ փոքրիկ Գրգոն արդէն լերան վրա սառչելու մօտ էր»: Այդ միտքը յամսու կերպով նստում է նրա զիլսում և սարսափը պաշարում է նրան: Խեղճին թւում է, որ այդ ժամին ինքը ողջ աշխարհից մերժուած, դատապարտուած է և բանտարկուած այս մե-

նաւոր, խաւար, զարհուրելի այրի մէջ։ Նախապաշտամունքները նրա զարհուրած երեակալութիւնը լցնում են հրէշաւոր պատկերներով. դրսում ոռնացող քամին ինչ որ սոսկալի բաներ է պատմում, ինչ որ սպառնալիքներ է կարդում նրան, որից նրա մազերը դիզանում են զլիսին, իսկ ներսում, այրի խաւար խորքերից բիւրաւոր գևերի շարժման և սպառնալից փսփսոցի ծայնն է գալիս. ահա նրանք շարժում են, դիմում են դէպի նրան... Ահա նրանց առաջնորդներն արդէն երեացին մէկ, երկու, երեք... քանի՛սն են... դժուար է նոյն իսկ համարել...

Զարհուրած կինը փակում է աչքերը, բայց իզուր. նրանք գարծեալ նրա աչքի առաջն են. ահա վերջապէս շրջապատեցին նրան և նիւազային պար սկսուեց զարհուրելի ծածածութիւններով։ Ամենքի գլուխն էլ փաթաթուած է զանազան արիւնոտ լաթերով, ամենքն էլ կարմիր, արիւնազանդ լեզուները քաշ են ձգել մինչև գետին՝ յոզնած շների պէս, ամենքն էլ կեռ, փայլուն սրեր ունեն ձեռներին, որ գործ են ածում փայտէ ձիու տեղ։ Ահա գևերի շրջանը կամաց-կամաց նեղանում է, նրանց այլանդակ ոտների ահռելի դրոփիւնը աւելի և աւելի մօտ է լսում, ծիւտղային պարը սղմում է նրան... Յան-

կարծ ամենքը միասին կեռ թրերը բարձրացրին... Տէ՛ր Աստուած, քանի՛սն են... Նա ճանաչում է սրանց. օ, նա լիշում է շատերին, այդ գևերին նա շատ յաճախ է տեսել... Այո՛, այո՛, սա էր, որ Սամօին զլորեց հորը. ամիս, անօրէ՛ն, էլ ի՞նչ ես ուզում... Գրգոհս էլ... չե՛մ տայ... չե՛մ տայ... չե՛մ տայ, ինձ սպանեցէք...

Այսպէս ճչաց խեղճ կինը զարհուրած ծայնով և իր ձայնից ուշըի եկաւ։ Կօշմարը թողեց նրան. «Յիսուս Քրիստոս, Յիսուս Քրիստոս», կրկնեց նա իր շուրջը նայելով և երեսը խաչակնքելով։ Այրն այս անգամ նրան աւելի խաւար էր թւում, իր սիրելիները շարունակում էին լուռ մնալ։ Նա կրկին կռացաւ պառկածների վրա, կրկին հրեց նրանց սառը մարմինները, շօշափեց, քաշըշեց։

— Կարօ, Կարօ, գոչեց նա:

Բայց վիրաւորը նոյն իսկ չը տնքաց։ Թշուառ կնոշ կասկածն էլ աւելի զօրացաւ։

— Կարօ, գոռաց նա յուսահատ, լալազին ծայնով. Գրգօ, բալա, կը մսիս, մի՛ քնի, դարձաւ նա դէպի զաւակը։

Բայց երկուսն էլ լուռ են, երկուսն էլ անձայն... Խե՛ղճ, անբաղդ կին... խաւարի մէջ նա չի կարողանում տեսնել, որ նրանք քնեցին յաւիտենական քնով, որ երկինքը այս անգամ

գոնէ խղճաց նրանց վրա և մահով վերջ դրեց անտանելի ցաւերին։ Բայց այն, ինչ չը կարողացաւ տեսնել նրա աչքերը, զգաց մսի այն անհանգիստ, թրթռուն կտորը, որ սիրտ անունն է կրում։

— Եաման Աստուած, էս ի՞նչ հող տուիր զլխիս, գոչեց նա, անզօր լինելով նոյն իսկ մի կաթիլ անգամ արցունք թափել։

Այրի մէջ մեսակ լինելու գիտակցութիւնը կրկին սարսափով պատեց նրան. խաւար և դիւաբնակ այր, երկու անշնչացած դիակներ, զրսում կատաղի, բքաշունչ քամի։ Ուր զնալ, ուր փախչել, ուր ապաստան, պաշտպան զրտնել։ Քարայրն այլ ևս չէր կարող պարփակել վշտի այդ ծովը, նա այնքան մեծ էր, որ պէտք էր ամբողջ բնութեանը յանձնել, պէտք էր բաժանել այս գոռացող քամու, այդ ահարկու ամպերի, այս անհուն երկնակամարի հետ, որ կրելու հնարաւորութիւն լինէր։

Այրի կամարները խեղում էին նրան և զարհուրած կինը այնտեղ թողնելով զոյտ սիրելիների մարմինները, դուրս թռաւ, որպէս մի սարսափած ու կատաղի ֆուրիա, չը գիտենալով գէպի ուր ուղղել իր մոլոր քայլերը։ Մի քանի րոպէ նա կանգ առաւ այդ ահեղ փոթորկի առաջ, նայեց երկնքին, ուր ոչինչ չէր երկում. նայեց իր շուրջը... Օգնութիւն

էր հալցում, բայց ումիշ... Ապա ականչ զրեց այրի ներսը, երկի յոյս ունէր լսել այնաեղից իր սիրելիների հառաչանքները, բայց փոխարէնը նրա սարսափած լսողութեանը հասան ծանօթ զարհուրելի ծալները և նա վաղեց ծորի միջով հեռո՛ւ և հեռո՛ւ, ինքն էլ չիմանալով գէպի ուր, միայն որչափ կարելի է հեռու այդ սոսկալի այրից։

Երկար գնաց նա. բամին ցըիւ է բերում նրա թիկունքի վրա ծիւնապատ ծամերը և բարձրացնում, դիղացնում զլխի վրա. երբեմն նա ընկնում է, զլորուում է ծիւնի կոյտերի մէջ և երբ բարձրանում է, նմանում է մի ձնագնդի, և կրկին փախչում է։ Արդէն շատ հեռու է այրից—նա կանգ առաւ վերջապէս, մէկ էլ նայեց իր շուրջը։ Արշալոյսը բացուելու մօտ էր. արևելքը շառագունում էր, փոթորիկը գաղարում էր. նա այժմ յետ դարձաւ և զիմեց գէպի նոյն ալրը, հասաւ և ներս ընկաւ։ Այրի դրան առաջ, ձիւնի փոշիով պատած՝ յաւիտենական քնով քնել էին հայրը և զաւակը զլուխ զլխի տուած։ Վէրքից թափուած արիւնը լճացել էր և սառել վիրաւորի կողքին։ Նրա գէմքը գունատ էր և կրում էր իր վրա տանջանքների կնիք, իսկ մանուկը կամաց-կամաց սառչելով, կասես խաղաղ քնում էր։

Թշուառ կինը ընկաւ զոյդ դիակների վրա  
և երկուսին էլ միանգամից գըկեց։ Մի առ ժա-  
մանակ նա այսպէս լուս մնաց, գլուխը ծած-  
կելով սիրելիների կրծքերի մէջ և համբոլոներ  
դրոշմելով նրանց սառած շրթունքներին։  
Ապա երկու չորացած, կապտած ձեռները  
բարձրացրեց և ծանր հարուած իշեցնելով  
դլխին դոչեց։

— Խարիր խաղար դարդ ունիմ, դուն լէ  
մի խնայի, զարկ, ֆալագ \*):

Այլ ևս արցունք չունէր նա, այլ միայն  
կրկնում էր «դարկ ֆալագ» և հարուածում  
դլխին։

Բայդ ալդ աղաղակները միայն տխուր և  
ահոելի արձագանքով կրկնում էին այրի  
խորքերում։ Նա նորից ցնցեց դիակները, շար-  
ժեց և գոռաց՝ «Կարօ, Կարօ, Գրգօ»։

Վերջապէս նա վերկացաւ, կանգնեց դիակ-  
ների առաջ, ձեռքերը տարածեց, երկինք նա-  
յեց և գոռաց։

— Տէ՛ր, ես էլ դոր էրթամ, ֆալագ, ինչի  
ընձի լէ չես սպաներ էսոնց խետ։

Նորից նայեց, նայեց դիակներին շատ եր-  
կար, անթարթ աչքերով, և յանկարծ մի ան-  
բնական նիչ արձակեց։ Նա ծիծաղում էր  
քսամնելի, սպանիչ ծիծաղով։ Որքան զարհու-

\*) Բաղրամ

րելի էին այդ ծիծաղի հետ նրա ալլանդա-  
կուած գէմքի չզածգական շարժումները։ Եթէ  
այդ դիակների մէջ կեանքի մնացորդ անգամ  
լիներ, այդ քրքիչը բաւական էր, որ նրանք  
սրտահաք լինէին։ Խեղճ կինը խելագարուեց...  
Նա մօտեցաւ ամուսնու դիակին, ոտքով  
հրեց նրան։

— Տիլի վեր, հիլի վե՛ր, քա մարդ, չուն  
ե՞փ քնիս, հիլի վեր քէլա՛ արտ, քէլա դաշտ,  
արտը քաղի, հօրի՞ կը քնիս, հիլի։

Սառած դիակը օրօրուեց նրա ոտքի շար-  
ժումից և կրկին անշարժացաւ իր տեղում։

— Լաօ դու հօրի՞ կը քնե՞ս. դուն լէ չես  
գայ. դէ որ իմալա, ես կեթամ, քնէք դուք։

Սաաց նա, և այրի բացուածքից դուրս  
ժռաւաւ...  
—

Ի... դիւղի զլխաւոր փողոցի ծառուղիում  
միշտ կարելի է տեսնել մի խեղճ խելագար  
կին՝ զզզզուած մազերով, ոտարոբիկ, պատա-  
ռոտուն շորերով, որոնց աակից տեղ տեղ բաց  
երեսում են նրա վոիտ մարմնի մասերը։ Սա  
նոյն կինն է։ Նրա աչքերը բորբոքուած  
են, որպէս տենդով բռնուածի աչքեր, նա  
վտիտ է և գունատ, ինչպէս գերեզմանից  
դուրս փախած մեռել։ Անցուգարծ անողներին  
նա կանգնեցնում է և հարցնում ժպտալով.

— Ինձի չե՞ս ճանչնար, ես ֆալադ Վուր-  
զունին եմ է՛ք... չա էնա տեղ զարկեց ընձի  
ֆալադ համ...

Նա ճատով ցոյց է տալիս դէպի հարաւ,  
դէպի Բարթողեան լեռները և վազում է դէ-  
պի այն կողմը մի վայրենի քրքիչ արծակելով:

1896 թ.

## ՆՈՐԱԾԻՆԸ

(ԳԱՂԹԱԿԱՐՆԻ ՊԱՏՄԱՄԻՑԻՑ).

Աւ էր էն ապրին. աւ էր պատել մեր եր-  
կրին. ամեն կողմից արեան հոտ էր գալիս:  
Հայ քրիստոնէի զլուխը դարձել էր ժառի մի  
տերեւ. Անօրէնները չորս կողմից, ովք զիտէ  
ինչի համար, զլուխ էին բարձրացրել և  
սոված զայլերի նման մեղ վրա էին վազում  
արեան ժարաւով: Մեր լեռներն ու ծորերը,  
մեր գաշտերն ու հովիտաները ամենն էլ դար-  
ձել էին «հարամիների» բուն, զիւղից երկու  
քայլ հեռանալ չէր լինում, էլ վար ու ցանք,  
հունձ ու կալ չը կար, կեանքը թանկ է, ովք  
սիրա կանէր զլխից ծեռք վեր առնել դաշ-  
տային աշխատանքի գնալ մանաւանդ այն  
օրից յետոյ, երբ մեր ուկսի ազային անօրէն-  
ները դէզի մէջ վառեցին, երբ Եղօի հարսն  
ու աղջիկը արտից տարան համ տարան, դըն-  
դակահար անելով նրա մաճկալ որդուն:

Ամեն անդամ՝ երբ արևը ծածկում էր  
մեր լեռների յետեր և զիշերային խաւարը  
ծածկում էր արար—աշխարհի հետ նաև մեր  
գիւղը, այդ խաւարից է՛լ աւելի սկ, հոգեմաշ  
խաւար էր ափում մեր սրտերին և ճնշում,  
ճնշում... Արդեօք անօրէնները զիշերը սրի և  
կրակի ճարակ չեն դարձնի մեզ, մտածում  
էինք մենք, արդեօք վաղը արև ու երկինք կը  
տեսնե՞նք, թէ այս հէնց յաւիտենական գե-  
րեղմանի խաւարն է, որ իջում է մեր գիւղի  
վրա: Ել ո՞վ կարող էր քնել, ո՞վ կարող էր  
սիրտ անել շորեր հանել. քունը բաժին էր  
միայն փոքր, շատ փոքր երեխաներին, որոնք  
գեռ ծանօթ չէին աշխարհի խէր ու շառին,  
որոնք չը գիտէին թէ ի՞նչ ահաւոր մտքեր են  
գառնում մեր գլուխներում:

Մեր շրջապատում էլ գիւղ չը մնաց, բո-  
լորը զոհ գնացին անօրէնների չը տեսնուած  
գաղանութեանը. օ, պատմել կը լինի՞, թէ  
նրանք ինչեր դործեցին այդ գիւղերում. մարդ-  
կային լեզուի կարողութիւնից վեր է այդ  
արիւնոտ անցըերի նկարագիրը: Եւ ո՞վ կը պատ-  
մի, երբ ոճիրների ականատեսները, որոնք  
հրաշքով փրկուել են անօրէնների զնդակներից,  
խենթացել, սարէսար են ընկել կրած սար-  
սափներից, կամ լեզուները պատպանծուել է  
համը կտրել, կամ մահամերծ հիւանդ ընկած

են այս ու այն աստուածասիրի դռանը: Լուս,  
անտարբեր ցցուած ժայռերն ու սարերը, խո-  
րունկ ծորերն ու այրերը, իրաւ է, լսեցին  
մորթուուած տղամարդկանց վերջին հոնդիւ-  
նը, կենդանի թողուած երեխաների ստորեր-  
կրեայ ծիչն ու մրմունջները, զաղիր պշտու-  
թեան զոհերի, շարան-շարան իրար կապուած  
կոյս աղջիկների և շահիլ հարսների ողբն ու  
կոծը, կործանուած զիւղերի տակաւին ծխա-  
ցող աւերակների մէջ ուրուականների պէս  
շրջող խեղճ ու կրակ մնացած թշուառ ծե-  
րերի ու պառաւների օրհասական աղաղակ-  
ները, լսեցին այս բոլորը, յուղիչ, ախուր ար-  
ծագանքներով կրկնեցին և մնացին դարձեալ  
լուռ, դարձեալ անտարբեր: Ել ո՞վ կը պատմի,  
թէ ինչեր անցան այն գիւղերում, երկի՞նքը...  
բայց նա էլ շատ է հեռու, շատ բարձր...

Մեր պապերը գարերից ի վեր սսվորեցրել  
են մեզ երանի տալ մեռելներին, որոնք թօ-  
թափելով անիրաւ աշխարհի հոգսերն ու  
ցաւերը, գնում են յաւիտենական հանդիսա-  
վայելելու. վաղուց ենք սովորել մեր հանդու-  
ցեալին հողին յանձնելուց յետոյ ամեն անդամ  
կրկնել՝ «Երանի՞ քեզ». բայց երբէք մահն այն-  
քան քաղցը չէր եղել, երբէք կենդանի մնա-  
ցածներն այնքան չէին նախանձել յաւիտենա-  
կան ընով հանգչողներին, ինչպէս այս անդամ:

Քանի՞ քանի՞ երանի տուինք նոյն իսկ այն պլազմոդ աւերակների տակ պառկածներին, որոնք իրանց ալրուած կրծքերի տակ գէթ յաւթեան թաղեցին այն անտանելի ցաւերը, որոնցով մենք դեռ տանշում էինք օր ու գիշեր:

Տէր Աստուած, ինչ օրեր քաշեցինք, ժայռ լինէր՝ կը ճաքէր, սար լինէր՝ փուլ կը գար, բայց մարդը սևերես կը լինի, տարանք, դիմացանք, բայց մինչև Ե՞րբ կարող էինք կրել... Մի քանի օր առաջ մի խումբ անօրէններ մեր գիւղը թափուեցին, սոված գալլերի մի վոհմակ էր այդ, թէ գեերի մի խումբ, որ արիւն սփոելով անցաւ. քանի՞ քանի՞ անմեղների գէակներ փռեցին փողոցներում. ողջ մնացաներս էլ ամեն բանից զրկուեցինք: Անօրէնները խլեցին ամեն ինչ, ոչխար, տաւար, ալիւր ու ցորէն, անկողին ու զգեստ, մնաց մի թշուառ կեանք, այն էլ ամեն ըոսկ վտանգի մէջ. էլ ճար չը կար և վճռեցինք թողնել մեր թշուառ երկիրը, թողնել կայք ու ստացուածք, այզի, անդ ու անդաստան, բռնել մեր մերկ ու սոված զաւակների ծեռքից ու փախչել առանց յետ նայելու դոնէ մեր կեանքը փրկելու համար:

Տխուր ու ծռալ գիշեր էր. ամպամած երկինքը մանրամաղ անձրեկ կաթինները թա-

փում էր ու թափում, ասես սգաւորի աչքերից: Նո էլ էր տխուր, ով գիտէ, գուցէ յիրաւի այդ արցունք էր, որ կարեկից երկինքը թափում էր ներքեռմ տառապող թշուառների ծխիթարութեան համար. չէ մեր տէրտէրը մեղ միշտ հաւատացրել է, թէ երկնքից թափուածը ողորմութիւն է. բայց եթէ երկինքը կարեկցել գիտէ, եթէ թշուառն էլ է վայելում նրա ողորմութիւնը, ինչո՞ւ հապա այդ կաթինները չեն փոխւում շանթերի և թափում մեր անօրէն դահինների գլխին, որ մեր տառապանքը վերջ առնի. մարդն էլ արտասուի, երկինքն էլ արտասուի, էլ ով պիտի կոռուի չարի գէմ, էլ անճարը որտեղից յուսայ օգնութիւն:

Մեր գիւղը գաղթում էր այդ սև օրին, կամ աւելի ծիշտ փախչում էր իր «եսիրն» աղատելու համար. ծծկեր երեխանները կպան մայրերի կրծքերին, աւելի մեծերը նստեցին ծողների պարանոցներին և ուսերին, մնացածները՝ որոնք բալել կարող էին, կախուեցին ծեռներից և մենք շարժուեցինք: Սուդ էր պատել ամենքին. երկնքի անձրեից աւելի արցունք թափեցինք, երբ անցանք գերեզմանատան մօտով. հեշտ բան է, մեր մողները, մեր սիրելիններն էին այնտեղ պառկել շարէշը... և մենք ծգում էինք նրանց զուցէ յաւի-

տեան. մեղ այնպէս էր թւում, թէ նոքա բոլորն էլ կենդանի են, մենք թողնում ենք նրանց անօրէնների ծեռքին անտէր, անտիրական, ասես լսում էինք նրանց լացի, անտէրութեան աղաղակները, ասեսքարերի տակից նչում էին մեղ սրտապատառ՝ «ուր էր թողնում մեղ, կացէ՛ք, կացէ՛ք». փակեցինք ականջներս, անցանք շտապով, կրկին երանի տալով նրանց, որ հայրենի հողի տակ են պառկել, մինչդեռ մենք տանում էինք մեր ոսկորները ողի գիտէ ևր օտար հողին յանձնելու:

Ամբողջ գիշեր գնում էինք անձրեի տակ, թրչուած, լոգնած, երկիւզով:

— Մարէ՛, ցուրտ է, մրսում եմ, կոչում են այս ու այն կողմից մանուկները:

— Լաճ, «խախտնտ» կաց, սուս, եաման «նրանք» կը դան քեզ կը տանեն:

«Նրանք» բառը սարսափելի զօրութիւն ունի, մանուկները յետ յետ են նայում խաւարի մէջ և աւելի մօտ կպէելով մայրերի փէշերին՝ առաջ են շարժւում առանց ծպտուն հանելու: Քայլում են մինչեւ ուժասպառութիւն, ապա հայրերը շալակում են նրանց և կրկին գնում:

Հուռ ենք ամենքս էլ, անօրէնների գիւղերի մօտից ենք անցնում, գաղանների բոյն, բորենիների որչեր են չորս կողմներս: Սասառած

չանի եթէ նրանք մեր ոտնածայնից, մեր աղմուկից զարթնեն և իմանան մեր փախուաշը, ամենքս էլ կը կորչենք. քայլում ենք զգոյշ, վախենալով շունչ քաշել, չը հազալու համար մարդիկ իրանց շրթունքներն են կրծոտում: Եւ քայլում ենք առանց կը նու առնելու, սարսափով նայում ենք երկնքին՝ աստղերով որոշելու թէ զիշերուայ ո՞ր ժամն է. թէ արդեօք բաւական զիշեր կալ, որ կարողանանք ահաւոր անցքերի սահմանները կրտել, անցնել. բայց երկինքը ծածկել է իր երեսը սկ, անթափանցիկ քօղով, ոչ մի աստղ չի պլազում այնտեղ, մոալլ, մահաստուեր ամպերը կախուել են մեր զլսի վրա և միայն բարակ, մանրամաղ անձրեր գալիս է ու գալիս: Տէր Սատուած, ինչեր չէինք տայ, որ այդ գիշերն աւելի երկար լինէր, արեգակն աւելի ուշ ծագէր, խաւարը սիրելի էր մեղ, մենք սոսկում էինք լոկսից:

Բարձրանում ենք սարեր, իշնում ենք ձորեր, կտրում անցնում ենք մեծ ու փոքր առուակներ. անօրէնների գիւղի մօտենալիո՛ մեռելալին լուսթիւն ենք պահպանում և անդադար գնում հա՛ գնում... Վտանցն անցած չէ, ահա մի ուրիշ գիւղ. քար լուսթիւնը կրկին տիրեց ամենին. քայլում ենք ոտների

ժալրերով։ Յանկարծ ընդհանուր լոռւթեան մէջ լսուեց մի երեխայի սուր ճիշք սարսափը բռնեց ամենիս, հիմա ուր որ է, անօրէնները կը զարթնեն և մենք սրի նարակ կը գառնանք, պէտք է փակել երեխայի բերանը, ինչ և պատահելու լինի, թէկուղ խեղուուի, մահանայ։ «Եաման բերանը փակի, բերանը փակի» խեղուած ձայնով, փսփսուկով, բայց սարսափի շեշտով կանչում են չորս կողմից մօրը, սակայն մայրն ասես ոչինչ չի լսում, ախր իր արգանդի պտուղն է, ի՞նչպէս իր ձեռքով խլի իր զաւակի կեանքը։ Երեխան շարունակում է ճչալ, և սարսափած բազմութիւնն ինքնապաշտպանութեան բնագդից զրդուած՝ հասնում է մի կատարեալ անզգայութեան, մի քանի ձեռքեր այս ու այն կողմից մեկնում են դէպի մանկան փոքրիկ բերանը, խցել են ուղում, զարհուրած մայրը պաշտպանում, փախցնում է ճչացող երեխային։ Նա յուսահատական ձայներ է հանում, խառնում է երեխայի ճիշին իր աղերսանքները, որ խնայեն զաւակի կեանքը, ի վերջոյ նարը կտրած, փոքրիկին պինդ պինդ սղմում է իր կրծքին և ընկնում է գետին երեսի վրա իր մարմնով ծածկելով երեխային, որ յանկարծ լռում է, բայց երեսի ուշ, որովհետեւ գիւղում շների հաշոց է բարձրացել։

Կրկին շարունակում ենք մեր ճանապարհի՛՝ «Ձեր ոտներին մեռնիմ, շուտ շուտ զնացէք» բաջալերում են հայրերը. մեր առաջն է մի հակայ սար ծիւնապատ կատարով։ Հաւաքում ենք մեր վերջին ճիպերը, և սարը դէմ տալիս, բարձրանում ենք շարունակ յետ յետ նայելով գէպի այն կողմը, ուր թողինք քնած գազաններին։

— Սարը որ անցնենք, ազատուած ենք, էլ մեզ չեն կարի, հաւատացնում են փորձուածները, այն կողմը սահմանն է. այս միտքը մեզ սիրտ է տալիս և բարձրանում ենք։ Բայց այս ի՞նչ բան է, մեր թողած զիւղերում, ներքեւ, սարի ստորոտում ալժմ ինչ որ շարժում է սկսուած։ Երեխայի ձայնից և շների հաջոցից երեկի նրանք զարթնել են, արգէն հայիուանքների և սպառնալիքների ձայները հասնում են մեր ականջին։ սարսափով ենք յետ նայում. սրատես աչքերը կարողանում են հեռաւոր խաւարի մէջ ինչ որ ստուերներ որոշել, որոնք հաւաքում, կուտակում են ինչպէս փոթորկարեր ամպեր, կամ գեւերի ժողով, որ շուտով ճիւազային պարեր կազմեն մթութեան մէջ։ Ահա ձայները աւելի և աւելի մօտենում են, զէնքերի հանած շառաչն էլ ենք լսում, այլ ևս ոչ մի կոսկած չը կայ, որ անօրէնները մեր յետեկց են գալիս։

«Փախէ՛ք, եաման շուտ փախէք» կոչում են այս ու այն կողմից. բայց սարը բարձր է, վերելքը վերջ չունի, սարսափին ու յոդնածութիւնն էլ մի կողմից են արգելք դառնում, կանալք ու երեխաները մօտ են ուժասպառ վայր թափուելու։ Ամենից աւելի տաճուած ու թուլացած է երեսում մանաւանդ Մուրօի կինը. ահա նա ցած դրեց իր շալակի երեխան, որովհետեւ էլ տաճել չի կարողանում. ամուսինը ստիպուած եղաւ այդ երեխան էլ շալակել միւսի հետ, որ արդէն նրա թիկունքին նստած էր։ Կինը շանք արաւ և կրկին բայլում է, բայց ահա նա կրկին թուլացաւ. ի՞նչ ունի արդեօք, հիւանդէ երեկի. մօտի կինը կարեկցութեամբ բռնեց նրա ձեռքից և առաջ դնացին։ «Մեղքից կուշտ ի» \*) ասում են կանալք փսխուալով։

Սնօրէնները մօտ են, էլի մի փոքր և նրանք հէնց այս լերան ստորոտում կը լինեն։ Մենք փախչում ենք, քանի ոյժ ունենք ոտներում. երեխաների լացից, կանանց ոյզ ու կոծից սարերն են դզրդում։ Բայց Մուրօի կինը այս ժանր ճգնաժամին յանկարծ ծնկների վրա ընկաւ մնաց, անկարող նոյն խսկ մի քայլ անելու։ Թշուառութիւնը կատարեալ էր, ով

\*) Մահօթ. «Մեղքից կուշտ» Արմեղի բարրառով նշանակում է յդի չեղ.

կը սպասէր, թէ բնութիւնն էլ ընդունակ է ծաղրելու ճակատազրի ձեռքին խաղալիք դարձած թշուառներին — տարաբաղդ կինը երկունքի մէջ էր... խեղճը ժամեր առաջ, զուցէ և ամբողջ զիշերը տանջուելիս և եղել անտանելի ցաւերով, բայց հայ կնոջ յատուկ տոկունութեամբ տարել է բոլորն անտրտունչ, կատարեալ մարտիրոսութեամբ, սակայն ով կարող է բնութեան պահանջներին դէմ դնել, ահա նա ընկած է ալժմ ինչպէս մի անկենդան դիակ, դէմքը գունատ, շրթունքներն իրար վրա սղմած ցաւի մեծութիւնից, աչքերը մարած, անշարժ։ Սակայն ճար չը կայ, այնուամենայնիւ պէսաք է փախչել, պէսաք է սարի կատարին, սահմանին հասնել, անօրէններն սկսում են արդէն սարը բարձրանալ։ Երկու կին մտնում են կիսակինդան կնոջ թևերի տակ և շարունակում են նրան ոչ թէ տանել, այլ քաշ տալ դէպի վեր, դէպի կատարը։ Մօտ է գագաթը, մօտ է փրկութիւնը. սարի այն կողմն անօրէնները չեն հոմարձակուի անցնել, այնաւող ազատ երկիր է, յոյսն ինչեր առես չի անի, իսկ սարսափը հրաշքներ է գործում, յոդնածութիւնը մոռացած՝ մենք ոչ թէ բայլում, այլ աշխատում ենք թռչել։

Եւ այս ընդհանուր շփոթի, այս անասելի ապնապի մէջ երկունքով բռնուած կինը

սոսկալի ճիշ արծակեց և երկու կանանց ձեռքից պրժնելով՝ գետնին ընկաւ. այլ ես տանել կարելի չեմ. բոպէն զարհուրելի էր, բայց և հանդիսաւոր, մարդկային կեանքի ամենավսեմ, ամենանուրիական խորհուրդն էր կատարւում այդ բոպէին—կնոջ երկունքը մօտենում էր իր վախճանին։ Դիպուածն այն աստիճան անսպասելի, այնքան տարօրինակ՝ էր ամենքիս համար, որ չը նայելով վերահաս վտանգին, չնայելով մեզ ընկերացող սարսափին, մեզանից շատերը քար կտրած՝ կանգնած մնացին։ Ցաւակցութեան զգացմունք էր այդ, թէ՞ ակամայ պատկառանք, որ մենք ստիպուած եղանք ինչպէս գերագոյն հարկ մատուցանել ընութեան մեծ գործին, չը գիտեմ, բայց մենք կանգ առանք խորին կարեկցութեամբ լցուած դէպի տառապող կինը. մեզ թւում էր, որ եթէ նրան ձգենք մենակ ու անտէր մօտեցող աւազակների ծեռքը, այս լեռը փուլ կը դայ մեր ստների տակ, ժայռերը մեր դլխին կը թափուեն, և մենք մնացինք, թէև բաղմութեան մեծամասնութիւնը շարժուեց դէպի կատարք։

Մի չը տեսնուած տեսարան էր այդ. լեռան ստորոտում վիտում էին արիւնարբու աւազակները, շտապելով վեր ելնել շուտով մեղ լոշոտելու համար, իսկ լեռան վրա, բարձր,

կատարին շատ մօտ, խաւարի մէջ մի քանի կանայք շրջապատել են երկնող կնոչը, նրանց մօտիկ կանգնած են տղամարդիկ մտախոն լոռութեան մէջ։ Մերթ բնդ մերթ տառապող կնոջ երկունքի ճիշը մինչև հեռաւոր լեռներն է տարածւում և այդ բոպէին մենք գնցւում, սոսկում ենք, ասես լեռները ճչում, մեզ վրա են վազում։ Ամեն մի բոպէն սպանելու չափ հոգեմաշ է և երկար, էլի մի փոքր, երեւ մենք ամենքս այս սարսափներով լի, բայց անորոշ վիճակից խելազար կը դառնանք և կը վազենք լեռն ի վար դէպի մեր դահիճները։ Եւ յանկարծ այս սոսկալի պայմաններում լսուեց «ընկալի, ընկալի...» նորածինի մի ողորմելի ճիչ, որ գնաց կորչելու լեռների և ծորերի տարածութեան մէջ. լոյս աշխարհ ընկաւ մի թշուառ էակ տպրելու, կանք վայելելու համար այն ժամանակ, երբ ամեն կողմ մահ էր իշխում, երբ ամենքը մահ էին խնդրում։ Երեխայի առաջին ճիշը ցնծութեան փոխարէն ցաւ էր ոււելացնում մեր ցաւերի վրա, մեր կեանքն արդէն բեռ էր, ի՞նչ անեինք նոր կեանքը։ Եւ եթէ այդ էր այս կեանքի առաջին ժամը, ի՞նչ կը լինէր ապագան։

Մերկ երեխան ընկած է խոտերի մէջ։ Անձրեւ վազուց դադարել է, երկնքում աստղեր էլ կան, բայց ցուրտ է լեռան վրա, լուսաբացի

զով քամին սլալացնելով բարձր խոտերը անցնում է երեխալի մերկ, թող մարմնի վրայով. նա դողում է, սարսուում է, ցուրտ է, շատ ցուրտ է նրա համար խոնաւ խոտերի մէջ: Խանձարուր է պէտք, տաք փաթութներ են հարկաւոր ալդ թրթռուն մարմինը պարուրելու համար. բայց ո՞վ է տուել մեղ տաք, չոր լաթի մի կտոր, ամենքս էլ ողորմելի ծուէնների մէջ, թրջուած սարսուում ենք ցրտից: Մի կին շապով քաշեց շրջապատի խոտերը և ալդ փոքրիկ դողդոչուն մարմինը փաթաթեց նրանց մէջ: Հէնց ալդ վայրկենին մէկը նչաց «փախէ՛ք», աւազակների ծալները լսեցինք բոլորովին մօտ, հէնց մեր կողքին. սարսափն ու շփոթը տիրեց, ամեն մարդ շտապեց իր գլուխը փրկելու, հաղիւ կարելի եղաւ. ծննդկանին շալակած փախցել. երբ կատարին հասանք, երբ շունչ առանք, այն ժամանակ միայն նկատեցինք, որ նորածինը ընդհանուր տագնապի մէջ մոռացուել էր խոտերի մէջ, ամեն մի փախչող կարծել էր, թէ միւսը տանում է նրան: «Ընկալի, ընկալի» լսում էր մեր յետելից աղէխարշ միչը, գալլերի մէջ մոռացուած գառասն մայիւն լիներ ասես, որ օգնութիւն էր խնդրում. բայց էլ ո՞վ սիրտ կանէր մի բայլ անգամ վար իշնել. և այսպէս խղճուկ երեխան մնաց մէս մենակ, անտէր, անօգնական ընկած խո-

տերի մէջ. «Ընկալի, ընկալի» կոչում էր թշուառը մթութեան մէջ. երեխ ցուրար նեղում էր նրան, և ոչ ոք չ կար, որ նրան իր կրծքի վրա սղմէր տաքացնէր:

Ամենքս լերան կատարին էինք, փրկուած էինք վերջապէս: Անօրէնների ծալներն այլ ևս չէին լսուում. երեխ մեղ հասնելու շանքերն ապարդիւն համարելով՝ նրանք յետ դարձան: Մենք էլ կանգ առանք, պէտք էր հանդիսաւ առնել: Ծննդվական կնոջը վար դրինք գետին. նա կամաց կամաց ուշքի եկաւ: «Ընկալի, ընկալի» դեռ լսուում էր ներքելից խղճուկ երեխալի արդէն նուաղած ծայնը, որ ինչքան և թող էր, բայց մօր ականչին էլ հասաւ. նա աչքերը ման ածեց իր շուրջը, կարծես հասկացաւ սարսափելի իրողութիւնը, փորձեց վերկենալ, զուցէ ներքեւ վաղելու համար, բայց կրկին անզօր կերպով վայր ընկաւ: «Սեաբաղդ զաւակս» մրմնչացին նրա շրթունքները և արցունքի երկու խոշոր կաթիլներ քաշ ընկան նրա գունատ ալտերի վրա:

Արեկելքն արդէն շառագունում էր. ըիւ յետոյ արեխ առաջին ճառագայթները լուսաւորեցին հեռաւոր լեռների կատարները. անօրէնների զիւղը երեսում էր հեռու ծխի և մշուշի մէջ կորած. լերան ստորոտում ոչ ոք չ կար, մեղանից մէկը ալժմ միայն ցած իշաւ

մանկանը բերելու։ Քիչ յետով նա վերադարձաւ խոսերի մէջ փաթաթած մի ուե բան ձեռքին—թշուառ նորածինը սառել, կապտել էր և փչել իր վերջին շունչը։ Փայտերի ծալրերով մի փոքրիկ գերեզման փորեցինք այդ փոքրիկ արարածի համար, որ լերան կրծքի վրա ծնուեց, նրա գագաթում թաղուելու համար։

Որչափ կարճ կեանք, բայց և որքան թշուառ...

Սակայն մենք նրան էլ ասացինք՝ «Հաղար երանի քեզ...»

1896 թ.

### „ՓԵՌԻՐ-ԸՄ-ԽԱՅՑ“

Յունուարի մի յուրա, շատ յուրա օր էր. թքէիր, գետին չեր ընկնիւ Սպիտակ էր գետինը, սպիտակ էին տների պատերն ու կտուրները, սպիտակ էին մանաւանդ փողոցների և պարտէզների ծառերը — ձիւնի միատեսակ ձերմակ սաւանը փռուած էր ամեն տեղ պատել էր ամեն ինչ Գիշերը խիստ պարզկայ էր և այժմ սառած ձիւնը անցուդարձ անողների ոտների տակ անախորժ ճռճռոց էր հանում, որից մարդու մարմինը փշաքաղլում էր։ Արև կար. մառախլապատ էր. երկինքը. սաստիկ յրախց յանկարծ խտացած դոլորշները բարակ եղեածներ դարձած, խաղում էին օդի մեջ։ Աղւաւներն ու աներես ձնձղուկներն անդամ ալսօր, սովորականին հակառակ, ճիչ ու աղձուկով չին թռչկոտում կտրից կտուր, բակից բակ պաշար թռցնելու. նրանք նստուել էին այս ու այն պատի վրա, այս ու այն ծառի

Ճիւղերի վրա լուս, խղճուկ, կծկուած—սաստիկ ցուրտը սրանց էլ էր նեղել։ Ամեն մի անկիւնից, ամեն մի անից, ամեն մի սաքուից, ուր որ կենդանի շունչ կար, ծուխ էր բարձրանում, մարդիկ կուռւմ էին ցրտի դէմ, ինչով և ինչպէս կարող էին, տաքանում էին։

Թէե արդէն առաւօտ էր, բայց X...ի փողոցները գատարկ էին և անկենդան։ ո՞վ էր գժուել այս կատաղի ցրտին վլուխ գուրս հանել տնից։ Հազիւ երբեմն փողոցների այս ու այն ծալրում ստուերների պէս երեւմ էին մուշտակների, եափունջների կամ վերարկուների մէջ կոլոլուած մարդիկ, քիթ ու պռունգը փաթաթած, եղեամով ծածկուած։ սրանք էլ, ո՞վ գիտէ, ո՞րպիսի անհրաժեշտ կարիքից ստիպուած էին թողնել իրանց տաքուկ բնակարանները, այն էլ ոչ թէ քայլում էին, այլ ակամայից վազում էին համարեա հեալով։

Այդ ժամին փողոցի հեռաւոր ծալրում յանկարծ անսպասելի կերպով երկացին երկու փոքրիկ մանուկներ, 7 և 10 տարեկան։ Խեղճերն այնքան վտիտ էին, որ ասես գերեզմանից գուրս քաշած մեռելներ լինէին։ գժուար էր առանց սոսկումի նայել դրանց վրա։ Երկուսն էլ պիսարաց, զզզզուած մազերով, որոնց վրա առատօրէն թափուել էին եղեամների

թէրթիկներ։ յօնքերի և աչքերի թէրթերունք-ների վրա նոյնպէս նստել էին եղեամներ, տալով մանուկներին մի անօրինակ, մի իրզ-ձալի տեսք։ Նրանց մարմինների մերկութիւնը հազիւ հազ ծածկուել էր ինչ որ կախկխուած ծուկներով, անհնարին էր նոյն իսկ որոշել, թէ ի՞նչ է նրանց հազինը կամ ո՞րն է վար-տիքը, շապիկը, արխալուղը։

X... - Եցի չեին նրանք այլ գաղթականներ հեռու տեղից, տարաբաղդ, արիւնոտ երկրից էին եկել, անհայր, անմայր, անտէր... կառա-րեալ որբիկներ... Սրի և կրակի նարակ գար-ձած իրանց խեղճ հայրենիքի մասին այս փոք-րիկ թշուառները շատ քիչ բան գիտէին, կամ գուցէ և շատ բան գիտէին, բայց քիչ էին պատմում։ ասում էին միայն, որ այն եր-կրում «զուլում կէնէն, մարդ կը մորթեն, ան-սուչ տեղը, էսլա սաղ սաղ կը մորթեն, մեր խօրն ու մօրն էլ ման մորթեցին անօրէնները», իսկ իրանք երկու թշուառները «Էլի» լետ փա-խան եկան և ընկան ախտեղ տարագիր։

Խեղճերը գիշերները ընում էն մի աստուա-ծասիրի գոմում։ այնաեղ շատ անասուններ կան, տաք է... Առաջ փորձեցին մեծ գոմէշ-ների մսուրի մէջ քնել, բայց նրանք այս տա-րօրինակ մարմինները տեսնելով խրտնեցին, վնչացրին, թշուառները վախեցան և փախան

մտան մի փոքրիկ, խղճուկ հորթուկի մսուրը, որը նոյնպէս նիշար էր, նոյնպէս տխուր, նոյնպէս թշուառ, որպէս երկու որբիկները. խեղճի մայրը չէնց նոր էր մեռել, նրան ծիծ տուող չը կար, ուստի կերակրում էին չոր խոտով, բայց նա գեռ ուտել չէր կարողանում, անսովոր էր, մէկ-մէկ ծիլ վերջնում էր, ժամ-լմորում և վեր ածում. նա միշտ սոված էր, միշտ էլ տխուր, դունչը կախած, օրաւուր նիշարում էր ու նիշարում:

«Թշուառին թշուառն է միշտ միսիթար». որբ հորթուկը սիրով հիւրընկալեց որբ մանուկներին, նրանք բարեկամացան և սիրեցին իրար. և երբ գիշերները երկու որբիկները ճիտ-ճիտ արած, իրար պինդ խտած քնում էին մսուրի մէջ, հորթուկն էլ իր փոքրիկ դունչը դնում էր նոյն մսուրի շրթին, քնում էր, իր տաք շունչը մանուկների երեսին փչելով: Գոհ էին մանուկները, միայն փոքրիկ որբը գիշերները շուտ-շուտ վեր էր թռչում, ճկում, ձչում, լաց լինում, ապա զարթնելով դանդատում էր մեծին, թէ գալիս են... տանում են... մորթում են... Գոմի խաւորի մէջ նա սարսափում էր գեից, չարքերից: Եղբայրն այդ ժամանակ աւելի պինդ էր զրկում նրան, հանգստացնում էր և նրանք կրկնում էին:

Լաւ էր գոմք նրանց համար, շամար, տաք տաք... Առաւոտները վազ զարթնում էին և իրանց վայելած հիւրընկալութեան փոխարէն նախ աւելում, մաքրում, չորացնում էին հորթուկի տակը, գուրգուրում էին նրան, ապա կրում թափում էին մնացած անասունների աղբը և գուրս էին վտղում փողոցներում թափառելու... հայ հաւաքելու... Այսպէս էին ապրում նրանք և գոհ էին. «գուլում» չը կար:

Սրանից առաջ էլ համարեա ամեն օր նրանք շրջում էին փողոցներում. տեղացիք տեսնում էին նրանց նոյն ցնցոտիների մէջ, նոյնպէս ոտարորիկ, նոյնպէս զլխաբաց, զրդ-դզուած, որպէս այսօր և ոչ ոքի խիղճը չէր վրդովում: Դէ՛ եղանակը տաք էր, «եթիմն էլ աներես կը լինի, հաց հաւաքելով կապրեն էլի՛», մտածում էին նրանք և խիղճը հանգստացնում. բայց այսօր... որբերը գարձեալ փողոցումն են. այս լաւ չէ. անտանելի ցուրտ է. օձի ճուանն էլ այս ցրտին թող գուրս չը մնայ, մեղք է, մտածում էին անցորդները... ախր այդ ի՞նչպէս են բորիկ, գողալով վազում և ի՞նչ կարիք կար այսօր էլ անպատճառ գուրս դալ... Ախ, աներես լակոտներ... Վահ, վահ, սրանց մտիկ տուր, սրանց ասաց մի ծուշտակաւոր պարարտ մարմին իր

հետ զնացողին երկու վազող որբերի վրա ցոյց տալով. օֆ, հոգիս մղկտաց, կրակ վառուեց զլխիս, կրակ... ի՞նչպէս են դողում, Աստուած իմ, ախր այս ցրախն ուր էին դուրս դալիս իրանց բնից... Եւ նա ի սրտէ ցանկացաւ, որ այդ որբերն այսօր դուրս հկած չը լինէին կամ գոնէ ինքը չը աեսնէր նրանց գողգողալիս. Հանոք չէ, մարդու հացը հարամ եղաւ...»

Եթէ ձաշին միտո ընկնեն, դժուարութեամբ կը ճաշեմ, մտածեց նա և դէմքը կնճռեց:  
Խօսակիցը հասկացաւ ընկերոջ խղճին հասած վիրաւորանքը և կամեցաւ նրան դուրս հանել այդ անախորժ վիճակից:

— Է՞հ, իզուր ես այդքան անհանդիստ լինում նրանց մասին, բարեկամ, նրանք սովոր են, կը տանեն. այլ բան է, Աստուած չանի, եթէ իմ և քո երեխաներին մի այդպիսի բան պատահի. դիտե՞ս, իմ Օսիկին որ եօրդանով էլ հիմա դուրս հանես՝ տեղն ու տեղը կը սառի, հաւատա կը սառի. սրանց բանն ուրիշ է, սրանք կը տանեն...

Փաստաբանութիւնը խելացի էր, պարարտ մարմինն ու խօսակիցն անցան...

Իսկ որբե՞րը... նրանք շարունակեցին առաջ գնալ փողոցով և ամենեին չէին էլ զարմանում, որ իրանք այս անտանելի ցրախն փողոցումն են, մինչդեռ իրանց հասակակից

ո՛չ մի ուրիշ երեխայ չի երևում. նրանք մի բան միայն զիտէին, որ թէւ սաստիկ ցուրտ է, թէ իրանք էլ մերկ են, ոտարորիկ, զրլխաբաց, գողգողում են, բայց և այնպէս պէտք է գոներն ընկնեն, որ հաց ձարեն, շատ են սոված, երէկ նաշից սկսած բան չեն կերել...

— Վախ, Գալո, էս իմալ ցուրտ ա եածան, ասաց փոքրիկը իր կծկուած, անզգալացած մատները կապտած շրթունքներին մօտեցնելով և ոտները խշիշացող ձիւնի վրա վերև ներքեանելով:

— Խա՛, Մրտո, շատ ցուրտ ա, մռմռու մարդու չիգեար կուտայ, շուտ արի.

— Ախր փաղետիր (գոմ) տաք էր, շարունակեց փոքրիկը լացակամած, արցունքների խղճուկ կաթիլները կախուեցին արակւանունքներից, բայց առանց ընկնելու սառեցին:

— Տաք էր, ապա որ անօթի ենք, ի՞նչդէ էնինք...

Փոքրիկը լոեց, կծեց շրթունքները, փչեց մատներին քու, քու, քու...

Ահա նրանք կանգ տռան մի մեծ դարպասի առաջ, որ բաց էր: Բակի ներսում սաստիկ ցրաից կծկուած ընած էր մի մեծ դամփու. նա չէր նկատում մանուկներին, որոնք վախվիւելով, ձեռք ձեռքի տուած, անվստահ քալերով ներս մտան բակը և մի փոքր առաջ

գնալով տեսան աշաւոր շունք: Մեծը կանդ առաւ, չը համարձակուելով աւելի առաջ գնալ:

Մրտօ, շունքը... կը կծի՛, դառնանք:

—Ախր անօթի եմ, կը մսիմ, ել դոր էր-թանք, մրմնչաց փոքրիկը. էս տուն ճոչի, փշուր-ըմ խաց ուղենք, ել ման վազենք փաղեախ, ցուրտ ա փէացանք...

Նրանք մի փոքր ել առաջացան, յուսալով անձայն, անշշուկ անցնել շան մօտից և տանը հասներ թայց ձիւնի ճռճոռոյը զարթեցրեց շանը, նա զլուխը բարձրացնելով տեսաւ երկու դպրուած մանուկներին, մի կատաղի ոստիւն գործեց և վրաները յարձակուեց: Վտանգն զդոլով՝ խեղճ մանուկները ճչացին, իրար զրկեցին և վայրկենասպէս նստեցին ձիւնի վրա: Այսպէս են պաշտպանւում շների յարձակու- մից մուրացիկ մանուկներն ու կանալք: Ասես իրանց յաղթահարուած յոյց տալով՝ այդ թոյլ արարածներն ուղում են գազանի սրբ- տում գութ զարթեցնել: Եւ արդարեւ, շունք կանդ առաւ, կենդանու կատաղութիւնը զսպուեց որբերի անպաշտպանութեան ա- ռաջ. նա մի փոքր հեռու պառկեց, զլուխը թաթերի վրա դրած, հսկում էր երկու թշուառների վրա, որ չի թէ վեր կենան փախչեն: Սրտաձմլիկ, արտասուելի տեսարան էր. երկու ոտարոբիկ, դիսաբաց, ցնցոտիների

մէջ դողդողացող մանուկներ, կապտած շըր- թունքներով, ուռած ձեռներով իրար կպած, կծկուել, նոտել էին ձիւնի վրա և լալիս էին. եղեածի թերթիկները խաղում էին ցուրտ օդի մէջ և պտառուելով թափւում էին նրանց գզգզուած մազերի վրա: Կատաղած շունք չնթրկել էր նրանց կողքին մոմուալով, սպա- սում էր, որ թշուառները վեր կենան թէ չէ, վրա պրծնի, կտոր կտոր անի: Բա- կում ոչ ոք չը կար: Մանուկները շարունա- կում էին յուսահատ լալ ու ճչալ. սարսափած աչքերով նրանք նայում էին մէկ շանը, մէկ տան դրանը, այնտեղից օգնութեան սպա- սելով: Ահա վերշապէս տան դուռը ճռուալով բացուեց և շէմքի վրա երեաց մի կին:

«Փշուր-ըմ-խաց», պոռացին մանուկները միասին դողդոչուն ձայնով:

—Աներես լակոտներ, ասում էի սրանք կը լինեն, մրթմթաց նա և ներս մտնելով բերեց մի կտոր հաց, տուեց սարսափած մա- նուկներին, իսկ ինքը յետ դարձաւ:

Մանուկները խլեցին հացի պատառը և մինչ պատրաստում էին շտապով դուրս թռչել գոնից, շունը վեր թռաւ նրանց յե- տեցից, վրա պրծաւ, փոքրիկ որբի ոտքից բռնեց, քաշեց կատաղի հափոցով: Սարսափած մանուկը ճչաց և երեսի վրա ընկաւ հացը

ձեռքին, մինչդեռ մեծը շակուած՝ չք գիտենա-  
լով օգնութեան վազել թէ փախչել, կանդնած  
մնաց ու լաց էր լինում: Տանտիկինը վազեց,  
հալածեց կատաղած շանը և երբ ձեռքից  
բռնելով վեր բարձացրեց որբիկին, երեխան ծանր  
տնքաց. գաղանի սուր ժանիքները պատռել  
էին նրա փոքրիկ ոտքը, կաթկաթ արիւնը  
ծորում էր վերքից և թափում ձիւնի վրա:  
Երեխան ձեռք տուեց ոտքին, ձեռքը ներկուեց  
արիւնով, նա զարհուրած յետ քաշեց ձեռքը,  
նայեց ափին, նայեց վիրաւոր ոտքին և էլ  
աւելի բարձր ձայնով լալ սկսեց: Այնու ամե-  
նայնիւ նա կռացաւ, վերցրեց հացի պատառը  
և կաղալով ու անքարով հետեւեց իր եղբօրը:  
Արիւնը շարունակում էր կաթել նրա ոտքից  
և երկուսով էլ լալիս էին, տեսնելով կարմիր  
կաթիները...: Բայց և այնպէս քաղցած, դող-  
դողացող մանուկները կիսեցին հացի արիւնոս  
պատառը և մի մի կտոր կրծելով՝ առաջ  
դնացին:

Դեռ երբէք հացի մի պատառն այնքան  
թանգ չէր դնուել...

## ԲԱԽՏԻ ԽԱՂԵՐ

### I.

«ԱՐՑՈՒՆՔԸ ԶՈՒԼՈՒՄ ԿԸ ՇՐՆԵ»

Հարուստ և անուանի էր ուկս Պէտօն.  
ողորմած երկինքը հաշտ ժպտում էր նրան  
և ամենատեսակ բարիքներ լիուլի թափել էր  
նրա տան վրա: Վիշտն ու տրտմութիւնը  
ծանօթ չէին ուկսի օշաղին, երկնքի հովանին  
թևատարած հրեշտակի պէս պահպանում էր  
փորձանքներից այդ օշաղը, ուր անընդհատ  
թագաւորում էր կեանքն ու երշանկութիւնը:  
Վաթսուն և աւելի գարուն էր բոլորել  
ուկս Պէտօի գլխով. պատկառելի սպիտակ մի-  
ուր ծածկում էր նրա լայն կուրծքը, որ  
անցեալ հզօրութեան նշաններն ունէր վրան,  
սպիտակ ալիքներով զարդարուած էր նրա  
զլուխը, բայց խելօք աչքերի հայեացքը խրոխա  
էր տակաւին և յաղթ իրանը ուղիղ: «Բօյ ու  
բուսաթով» հինգ որդիները նրա օշաղի սիւ-

Ներն էին: Բ... զիւղի լայնատարած հանդում նրանց ձեռքով մշակւում էին ուսի արդաւանդ ընդարձակ արտերը, սիզաւէտ հիւթալի արատներում օրն ի բուն արածում էին նրա մօտ հազար ոչխարի հօտերը, նրա հարիւրաւոր կթաճճերի, եզների ու գոմէշների նախիրը: Բացի հովիտներում ազատ արձակ թափառող տասնեակ «ջինս» մատակ ծիերից ու քուռակներից ուսի իւրաքանչիւր որդին իր առանձին նժոյգ ծին ուներ, որոնց նախամայրը Խնուրսից էր բերուած, և նրանից սերուած ծիերը ամբողջ զիւղի «եխլու» մէջ լայտնի էին իրանց գեղահրաշ տեսքով և մրրկանձան արշաւով:

Հինգ գեղանի հարսներն իրանց ժրաշան սկեսուրի՝ Խաթուն-Մարէի աչալուրչ հսկողութեան ներքո՝ իրանց բազմաթիւ մեծ ու փոքր զաւակների հետ օրն ի բուն մրջիւնի պէս աշխատում էին տան մէջ, բայց և այնպէս հազիւ էին կարողանում «տիրապլտել» տան բարիքները, պատւով ճանապարհ դնել եկող գնացող հիւրերին, որոնք տարուայ ամեն եղանակին անպակաս էին պատկառելի օչաղի օկալից:

Աշունը ուս Պէտօի տան համար երջանկութեան և անընդհատ աշխատութեան օրերէր էր բերում. հասունացած արտերից ամեն

տեսակ բարիքի հեղեղ էր թափւում, կախ ու կուտր վերջանում էր և ուսի շտեմարանները ու ցորենի հորերը լցւում էին անբաւ հացահատիկներով: Տարուայ այդ ժամանակ շրջակայ լեռներից մի-մի տոպրակ ուսերին, կամ էշերով ու եղներով բաղցած շների պէս ցած էին իջնում վայրենի քրդերը և իրանց սովորական բաժինն ստանալով ուսի կալից, հեռանում էին: Բայց և այնպէս արդար մարդու հարստութիւնն անհատնում էր:

«Օ՛րհնած է ուս Պէտօի օջաղը», ասում էին իրար քրդերը և այդ բանը հաստատում էր նաև շէլիս Աւգին, որը ուխտ էր արել ամեն տարի անպատճառ ուսի օրհնած ցորենից սերմացու վերցնել ցանել, որ արտերը աշող լինեն, բերքն առատ: Եւ երբ գարնանը շէլիսի ցորենի արտերը մեղմ քամու առաջ օրօրւում էին խոստանալով առատ բերք, շէլիսը չէր մոռանում լարմար առիթին ուսին ցոյց տալ այդ արտերը առանձին բաւականութեամբ ասելով.

— Ավանա խէրէ մալրայ տայլայ, քիրվայ <sup>\*\*)</sup>

— Նա, նա, ավանա խէրէ խուդայա շէլիս, խէրէ խուդայ <sup>\*\*\*)</sup>, պատասխանում էր ուսր համեստութեամբ:

<sup>\*)</sup> Սա բուտան բարիքն է, բերվաց (բաւոր-բարեկամ):

<sup>\*\*)</sup> Ոչ ոչ, սա Աստուծոյ բարիքն է, շէլիս, Աստուծոյ բարերը:

Իսկ թէ ի՞նչպէս էր պատահել, որ մի «ֆլայ» քիւրդերի աչքում արդար մարդու հոչակ էր վայելում, ի՞նչպէս էր եղել, որ քիւրդերը օրհնուած էին համարում «ֆլայի» տունն ու տեղը, անդն ու անդաստանը, ինքն ռէսը ալիք մասին ոչինչ չէր ասում, բայց Բ... զիւղացիք իրար մէջ փափսալով ահա թէ ինչ էին պատճում:

Ուս Պէտօի անբառ հարստութեան հոչակը տարածուելով-տարածուելով՝ մի անդամ վերջապէս էլիաթի պետ չիւսնի բէզին հասաւ: Բէզը շատ հայերի հարստութեան մասին լսել էր, շատերն էլ ինքն անձամբ տեսել, բայց այն, ինչ որ ինքն այժմ էր լսում, գերազանցում էր բոլորին. ինքը բէզը մի այդպիսի հարստութեան մասին երաղել անդամ չէր կարող, ուստի և նա վճռեց հարուստ ֆլային մի անդամ «զօնաղ» գնալ, և նրա հարստութեան գլխին մի լաւ քար ձգել:

Զմրացին մի ցուրտ օր էր, լեռ ու գաշտ վազուց էին ծածկուել ձիւնի հաստ միակերպ սաւանով: Ուս Պէտօի անասունները գոմերում փնչացնելով ուտում էին պատրաստի խոտն ու գարմանը, իսկ օգայում Բ... զիւղացիք բուխարու այս ու այն կողմում շարուած ծխում էին իրանց չիբուխները և խոռում աշխարհի խեր ու շառից: Ծերունի ռէսն էր այդ

խօսակցութիւնների աղն ու համբ. նրա խելացի խորհուրդներն ու խրատական պատմութիւններն էին ամենի ուշադրութեան առարկան: Եւ եկոյեան պահուն ռէսի բակում յանկարծ շների հաջոց, ծիաների տրոփիւն, մարդկանց ծալներ իրար խառնուեցին. օգայում խօսակցութիւնը դադարեց և մարդիկ գուրս թափուեցին եղելութիւնն իմանալու և իսկոյն ռէսին հաղորդուեց, որ չիւսնի բէզը 50 ծիաւորներով «հիւր է» եկել: Ծերունին շտապով գուրս եկաւ «թանգագին հիւրին» ընդառաջ:

— Ղօնաղ կուղես, ռէս, օծի ժպիտն երեսին ասաց բէզը ծերունուն տեսնելով:

— Ղօնաղն Աստուծունն է, բէզ. տունը ծերն է, համեցէր, պատասխանեց ռէսը:

Գիւղացիք զլուխները խորհրդաւու ծեռովորելով կամաց-կամաց քաշուեցին մի տխուր նախազգացումով: — բէզի գալուստը նրանց չարագուշակ թւաց. այսպիսի «զօնաղներ» նրանք շատ էին տեսել...

Անմիջապէս ոչխարներ մորթոտուեցին զօնաղների համար, գարու հորի բերանը բացուեց ձիերի համար, որոնք կապուեցին ռէսի ընչարձակ գոմում, և 2—3 ժամ անցած ամենըն էլ տեղաւորուած, զոհացած, կշտացած հան-

գիստ էին առնում ու էսի բնակարանի զանազան բաժիններում:

Ալսուէս անցաւ մի ածբողջ շաբաթ: Ընդհանուրի սպասածին հակառակ «զօնաղները» ոչ մի անկարգութիւն չէին անում, բայց և գնալու ոչ մի նշան ցոյց չէին տալիս և հիւրասիրութիւնը շարունակում էր անընդհատ, ամեն օր լիսուն ծի և լիսուն մարդ առատառատ կերակրում էին: Տանեցիք և գիւղացիք սաստիկ անհանդիստ էին, մտածում էին մտածում, բայց գուշակել չէին կարողանում, թէ ինչով պէտք է վերջանայ այս տարօրինակ հիւրասիրութիւնը: Թէև զգուշութեան համար բարեկամների խորհրդով ու էսը տանից հեռացրեց իր ամենափոքր և ամենից գիղեցիկ հարսին՝ Ծաղիկին և մեծ որդու հասած աղջկան՝ Շամամին, բայց և այնպէս նա ըստ երեսյթին անհոգ և անտարբեր էր. ասես թէ միայն նա էր հասկանում բանի էութիւնը, և ոչ ոքի ոչինչ չէր ասում: Անցաւ այսպիսով էլի մի շաբաթ և մի գիշեր ու էս Պէտօի և իր աւագ որդու մէջ հետեւեալ խօսակցութիւնը տեղի ունեցաւ:

— Ավո, ի՞նչդ էնինք, էն մէկ դարու խոր գարակուաւ, խլսուն թաղան բանանք, հարցրեց որդին:

Ու էսը մի փոքր մտածեց, ապա ասաց.

— Խլսուն չէ լաօ, համա էս քշեր, ուրիշ խոր ըմբ բացէք, զարին զրմմէն խանէք լցէք առջի դարտակ խորը, սրա (յետոյ) թաղայ բացած խորի բերան ըռհատ փակէք, օր չերևայ թէ բացած է: Ձե ձեռնիմ, էլման էրէք, օր բէզի խուլամներաց աչք վրա չինայ, չիմանան: Դէ, շուտ, կանչա ախովրակիքդ:

Ու էսի կարգագրութիւնը ամենայն ճշգութեամբ և գաղտնապահութեամբ կատարեցին որդիները. առաւօտեան դատարկուած հորը կրկին լիքն էր դարիով: Եւ այս բանը կը կնուեց մի բանի անգամ:

Վերջապէս մի օր բէզը իր մօտ կանչեց քրդերից մէկին և հարցրեց.

— Հը, կուռօ, ի՞նչ հալի են ու էսի ամբարները, քիւլը քամու տուինք, թէ դեռ չէ:

— Բէզ, սպատասխանեց քիւրդը, մենք մնացել ենք շուարած. զարու հորը դատարկուած է, էն է ասուծ ենք, պրծաւ, ու էսն առաւօտը իր ձիերը պէտք է ծախի գարի գնի. բայց ե՞նչ գիշերը դատարկ հորը դարձեալ լցւում է. սրա ամբարները անսպառ են, մարդուն Աստուած է տալիս, առւնն օշադ է:

Բէզը չը հաւատաց այս առասպեկին, կանչեց մի քանի ուրիշներին և նոյն բանը լսեց. բէզի դէմքը փախուեց, նա գուրս եկաւ և

Գրամայեց անմիջապէս ծիերը դուրս քաշել և  
թամբել:

— Ֆլայի տունն օչաղ է, ասաց նա, հեծէք  
հեռանանք այստեղից:

Բէզր գնաց. այնուհեաւ շրջակալքի ըրդերի  
մէջ լուր տարածուեց, թէ ուս Պէտօի տունն  
օրհնած է, թէ Աստուած է նրան տուել: Եւ  
փորձութիւնն անցաւ այս Յոբ երանելու տան  
վրայից, առանց վնաս պատճառելու:

Անցան հանգստութեան և երջանկութեան  
գարձեալ մի քանի տարիներ. ուսի ամբար-  
ներն առաջուայ նման լիքն էին, թէև հիւ-  
րերն առաջուայ նման անպակաս էին. քիւր-  
դերը կրում էին իրանց բաժինները, իսկ  
շէլս Աւղին տանում էր իր սերմացուն: Բայի  
սրանցից քանի՛ քանի՛ հարեան չունեոր ըն-  
տանիքներ ապրում էին բացառապէս ուսի  
տնով և աղօթքներ վեր առաքում Աստուծուն  
արդար մարդու օջախի հաստատութեան հա-  
մար: Շատերից մէկն էր և Մինօն իր Զիւնիկ  
կնոյ և երկու զաւակների հետ, որոնք կե-  
րակրում էին ուսի սեղանից: Մինօն ուսի  
ամենափոքր օրդու կարիչ Մուրադի հետ ոչ-  
խարները պահելու բացառիկ պաշտօնն ունէր,  
և վաղուց էր, ինչ դարձել էր «տանու աղայ».  
ուսի Մինօն իր որդիներից չէր չոկում, իսկ

Մինօն էլ այս սէրը կարողացել էր արդարաց-  
նել օրինակելի հաւատարմութեամբ:

Գարնանալին օրերից մէկում մի անգամ մի  
անակնկալ դէպք տեղի ունեցաւ, որ կայժակի  
հարուածով իշաւ ուսի տան վրա և նրա  
յարկի տակ իշխող ուրախութիւնն ու երջան-  
կութիւնը սուզի և արտմութեան վերածեց

Մուրադն ու Մինօն արշալոյսից շատ առաջ  
սրնդի ծալնով իրանց հօտերը սովորական  
սարերն էին բշել, ուր յաճախակի բերում էր  
իր հօտը և մի քիւրդ հովիւ: Այս երեք պաշ-  
տօնակիցները շատ անգամ էին միասին սիրով  
խորափկ եփում ուտում, զրոյցներ անում, գայ-  
լերի դէմ կռւում: Այդ օրը քիւրդի փոխանակ  
նրա ոչխարները բերել էր նրա քոյրը՝ սեաչեայ  
Դուլէն, որին եղբայրը ընկերների խնամքին  
էր յանձնարարել դեռ երէկուանից: Ճաշը մօտ  
էր, երբ հեռուում երեք զինուած ծիաւորներ  
երեացին. աղջիկն այդ տեսաւ և գունատուեց,  
նա աղերսող հայեացը ծգեց դէպի երկու երի-  
տասարդները:

— Ես գիտեմ, սրանք ինչու են գալիս, ծեր  
բախտն եմ ընկել, ինձ մենակ մի թողնէք:

Երիտասարդներն իսկոյն զլիսի ընկան, որ  
սրանք գալիս են Գուլէին փախցնելու հակա-  
ռակ իր կամքի: Նրանց համար ծանր դրու-  
թիւն ստեղծուեց: Աղջկան թողնել հակա-

տագրի կամքին անհնարին էր, եղբայրը վրէժինդիր կը լինէր և նամարդութիւն էր. կուրի բռնուել եկողների հետ, վտանգաւոր էր: Այս մտքերով էին պաշարուած երկուսն էլ, երբ ձիաւորները սրարշաւ հասան և միասին դէպի Գուլէն դիմեցին, որ խոյս տուեց դէպի երիտասարդները: Մուրադն ու Մինօն առաջ ահցան և փորձեցին խնդիրը քաղցրութեամբ վերջացնել:

— Իրաներ, (եղբայրներ), ասաց Մինօն, այս աղջիկը մեր ընկերոջ քոյրն է, և այսօր մեր խնաճքին է յանձնուած. դուք ինքներդ էլ հասկանում էր, որ այդ պատճառով մենք պատասխանատու ենք սրա կեանքի համար, խրնդրում ենք թողէք սրան այսօր, մենք տիրոշը յանձնենք, որ նամարդ չըլինենք, յետոյ դուք զիտէք:

— Տօ՛, Փլայի կտորներ, ծեր ի՞նչ բանն է, պոռաց մի ձիաւոր. հեռու, ծեղ ասում եմ, թէ չէ... նա սպառնաց հրացանով:

— Զենք թողնի, վեռողաբար կրկնեց Մինօն, որին պինդ փաթաթուել էր Գուլէն:

Քիւրդը կատաղած՝ հրացանը պարպեց. Մուրադը նրան պատասխանեց. Ելի մէկ երկու անգամ հրացանները արաքտրաքեցին, և Մինօն ու մի քիւրդ անշնչացած ընկան. Մուրադը ժանը վիրաւորուած երկու ձեւքով

բռնեց կուրձքը, իսկ գոռացող աղջիկը տարուեց: Հայ և քիւրդ գիւղերից հասած «հաւարը» անօգուտ անցաւ. Մուրադը թոթով լեզուով հազիւ կարողացաւ համառօտ կերպով անցըը նկարագրել և հոգին փչեց:

Բ... գիւղում ընդհանուր սուդ տիրեց, երբ երկու զիակները բերին սալլերով: Ամենքն էլ ողբում էին, իսկ երկու այրիների և Խաթուն Մարէի ողբն ու վայնասունը ապառաժ քարերից արիւն-արցունք էր քամում: Մինօնի կին Զիւնիկը իր «թագ ու պսակ, իր զըլխաւոր էրկան» լալով հանդերձ, սգում էր և իր անտէրութիւնը և իր զաւակների «եթիմութիւնը»: Ծերունի ուսոր վշտից շարդուած կանգնած էր զիակների զիխավերելը և թէև կրկնում էր «փառք քեզ Սատուած», բայց և արտասուբները ծեր աչքերից զլորւում էին ալէզարդ միրուքի վրայից կաթիլ կաթիլ և թրջում էին նրա կուրձքը: Թաղումը վերջացաւ. սուզը գաղարեց: Ուսոր կարգադրեց, որ Զիւնիկը իր երկու որբերով մի անդամ ընդ միշտ անտէր ամայի տնից տեղափակուի իրանց՝ ուկսենց տունը. տանեցոց էլ խիստ պատուէր տուեց սիրով և քաղցրութեամբ վարուել Մինօն ընտանիքի հետ, տան անդամներ համարել նրանց:

— Եթիմի սիրտը փուխը կեղնի, շուտ կը կոտրի, խով էր էս շանց չը տաք էնոնց, ասաց ուսոր իր ընտանիքին:

Ուսի յարկի տակ Զիւնիկը դտաւ միայն տաք և սիրող սրտեր, ասես թէ իր հարազատներով շրջապատուած լինէր. նա մի փոքր միմիթարուեց, զգալով՝ որ իր զաւակները անտէր չեն. ժամանակն էլ, սրտի ամեն տեսակ ցաւերի այս բուժիչը, իր սպեղանին դրեց նրա մորմոքացող վէրքի վրա, մի փոքր հանգստացրեց նրան, և Զիւնիկն ըստ երկոյթին հաշտուած իր նոր վիճակի հետ, սկսեց խաղաղութեամբ ապրել ուսի տանը և սրտով աշխատել այդ տան համար. միայն կտրին Մինօի՝ իր սիրած ամուսնու կսկիծը ներքուստ նրան տանջում էր և զիշերալին խաւարի մէջ ամենից ժածուկ արտասուբներ քամում նրա աչքերից: Իր այդ վշտի սփոփանքը բոլոր տանեցիներից նա դանում էր ծաղիկ Խաթունի մէջ, որը իր ընկերը կորցրած թռչնի պէս նոյնպէս վշտահար էր, նոյնպէս կարօտ էր սփոփանքի: Երկու այրիները կապուեցին իրար հետ ընդհանուր վշտի անքակտելի կապերով, խառնեցին իրար իրանց ցաւերը և հաւասար ուժով տանել սկսան, որպէս զոյտ ամուներ: Նրանք միասին էին գնում ամուսինների թարմ զերեզմանները

և իրար գրկած սգում նրանց վաղաժամ մահը, և ապա փոխադարձապէս միմիթարում իրար, որպէս երկու սգաւոր քոյրեր:

Ծաղիկ և Զիւնիկ մանկութեան ընկերունիներ էին, միասին էին խաղացել և զուարծացել անմեղ մանկութեան երշանիկ օրերում, միասին էին թափառել ծաղկաւէտ սարերն առողերը, միասին էին քաղել բանջարներ ու ծաղիկներ, միասին էին յօրինել կուսական առաջին սուրբ սիրոյ երգերը և համարեա միաժամանակ իրանց սրտերը տուել էին մէկը՝ Մուրադին, միւսը՝ Մինօին: Ամուսնանալուց յետոյ մի առ ժամանակ միայն մէկի հարստութիւնն ու դիրքը, միւսի աղքատութիւնն ու խեղճութիւնը խախտել էր ճակատագրի այս տարօրինակ զուգագիպութեան հաւասարակշռութիւնը, բայց նոյն ճակատագրին հանելի եղաւ այդ երկու սրտերը դարձեալ միասին չարգել, նրանց միասին թշուառացնել, և նրանց վիճակների նմանութիւնը վերականգնել: Եւ Ծաղիկն ու Զիւնիկը ինչպէս որ միասին էին թագն ու պսակին արժանացել, միաժամանակ վայելել սիրոյ հեշտանքներն ու երշանկութիւնը, այնպէս էլ միասին այրիացն, սև կապեցին: Լեռան կրծքին մոռացուած զոյտ ուշացած ժաղիկներ էին սրանք, որոնք վրա հասած աշնանալին ցրտից նեղուելով,

իրանց թառամած գլխիկները իրար էին կպցնում, քաշ ծղում, ասես կամենալով գուրդուրուել, փաթաթուել, փարուել իրար միալնութեան և վշտի դառնութիւնը մոռանալու համար։ Այսպէս էին միսիթարւում երկու այրիները։

Դարձեալ անցան օրեր և ամիսներ. տան մէջ խաղաղութիւնը կրկին վերականգնուեց, կոկիծն ըստ երեսիթին մոռացուեց, բայց ուշ Պէտօն մռայլուեց, հարուածը նրա համար շատ ժանր և անսպասելի էր։

— Փառք քե Աստուած, կամք քո օրհնեալ էղնի, թէկ կրկնում էր նա յանախ ըստ իր սովորութեան, ամենայն մի ծախորդութեան և աշողութեան մէջ Աստուժոյ անհասանելի կամքը փնդրելով, բայց և այսպէս մռայլը նրանից չէր հեռանում, ժեր ճակատի վրա կնճիռներն աւելացան, նա աւելի երկար էր մեն-միայնակ նստում օդայում, աւելի սակաւ էր ուրիշների հետ խօսում և խիստ յանախ ինքն իրան։ Տիսուր նախազգացումը նրան օր ու գիշեր հանգիստ չէր տալիս. նրան թւում էր, թէ այս թշուառութիւնը գալիք աւելի մեծ թշուառութեան կարապետն է. «Արցունքը զուլում կը ծնի», ասել էր նրան իր հայրը շատ տարիներ առաջ և այդ «զուլումի» վախը նրա սրտից չէր անցնում։

— Այսր էրկու «մէյիդ» մէ խէտ, էս իմալ էղաւ. հալբաթ մեղաւոր եմ, Տէր մեղա քե էրկու սեաւոր որբեր մէ տան մէջ. Աստուած դու բարին կաաարես,—այսպէս էր խօսում նա ինքն իրան շատ անդամ։

Երբեմն նայելով իր շէն տան վրա, իր չորս կտրիմ, առողջ որդիների վրա, կայտառ շնձու փոքր թոռների ուրախ կանչկատոցը լսելով, ինքն իրան սիրտ էր տալիս, միսիթարում, աշխատում էր հեռացնել իր սրտից թախիծը, հեռացնել իրանից տիսուր նախազգացումը։ Այդ ժամանակ նրան թւում էր, թէ զուր է այլքան վշտանում, զուր է այլքան կասկածում, վախենում. աշխարհումս ովկ վիշտ չի ունեցել, ովկ է անսպայման բազգաւոր եղել, ում զանից դադաղ ներս չի մտել, ովկ սիրելիների գերեզման չունի։

— Էլի փառք էղնի քե Աստուած, ես անարժան, մեղաւոր մարդ եմ. էսա շէն տուն, էսա սաղ սալամաթ տղէկներ, էնոնց խօրոտ մօրոտ նժեր զըմմէն լէ քո խովի տակ կապըեն, ես քեմէ ռազի եմ, Տէր, էնա արնակուլ. բէմուրազներին լէ դու տուիր, դու տարար, հազար բերան փառք քե, օղորմած Տէր, ասում էր նա, ապա նոյն օրը շտապ-շտապ զնում էր եկեղեցի, երկար, շատ երկար և

չերմեռանդ աղօթում էր, յետոյ ծունկ էր չոքում քահանալի առաջ:

— Տէրտէր, մեռնիմ քո աշուն, Աստուծոյ առաջ տրտունչ էնելլը մեղք չէ:

— Մահացու մեղք է, ուս, մահացու մեղք,

— Դէ թողութիւն տուր ձի, տէրտէր, ես մեղաւոր մարդ եմ:

Քահանան ասում էր «ողորմեսցին» ծերունու ալէզարդ պիսի վրա, և սա հանգստացած, խաղաղ հոգով տուն էր դալիս, գոհ և ուրախ լինելու հաստատ վճռով: Այսպէս անց էր կենում մի երկու օր: Սակայն սև կապած երկու այրիներն իրանց վշտահար դէմքերով և միշտ արտասուագին աչքերով, որբ մնացած չորս մանուկները, որոնք ամեն րոպէ շրջում էին նրա աչքի առաջ՝ դարձեալ ցաւերի, տխուր նախազգացումների մի անսպառ աղբեւր էին դառնում նրա համար. կնծիռները կրկին կուտակւում էին նրա ծեր ճակատին, սիրտը դարձեալ մթնում էր որպէս սև գիշեր, տխուր նախազգացումները կրկին պաշարում էին նրան և նա դողում էր այդ անխուսափելի նախազգացումից, որպէս չար հրեշտակից: Նա վախենում էր մանաւանդ այրիների սղից, և ի սրտէ ուզում էր, որ այդ երկու կանալը այլ ևս չը սկան, դադանի չարտասուեն. նա համողուած էր խորին կեր-

պովի, որ երբ տան մէջ պատահած դժբախտութիւնից յետոյ արտասուքն անընդհատ շարունակում է, երբ մարդ չի ուզում իսպառ հաշուուել իր նոր, թէկուզ շատ ծանր գիծակի հետ, չի կորողանում փառք տալ Աստուծուն, այդ նշան է, թէ այդ տանը նոր և աւելի մեծ դժբաղդութիւն է պատահելու, որ հին թշուառութեան արտասուքը նոր արտասուքի պիտի խառնուի: Նա այդ ժամանակ իր կասկածամտութիւնն ու երկիւղն էլ բացատրում էր հարսների անընդհատ սղով, մեղաղրում էր նրանց իր սրտի խորքում, բայց ոչ ոքի ոչինչ չէր ասում, վախենում էր թշուառներին էլ աւելի վշտացնել: Մի անգամ վերջապէս, հոգկան վրդովմունքի խիստ րոպէին արտասուք տեսնելով Ծաղիկի աչքերին, ասաց Խաթուն Մարէին.

— Կնի՛կ, էսա Ծաղիկն ու Զիւնիկը չուն է՞ փ տիլան, ընչի՞ բեղսիմութիւն կէնեն, աչքերն ամալ կայ... Ախր չէ էս ա տուն տիսոսի, էս Ճեր մեղք են, Աստուծած կը զայրանայ, աղէկ չէ, էնոնք չէ՞ն գինայ օր արցունքը զուլում կը ծնի:

— Քա մարդ, էս ի՞նչ ընեմ, ի՞նչ խող տամ զիխուս, ապա ես չէ՞մ ասե, կոտրած սրտին խրատն ի՞նչ էնի, ասելով բան կէղնի՞, ուրախութիւնը սրտից տի բղխի:

Եւ Ծաղիկն ու Զիւնիկը տխուր ու վշտահար, նրանց աչքերը միշտ թաց մնացին, արտասուքը ուսի տնից լը պակասեց, տխուր նախազգացումը չը թողեց ծերունուն, մինչև որ հասաւ այն սև տարին:

Գարնանալին պայծառ լուսաշաղ օրը մօտեցաւ երեկոյին. արևի լուսաւոր գոսնդը յետ քաշելով իր ոսկեալ յնցուղները լեռների կատարներից՝ ծածկուեց հօրիզոնի ետև. շառագոյն արեւմուտքը գունատուեց. երեկոյեան աղջամուղն իշաւ լեռների և դաշտերի վրա և շուտով համատարած խաւարի մեջ Բ. գիւղը հանդիսաւ բնեց օրուայ աշխատանքներից յետով անգէտ և երջանիկ:

Կէս գիշերը մօտ էր. յանկարծ գիւղը հիմնիվեր դղրդաց մի սարսափելի որոտից, որ սասանեցուցիչ արձագանքներով գնաց կրկնուելու լեռներում ու ձորերում: Հեղեղ եկաւ, թէ գետերն իրանց ընթացքը փոխեցին. ծովերը դաւրս թափուեցին լեռնացած ալիքներով, թէ սարերը յանկարծ փուլ եկան դաշտացան. սև, մթաղին ամապ էր, որ որոտաց, թէ երկինքը փուլ եկաւ աշխարհը կործանեց. գետինը պատռուեց և սանդարձմետի դեւրը դուրս հանեց, թէ մի ահռելի կայծակ էր, որ հսկայական ձախով հալթեց Բ... գիւղի զլիսին և բիւրաւոր հրեղէն լեզուներով միանդամից

հրդեշեց իրմիթներն ու խոտի դեղերը, — այդ սկզբում ոչ ոք չիմացաւ. միայն երբ սոսկալի ձախներից խելադարութեան չափ սարսափած բնակիչները դուրս թափուեցին, իրանց գտան բոյերի և զնդակների մէջ: — Քիւրդերի մի ահագին բազմութիւն սրով և կրակով կործանում էր Բ... գիւղը՝ բնակիչներին առանց խտրութեան սեռի և հասակի սրի ճարակ գարնելով: Դիտապատ ընկածների ոռնոցը, մեռնողների վերջին սրտաճմլիկ հոնվիւնը, կենդանիների վայն ու ծիչը, կանանց ու երեխաների աղիողորմ ձախները, դժութիւն հայցողների աղերսանքը լցրել էր ծխապատշչակայքը:

Անօրէնները թակեցին ուսի դուռը, տղամարդիկ դուրս թափուեցին բակը, նրանց հետեւց բոլոր մնացած բազմութիւնը: Գիւղի հսկայական լուսաւորութիւնը, լսուող յուսահատական ձախները նրանց աչքի առաջ ամենայն ինչ պարզեց: Ամենքը սարսափից բըռնուած մի քանի ըոպէ կանգ առան լուռ, անմռունչ, իսկ երբ զրան ահաւոր շրխկոցը կրկին և կրկին լսուելով նրանց հանեց շուտառումից, կանալք և երեխաները սարսափելի վայնասուն բարձրացրին:

— Բայեք, գոռում էին դրսից, թէ չէ...

— ի՞նչ էնենք ափօ, ասաց Սրբէն, դուռ  
կը չարդեն:

— Բացէք, կարծ կերպով ասաց ծերունին  
մահուան գատապարտուածի աներկիւղու-  
թեամբ և ամբողջ ընտանիքի բախտը ճակա-  
տագրին լանձնելով:

Երկուսը ահով մօտեցան և նիզը յետ քա-  
շեցին. դրսի Ճնշումից գուռը սաստիկ շրջի-  
կաց և տասնեակ հրացաններ ճայթելով ծխով  
պատեցին ամենայն ինչ: Վայրենիների մի կա-  
տաղի խումբ ներս խուժեց զարհուրելի աղա-  
ղակներով. այնուհետեւ թէ ինչ կատարուեց,  
խաւարն ու ծուխը արգելեցին տեսնել. լսուում  
էին միայն հոգի խլացնող, սրտամմլիկ ձայներ.  
խաւարի մէջ գործում էր պողվաար: Երբ բո-  
ցավառուած խրճիթը լուսաւորեց բազը, մի  
զարհուրելի տեսարան բացուեց. — ծերունու  
երկու որդիները, գնդակահար ընկած, մա-  
հուան տագնուալի մէջ ոլորտում, կծկում էին,  
գետնի վրա քաշ գալով. միւս երկուսը մի  
խումբ դազանների սրերի մէջ դեռ պաշտ-  
պանուում էին... Էլի մի երկու րոպէ և նրանք  
էլ ընկան հոգեվարքի հառաչանքներով: Ծե-  
րունի ռէսն ալզբանը տեսաւ: Մի օրօրոց՝  
ճիճվացող մանուկը մէշը՝ օղի մէջ սոսկալի  
պատուաներ գործելով՝ ընկաւ խրճիթի բոցերի  
մէջ. նրան հանելու համար հրդեհի մէջ ձգեց

իրան ռէսսի մէծ հարսր: Փռքրիկ հինգ տարե-  
կան Յուսիկին տնից գուրս քաշելով մի անօ-  
րէն սրով կես արեց: Ծերունին այդ էլ տե-  
սաւ. «Ինձ զարկէք, ինձ մորթեցէք», գոռում  
էր նա. բայց անօրէնները նրան մոռացել էին:  
Մի վայրենի քիւրդ՝ երկար, շէկ ծամերից բրո-  
նած քաշէր տալիս գեղեցիկ Շամամին, ռէսսի  
կոյս թոռանը: Մարէ Խաթունը կախուել էր  
Շամամի ծեռքից, բայց երբ անկարող եղաւ  
յետ քաշել զոհին, վազեց մի ահազին բար  
վերցրեց և սրահի թմբի վրա բարձրանալով՝  
ուժդին թափով քրդի վլխին իշեցրեց, որն  
արիւնաշաղախ, փշրուած գանգով ընկաւ ոռ-  
նոցով. իսկ նրա ընկերը սրի մի հարուածով  
գետին տապալեց Խաթուն-Մարէին: Ծերունին  
այդ էլ տեսաւ և այլ ևս ոչինչ չը տեսաւ.  
Նրա ոտները գողգողացին, գլուխն երերաց,  
աչքերը մթնեցին և մի ծանր, երկար «ամխ»  
քաշելով գետին գլորուեց ուշաթափ: Ամեն  
ինչ վերջացաւ... «Ֆլայի» սուրբ օջաղն էլ  
ըրդերը քանդեցին...

---

## II.

„ԽԱԹՈՒՆԻՑ ՍԻՐՈՒՆ“.

Աշուն էր, մի ցուլտ ու ախուր օր. երկնքի  
սև միապաղաղ թզպերից բարակ մանրամաղ  
անձրել մի քանի օր շարունակ դալիս էր ու  
գալիս, ասես սղաւորի աչքերից։ Ճանապարհ-  
ներում, փողոցներում անցուղարձը անտա-  
նելի էր դարձել, մարդիկ հաղիւ էին փո-  
խում իրանց ոտները հաստ ափղմի մէջ։

Այդ ժամին ի... դիւդի մի ծայրից երևաց  
մարդկալին մի տարօրինակ կարաւանի սկիզբ,  
մի չը տեսնուած ամբոխ։ Գերեզմաններից  
դուրս փախած մեռելների մի խումբ էր դա,  
որ դանդաղ, յամրաքայլ առաջ էր ընթանում։  
Մեծ ու փոքր, ծեր ու մանուկ, մարդ ու կին,  
ամենքն էլ գզզզուած, վտիտ մարմիններով,  
վշահար դէմքերով։ «Դաղթականներ են»,  
կարճ կերպով շշնչացին տեղացիները և ամեն  
մարդ դնաց իր դործին։

Անձրել շարունակում էր թափուել. նրանց  
ողորմելի ցնցոտիները թրջուած կպել էին  
նրանց վտիտ մարմիններին։ Մարդիկ իրար  
ծեռքից բռնած, իրար քաշքելով քայլում  
էին լպրծուն ցեխի միջից, ուժասպառուելով  
երբեմն-երբեմն վայր էին ընկնում, ցեխի մէջ

կոլորւում և կրկին վեր կենում այլանդակուած։  
Լուս էին ամենքն էլ, դէմքերի վրա յուղար-  
կաւորի լրջութիւն կար. հսկայական դամբա-  
րանից էին դալիս, ուր դեռ նոր էին հողին  
յանձնել հարիւր հազար սիրելի հարազատներ։  
Մերծաւոր, թարմ անցեալի սարսափը, անգուշ  
ապագայի ծառհոգութիւնը ճակատներին, այս  
մարդիկ բերում էին ի տես աշխարհի իրանց  
անպատճելի վշտերը՝ մարմնացրած իրանց չո-  
րացած դէմքերի, պատառուուած, ծլանքնե-  
րով կախ ընկած ցնցոտիների, յուսահատ  
շարժումների, խղճուկ ծայների և խօսակցու-  
թեան մէջ։ Արեան ծովից էին անցել և եկել  
մի պատառ հաց, մի կաթիլ ջուր, մի տաքուկ  
անկիւն հայցելու և յուսով էին, թէ այս աշ-  
խարհը նրանց չի զանայ այդ շնորհը։

Եկան և անցան։ Ամենից վերը բաւակա-  
նին յետ մնացած և նոյնպէս թրջուած, նոյն-  
պէս ուժասպառ դալիսն էին մի ծերունի և  
մի նորատի կին, իւրաքանչիւրը մի 7—8  
տարեկան երեխայի ծեռքից բռնած։ Մերունին  
ցեխի հաստ շերտի մէջ հաղիւ էր կարողա-  
նում իր ստները փոխել. նրա մէջքը կորացած  
էր, աչքերը մարած և խոր ընկած, որոնց  
մէջ արտացոլում էր վշտի մի անսահման  
ծով։ Գլխի ճերմակ ալիքներն ու միրուքը  
թրջուելով, ոլոր-ոլոր կախկխուել էին ուսերի

և կրծքի վրա բազմաթիւ պատրոլգների ձեռվ,  
և նրանց ծայրերից կաթիլ կաթիլ թափւում  
էր անձրեսի ջուրը ու թրչում բաց պարանոցն  
ու մաղոտ, ոսկրացած կուրծքը:

Ոչ պակաս դժուարութեամբ էր բայլում  
և նորատի կինը իր ձեռքի երեխայի հետ.  
վերջինս մանաւանդ հաղիւ էր կարողանում  
իր փոքրիկ ոտները շարժել սառը ցեխի մէջ  
և համարեա քաշ էր ընկել մօր ձեռքից,  
դժուարացնելով նրա գնացքը:

Սրանք էլ եկան անց կացան, սրանք էլ ոչ  
ոքի ուշադրութիւն չը գրաւեցին: Եւ ինչո՞ւ  
պիտի գրաւէին. քիչ էին այդպիսիները եկել  
անցել, եւ ոչ ոք չիմացաւ, որ այս ջարդուած,  
վշտահար ծերունին ուս Պէտօն է, հազար-  
բաւոր ոչխարների, հարիւրաւոր այլ անա-  
սունների և անհատնում ամբարների, օրհնած  
օչախի հոչակաւոր տէրը, իսկ նորատի կինը  
նրա հարսն է՝ Ծաղիկ խաթունը իր երկու  
զաւակներով: Սրանք էին միայն փրկուել ուսի  
բազմաթիւ ընտանիքից. դիակների կոյտերի տակ  
ուշագնաց մնալով. մնացած քսան և վեց հո-  
գին կամ սրին ու կրակին էին զոհ գնացել,  
կամ տարուել որպէս անօրէնների պագուսու-  
թեան սուարկաններ, կամ զլուխ առել փախել  
էին ով գիտէ ուր...

Բախտի բոլոր այս խորթ զաւակները ներս  
թափուեցին ի... զիւղը և այս ու այն տան  
մէջ, այս ու այն սաքւում, պատերի տակ  
կուչ եկան հանգիստ առնելու, տաքանալու,  
ողորմութեամբ ձեռք բերած մի քանի պա-  
տառ հացն ուտելու:

Մէկ աւերակ տան ամայի սրահն էլ ուս  
Պէտօին բաժին ընկաւ: Արդէն մութն էր,  
երբ հոչակաւոր օչաղի վերջին մնացորդները  
ցրտից դողդողալով, ուժասպառուած թա-  
փուեցին սրահի մէջ, իրար վրա կուչ եկան  
մի հատիկ զզզզուած փալասով փաթաթուե-  
լով, որ տուեց նրանց մի աստուածասէր  
մարդ:

Մութ էր. լուռ էին ամենքն էլ. միայն  
ծանր թուխապերից կամաց-կամաց մաղուող  
միակերպ անձրեսի մանր կաթիներն ընկնելով  
դետնի երեսին այստեղ այնտեղ կազմուած  
փոքրիկ լճակների հետ՝ մեղմ ճղփիւն էին  
առաջացնում, որը սակայն խիստ անախորժ  
ազգեցութիւն էր գործում տաքութեան  
կարօտ դողդողացող թշուառների վրա. լսուում  
էր ուսի ծանր տնքոցն ու հառաչը, յուսա-  
հատ «օֆ, օֆ փալագ» բացականչութիւնները:

— Մարէ՛, անօթի եմ, մրմնչաց փոքր մա-  
նուկը:

— Անօթի եմ, Մարէ շան, միացաւ նրան  
և միւսը:

Լուռ էր Ծաղիկը, լուռ էր և ուս Պէտօն,  
ոչ մէկը լը գիտէր թէ ի՞նչ պատասխանով  
հանգստացնի մանուկներին:

— Մարէ, կրկին լսուեց խաւարի մէջ փոքր-  
թիկի լացակամած ձայնը:

— Քնի՛ր լաօ, քնիր լաօ, սկսեց հանգստաց-  
նել նրան մայրը, թող լուս բացուի, խլսուն  
ձե խաց կուտամ, մեռնիմ ձեզի, մկայ ես դո՞ր  
էրթամ, կը տեսնաք իմալ մութա:

Պատճառաբանութիւնը մանուկներին հիմ-  
նաւոր թւաց. նրանք խաւարից սարսափում  
էին. օ, ինչ՛ր էր կատարուել այս խաւարի  
մէջ, ինչ՛ր էին տեսել իրանք մանուկները  
այն դիշերը... «Մարէն դո՞ր էրթա, «Էնոնք»  
կը կարեն», մտածեցին նրանց փոքրիկ զլուխու-  
ները: Մանուկներն աւելի մօտ սեղմուեցին  
իրանց մօրը և լուցին: Կրկին տիրեց լուռ-  
թիւնը, կրկին լսուեց անծրեի կաթիլների  
մեղմ, անախորժ նղիկիւնը և ծերունու «օֆ  
օֆ» հառաչանքները: Ծաղիկը դո՞հ էր, «Ռ  
գոնէ կարողացաւ մանուկներին լուսով հան-  
գստացնել, բայց և ծանր մաքեր պաշարեցին  
նրան. առաւօտը ի՞նչ տեղից պիտի հաց նա-  
րի. գնալ մուրալ... ուս Պէտօնի հարսը հանց  
մուրա... մահն աւելի լաւ չէ... մեռնողները

աւելի բախտաւոր չեն... Իսկ ծերունին, նա  
շարունակում էր տնքալ, նա այրուում էր, նա  
տեսդի մէջ էր: Ահա վերջապէս նա ընդհատեց  
լուռթիւնը, ինքն իրան էր խօսում, թէ ինչ-  
արսի հետ, այդ լայտնի չեղաւ:

— Անձրւ կուգայ ծրծրլալէն, Ե՞րբ տի  
կտրի, երկիր կը խարցնի... դէ երկինք ի՞նչ  
թափեց, որ երկիր զաքուլ չէրեց. Թափի՛ր  
երկինք, թափիր, թող սէլաֆ էրկիր բռնի,  
թող զետեր զըմզըմալէն էլնեն բռնեն երկրի  
երես. երկիր Ե՞րբ ձէն կը խանայ, Աստծու  
խէրն է, բարին է, փառը քե Տէր. երկինք  
ի՞նչ թափեց, օր երկիր զաքուլ չէրեց, թափիր  
երկինք...

Նա մի փոքր լուեց, ապա կրկին շարու-  
նակեց:

— Ճեր անօթի են, հայ հու, ուս Պէտօնի  
ճժեր անօթի են... «Էնոնք» անօթի չեն, Ծա-  
ղիկ, էլման չի լաօ, Էնոնք կուշտ պառկած  
են, Էսոնք են անօթի. Է՞հ, ի՞նչ էնենք, եր-  
կինք ի՞նչ թափեց, որ երկիր զաքուլ չէրեց.  
Էսոնք լէ երկրի զաւակներ չեն... Թափիր եր-  
կինք, թափիր համա սէլաֆ շինիր, տար էսա  
ճժերին լէ, էլ անօթի չեն եղնի...

Ծերունին լուեց, զլուխը կրծքին քաշ գցեց:  
Եթէ լոյս լինէր, կարելի էր տեսնել, թէ ինչ-  
պէս են վառւում նրա խոր ընկած աչքերը,

դողդողում շրթունքները. նրա կնծռոտ նական ու չորացած այտերն ալրում էին տեղով, ասես բոցերի մէջ, և դլուխն օրօր ում էր ցնցելով ալեղարդ միրուքը: Ծերունու խօսքերը սարսափեցրին Ծաղիկին և ճմլեցին նրա սիրար. թարմ, սարսափելի անցեալը խաւարի մէջ ներկայացաւ նրա աչքերին:

— Ծաղիկ չան, էլի՞ կուլաս... օֆ, դու ինչդար լացար լաօ... ես չեմ լայ, ես իմալ լամ. ախր իմ արցունք վէր ո՞ր մէկ կրակին թափեծ: Երկինք օղորմածի, կը տեսնաս, կուլայ իմ տեղաք, դուն լէ լաց լաօ, ես քե առաջ կասի—«արցունքը զուկում կը ծնի», ես լախրթի կէնի, սուտ կասի, արցունքը զուլում չի ծնի. լաց, թող սէլափ էղնի, մենք լէ էրթանք, սէլափը մեղ դաբուլ ի. երկինք ի՞նչ թափեց, որ երկիր դաբուլ չէրեց. կը տեսնաս, երկնուց ծլծլալէն իմալ կուլայ էսա անձրև. Երկիր սուտ, մունչ ներս կը ծծի, որ երկնուց արուն թափի, երկիր էլման ներս կը ծծի. տեսա՞ր լաօ, էնա մեր բագ պուտըմ արուն չը մնաց, զրմձէն գետին բաշեց ուր չան... Ա-իս, երկինք ի՞նչ թափեց, որ երկիր դաբուլ չէրեց, մենք լէ երկիր զաւակներ չենք...

Դարձեալ լոութիւն տիրեց, միայն լսում էր ծերունու ընդհատ ընդհատ շնչառութիւնը և հառաջանքները: Նա հիւանդ էր, շատ հիւանդ. դառնութիւնն բաժակը լցուել էր, թշուառութիւնը վերջին հարուած էր տալիս այս բայրայուած կազմուածքին: Անցած ժամերի Ծաղիկն անքուն հսկում էր ծերունու վրա. նա զգում էր, որ հիւանդի վերջին ժամերն են: Յաւիտենականութեան չափ երկար գիշերին յաջորդեց վերջապէս առաւօտը. ծերունին այլ ես ոչինչ չէր խօսում, նրա աչքերի տենգոտ հայեացըն ալժմ անորոշ էր:

Ծերունու այս ու այն կողմից փալասի տակից գուրս սողացին երկու զզզզուած մանուկները և համարեա միաբերան հայ խնդրեցին: Ծաղիկի աչքերը լցուեցին արտասուբով. առաջը պառկած էր մեռնող ծերունին, իր հայրը, իր որբերի հովանաւորողը, երկու զաւակները «հաց» էին աղաղակում. ի՞նչ անել, մտածում էր նա: Ահա նա մօտեցաւ, զգուշութեամբ տեղաւորեց փալասը մեռնողի վրա, աչքերը սրբեց և գուրս գնաց, շուտով վերադառնալու հաստատ որոշումով: Երկու որբերը նստեցին հիւանդի այս ու այն կողմերում, իսկ նրանց մայրը գնաց հաց մուրալու... Ահա նա արդէն մի դրան առաջ կանգնել է.

մտնել թէ չը մտնել. ախր ի՞նչպէս ուզել, ի՞նչպէս ինդրել... Վերջապէս նա սիրա արեց ու մտաւ կամացուկ, անվստահ քայլերով և տան զրան առաջ մի սիւնի ետևում կանգ առաւ, աչքերը գետին խոնարհեց և ոտքի ծալրով սկսեց խառնել ցեխի մի կտոր:

— Ի՞նչ կուզես, բաշի, հարցրեց տանտիկինը:

Երանի՛ թէ այդ հարցի փոխարէն նրա զիսին մի ժանր հարուած իշնէր, երանի թէ մի ամազ ճայլթէր և կայծակը զարկելով միտնդամից ալրէր, մոխիր դարձնէր Ծաղիկին և նա դոհ կը լինէր. բայց այժմ ի՞նչ պատասխանել, ի՞նչպէս առել «հաց եմ ուզում», ժոտածեց շփոթուած կինը և պատասխանի փոխարէն սկսեց հեկեկալով լալ: Տանաիկինը երեխ հասկացաւ նրա այդ ներքին կոխւր, նա լուսթեամբ ներս մտաւ, բերեց հացի մի ժալ և տուեց արտասուող կնոշը, որ փաթաթեց դոդնոցում և դուրս դնաց:

Բակի դրանը նա յանկարծ կանգ առաւ քարացած, նա իր աչքերին չը հաւատաց, երբ տաս քայլ իրանից հեռու կանդնած տեսաւ Զիւնիկին, որ ով գիտէ կոտորածից ինչպէս եր աղատել դուխը և այստեղ հասել: Զիւնիկը նոյնպէս վշտահար, նոյնպէս զզդզուած կանգ առաւ և խորին ցաւակցութեամբ ու խան-

դաղատանքով երկար նայեց Ծաղիկին: Ապա մի անօրինակ ձայնով վաղեց և իր ափրուհու ոտներն լնկաւ գոչելով.

— Վայ, կուրճան աչերս, Ծաղիկ խաթուն, դուն լէ խաց կը ժողովես. երկինք իմադ դարուլ երեց, որ ուս Պէտօի խարսր, Ծաղիկ խաթունը խաց ժողվայ. դէ դու պատռվիր է է՛, գետին, էսա իմ սեաւոր զլուխ ներս առ, չը տեսնիմ բարի: Զիւնիկը քո ոտաց մատաղ, Ծաղիկ խաթուն, զլուխս հէլքան քո աւեր օչախի քիւլին, խաթուն ջան, էս ի՞նչ էղաւ, մէկ տեղ ուրիշանք, մէկ տեղ սպացինք, մէկ տեղ արուն տեսանք բօլ չէր, մկայ էլ մէկ տեղ խաց ափ ժողվենք...

Անցորդները հետաքրքրուելով չորս կողմից շրջապատեցին այս սգացող կանանց: Ծաղիկն ինչ անելը չիմանալով սառած կանգնել էր, ապա բարձրացրեց զգգզուած դոգնոցը աչքերի արտասուըները սրբելու, մինչդեռ այնքան դժուարութեամբ ձեռք բերած հացը վաղուց էր ընկել ցեխի մէջ: Իսկ Զիւնիկը շարունակում էր նրա ստների տակ ծունկ չոքած սգալ:

— Երիկս քո օչաղին մատաղ տուի, յաւս քիչ էր, ծագուկներս, իմ եթիմ բալաներս ճվճվալէն քո օչաղի շիմին մորթեցին, էղ ցաւն էլ տարայ. ապա էսա ցաւ ես իմալ

տանիմ, իմ աչքի լոյս, իմ սրտի սէր, իմ խոռու կէս, իմ լոյս ճրագ, իմ մխիթարանք խաթռնս խաց ժողվայ...

Ապա վեր կենալով թերեց բռնած քաշեց ողբացող Մաղիկին:

— Քէլա, քէլա, քե մեռնիմ, թող ի՞մ խոռին կղնի քե խմար, դու խաց մի ժողվա, ես սեաւորս երկրէ երկիր, դռնէ դուռ կընկնիմ, իմ խաթռնիս սիրուն խաց կը ժողվեմ, թաք դու խաց մի ժողվա:

Բազմութիւնը յետ քաշուեց և երկու թշուառներն անցան արտասուելով: Մինչ այս տեսարանը տեղի էր ունենում դրսում, այնտեղ, սրահի մէջ՝ ռէս Պէտօն մահուան տագնապի մէջ էր գտնւում: Նա աչք ածեց իր շուրջը, ասես բազմաթիւ զաւակների, թոռներին փնտոելով, որ իր վերջին օրհնութիւնը տայ և բոլորի փոխարէն երկու փոքրիկ թոռներին գտաւ իր աշ ու ձախ կողմերում. ձեռքերը հանեց փալասի տակից, դողդողալով մեկնեց դէպի մանուկները նրանց զրկելու, վերջին համբուլը տալու համար և հազիւ կարողացաւ միայն մի ձեռքը փոքրիկի պարանոցը ձգել, իսկ վերջին համբուլը սառեց շրթռունքներին և նա փէց իր վերջին շունչը: Երկու փոքրիկները ճչում էին, երբ Մաղիկը

և Զիւնիկը հասան և միասին ընկան անշնչացած դիակի վրա...

Ի... գիւղում Ծաղիկն ու իր զաւակներն այլ ևս չեն երեսում, միայն փողոցներում տնօրի առաջ միշտ կարելի է տեսնել մի աղքատ, նուազ կին, ցնցոտիների մէջ կոլոլուած, որ նիհար ցեռքը մեկնում է դռներից, մեկնում է անցորդներին ողորմութիւն է խնդրում:

— «Խաթռնի՛ս սիրուն ողորմութիւն առեք» ասում է նա խղճուկ, աղերսող ձայնով. դա Զիւնիկն է, որ իր որբացրած խաթռնի սիրուն ողորմութիւն է հաւաքում և նրան որբերի յետ կերակրում:

1896 թ.

կենում, կամ զլուխ առնում կորչում, ուրիշ  
 աւելի ապահով երկիրներ բախտ որոնելու-  
 գաղթում էին ամբողջ գիւղեր և նոյն իսկ  
 գաւառներ՝ թողնելով և ստացուածք և  
 հարստութիւն և տուն և ամեն ինչ միմիացն  
 կեանք փրկելու համար. իսկ աւելի խոհեմները  
 ստրկանում, զլուխ էին ծռում հղօրի առաջ  
 և տալիս էին բոլորը՝ ինչ պահանջում էր  
 իրանցից, տալիս էին նոյն իսկ իրանց ընտա-  
 նեկան և մարդկային պատիւր՝ մի ողբալի  
 ստրկական կեանք վայելելու արտօնութիւնն  
 ստանալով։ Կռւում էին ոչ միայն առանձին  
 անհատները՝ մի կոչ, մի լաւ ծիու կամ կրօ-  
 նական ատելութեան պատճառով, հապա և  
 կռւում էին գիւղը գիւղի հետ, ցեղը ցեղի  
 հետ, առանց իրանց արածի համար հաշիւ-  
 տալու, առանց պատճառը քննելու, իմա-  
 նալու։ Մի վայրենի, մի արիւնածարաւ-  
 բնագդ ամենքին մղում էր դեպի սպանու-  
 թիւն և կոտորած, ամենքին առաջնորդում  
 էր դեպի արիւն, և լեռներից ու ծորերից  
 արեան հոտ էր գալիս, այդ տեղերից մենակ  
 անցնելը հաստատ մահուան զիմել էր նշանա-  
 կում, և ոչ ոք այդ յանդգնութիւնը չունէր,  
 մարդիկ վաղուց դադարել էին զիւղից գիւղ,  
 լեռից լեռ գնալ։ Այսպիսի ժամանակ էր:  
 կոիւ էր ամեն աեղ, կռւում էին ամենքը,

## ՌԱԾԻԴ

Նատ տարիներ առաջ իշխում էր մեր երկ-  
 րում մի վայրենի ցեղ, իշխում էր կրակով ու  
 արիւնով։ Խաղաղութիւնից զուրկ մեր դրժ-  
 բախտ երկիրը տակն ու վրա էր եղել և զար-  
 ծել հարամիների, ամենատեսակ «ղաչաղների»,  
 մարդասպանների գործունէութեան աղատ  
 ասպարէզ։ Լեռներում և անտառներում, նոյն  
 իսկ մեծ ճանապարհների վրա մարդիկ օրը  
 ցերեկով մորթոտւում էին հաւերի պէս—  
 արիւնի ժամանակ էր, ով էր հարցնողը, ով  
 էր ծայն բարձրացնողը։ Այժմ իրաւունք էր,  
 օրէնքն ու արդարութիւնը կատարելապէս  
 բացակայում էին. բացք զարկում և զարկ-  
 ում էր իր սեփականութիւնը պաշտպանելու  
 համար, վախկուները փախչում, թագ էին

կուռում էին և այն շատ վաղուց՝ բանոնցիք և ասիանցիք:

Բանոն... մեծ չէ սա, մի փոքրիկ գիւղ է, կանաչազարդ բլրակների մէջ մի բարձրաւանդակի վրա կուճուռած, կծկուած, մեն մենակ, ըստ երևոյթին խղճուկ, անպաշտպան: Ոլորապտոյտ ու նեղ փողոցների աջ ու ձախ կողմերում անձեւ, անհաշիւ կերպով, ասես ցրտից կծկուելով, բայց իրօք մշտական թշնամիների երկիւղից իրար վրա են կուտակուել, մէջք մէջքի կպցրել, կողք կողքի տուել գիւղի մեծ ու փոքր խրճիթները, որոնք հեռուեցից իրանց ուռուցիկ կտուրներով փոքրիկ բլրակների մի խմբի են նմանում խիտ առ խիտ իրար վրա թափուած: Գիւղի առջեռում իրար անընդհատ յաշորդող բլրակները՝ արևմտեան կողմում Մարալի գեղազարդ սարերի կանաչապատ, ծաղկաւէտ փեշերիցն են կախւում: Այս բլրակների կործքերը պատուելով, ոտքերը քերելով, մերթ կորչելով և մերթ կրկին երեան գալով՝ հոսում է Բանոնի սրբնթաց լեռնային դետակը, որ սկիզբն է առնում Մարալի սարերի ստորոտներում սփռուած բազմաթիւ ականակիտ աղբիւրներից, «Բաղրգեան - բուլաղներ»ից: Գետակն օր ու գիշեր ծեծում է իր կարծր ժայռոտ ափերը, փրփուր է թքում նրանց երեսին, ահաւոր

պտոյտներ կազմելով ճշում է, շաչում ու շառաչում իր մերթ վճիտ և մերթ պղտոր ալիքներով: Լաց է լինում արդեօք, թէ՛ դանդատում, որ իր աղմկալի ալիքների համար մայր երկրից խուռած արահեար շատ նեղ է, այդ ոչ ոք չը զիտէ. միայն գետի ահաւոր շառաչը, նրա փրփուն ալիքների սասանեցուցիչ գոռոցը գիշեր թէ ցերեկ անդադար հնչուում է ու հնչուում խոսվելով շրջակայքի խաղաղութիւնը: Ահաւոր է ալդ գոռոցը մանաւանդ գարնանը, երբ լեռնային սահանքաւոր չըերն իրանց ընթացքում մեծ ու փոքր քարեր կողոպտելով՝ սարերից ու բլուրներից, բերում են իրանց աւարը և յաղթանակով լանձնում վարարած գետակի կատաղի ալիքներին, որոնք զրկելով այս տարօրինակ որսը, առաջ են զնում մոմուալով: Գետական իր աղմկայոյզ ուռած շրերը շառաչիւնով առաջ է մղում և գիւղի հարաւային կողմում սարսեցուցիչ ճղփիւնով զարկւում է մի հսկայուղածիգքարաժայռի պատուանդանին, զարկւում է, և կարծես կատաղելով՝ որ չի կարողանում մի հարուածով փուլ բերել, գետնին հաւասարացնել քարաժայռը, յետ է դառնում և բարկութեամբ դիմում է դէպի հակառակ ափը, փորում է և ներս գնում ցամաքի մէջ ինչքան կարող է, սակայն զրանով էլ չը գո-

հացած, կրկին փորձում է յետ գառնալ, յարձակուել ժայռի վրա, բայց իզնուր... ալիքները քշում են նրան և նա իր անզօր բարկութիւնը յաջորդ ալիքներին կտակելով՝ վազում է առաջ դարձեալ անգուսպ, դարձեալ հպարտա...»

Այս ջրածեծ քարաժայոի կատարին բոլորամե շարուած են մի շարք աւելի փոքր ժայռեր՝ մի հսկայական պսակ կազմելով՝ գաղթի վրա, իսկ այդ պսակի հինյ կենարոնում բարձրանում է մի հին, շատ հին մենասան պսակամե ժայռերով, որպէս բնական պարսպով շրջապատուած: Սա Բանոնի Ս. Աստուածածինն է, որ քրիստոնէական առաջին դարերի չերմեռանդ ձեռները կռել ու կոփել են վիթխարի քարերից և բարձրացրել են հսկայական կամարները այս ահաւոր ժայռի կատարին՝ այս բարձրութիւնից դէպի երկինքն ուղղելու իրանց սրտաբուղիս աղօթքները: Բայց աւերակ և անփառունակ է այժմ հինաւուրց տաճարը և անցեալ փառքի այս տիսուր մնացորդները, բարձրից կախուած գետակի ջրերի վրա, ցողանում են նրանց վճիռ ալիքներում, դիտում են այնտեղ իրանց տիսուր պատկերը և իրար հրոգ հրշակող ալիքների ընթացքում կասես կարգում են աշխարհի ունայնութեան, աշխարհի անցաւորու-

թեան անսիրտ, անողորմ վիլիսոփայութիւնը: Բարձր է քարաժայոր, բայց էլ աւելի բարձր է նրա լերկ կատարին ցյուած աւերակ մենաստանը: Դժուարին է վերելքը դէպի այդ որբավայրը. լեռնալին մի նեղ, ողորապտոյտ շաւիդ ջերմեռանդ ուխտաւորին առաջնորդում է դէպի վեր, դէպի կատարը: Այդ շավովը իր ընթացքում մերթ իշնում է հեղեղների փորսծ խոռոչները, մերթ ծածկւում է մացառուաների մէջ, մերթ դէմ է առնում մի ահագին ժայռի և պէտք է լինում երբեմն չանգուելող բարձրանալ, երբեմն սողալ կամ քարերից բոնել կատարի որբավայրը համբուրելու համար:

Ոչ ոք չը գիտէ, թէ ով և երբ է կառուցել տաճարը և որ անարդ ձեռներն են կողպաել և աւերակ դարձրել Աստուծոյ տունը: ոչ մի գիր, ոչ մի արձանագրութիւն չի անում այդ տիսուր պատմութիւնը, բայց բանոնցուն հարկաւոր էլ չէ այդ, նա գիտէ միայն, որ սա Բանոնի պաշտպան Տիրամէրն է. նա համոզուած է, որ Աստուածամայրը սիրում է այս իսկ աւերակ կամարների տակ, այս խոնարհուած խորաններում, ցանուցիր ընկած մամռապատ նուիրական քարերի ընկորների մէջ լսել իր խոնարհ և ջերմեռանդ ծառաների սրտաբուղիս մըմունչները: Ահա

թէ ինչու, չը նաև լով վերեկքի բոլոր դժուարութիւններին, չերմեռանդ բանոնցին տարէնը մի քանի անդամ իր կնոջ և զաւակների հետ մազգելով բարձրանում է դէպի այդ քարաժայոփ կատարը, դէպի ողորմած «Տիրամէրը» Համեստ է նրա խնդիրը, չափաւոր նրա յանկութիւնը. խեղճն աղաչում է Տիրամօրը, որ սրա բարեխօսութեամբ Փրկիչը իր սրբազն հովանին տարածի Բանոնի վրա, որպէս զի հայ քրիստոնեան կարողանայ անխափան կերպով պաշտել նրա խաչը չորս կողմում վիստացող անօրէնների մէջ:

Այս աւերակ մենաստանի, այս բարձր քարաժայոփ ստորոտներում ձգւում է մի լեռնալին ընդարձակ հովիտ, որ հեռուում եղերւում է գեղանկար լեռնաշղթայով։ Այս լեռնաշղթայի միւս կողմում ապրում են վրանաբնակ ասիանցիք, Բանոնի դարաւոր արնախում թշնամիները։ Այն օրից, երբ բանոնցին մաճն ու գութանը ձեռք առաւ, պատռեց մայր երկրի սիրտը, ոռոգեց նրան իր քրտինքով և իր զաւակների համար արդար հաց պատրաստեց, իսկ ասիանցին արհամարհելով այդպիսի հալալ աշխատանքը, կպաւ իր նժոյգի թիկունքին և մահառիթ զէնքերով գնաց կողոպուտի՝ յանձն առնելով ծանր, արիւնոտ արկածներով լի մի կեանք, այն

օրից, երբ բանոնցին քարով ու ցեխով շարեց իր ընակարանը և մտաւ խաղաղ յարկի տակ, իսկ ասիանցին գերալասեղ մազէ կրանի անհանգիստ և անհաստատ կեանքը, այն օրից երբ բանոնցին գրկեց աշխարհի Փրկչի խաչը, կապեց նրան իր բոլոր յոյսերն ու իղձերը, իսկ ասիանցին մի վայրենի, արիւնածարաւ կրօն պաշտել սկսեց, այն օրից էլ կռիւն սկսուեց բանոնցու և ասիանցու մէջ, կռիւն հաշտ ու յարատե։ Ո՛, այն ժամանակից որքան արիւն է թափուել Մարալայ սարերում, Բաղրդեան-բուլաղների վճիտ շրերում...

Եւ բանոնցին երբէ՛ք զլուխ չի խոնարհել ասիանցու առաջ և նրանից փախուստ չի տուել. ասիանցու գնդակները բանոնցու կըրծըին են զիսպել և ոչ թիկունքին։ Ո՞ր ասիանցին կը համարձակուի անպատիժ կերպով խլել բանոնցու ոչխարը, եզր, կովը, տրորել նրա արտը, չիմանը. բանոնցին ստեղծուած է ասիանցուց վրէժինդիր լինելու համար, այդպիսի դէպէրում նա միշտ կրկնապատիկը յետ կը բերի։ Բանոնցի արիւսախրտ զաւակները երբէ՛ք թող չեն տուել, որ իրանց հայրենի գիւղին անարգանք հասնի, իրանց մարդկալին կամ ընտանեկան պատիւն արատաւորուի։ Սեփական յարկի տակ խաղաղութեամբ են իրանց հոգին փէել թէ՛ իրանց հայրենի լեռներում

ընկել են զարկուելով թշնամիների հետ, այդ  
մի և նոյն է, նրանք չեն մուացել միշտ մի  
անողորմ, մի անհաշտ կռիւ կտակել իրանց  
զաւակներին ընդդժմ սախանցիների. Եւ Բանո-  
նի մէջ միշտ ճարուել է մէկը, որ վառ է պա-  
հել աւանդական վրէժխնդրութեան սրբազն  
հուրը, կանդուն և կենդանի քաջազնական  
ոգին, որ պահապան հրեշտակի պէս հսկել է  
հայրենի զիւղի վրա իր արիասիրա ընկելներով:

Դարձեալ կռիւ է: Երկիրը լողում է արեան  
մէջ: Ասիացիները օգտուելով խառնակ դրու-  
թիւնից, ատամ են սրում Բանոնի վրա, միշոյ  
են փնդրում քար ու քանդ անելու իրանց մի  
բուռն թշնամիների այդ բոյնը, որպէս զի  
մենակ տիրեն Մարտի սարերին և Բազր-  
գեան-բուլազներին, բայց Բանոնն այս անդամ  
էլ անզլուխ, անպաշտպան չէ:

Ուաշի՞դ... Այսպէս սիրեցին անուանել նրան  
բանոնցի ջահէլ աղջիկները և այդ անունը  
երգեցին ու գովաբանեցին իրանց անպահոյն,  
բայց սրտայովզ երգերում: Նա զիւղի քահա-  
նայի Տէր-Մարտուքի որդի Թորոսն էր, բայց  
այն օրուանից, երբ իր ներմակի ականջը մը-  
տած, հրացանն ուսին սարսափ տարածեց  
վայրենի շրչակալքում, երբ նրա շեշտակի  
գնդակների տակ ամայի լեռներում թաւալ-

զոր լնկան անօրէն հարամիները, այն օրուա-  
նից «իրիցու աղայ Թորոսը» Ուաշիդ գարձաւ:  
Բարձրահասակ ու թիկնաւէտ, գանգրահեր  
զիւով, միշտ ուրախ, ժպտուն և թուխ  
գէմքով, մեծ, փայլուն և կարմրաւուն աչ-  
քերով այդ երիտասարդը իր հալրենի սարերի  
հերոսն էր, երբ իր ծերմակի վրա նստած,  
կեռ թուրը կողքին քաշ ձգած, երկայն ծօ-  
ճուն նիզակը ձեռքին, փայլուն հրացանն  
ուսին անցնում էր ահաւոր լեռներից, մթին  
ու խուլ ձորերից, ուր նա մէն մենակ որսի  
էր դուրս գալիս անվախ ու համարձակ մի  
պաշտելի յանդգնութեամբ: Աննման էր նա  
այդ ժամանակ: Քանի՛ քանի գեղուհիների  
սրտերն էին բաբախում նրա սիրոյ համար,  
քանիսն էին իրանց մտքում զյուխները մա-  
տաղ տալիս նրա գնացած ձանապարհին, հէյ-  
րան լինում նրա շիւան արեին, բայց նա  
միշտ անտարբեր էր դէպի իրան ուղղած բոր-  
բոքուած, սիրատապ հայեացքները և դրանցից  
շոլացող սիրոյ կայծերն անկարող էին լինում  
թափանցել այդ փառաւոր աղամարդի սիրար:  
Գիւղում ամենքն էլ զարմացած էին, կանանց  
Մըանը փսփսում էր, բայց և այնպէս ոչ ոք  
չը զիտէր, թէ որ բախտաւորին է պատկա-  
նում Բանոնի առաջին երիտասարդի, իրիցու,  
աղայ Ուաշիդի սիրար:

— Ուաշիդ չան, հէլրան եմ քե, կրկնում  
էր յաճախ պառաւ մարը, ապա ե՞փ տի բա-  
րով խէրով քեօ կանանչ կարմիր կապենք,  
խալիւրար, լած:

Իսկ ծերունի Տէր-Մարուքը այսպիսի ժա-  
մանակ սովորաբար իսկոյն կաւելացնէր հեղ-  
նութեամբ.

— Ի՞նչ կասես, քա՛ կնիկ, խօքուդ մեղք  
մ անե, տիւն չե՞ս զինայ, որ մեր Ուաշիդ  
վարդապետ տ'եղնի:

Ուաշիդն այսպիսի դէպքէրում կամ աշխա-  
տում էր մօր հարցասիրութեանը բաւակա-  
նութիւն տալ հանաքներով, կամ ասում էր,  
թէ աղջիկ է փնդրում, որ նշանուի, բայց իս-  
կոյն դրանից յետոյ գուրս էր գնում տանից  
և մտախոհ, տխուր դէմքով թափառում էր  
դաշտերն ու սարերը: Պարզ էր, որ իր ա-  
մուսնութեան մասին խօսակցութիւնը ամեն  
անդամ լցնում էր նրա սիրտը դառնութեամբ,  
յարուցանում էր նրա մէջ տխուր լիշողու-  
թիւններ, որոնք մոալլում էին նրա փայլուն  
ճակատը: Նա տանջում էր, որովհետեւ սի-  
րում էր և սախառւած էր թագցնել իր սէրը  
ոչ միայն ծնողներից, ոչ միայն հայրենի զիւ-  
ղից, այս նոյն իսկ ամբողջ աշխարհից:

Մի ամբողջ տարի էր անցել այն օրուանից,  
երբ նրա սիրտն առաջին անդամ թրթուաց

սիրոյ համար և այդ ոչ ոք չը գիտէր: Մի  
պարզ լուսապայծառ և գարնանալին առա-  
ւոտ էր, երբ այդ բանն անսպասելի կերպով  
կատարուեց: Ուաշիդը իր սովորականի հա-  
մեմատ ձեղմակը հեծած՝ ուրախ ու անհոգ  
գնաց որսի Մարալի սարերը, այնտեղ, ուր  
բայցի նրանից ուրիշ ոչ ոք սիրտ չէր անի  
երեալ: Լերան կատարին մի կանաչապատ  
հարթութեան վրա իր փոքրիկ ձագի հետ  
արածում էր այծեամբ. նա չէր նկատում որ-  
սորդին: Ուաշիդը հանգարտ ցած իշաւ ձիուց  
և սկսեց կամաց-կամաց վերև բարձրանալ  
հրացանը ձեռին: Կենդանին նկատեց նրան և  
մի վարկենում անյայտացաւ սարի միւս  
կողմում: Ուաշիդը կրկին հեծաւ ձին և լեռն  
ի վեր բարձրանալով ընկաւ նրա յետեից.  
բայց մի քանի ժամուայ նրա աշխատանքն  
իզուր անցաւ և նա յոդնած ու անտրամադիր  
ցած իշաւ ձիուց, թողեց նրան արտածելու  
բարձր սէզերի մէջ, նիզակը ցցեց գետնին և  
ինքն ուժասպառ մէջքի վրա պառկեց մի  
կարկագիւն աղբիւրի մօտ: Երկու ձեռքերը  
պիսի տակ դրած, նա անթարթ աչքերով  
զիւտում էր երկինքը: Կապուտակ անսահմա-  
նութեան մէջ քամու շնորվ լողում էր մի  
հսկայական սպիտակ ամպ, իսկ նրա յետեռում  
նոյն ուղղութեամբ մի այլ աւելի թխագոյն

խաւար ամպի, լողում էին անդադար և մէկը միւսին հասնել չէին կարողանում: Կամաց-կամաց առաջին սպիտակ ամպը պատառ-պատառ եղաւ և ցրիւ եկաւ երկնակամարի վրա, իսկ նրա ամեն մի կտորը մի այծեամի կերպարանք ստացաւ, մինչդեռ յետեկի ամպն աւելի ու աւելի սղմուելով՝ սեացաւ և մի կատաղի գաղանի կերպարանք ստացաւ, որ եռանդով հալածում էր խղճուկ այծեամներին, բայց այծեամները ցրիւ եկան, խսպառ անյալտացան կապուտակ եթերի մէջ, մնաց միայն մի սպիտակ, շատ սպիտակ այծեամ, որին հրէշ ամպը ամենայն եռանդով հալածել սկսեց: Խըդնուկ այծեամը փախչում է քանի ոտներումը ոյժ կայ, դէս ու դէն է ընկնում, բայց հրէշը մօտ է հասնելու իր որսին, մօտ է նրան կանելու: Ռաշիդը դիտում է ամպերի այս խաղը. նա տարուել է, նա մոռացել է իրան. նրա երեսակայութիւնը շունչ ու զգացողութիւն է տուել խաղացող ամպերին, նա ի սրակ խղճում է այծեմիկ ամպին, նրա բնականից բարի սրտում դաշրովթ է եռում այն անիմած հրէշի դէմ, որ ջանքեր է անում կանել տարաբախտ կենդանուն: Նա այժմ միայն սրտի ցաւով լիւց, թէ ինչպէս ինքն անսիրտ կերպով քիչ առաջ հալածում էր դրա նման մի այծեմիկ և սրտանց գոհ եղաւ,

որ նա ավատուեց իր ձեռքից: «Փախի՛ր, հա փախի՛ր» մըռմըռում է նա, քաջալերելով այծեմիկին. «ախ, անիմած, տես, տես, թաթը մեկնեց». բայց հէնց ալդ ըոպէին քամու մի այլ զօրեղ հոսանք քշեց հրէշ ամպը, ու պատառ-պատառ անելով ցրուեց անսահմանութեան մէջ: Այծեամն ազատուեց, նա շարունակեց հանդարդ լողալ երկնակամարի վրա, մի ախորժ, գուրեկան զգացմունքով լցնելով Ռաշիդի սիրաբ: Կամաց-կամաց ալդ զգացողութիւնը փոխուեց մի անուշ թմբութեան և նրա յօդնած արտեանունքները փակուեցին. Ռաշիդը քնեց: Լեռնային բարակ զեփիւոի շունչը մեղմութեամբ հովիարում էր նրա դէմքը. և ո՞լ գիտէ, նա որքան ժամանակ այդպէս կը մնար, եթէ յանկարծ լեռների և ձորերի ամայութեան մէջ, գուրեկան արձագանք տալով չը լսուէր մի սքանչելի կանացի ձայն: Դա մի ասիանցի աղջիկ էր, որ մայրենի բարբառով երգում էր մի տխուր մելամաղձոտ երդ: Առողջ կրծքից գուրս թռած երգի ախորժելի հնչիւնները քաղցր ելեկչներով գիպտն Ռաշիդի ականչին և նա բացեց աչքերը. Նա սոսկաց իր այսպիսի անզգուշութեան համար այս վտանգաւոր ժամանակում. աչքերն աչ ու ծախ դարձրեց, հաւատարիմ ձերմակն ու նիղակը իրանց տեղումն էին, յափշտա-

կուած քաղցր երգով, երկար ժամանակ անշարժ պառկած իր տեղում, շարունակում էր լսել սրտաշարժ երգը։ Աղջիկը լռեց, իսկ նաշղթը իրան շրջապատուած դտնելով ոչխարներով, բարձրացաւ նայեց. նրա առաջին կանդնած էր ասիանցի հովուուհին, որ թաղրդեան-բուլաղներում ոչխարները չըելու էր բերել։

Այս աղջիկը մի կենդանի մարմնացումն էր լեռնալին կեանքի, մի փայլուն ապացուց, թէ որքան հրաշագործ է լեռնալին օդն ու չուրը և ազատ անհոգ կեանքը։ Նա գեղցիկ էր, որպէս լեռնալին փարթամ վայրենի շուշան։ Երկու խիտ սև յօնքերի տակից պապղում էին մի զոյգ սեօրակի մեծ ու փայուն աչքեր, որոնց մէջ մարմնացած էր անվեհեր համարձակութիւն։ Լիքը, կոլոր դէմքը թէւ թուխ էր, բայց այտերը փայլում էին առողջ կարձրութեամբ։ Փարթամ կուրծքը հազիւ էր պատսպարտում անփոյթ ժամկոյթի տակ-բարձրահասակ էր նաև նաղելի։ Նրա զլուխը ժամկուած էր թեք դրուած մի բարձր քօֆիով, որ պատած էր ֆէսով, իսկ սրա վրա փաթաթուած բաղմաթիւ դոյնզոյն եալ-մաներով. եազմաների շուրջը կախկխած էին յուլունքների բաղմաթիւ ծոպեր, որոնք իջել էին մինչև նրա ուսերը։ Բարձր պարանոցից կախուած էին մանր ուլունքներից շարած

թոռեր, զարդարուած մարչաններով և մի արձաթեայ շղթավի վրա շարուած մահմուտեայ ոսկիները զարդարում էին նրա հպարտ փարթամ կուրծքը։ Լայն թիկունքի վրա ժամկում էին սև երկայն ժամերի երեսունի չափ հիւսեր, որոնք զարդարուած էին սպիտակ փունչերով և փայլուն կոճակներով (քեասպիկ)։ Իսկ ճակատի վրայի մաղերը կանոնաւոր կերպով խուզուած էին, բայց թողնելով լայն ճակատը։ Նրա կարճ շապիկը՝ ծնկներից ցած սրունքների վրա, բայց էր թողնում լայն կարմիր վարտիկը, որի բերանը ձգուած էր թելով ոտների թաթերի վրա։ Շապիկի վրա ունէր կարմիր ու կարճ մահուաէ կուրդկայ—եշիդ, զարդարուած մետաքսեայ կոճակներով։ Այս զգեստի երկար թևերը կախկխուած էին ձեռների վրայից, սրա վրա մի պճեղնաւոր վերնազգեստ և նրա վրա կարմիր մահուդէ վերարկու խասով բանուած և այդ ամենի վրա մէջքին կապած ունէր մի պարսկական շալ. առջեից կապած ունէր մի լայն գոզնոց թանկադին կապոցներով, որ նոյնպէս զարդարուած էր տեսակ-տեսակ ուլունքներով, իսկ ոտները ծածկուած էին գեղնազոյն քոշերով։

Աղջիկը կանդնած էր և անվրդով, բայց հետաքրքիր հայեացը նալում էր մերժ նստած տղամարդին, մերթ ցցուած նիզակին

և մերթ՝ փնչացնելով արածող ձերմակին։ Ասիանցու աղջիկը տղամարդի հայեացքի առաջ շառագունուել, գլուխ կախել չը գիտէ և ոչ իսկ զինուած օտարականից սոսկալ՝ թէկուզ ամայի, անմարդաբնակ վայրերում։ Տովուհին երկար ու յամառ հայեացքով կրկին նայեց նստած երիտասարդին և նրանց հայեացքներն իրար հանդիպեցին։

— Նիզէ, զոչեց Ռաշիդը, այս ուժ ոչխարներն են։

— Մերն են, ուժն են, պատասխանեց նա վիրաւորական ձեռք։

— Դու ուժ աղջիկն ես։

— Նադօ աղայի աղջիկը. Զարէն եմ ես։

— Օ, Նադօ աղայի, ապա ինչո՞ւ ես դու պահում ձեր ոչխարները, մի՞թէ եղբայրներդ չեն կարող պահել։

— Եղբայրներս են պահում, բա ովէ պահում, իսկ երբ նրանք թալանի են գնում, այն ժամանակ Զարէին են յանձնում ոչխարները մի քանի օրով։

— Նիզէ Զարէ, բա դու մենակ չե՞ս վախենում այս լեռներում գալլերից, արջերից։

— Զարէն ինչո՞ւ վախենայ, խօմ երեխայ չի, այս, տեսնո՞ւմ ես, և նա բարձրացրեց ձեռքի ահազին մահակը և ուժով զարկեց առաջի քարին, բարձր շրիւկոց հանելով։

— Օ՛, Զարէ, ի՞նչ դօչաղ աղջիկ ես դու, ասաց Ռաշիդը ժպտալով, քիչ մնաց քարը փշուր փշուր անէիր։

Զարէն ծիծաղեց և գառնալով լեռնիվեր փաղչող այծին, մի տարօրինակ հնչիւնով նրաց, որ յետ գառնայ։

Ռաշիդն այդ ժամանակ իր աչքերը չէր հեռացնում գեղեցիկ Զարէից, պարզ էր, որ նրան սաստիկ հեաաբրքը ում էր այս պարզ ու անվեհեր լեռնական աղջիկը։

— Բա դու ի՞նչպէս ես սիրտ արել մենակ դալ մեր սարերը որսի, դարձաւ Զարէն դէպի Ռաշիդը, մի՞թէ չես վախենում մեր ասիանցիներից։

— Ինչո՞ւ համար վախենամ, Զարէ՛, չէ՞ որ ես գիտէի, որ դու այստեղ ես և այդ մահակն էլ ծեռքիդ է, էլ ովկ կարող էր ինձ դիպչել։

Հաճոյախօսութիւնը իր նպատակին հասաւ, Զարէին զրաւեց, որովհետեւ նա բացեց իր երկու շարք սպիտակ փայլուն ատամները և ինքնաբաւական կերպով ծիծաղեց։

— Բայց Զարէն քեզ չէր պաշտպանիլ, ասաց Զարէն թեթև ժպտալով. Զարէն ասիսնցի է։

— Է՞՞, փոլթ չէ, այն ժամանակ ինձ Ռաշիդը կը պաշտպանէր։

— Ծաշիղը... համ, Ծաշիղը կարող էր քեզ պաշտպանել, բայց ախր նա այստեղ չէ:

— Ո՞վ ասաց, թէ այստեղ չէ, ևս առանց նրան որսի կերթամ, նա միշտ ինձ հետ է:

— Հապա ուր է նա, սարի այն կողմումն է, հարցրեց աղջիկը սաստիկ հետաքրքրուած: Նա շատ էր լսել ֆլա Ծաշիղի քաշագործութիւնների և գեղեցկութեան մասին, բայց երբէք չէր տեսել նրան, թէև սաստիկ ցանկանում էր նրան պատահել:

— Ոչ, նա այստեղ նստած է, այս, ահա սա՛ է Ծաշիղը, ասաց նա ծեռքը իր կրծքին դնելով:

Զարէն շփոթուեց, նա չուց իր մեծ փայտուն աչքերը, բացեց բերանը, և մի քանի վայրկեան այդպէս սառած մնաց: Աղջկայ սիրտն սկսեց արսագ բարախել. նա շատ քաշ տղամարդ էր տեսել, շատերն էլ նրան հետամուտ էին եղել, բայց ոչ ոքի համար նրա սիրտն այդպէս չէր թրթռացել, և երբէք նրա այտերն այդպէս չէին կարմրել: Ասիանցին սիրում է քաշին՝ ով և լինի նա: Նրա ցեղական նախապաշարմունքների պատուարը սիրոյ ոյժի առաջ խորտակում է:

Ի՞նչեր չէր տայ Զարէն, եթէ կարողանար սկւուած խօսակցութիւնն աւելի երկարացնել. և նա շուտով գտաւ հնարը:

— Ո՞վ դու Ծաշիղը չես, յանկարծ գոչեց Զարէն խորամանկ զէմքով, դու ինձ խարում ես. ասում են Ծաշիղը երկնքի զշերն իր գնդակով ցած է բերում, այս, ես կը անկեմ այն սարի լանչին իմ դագանակը և կը դնեմ նրա ծայրին մի չորթան, եթէ դու կը զարկես, կը ձգես նրան քո հրացանի գնդակով, այն ժամանակ եռ կը հաւատամ, որ դու Ծաշիղն ես, և քեզ մի այնպիսի բան կրնածալեմ, այնպիսի բան...

— Ի՞նչ կրնածալես:

— Քեզ ի՞նչ, չեմ ասի, երբ զարկես, կիմանաս:

— Համաձայն եմ:

Զարէն այծեամի արագութեամբ վազեց դէպի ցոյց տուած լեռը: Թեթև քամին հովհարում ծածանեցնում էր թիկունքի վրա նրա ծածերի բազմաթիւ հիւսերը: Նա մերթցած էր իշնում, մերթ բարձրանում և շարունակ, անընդհատ վազում. իսկ Ծաշիղը սիրով դիտում էր այս տարօրինակ աղջկան, որ այսպէս դիւթել կաշկանդել էր նրա սիրութ: Դարձեալ այծեամս, մտածեց նա: Աղջկը վերջապէս հասաւ սարին, տնկեց այնտեղ իր մահակը և նրա ծայրին տեղաւորեց մի չորթան, որ հեռուեից արեի փայլի տակ սպիտակին էր տալիս. ապա նա յետ դարձաւ և

կրկին վագեվազ, հւալով, կարմրած, սիրունացած այտերով Ռաշիդին հասաւ: Վերջինս սիրով նայեց նրա կարմրած, քրտնաթոր այտերին, նրա բարձր ու ցածր անող փարթած կուրծքին, ուր զգեստի թեթև բացուածը երիտասարդի համար վերին աստիճանի գրաւիչ տեսարան էր սոռաչ բերել: Ռաշիդը նայում էր անյագ աչքերով. նա մոռացել էր նոյն խակ տրուած նշանի: Զարէն այդ զգում էր և լուռ հրճւում: Վերջապէս Ռաշիդը վերցրեց հրացանը, ծունկ չոքեց և աչքեց դրուած նշանին: Զարէն այդ միջոցին սիրտարափ հայեացքով դիտում էր նրա շարժումները և շունչը բռնած սպասում, թէ ի՞նչ կը լինի: Հրացանը տրաքեց և չորթանն այլ ևս չը կար մահակի ծայրին:

Զարէն էլ չը թողեց նրան տեղից վերկենալ, նա վազեց փաթաթուեց նրա պարանոցով և մի քանի սիրով լի համբոյր դրոշմեց ձակատին:

— Ահա իմ ընծան, գոչեց նա, և թռչուտապով անյատացաւ այն բլրի յետեր, ուր արդէն ծածկուել էր նրա հօտը:

Իսկ Ռաշիդը յանկարծակի բռնուած աղջկայ վարմունքից, ալլալուած ու ապշած նայում էր փախչող գեղեցկուհու յետերից, մինչև որ նա խսպառ ծածկուեց: Նրա սիրտը լիքն էր

մի քնքոյց զկացմունքվ դեպի գեղեցիկ հովառուհին, նա ուրախ էր, նա սիրում էր: Ամենայն բան շրջակալքում թւում էր նրան այժմ աւելի գեղեցկացած, աւելի գրաւիչ. և բլուրները, և դաշտերը, և՝ այն զիւղացին, որ քրտնաթոր երեսով բռնել է լր արօրի մաճը և նրա զոյգ եզները, որ հանգարա ու անմռունչ քաշում են արօրը:

Ահա նա արգէն հասաւ վար անողին և մի այնպիսի տարօրինակ ձայնով բարե տուեց, որ զիւղացին թողեց մաճը դարմացած և բարեն ընդունեց ու շարունակեց իր գործը, մինչդէռ Ռաշիդը անհոգ սուլելով առաջ սլացաւ: Բայց ահա երեցան զիւղի բլրաձև կառւրները, այստեղ այնտեղ տնկած խոսի ահազին գեղերով և աթարի բարձր բուրգերով:

Հայրենի զիւղի տեսքը այսօր սովորականին հակառակ նրա սիրտը ճնշեց մի անբացատրելի զգացմունքով, նրան թւում էր, որ այդ ողորմելի խրճիթները, այդ գեղերը անշունչ առարկաներ չեն, այլ մարդիկ, որոնք ցցուած այստեղ ու այնտեղ ծաղը են անում նրան և քանի նա մօտենում է զիւղին, ճնշող զգացմունքն աւելի և աւելի զօրանում է, և և վերջոյ նրա նախկին հրճուանքն ու ուրախութիւնը փոխուեց տիրութեան: Հապա երես-

կայելու բան է. քահանալի որդին, Բանսնի փառքը, նրա առաջին տղամարդը, նրա Ռաշիդը, որի լոկ անունը սարսափ էր ազգում արիւնուշտ ասիանցիներին, այն աստիճանի իրան մոռանար, այն աստիճան ստորանար, որ թոյլ տար իրան գրկել ասիանցի անօրէն նադո աղալի, Բանսնի այդ ոխերիմ թշնամու, այդ արիւնուշտ գաղանի աղջկան և նրա այտերին բորբոքուած սիրոյ համբոյըներ դրոշմէր. սա մի այնպիսի անարգանք էր Բանսնի պատուին, որ դիւղի ծերերը կալէնի նզովքը կը կարդացին իրանց պաշտած երիտասարդի պլիսին, կոյսերն ամօթից կը ծածկէին իրանց շառագունած երեսները. իսկ երիտասարդները հեռու կը փախչէին իրանց սիրելի առաջնորից, որովհետեւ բանոնցոց աչքում այդպիսի սէրը մի կատարեալ գաւաճանութիւն էր. այդ գիտէր Ռաշիդը, այդ զգաց նա և ահա թէ ինչու տիրութեան մի քող եկաւ պատեց նրա մինչև այժմ ուրախ դէմքը, ահա թէ ինչու հայրենի գիւղի տեսքը յարուցեց նրա սրտում մի ծնշող, մի չարագուշակ զգացմունք: Այժմ միայն նա հասկացաւ այն՝ ինչ որ սիրոյ առաջին ըոսպէներում սաստիկ յափշտակուած անկարող էր եղել հասկանալ. այժմ նա զգաց, որ ինքը անդունդի ծալրին է կանգնել, որ թիթեռնիկի պէս դէպի իրան

ալրող կրակն է վագել: Բայց այդ արդէն շատ ուշ էր. նա զգաց, որ այլ ևս անկարող կը լինի խեղդել իր սրտում սիրոյ հզօր զգացմունքը: Նա սիրում էր ասիանցի սեաչեալ Զարէին:

Սէրը համակել էր նրա ամբողջ էութիւնը. բանականութեան բողոքն անկարող եղաւ խեղդել նրա մէջ սիրոյ զգացմունքը:

Աշախ և հրճուանքի օրեր և ամիսներ անցան և Ռաշիդը աւելի և աւելի յաճախ սկսեց այցելել Մարալայ սարերը, որոնք այժմ նուիրական ուխտատեղի էին դարձել: Նա լոյս ունէր բախտաւոր դիպուածով տեսնել Զարէին, բայց այդ այնքան էլ հեշտ չէր. շատ անգամ անցնում էին ամբողջ շաբաթներ և Զարէին չէր վիճակւում ոչխարներն այդ կողմէրու բշկել, չը նայելով որ նա այժմ յաճախակի առիթներ էր փնտրում ոչխարներն արածացնելու: Գալիս էր Ռաշիդը, իր որսը մոռացած նստում նուիրական աղբիւրի ափին և աչքերը մի կողմ ուղղած՝ նայում էր ու նայում քաղցր խոհերի մէջ ընկղմած: Պատահում էր, որ Զարէն բերում էր ոչխարները և Ռաշիդին չէր գտնում. այդ գէպօւմ աղջիկը բարձրանում էր մի բլրի կամ ժայռի կատար և խանդոտ հայեացքով այնտեղից թիտում իր սիրածի ճանապարհը երկար,

անթարթ։ Ճերմակը շատ հեռուից պայծառ արեի տակ սպիտակին է տալիս, աղջկայ սիրտը թրթոռում է. Նա երկար, շատ երկար սքանչանում է իր սիրած հոյակապ տղամարդով և աչքը չի հեռացնում նրանից, մինչև հասնում է։ Ապա նա իշխում է վար գաղանագողի հանապարհով, շապառում է սովորական ժայռի լեռեւը նստում. անհամբերութիւնից նրա այտերը բորբոքում, կարմրում են, կուրծքը յուզմունքից այնպէս է բարձր ու շածր լինում, որ քիչ է մնում տրաքի. բայց ահա և Ռաշիդը. Զարէն վազում ընկնում է նրա զիրկը, փաթաթում է պարանոցով և նրանք չերմ համբոյրներով փոխանակում են։

— Ռաշիդ շան, ինչու այդքան ուշացար, որքան սպասեցի քարի վրա համա. քիչ էր մնում ոչխարները քշէի գնալի, ասում էր Զարէն քաղցր յանդիմանական եղանակով։

— Զարէ՛, հոգիս, ինչու ես նեղանում, ախր ես որտեղից իմանալի, թէ դու այսօր եկել ես. քանի՞ օրեր և շաբաթներ ես զալիս եմ, շրջում եմ այս տեղերը, փնտրում քեզ և դու ամենեին չես գալիս, ի վերջոյ փորփոշան թողնում վերադառնում եմ տուն։

Աղջիկը փոխանակ պատասխանելու միայն ժպտում է և փաթաթում նրա պարանոցով։

Անցնում են այս բերկրալի ժամերը որպէս վայրկեաններ, նրանք ստիպուած են լինում բաժանուել հրաժեշտի համբոյրով։ Ռաշիդը տուն է վերադառնում քաղցր յոյզերով սիրտը լի, բայց երբ մօտենում է գիւղին, կրկին նախսկին վիշտն ու փոշմանութիւնը պատում են նրան։ Նա տանջում է, թէ ինչ վախճան կունենայ այս տարօրինակ սէրը. Նա կանխատեսել, որոշել չէ կարողանում, բայց այսքանը նրա համար պարզ է, որ եթէ իր այդ գաղտնիքը բացուի, եթէ իր հայրենակիցներն իմանն իր ամօթալի սիրոյ պատմութիւնը, թէ սարսափելի գաղտնիքի բօղը մի օր պատռուի, նա նոյն օրը, նոյն ժամին վայր կը զորի իրան Աստուածածնի բլրից՝ գետակի կատաղի ալիքներում իր անարդանքը թաղելու համար։

Դարնանային պայծառ երեկոյ էր. արեի ոսկեայ գունդը կամաց կամաց քաշեց եթերի մէջ սփռած իր ցնցուղները և դնաց թագնուելու Մարալալ սարերի թիկունքին, որոնք հսկայական ստուերներով պատեցին կանաչապատ գաշտերն ու ձորերը։ Վերջալուսի մի քանի նառագալթներ միայն գեռ լուսաւորում են սարերի կանաչագարդ գագաթները. հետզհետէ այդ ճառագալթներն ել քաշուեցան՝ տեղի տալով երեկոյեան աղջանուղին, որ եկաւ պարուրելու արար աշխարհը։ Միմիայն

շառագոյն արևմուտքում ծիւնանման ամպի  
մի քանի պատառներ շարունակում էին դեռ  
պահպանել ցերեկուայ շղզազարդ լուսատուի  
պայծառ լոյսի ծիրանագոյն շիթերը:

Բարձրացաւ երեկոյեան զով քամին, անցաւ  
կանաչազարդ լեռների բլուրների վրայով, ոլոլա-  
ցրեց, իրար տուեց խոտերն ու հոտառատ  
ծաղիկները, և նրանց անոյշ բուրմունքը  
տարաւ սփռելու շինչ եթերի մէջ:

Դուրեկան բառաչով օղը թնդացնելով՝  
պատրաստ արօտից, կանաչազարդ դաշտերից  
յետ դարձան և դիւղը լցուեցին հազարաւոր  
ոչսարներ: Նախիրն էլ եկաւ տաւարարած-  
ների հետ: Խոս հնծողները՝ գերանդիներն  
ուսներին, կատակներ անելով, երգեր երգելով  
մտան զիւղ: Դաշտը դատարկուեց և գիւղը  
կենդանացաւ: Ամեն կողմ բառաց ամեն կողմ  
ձայն, խօսակցութիւն, աղմուկ, կանչուռուաց:  
Հովիւր ոչսարներն է համարում, կանաչը ու  
աղշկերք գառներն են լողնում, կամ կթում  
ոչսարները, որոնց բառանչն ու մկկոցը զիւղը  
լցրել է: Նախրապանն էլ տնից տուն շշելով  
ծեծում է դռները, իր սովորական հացը հա-  
ւաքում, դռներից պոռալով՝ «Հաց բերէք,  
հաց» և մի-մի հաց առնելով, ուսին գցելով  
շարունակում է ճանապարհը: Ոմանք կթան-  
ներն են տեղաւորում, կապում ու կապուում,

ուրիշները մոլորած անասուններն են վլնտ-  
րում՝ բարձր ծայնով սրան կամ նրան հարց-  
նելով, կամ նախրապանին փնտրելով և ամ-  
բողջ գիւղը միանգամից թնդում է բազմու-  
թեան աղմուկից՝ մի անորոշ, անհասկանալի  
մռմռոցով:

Տէր-Մարուքն էլ դուրս եկաւ եկեղեցուց և  
տէրողորմեան համրելով կամաց-կամաց քայ-  
լում է դէպի տուն ուս Պէտօի հետ: Ճանա-  
պարհին ժամաւորների բազմութիւնը՝ մարդ  
թէ կին աշ ու ձախ լարգանքով յետ է  
քաշուում, ճանապարհ բանալով պատկառելի  
ծերունիներին, որոնք ցածր խօսելով շարու-  
նակում են իրանց ճանապարհը:

Տէր-Մարուքը իր կեանքի արևմուտքին  
մօտեցած ծերունի էր: Տարիները և հոգսերը  
իրանց քայքալիչ կնիքը դրել են նրա մար-  
մնակաղմի վրա, ողնաշարը թեթև կորացած  
է, բայց այնու ամենայնիւ բոլոր նշաններից  
երեսում է, որ այս մարդը մի հոյակապ տղա-  
մարդ է եղած մի ժամանակ: Սպիտակ երկար  
միրուքը փռուած ծածկում է նրա կուրծքը,  
ալէզարդ մազերը քահանայական գլխարկի  
տակից թափւում են մինչեւ ուսերը և ծած-  
կում պարանոցը: Դէմքը նիհար է, բայց աղ-  
դու, իսկ երկու սպիտակած խիտ յօնքերի  
հովանու տակ պլազացող աչքերը մի անօրի-

նակ կենդանութիւն են տալիս ծերացած դէմքին. այդ աչքերում փայլում է երիտասարդական կորովի մնացորդը: Նրա վրա նայելով՝ մարդուս տիրում է առհասարակ այն զգացմունքը, որպիսին մարդ զգում է, երբ կանգնած է հինաւուրց փառաւոր շինութեան տխուր և պատկառելի աւերակների առաջ:

Ծեր է նոյնպէս և ուս Պէտօն, թէե սրա մէշքը կորացած չէ Տէր-Մարուքի պէս, բայց ածելած դէմքին նոր բսած կարծ մաղերը բոլորովին սպիտակած են: Ամբողջ դէմքի վրա փայլում է յոդնածութիւն և տխրութիւն: Աչքերը կորցրել են իրանց կրակը և նրանցից մինը զրկուել է տեսողութեան կարողութիւնից: Բոլոր նշաններից երեւում է, որ այս մարդը նոյնպէս շատ է տանջուել. և արդարե քանի քանի անդամ զիւղի ցաւ ու հոդսերի համար նրան բէդերի դուռն են քաշ տուել ամիսներով բանտ նստացրել և ամեն անդամ տուգանքներով ճանապարհ գցել:

Երկու ծերունիների սովորութիւնն է երեկոյեան ժամերգութիւնից յետոյ խօսելով անցնել զիւղածիչից և միասին գնալ իրանց ընակարանները, որոնք շատ էլ հեռու չեն իրարից: Արդէն նրանք Տէր-Մարուքի դռանն են, բայց այսօր սովորական հրաժեշտի ողջոյնը չը տուին իրար և միասին ներս մտան:

Երեսում է, որ նրանք մի շատ ծանրակշեռ և հետաքրքիր խնդրով են զբաղուած: Նրանց դէմքն այսօր սովորականից աւելի լուրջ էր և տխուր. այդ նկատեցին զիւղում ամենքը և երբ նրանք անցան, այդ բանը խօսակցութեան և ենթագրութիւնների նիւթ դարձաւ, որովհետեւ այս երկու ծերունիներն են յանձն առած ամբողջ զիւղի բազրը. սրանք են բէդի, Եշուանի գուռ, գնում, սրանք են բանտ նրատում, երբ զայրացած է բէդը, սրանք են մեծամեծներին կաշուռ տալիս՝ թշուառութիւնից զիւղը փրկելու համար: Ահա՝ թէ ինչո՞ւ զիւղացիներն էլ սաստիկ հետաքրքրութիւն, երբ իրանց երկու իշխաններին չափից դուրս լուրջ, խորհրդաւոր գտան. դա ամենաին բարի բան չէր գուշակում. այդ նշան էր, որ կամ հարկահաններն են շուտով գտնու, կամ բէդն է անցնելու զիւղով և կամ դրա նման մի այլ թշուառութիւն է պատրաստու ում:

Ծերունիներն անցան բակից, և Տէր-Մարուքը հրելով տան դուռը հրամցրեց ուսին: Նրանք ներս մտան մի դալան, որից երեք դռներ տանում էին տան երեք բաժանմունքը՝ թոնրատունը, գոմը և օգան: Երկրի անտպահով վիճակը ստիպել էր խեղճերին տան բոլոր բաժանմունքները իրար կից շինել,

այնպէս որ թէ տաւարն ու ոչխարը, թէ ընտանիքը մի և նոյն դռնովն են ներս մըտնում և ապա այս կամ այն բռնով իրանց լատկացրած բաժինը գնում: Օդան նրանց հիւրանոցն էր և այստեղ էլ մտան Տէր-Մարուքն ու ուստի Պէտօն:

Սա մի երկարաւուն քառակուսի շինութիւն էր, որի ճակատում, պատի մէջ, շինուած էր բուխարին. նրանից աչ ու ձախ կողմերում, պատերի տակ, երկար փոռուած էին թաղիքներ և գորգեր, դրանց վրա էլ միմի մինդար և բարձեր: Երկու կողմի փոռուածքի միջանցքը բաց էր մինչև բուխարին: Օդան լուսաւորում էր առաստաղի հերթից:

Տէր-Մարուքն ու ուստի Պէտօն նստեցին մինդարների վրա. խօսակցութիւնը շարունակում էր:

— Ասացիր թէ Խութն աւերուած է, հարցրեց Տէր-Մարուքը:

— Աւերուած է, տէրտէր, և բնակիչներն էլ կոտորուած են, շարունակեց ուսոր: Շատերին կենդանի-կենդանի են թաղել: Ուստի Կրգօն, հայի՞ֆ քեզ, տղամարդ, սպանուած է և նրա ողջ տունը ջնջուած: Շատ քչերն են աղատուել լեռներում և անտառներում ծածկուելով. նրանք էլ սովամահ լինելու վրա են:

Տէր-Մարուքը լսում էր այս սոսկալի բօթը՝ մերթ զլուխն օրօրելով, մերթ ծնկներին խփելով, մերթ ախ ու վախ անելով: Երբ ուստի Պէտօն վերջացրեց աղէխարշ պատմութիւնը, տիրեց խորին լրութիւն: Երկուսն էլ պաշարուեցան ծանր մտքերով. Մէր Մարուքը նոյն իսկ մռուացել էր իր տէրողորմեան շխկացնել:

— Ուստի Պէտօն, ընդհատեց տէրտէրը լռութիւնը, եթէ այդպէս է, մեր բանն էլ գժուար է. Խութն աւերուեց, անյաղթելի Խութն ընկաւ, մենակ ի՞նչ պիտի անէ խեղճ Բանոնը, որ մինչև այժմ Խութի շուաքի տակ է ապրել: Մէր հարեան գաղաններն էլ մեզ դադար չեն տալ. սրանք մինչև այժմ Խութի երկիւղից էին զսպուած մնացել, հիմա ամբողջ էլիաթը ոտի կը կանդնի և մեր բանը վատ կը լինի, շատ վատ: Տէր Աստուած դու խնայես, դու հասնես, վերջացրեց նա աչքերը երկինք ամբառնալով:

— Տէրտէր, առանց աստուծոյ օգնութեան ոչ ոք աշողութիւն չէ ունեցել, բայց մարդն էլ պարտական է իր մասին հոգալ. պէտք է մտածել մի ճար անել: Լաւ կը լինի՝ մէկել աղսախկալներին էլ շուտով խորհուրդի կանչնք, մի հնարք մտածենք ասիանցիների հաւանական յարձակման առաջն առնելու: Վատ

չի լինի, որ Ռաշիդն էլ մասնակցի մեր այս խորհրդին, նա թէւ ջահել է, բայց սիրտ ունի, խելք ունի և կարող է օգտակար լինել: Իսկ դու, տէր հայր, վազուանից սկսիր եկեղեցում հսկում կատարել, թող Աստուծոյ աչքն էլ մեր վրա քաղցր լինի, մարդ ինչ որ քաշի, իր մեղերից կը քաշի:

Խորհուրդ գումարելու համաձայնութիւնը կայացաւ Բանոնի երկու առաջնորդների մէջ բայց խօսակցութիւնն այնուհետեւ դեռ շատ երկար շարունակուեց: Արդէն կէս դիշերը մօտ էր: Գիւղում աղմուկն ու շարժումը դադարել էր. ամենքն ընկղմել էին խոր քնի մէջ. ընդհանուր խաղաղութիւնը վրդովում էր միան երեմնակի շների չարագուշակ հաշոցով ու ոռնոցով: Արանցից մէկը, մանաւանդ գիւղի հեռաւոր ժայրում յուսահատ կաղկանձում, վնդուսում էր, ամենքն էլ ծայնակցում էին նրան՝ այլանդակ, խլացնող համերդ կաղմելով, և ապա կրկին լոռում: Բայց ահա հեռաւոր շունը կրկին հաշել սկսեց, բայց այս անդամ աւելի կատաղի, աւելի բարձր, միւս շների աղմուկն էլ միացաւ և ընդհանուր դարձաւ: Երկու ծերունիներն ականջները սրած՝ ուշալրութեամբ հետեւում են այս անօրինակ աղմուկին, որը նրանց կարծիքով միշտ ծանրակշիռ պատճառ պէտք է ունենար:

Շատ չանցած նրանց կասկածներն արգարացան. շների հաջոցի մէջ լսելի եղան նաև մարդկանց ձայներ, որոնցից մէկը պարզ և որոշ կերպով՝ «Եաման քեօմագ» պոռաց. սրան հետեւց երեխանների լացի ու վուցի ձայներ: Այլ ևս ոչ մի կասկած չը կար, որ դիւղացիներից մէկի տան վրա գիշերալին յարձակումն է տեղի ունեցել, և անշուշտ Մխօի տունն էր, քանի որ նրա տունն էր գտնելում գիւղի ծայրում միւսներից անջատ. գոնէ այսպէս վճռեցին տէր Մարուքն ու ուս Պէտօն և պատրաստուեցին դուրս ելնել գիւղը ուարի հանելու համար, բայց չեռ երկու քայլ չարած օդայի դռանը երեւեցաւ Ռաշիդի վայելչակազմ հասակը:

— Աւաղակները Մխօի տունը կոխել են, ասում են աղջիկ են վախցրել, դուեց նա, և առանց որ և է պատասխանի սպասելու, վազեց օդայի պատից քաշ ընկած զէնքերը խլեց, դուրս քաշեց իր ձերմակը և առանց թամբելու, մէշքին թռաւ և անխախտացաւ խաւարի մէջ մինչդեռ ողջ գիւղը տակն ու վրա էր եղել, մարդիկ վազում էին դէսի աղմուկի կողմը, նոր զարթնածները վազողներին հարցնում էին բանի էութիւնը: Ոչ ոք չիմացաւ թէ Ռաշիդը մէն-մենակ ուր զնաց:

Ուաշիդը գիտէր, որ աւազակները որտեղից էլ գնալու լինէին, պէտք է Աստուածածնի բլրի տակից անցնեն: Ուստի մտածեց մի կտրուկ ճանապարհով այդ բլրի տակ նրանց առաջը կտրել. սրա համար հարկաւոր էր գետն անցնել, միւս ափով գնալ մինչև բլրի ուղղութիւնը, և ապա կրկին անցնել և բլրի առաջ դուրս գալ Ահա՝ նա արդէն գետի ափումն է, որ գոռում գոչումով հոսում է խաւարի միջից: Մի ըոպէ ջրի աղմուկը, համատարած խաւարը, իր միայնութիւնը նրան սարսափ տղթեց, և նա կանգ առաւ մտախոհ. բայց մտածելու ժամանակ չը կար, գետի խշոցն անկարող եղաւ խլայնել գիւղից լսուող բազմազան ձայները, հարայ-հրոցը և նա ու Աստուածածնին յանձնելով իրան՝ խթեց ծիու կողքերը. կենդանին սարսափած ջրից ու խաւարից մի վայրկեան յետ-յետ բաշուեց: բայց վերջը հնազանդուելով տիրոջ ցանկութեանը՝ մոնչալով ջուրը մտաւ, սաստիկ շրփոց հանելով: Կրծքից վեր խորասուզուած ջրի մէջ, նա հղօր կրծքով դէմ տուեց ալիքներին և սկսեց առաջ գնալ: Ուաշիդը բաշարում էր փոնչացնող կենդանուն, շոյելով բարձր բռնած գեղեցիկ պարանոցը. երկար չը քաշեց այս վտանգաւոր ընթացքը. մի բանի ըոպէից յետով Ուաշիդն արդէն միւս ափումն

էր, և սլանում էր գետի ընթացքով դէպի վար, դէպի բլուրը: Ահա նա արդէն բլրի առաջն է. կրկին հարկաւոր է գետակն անցնել: Առաջին փորձից քաշալերուած, նա այս անգամ համարձակ քշեց իր ծին և շուտով դուրս եկաւ և բլրի դէմ յանդիման կանգ առաւ:

Նա ծիուն չէր խնայել և համողուած էր, որ գողերն անցած չեն լինի, քանի որ նա անհամեմատ աւելի երկար ճանապարհ էր, բան իր կարածը և երկրորդ՝ աղջիկ փախցննէլ այնքան հեշտ բան չէր, որ նրանք կարողանալին իրանից առաջ այստեղից փախած լիներ:

Ուաշիդը շտապով վար բերեց հրացանը, քաշեց նրա ոտքը և ճանապարհի մէջտեղում կանգնած սպասում էր առանց ծիուց իջնելու: Այդ ըոպէում նրան ոչ մի միտք չէր խռովում. ոչ թշնամիների անսպասելի բազմութիւնը, ոչ իր միայնութիւնը և ոչ յանդուզն ձեռնարկութեան բոլոր ահաւորութիւնը: Նա միայն սարսափում էր այն մտքից, թէ մի' գուցէ անօրէններն անցած լինեն և եր բոլոր ջանքերն ապարդիւն անցնեն: Լսողութիւնը սրած, նա աչքերը չոել էր խաւարի մէջ, աշխատելով որ և է ստուեր ջոկել, կամ լսել որ և է շշուկ, կամ ծիերի արոփիւն,

սակայն իգուր, միայն գետն էր իր ահաւոր աղմուկով դղրդում շրջակալքը՝ զարկուելով Աստուածածնի աւերակ վանքի ժայռոտ հիմքին, որ ցցուած էր խաւարի մէջ, որպէս մի վիթխարի քարակոյտ։ Անցան մի քանի րոպէնէր, յաւիտենականութեան չափ երկար. Ուաշիդը մօտ է յուսահատուելու. նա արդէն հակուած է համոզուելու, որ աւագակներն արդէն անցել են. այդ միտքը և՛ սարսափեցնում և՛ կատաղեցնում է նրան. նա մտածում է նոյն իսկ ձիու բերանը յետ դարձնել և քշել նրանց յետեից. Ճերմակն արագնթայ է, նա կը հասնի նրանց։ Յետոյ այս միտքը թուաց նրան չափազանց յանդուգն և հրեշաւոր։ Նայեց աւերակ մենաստանին և ակամալից երեսը խաչակնքեց խորին երկիւղածութեամբ։ Այսպէս էր նա միշտ, ցերեկ թէ գիշեր, չէր կարող այս սրբավայրերի մօտից անցնել՝ առանց երեսը խաչակնքելու։ Նա մի ակամայ երկիւղ էր զգում, երբ մօտենում էր այս բլին. Ի՞նչ էր այս երկիւղի պատճառը, նա մինչեւ այժմ որոշել չէր կարողացել։ Նա լիշում էր, որ մանուկ հասակում իր քահանայ հայրն ստիպում էր նրան խաչակնքել սրբավայրի առաջից անցնելիս և այն ժամանակից նա սովորել էր խաչակնքել երեսը՝ Բայց ի՞նչով բացատրել այդ երկիւղը, ուս կը ու

նական երկիւղածութիւն չէր, որ համակում էր նրա սիրուր. սա սարսափ էր, նման այն սարսափին, որ մանուկներն զգում են աւերակների մօտից անցնելիս, որոնք նրանց կարծիքով դեերի, չարքերի բնակարաններ են։ Մանկական հասակում այսպիսի չէ երկիւղը շատ բնական կը լինէր, իսկ այժմ. սա ի՞նչ տխուր չարագուշակ երկիւղ է, որ տիրում է նրա անվախ սրտին ամեն անդամ այստեղից անցնելիս. բայց նա չը կարողացաւ այս հարցերի պատասխանը տալ, խաւարի մէջ լսուեցին ծիու տրոփիւն և մի սրտամորմոք նուաղամ ճիչ, որ մերթ ընդհատում և մերթ լսուում էր աւելի ու աւելի մօտենալով. այլ ևս ոչ մի կասկած չը կար, որ նրանք են։ Հրացանն ուղղեց. բայց հէնց այն բոպէին, երբ կամեցաւ պրծակել, կրկին կանդ առաւ, նրան սարսափեցրեց այն միտքը՝ իսկ եթէ իր գնդակը հէնց խղճալի աղջկան դիպչի, և ստիպուած հրացանի բերանը գէպի վար, գէպի եկողների ոտներն ուղղեց. հրացանը տրաքեց, գնդակն անախորժ վզզոցով անցաւ խաւարը պատռելով դէպի մօտեցող երեք ստուերները և նրանցից մէկը գետին գլորուեց։ Ուաշիդն առաջ արշաւեց։ — Կացէ՛ք, անօրէններ, որոտաց նա խաւարի միշից. Ուաշիդը դեռ կենդանի է։

Այս ահաւոր անունը, յանկարծակի և անսպասելի կողմից հրացանածգութիւնը, մէկի թաւալգլոր ընկնելը, սարսափով պատեց ասիանցիներին և նրանցից երկուոր թողնելով յափշտակած կիսամեռ աղչկանը իրանց ընկած ընկերի մօտ, իրանք անյայտացան՝ դաշտի հակառակ կողմը փախչելով։ Մօտենալով՝ Ռաշիդը դաշտ աւազակին կենդանի, բանից դուրս եկաւ, որ սրա ծին էր սպանուել, անկարող դարձնելով նրան փախչել։ Սնօրէնը դժութիւն էր խնդրում... Քիչ յետոյ Ռաշիդն աւազակին առաջն արած և կիսամեռ աղչկան ծիու վրա դրած դիմեց գիւղ։

Գիւղը սպի մէջ էր։ Ամենքը վաղեցին գէպի Մխօի տունը և այնտեղ հետեւեալ տեսարանը ներկայացաւ նրանց աչքին։ Մխօն՝ սրի մի հարուած ընդունելով զիսին, ընկել էր բակի մէջ արիւնլուայ։ մանը երեխաները մօրը կորցրած ճտերի պէս, խեղճ ու կրակ վայում էին։ իսկ նրանց մայրը, ամուսնու կողքին կծկուած մազերը փետելով, ծնկները ծեծելով, զիսին տալով պոռում էր։

— «Եաման աղջիկս, քրիստոնեայ էք, խասէք։ Ռաշիդ շան, մեռնեմ քեզի, քեօ ոտաց հէլրան, թէ ձարձ դու էնիս, իմ ասլան», զոռում էր տարաբախտ կինը բաղմութեան մէջ Ռաշիդին փնտրելով։

Բայց Ռաշիդը չը կար։ Ընդհանուր շփոթութեան մէջ ոչ ոք չէր յիշում, այժմ միայն ամենքն էլ նկատեցին, որ Ռաշիդը չը կայ և զարմացան, որովհետեւ այսպիսի ժամանակ նա տանը նստել չէր կարող։

Հասան Տէր-Մարուքն ու ոէս Պէտօն։

— Տէրտէր, ուր է Ռաշիդը, դիմեցին նրան մի քանի ծայներ միասին։

— Ռաշիդը զրմմէնէն առաջ վազեց։ մազեար նա էսա տեղ չէ։ Էսմալի հաւարին հասէք, նա նրանց յետեից է ընկել մենակ։ Այս, անզգոյշ տղայ, — ասաց տէրտէրը ծրնկներին տալով — դէ՛ շուտ հա, շարունակեց նա. անօրէնները շատ կը լինեն, իմ տունը կաւերեն և էսօր մէկի տեղ երկու դաղ կը բաշեն մեր սրտին։ դէ՛ շուտ հասէք։

Երիտասարդները շփոթուած առաջ վազեցին։ Բայց դեռ գիւղից չէին գուրս եկել, որ նրանց հանդէպ դուրս եկաւ Ռաշիդը աղջկան ծիու վրա դրած, իսկ կապուած աւազակին առաջն արած։ Ո՞վ կը սպասէր. ուրախութիւնն ընդհանուր եղաւ։ Մայրն ու փոքրիկ երեխաները վրա պրծան փաթաթուեցին Սալրին, որ մօր գրկի մէջ յուզմունքից մարեց։ Մի քանիսը խանձարուրով պատեցին Մխօի Առւխը, իսկ բազմութիւնը շրջապատեց աւազին և Ռաշիդին։

— Տղե՛րք, դարձաւ Ռաշիդը զէպի բազմութիւնը, երեսում է, որ այս շները մեղ վրա ոտք են վերցրել. ո՞վ էր տեսել ասիանցին սիրտ անի, Բանոնից աղջիկ փախցնի: Տօ, սրանք մեր գառանը սիրտ չեն արել մօտենալ. սրանց մի լաւ խրատ պէտք է տալ, այ էս շան զլուխը ջախախէնք, ծգենք գետը տանի, որ էլ ոչ մէկը սիրտ չանէ էն սարերից դէսն անցնել: Դէ՞հ, կապեցէք սրան սայլից: Մի քանի երիտասարդներ վայրկենապէս բռնեցին և դէպի սայլը քաշ տուին աւազակին. վերշնս ճշում էր, լաց լինում, նրանց բախտին դիմում, ազերսում, որ խնայեն իրան:

— Կացէ՛ք, մէջ մտաւ տէրտէրը, Ռաշիդ, դաւակս, թող չարն անցնի, արիւն մի՛ թափէք. նրանք արին, գու մի՛ արա, փառք տանք Աստծուն, որ նրանց չարութիւնը չլիշողուեց. գլուխը քարը, թող կորչի երթալ, ժամանակը չար է...

— Տէրտէր, չէմ սպանի, լսում եմ քեզ, բայց պէտք է այնպէս խրատեմ, ինչպէս որ դու մեղ խրատում էիր, երբ գաս էիր տալիս Տղե՛րք, այս շանք կապեցէք սայլից գլխիվայր: Մի բոպէ չանցած ասիանցի աւազակը գլխիվայր: Վայր կախուած ճօճում էր սայլի յետին մասում և Ռաշիդը կարող ճեռքով անխնայ ճիպոտի հարուածներ էր տալիս նրա մերկ

ոտներին ու մարմնին. — Նա գոռում էր, արճքում, վայում, աղաչում, որ խնայեն, բայց հարուածները տեղում էին ու տեղում:

— Բաւական է, վերջապէս գոռացին տէրտէրը և ռէսոր, թող տուէք կորչի երթալ:

Աւազակին արծակեցին, նա հազիւէկը ոտների վրա կանգնում, և օրօրուելով հեռացաւ: Բազմութիւնն սկսեց ցրուել, և երկար չանցած գիւղում կրկին տիրում էր գիշերային խաղաղութիւնը:

Գարնանային գեղահրաշ առաւօտ էր: Մարալայ սարերն ու ձորերը գեռ լողում էին վաղորդեան աղջամուղչի մէջ, և նրանց կանաչազարդ կատարները գծագրուելով երկնակամարի կապուտակ ֆօնի վրա, ասես ամպէրի կոյտեր լինեին: Կանաչապատ բլրակները, շամանդաղի միջից հազիւ նկատելի սառւերագծերով խիտ առ խիտ իրար վրա կուտակուած, հսկայական հօտի էին նմանում, որին հովուի սրնզի ծայնը գեռ չէր վերկացրել առաւօտեան արօտի: Այս կանաչազարդ լեռների, այս գեղանկար բլրակների միջից մերթ երևալով և մերթ ճաճկուելով հոսում էր գետակը, ոլորուելով վիրաւոր օծի պէս, որ երբեմն ցոյց էր տալիս իր փայլուն արծաթագոյն մէշքը, իսկ երբեմն կորչելով ծորերի խորութեան մէջ, իր ներկայութիւնը յայտնում էր խուլ խշչոցով:

Մօտ էր արշալոյսը: Օրուայ այն ժամն էր, երբ լեռ ու դաշտ, ծառ ու ծաղիկ, աղբիւր ու առուակ նղղած, շունչները բռնած, անձան, լուռ, ասես վախենալով խանգարել սքանչելի ներդաշնակութիւնը, սպասում են բնութեան այն հրաշալիքին, որ արշալով անունն է կրում: Փչում էր առաւօտեան մեղմ, զով քամին, օրօրելով, իրար տալով լեռների և հովիտների ծաղիկներն ու խոտերը: Մարտաց սարերի թիկունքից գէպի վեր երկինքը շառագունուել էր արշալուսի նկարչան գոյնով: Արևի առաջին ոսկեգոյն շողերը խուրծ-խուրծ թռան ընկան լեռների կանաչապատ ցօղազարդ կատարներին, ապա հետզետէ ցածրանալով պայծառ լուսով ողողեցին ցօղազարդ բլուրներն ու դաշտերը: Կանաչների ադամանդեալ փայլուն ցօղերը գուրշիանալով նախ մի համատարած նուրբ շամանդաղով ծածկեցին ամբողջ հարթութիւնը, ապա կամաց - կամաց շրջակալքը պարզուեց, արևի ոսկեալ գունդը բարձրացաւ շինչ, կապուտակ ու ժպտուն երկնակամրի վրա: Տեսարանը սքանչելի էր:

Բայց այս բոլորը չեին դրաւում այն ձիւոր երիտասարդին, որ սանձը իր ներմակ ձիու պարանոցին դցած՝ հանդարտ գնում էր գէպի Մարտաց սարերը: Դա Ռաշիդն էր:

Տիսուր էր երիտասարդը. ասես նա չէր տեսնում լեռների ու դաշտերի կանաչազարդութիւնը, հրաշալի արշալոյն ու արևածագը, չէր լսում քարափներում կվկվացող կաքաւների, դալալող հարիւրաւոր թռչունների քաղցր ծայները, որ միախառնուելով գտակի խշշոցի հետ՝ կազմում էին մի քաղցր, մի ուշագրաւ համերգ:

Պարզ էր, որ մի ծանր վիշտ ճնշում էր երիտասարդի սիրտը, ուր գուցէ այնքան խաւար էր, որքան ամպամած գիշերը: Ճակատի խոշոր ծալքերը փայլուն ապացուց էին նրա ներքին աշխարհի: Հաւատարիմ նժոյգը, կարծես դգալով իր տիրոջ հոգեկան վիճակը զգուշանում էր նրան անհանդիսա անել, խանդարել, խոռվել նրա մտքերը և ուշադիր բնազգով քայլում էր դաշտավայրերի միջով: Տիսուր է Ռաշիդը, նրան տանջում է Զարէլ սէրը. կարել կաշկանդող կապերը, մոռանալ սիրած աղջկան, հեռանալ նրանից, նա չի կարողանում: Ընկնուած կամքն այլ ևս ոյժ չունի, բանականութիւնը լուել է. նա իր սրտի և զգայականութեան ստրուկն է դարձել. իսկ շարունակել գաղտնի տեսակցութիւնները այս ամայի լեռներում, մինչև Երբ, և ինչով կը վերջանայ... Հետեւանքը կրկնակի վտանգաւոր է. եթէ ասիանցիները մի կերպով

իմանան, որ շատ հեշտութեամբ կարող է պատահել, այն ժամանակ գործն առանց արիւնի վերջանալ չի կարող: Վիրաւորուած ասիանցիները մահու գնով կառնեն իրանց բէկի աղջկան հասցրած անարդանքի վրէժր, և ով դիտէ, գուցէ ալդ պատճառով տուժի և իր հայրենի վիւղը: Այս գեռ քիչ է, նա վերջին դէպքում հայրենակիցներից դաւածան անուանը կարժանանայ:

Ահա թէ ինչ ժանր մտքեր էին պաշարել նրան. երբ հասաւ Աստուածածնի բլրին, նա դլուխը վեր բարձրացրեց, նայեց աւերակ սրբութայրին և երկիւղածութեամբ խաչակը երեց իր երեսը. շարժեց ծիուն և առաջ արշաւեց, որովհետև հեռու մի բլրի գագաթին կանգնած տեսաւ իր Զարէին: Տիսուր ճնշող մտքերը թողին նրան, սիրած աղջկայ տեսքը լցրեց նրա սիրտը մի անսահման բաւականութեամբ. նա մոռացաւ և երկիւղ, և վտանգ, և ամօթ, և նախատինք: Զարէն բլրի գագաթից դիւթել, յափշտակել էր, նրան քաշում զրաւում էր, որպէս լոււառ փարոսը ալիքների մէջ մոլորուած նաւին: Ուաշիդը թռչում սլանում էր, ասես սիրոյ թեւերի վրա. ինչե՞ր չէր տալ մի ժամ, մի ըսպէ առաջ գրկելու այն սքանչելի պատկերը:

Ահա նա վերջապէս սովորական ժայռի լեռն է. քիչ յետոյ գալիս է Զարէն, և նրանք գրկախառնւում են և գուրգուրում իրար, որպէս զոյգ աղաւնիներ:

— Ա՛խ, Ռաշիդ ջան, ինչքան վատ կը լինէր, եթէ այսօր չը գալիր. աչքս չուր կտրեց մինչեւ տեսայ քեզ. լաւ որ եկար, ասում է Զարէն և աւելի ու աւելի մօտ սեղմեւում նրան և համբուրում Ուաշիդի ճակատն ու շրթունքները: Ապա իր մէծ փայտուն աչքերը սեւուելով նրա գէմքին, նայում է երկար, շատ երկար սիրատապ հայեացքով, կարծես աշխատելով նրա գէմքի վրա կարդալ. նրա ներքինը, նրա սրտի գաղտնիքը:

Բայց յանկարծ նրա պարզ աչքերը պղտուեցին, արտասոււքները կախուեցին նրա արտեանունքներից և նա հազիւ զսպկով իր հեկեկանքը, ծածկեց իր գէմքը Ուաշիդի կրծքի մէջ ու կարծես էլ չէր կամենում բաժանուել այնտեղից: Ուաշիդն սկզբում չը հասկանալով բանի էութիւնը, աղջկայ արածը միմիայն դուրգուրանք համարելով, սկսեց քնքշաբար շոյել նրա խիտ սկ մազերի հիւսերը. բայց յանկարծ զզաց իր կրծքի վրա նրա հեկեկանքըն ու ցնցումները. նա զարմացաւ և երկու ծեռքով բռնելով նրա զլուխը, բարձրացրեց նրան և երկար փորձող հայեացքով սկսեց

նայել աղջկայ արտասուացօղ դէմքին ու աչքերին։ Զարէն տիսուր էր, շատ տիսուր. արցունքները թափւում էին նրա սիրուն աչքերից և ողողում էին կարմիր, բորբոքուած այտերը՝ գարծնելով նրան էլ աւելի գրաւիչ էլ աւելի գեղեցիկ։

— Զարէ, գառնուկս, դու գարդ ունիս, տիսուր ես և ինձնից թագցնում ես, ասա, ի՞նչ է պատահել քեզ. ձերոնք իմացե՞լ են...

— Ռաշիդ ջան, ոչինչ չի պատահել, հենց այնպէս արտասուեցի, վատ երազ եմ տեսել, տիսրել եմ։ Երազիս դու նստել էիր մեր սև զօշի վրա և գնում էիր մի ինչ որ շատ հեռու տեղ, մի սարի վրա վագեցի, բայց չը հասայ դու գնացիր ու գնացիր։ Զարթնեցի՝ երազ էր, բայց տիսրեցի. ախր սև զօշը վիս բան է, Ռաշիդ ջան, շատ փիս. բայց այդ թողնենք, մի բան հարցնեմ կասե՞ս...

— Այդ ի՞նչ խօսք է. մի՞թէ դու չը գիտես, որ ես քեղանից ոչինչ չէմ ծածկիլ։

— Ռաշիդ ջան, ուղիղն ասա, դու ինձ սիրում ես։

— Ի՞նչ տարօրինակ ես այսօր, Զարէ, ի՞նչ է պատահել քեզ, ինչո՞ւ ես հարցնում. մի՞թէ չը գիտես, որ ես քեզ կեանքիս չափ սիրում եմ.

— Միրում ես, դէ երդուիր։

— Վա՞հ, չե՞ս հաւամանում։ Երդուում եմ քո և իմ արեովի, երդուում եմ սրովս, որ ես քեզ սիրում եմ։

Աղջիկը կրկին խանդաղատանքով փաթաթուեց նրա պարանոցով, կրկին զլուխը թագցրեց նրա կրծքի մէջ և այնպէս եռանդով այնպէս սիրով, ասես մէկը կար, որ գալիս էր խլելու նրանից իր սիրածին, բռնի կերպով բաժանելու իրարից։ Զարէն շարունակում էր հեկեկալով լալ։

— Զարէ, կոչեց Ռաշիդը, աւելի ևս զարմացած և յուզուած, գառնուկս, ախր ի՞նչ է պատահել քեզ, եթէ մի բան կայ, ասա, եթէ ոչ, ինչո՞ւ ես լալիս։

— Ռաշիդ ջան, լսիր իմ խօսքին, արի փախչենք այստեղից։ Թէ սիրում ես Զարէին, փախցրու նրան աշխրի պէս, կրկնեց աղջիկը իր արտասուալից աչքերը յամառութեամբ սկեռելով Ռաշիդի աչքերին։ Իմ երազը վասէ է, ես վախենում եմ, ես կը գամ քեզ հետէ տար ինձ, ուր կուզես, տար հեռու, շատ հեռու. այնտեղ, ուր ձեր ֆլաները շատ են ու հանգիստ են ապրում։ Ես էլ ֆլայ կը դառնամ և մենք կապրենք միասին. միայն շուտ, շուտ փախչենք, աղաչում եմ քեզ, իմ աննման իգիթ։

— Ինչու համար դու այդ բանը միայն այսօր ասացիր, իսկ մինչեւ այժմ ոչ մի այդպիսի բան չես ասել, և ինչու ես լալիս ախր ի՞նչ է պատահել:

— Ես զուր տեղը զօչ չեմ տեսել երազումս, որ մնանք քեզ կը սպանեն, հաւաա կը սպանեն. Ես էլ չէմ ապրի, Զարէն առանց Ռաշիդի մի օր էլ չի ապրի. Այ, կենեմ էն սարի վիխից ինձ վար կը զորեմ: Էդ խօ կարո՞ղ եմ անել: Այս, Ռաշիդ, մերոնք կատադել են. մեր ասիսնցուն անցեալ օրը այնքան ժեծել էիր, որ տուն եկաւ թէ չէ մեռաւ: Ախր ինչու ժեծեցիր նրան. հիմա ինչ կանէք մերոնց հետ: Լուր է եկել, որ ձեր պաշտպան Խութն էլ շիկակներն աւերել են ու բոլորին կոտորել. մերոնք էլ այդ պատճառով այս գիշեր խորհուրդ արին մեր տան մէջ, որ ձեր գիշերի վրա յարձակուեն, կրակ տան ու կոտորեն. և նրանք կանեն. չը զիտե՞ս, որ ասինցիների ձեռքը ճար ըլնի, մեր երեխաներին էլ կը մորթոտեն:

Մի չարագուշակ ստրառուռ անցաւ Ռաշիդի մարմնով:

«Խութն աւերել են, կոտորել են, կրկնում էր նա մտքի մէջ: Յիրաւի ստ մի սարսափելի գոյժ էր: Ասիանցիներն այժմ ինչ ասես կը կատարեն Բանոնի գլխին: Պետք էր շտա-

պել զիւղ հասնել ժամ առաջ. պէտք էր ելք մտաժել»:

Նա վեր կացաւ:

— Դու գնում ես, Ռաշիդ, և չես ուզում փախչել ինձ հետ, ուրեմն դո ինձ չես սիրում չէ որ մնաս, քեզ անպատճառ կը Ռաշիդ: իսկ Զարէն առանց Ռաշիդի ի՞նչպէս ապրի: Լսիր ինձ քո բախտն եմ ընկել, արի փախչենք, ոտքերդ ընկած աղաշում եմ, ասաց աղչկը լացակամած և ծունկ չոքեց Ռաշիդի առաջ աղիողորմ արտասուելով:

Յուզուած Ռաշիդը, ինչ անելը չիմանալով, մի բոպէ ապշած մնաց, առանց նայելով իր ոտների տակ ցնցուղ գեղահասակ աղջկան, որի թիկունքի վրա փռուած էին նոխ սև մազերը, ապա նա յանկարծ ուշքի գալով կռացաւ, քնըշաբար բարձրացրեց նրան և համբուրեց արտասուացօղ այտերը և դողդուն շրթունքները:

— Զարէ չան, մի լար, հողիս, տսաց նա. ինձ այնպէս հեշտ չէ սպանելը. Ռաշիդին սպանելը դժուար է: Մի վախենալու: Ակր այժմ ես քեզ հետ ի՞նչպէս փախչեմ: Ո՞ր իգիթը, եթէ նամարդ ստորահոգի չէ, յանձն կառնի այսպիսի վտանգաւոր ժամանակ թողնել իր հայրենի զիւղը, իր վաթանը կրակի մէջ և փախչել, ախր աշխարհը կը թքի ինձ.

միթէ դու կուզես, որ քո Ռաշիդին ամենքն էլ նամարդ անուանեն: Հոգիս, ինչու ես մոռանում, որ ես ծնողներ, ազգականներ, հայրենակիցներ ունիմ, միթէ վայել կը լինի իմ անուան, որ ես նրանց թողնեմ հազար ու մի վտանգի ենթակալ:

Ռաշիդի սգեորուած խօսքերը նպատակին հասան: Աղջիկը փաթաթուեց նրա պարանոցով և մի տաք համբոյք դրոշմեց նրա ճակատին: Հրաժեշտի համբոյք էր դա. նրանք կը րկին և կրկին գրկախառնուեցան: Տիսուր էր այդ հրաժեշտը. երուսին էլ թւում էր, թէ նրանք յաւիտեան բաժանում են իրարից. և այդ նրանց վերջին տեսակցութիւնն է: Վերջապէս Ռաշիդը կարողացաւ ազատուել աղջկայ փաղաքանքներից, թռաւ իր ձերմակի մէջքին, ոլացաւ դէպի գիւղը. իսկ Զարէն ժայռի կատարին կանգնած, դեռ երկար նայում էր նրա յետելից, մինչեւ նա բոլորովին ժածկուեց:

Գիշեր է: Բանոնն ընկղմուած է խոր քնի մեջ: Տներում վաղուց ճրագները մարել են: Ամեն տեղ ձայն ու շարժումը դադարել է. միայն Տէր-Մարուքի օդայում դեռ պլազմում է ձեմի ճրագը՝ մի աղօտ, խորհրդաւոր լոյս սփռելով իր շուրջը: Այստեղ նստողների գէմքերը հազիւ ճանաչւում են: Վերեւում նստած

է Տէր-Մարուքը, իր անբաժան տէր-ողորմեան ծեռքին համրելով. նրանից ցած, մինդարի վրա բազմել է ռէս-Պէտօն, որ ագահաբար կուլ է տալիս չիբուխի դառն, խեղդող ծուխը և ամեն անգամ, երբ քուլայ-քուլայ բարձրացնում է, սկսում է ծանր հագուլ խռպոտ կրծքից: Այստեղ են և Մէլիք-Մարգիսը, Մէլիք-Առաքելը և մի քանի այլ ծերունիներ: Նստուած օդայի աշ ու ծախ կողմերում ամենքն էլ մտախոհ են, ամենքի կնճռոտ ճակատը ծանր ծանր հոգսերի կնիք է կրում իր վրա: Բոլոր նշաններից երեւում է, որ սրանք հաւաքուած են այստեղ մի ծանր, մի մաշող խնդիր վճռելու համար: Ամենքի հայեցքն ուղղուած է Տէր-Մարուքի և ռէս-Պէտօնի վրա. իշխանների աւագներից սպասում են լսել ժողովի նպատակը.

— Ասիանցիները մեզ կրկին սպառնում են, ընդհատեց լռութիւնը ռէս-Պէտօն, Խութն իսպառ տակն ու վրա են արել շիկակները. մենք մնացել ենք առանց օգնականի, առանց թե ու թիկունքի: Ռաշիդն էլ, չը գիտեմ որտեղից, հաստատ կերպով լսել է, որ այս օրերս մենք կենթարկուենք ասիանցիների յարձակման: Ի՞նչ պէտք է անել:

Տիրեց մէ ճնշող, չարագուշակ լռութիւն. պատկառելի ծերերի ճակատների կնճիռներն

Էլ աւելի խտացան, իսիտ սպիտակած յօնքերն  
էլ աւելի կիտուեցան: Ամենքն էլ զգում էին,  
որ դրութիւնը ծանր է և յուսահատական,  
բայց եթք գտնեն այնքան էլ հեշտ չէր: Ամեն  
մէլլ խորհում էր, բայց ոչ ոք չէր համար-  
ձակում առաջինը խօսել. լուսութիւնն ընդ-  
հատում էր միայն տէրտէրի տէր-ողորմեալի  
միաձայն շրխկացով և ռէս-Պէտօի խռպոտ  
հաղով, իսկ չիբուխի ծուխը պալան-պալան  
բարձրանում էր, համարձակում:

— Ռէս-Պէտօ, ասաց վերջասլէս Տէր-Մա-  
րուքը, երբ Խութը քարուքանդ է եղած և  
մենք մնացել ենք մենակ, ես կարծում եմ,  
մեղ մնում է միայն գաղթել և օր առաջ հե-  
ռանալ այս արիւնոս երկրից: Մեր զիւղը՝ իր  
հիմնարկութեան օրից մինչև այժմ տասն  
անդամ քարուքանդ եղած կը լինի, այս իւր-  
դին ալ ևս մեղ իւրդ լինել չի կարող. թող-  
նենք, հեռանանք՝ մեղ համար նոր վաթան,  
նոր իւրդ ճարելու.

— Տէր-տէր, մեռնեմ քո աջուն, այդ ի՞նչ  
ես ասում, կանչեց Մէլիք-Մարգիսը: Լաւ չէ  
մեր հայրերի գերեզմանների մօտ թաղենք մեր  
թշուառ զլուխները, քան թէ նրանց մեղ կտա-  
կած վաթանը, մեր հայրենի սուրբ օչախը,  
մեր հայրենի գերեզմանները մեր ժամն ու  
սրբերը թողնենք անօրէնների ծեռըին: Զէ,

պէտք չէ զաղթել, թէկուզ դրա համար հար-  
կաւոր լինէր մեւնել. վաթանը կորցնելուց  
յետով, կեանքը միթէ որ և է զին ունի:

— Մէլիք, մէլիք, դու մոռանում ես, որ  
մենք երեխաներ ունենք, որոնք ոչնչով ար-  
ժանի չեն սպասուող անտանելի կացութեան.  
Նրանց ի՞նչպէս զոհենք, շարունակեց Տէր-  
Մարուքը:

— Տէր-տէր, մի և նոյն է, զաղթելով մենք  
նրանց դարձեալ մահուան ենք դատապար-  
տում: Ուր զնանք, ում զիմենք, որի դռները  
ծեծենք նրանց կերակրելու համար: Ո՞վ մեզ  
մի անկիւն կրտայ նոյն իսկ զլուխ զնելու:  
Մեր զաւակները դարձեալ կը մահանան, մի-  
այն դանդաղ, անարդական մահով, մուրացիկի  
մահով. իսկ մնալով՝ գուցէ մեղ կը յաջողուի  
պաշապանուել, մինչև որ այս խառնակ գրու-  
թիւնն անցնի, մինչև որ պարսից և օսման-  
ցոց պատերազմը վերջանալ:

— Մէնք Ռաշիդին ուղարկեցինք Ամին  
աղայի օգնութիւնը խնդրելու, ասաց Մէլիք-  
Առաքելը. ես կարծում եմ զաղթելու կամ  
պաշապանելու մասին խօսք լինել չի կա-  
րող, մինչև Ամին աղայի տրամադրութեան  
մասին հաստատ բան ցիմանանք: Ո՞վ զիտէ,  
գուցէ այդ աղան յանձն առնի միանալ մեղ  
հետ ի սէր այն թշնամութեան, որ նա տա-

Ժում է դեպի ասիանցիները. սպասենք մի փոքր էլ. Ռաշիդը խօսք է տուել այսօրուայ ժողովին հասնել:

Առաջարկութիւնը խելացի էր: Ամենքը նախ լսեցին, ապա սկսուեց խօսակցութիւն Խութի մասին. այս ու այն կողմից հարցեր էին ուղղուած ռէս-Պէտօխն, և նա պատմում էր ցաւալի կոտորածի մանրամասնութիւնները, որքան իրան յալտնի էր: Անցան ժամեր:

Բակում լսուեց ձիու տրոփիւն, քիչ յետոյ ներս մտաւ. Ռաշիդը, յարգանքով զլուս առւեց նստողներին և կանդ առաւ դռան մօտ. գիւղի իշխանների և հօր ներկայութեամբ նա նստելու համարձակութիւն չունէր: Ամենքն էլ լրեցին, հետաքրքրուած հայեացըները դէպի Ռաշիդն ուղղեցին: Նրա պատասխանից էր կախուած ամենքի կեանքն ու մահը և աշխատում էին նրա դէմքի վրա կարգալ նրա ներքինը:

Ռաշիդը համառօտ կերպով հաղորդեց իր պատգամաւորութեան վախճանը: Ամին աղան շատ սիրալիր ընդունելութիւն էր ցոյց տուել նրան, և խօստացել էր մի քանի օրից յետոյ իր ցեղակիցներով օգնութեան հասնել:

Ուրախութիւնն ընդհանուր եղաւ, ամենքի կնճիռներն էլ պարզուեցին. ուրախալի լուրը նորին վճռական կերպարանք տուեց, դաշ-

թելու միտքն իսպառ մերժուեց. վճռեցին մնալ զիւղում, իսկ մինչև ամին աղայի հասնելը զիւղը պաշտպանողական դրութեան մէջ դնել: Ռաշիդը յանձն առաւ միւս օրը վաղ առաւօտից իր ընկեր երիտասարդների հետ զիւղի փողոցներում սան գեան եր կապել և զինուած հսկողութիւն կտտարել զիշերները: Խորհուրդը վերջացաւ: Ժողովականները ձէկիկ-մէկիկ լուսութեամբ դուրս եկան և ցրուեցին:

Վաղ առաւօտից ամենքը ոտի վրա էին, գիւղը զինուում էր, զիւղը զրուում էր պաշարման զրութեան մէջ: Պէտք էր փողոցների ծայրերում պատնէշներ, հողաթմբեր կազմել, կամ սալլերով ու գերաններով արուեստական ցանկապատեր—սան գեան եր շինել: Ոմանք փորում էին, ուղիչները հողը բարձրացնում թմբերի վրա, մի այլ փողոցում թափւում էին սալլեր, լուծեր, գերաններ, որոնք հետզհետէ իրար հազցնելով փակեցին. փողոցի մուտքը: Պարապ ծեռներ չը կային, աշխատում էին նոյն իսկ մանուկներն ու կանալը. պառաւներն էին միայն, որ պատրաստութիւնների բոլոր չարադրուշակ ահաւորութիւնը և սպառնացող թշուառութեան բոլոր լրջութիւնը դգալով, խրճիթների դռների աւաշ կանգնած, վախ-վախ էին անում, իրանց

Ճնկները ժեծում չորացած ձեռներով և մարած աչքերից արտասուքի խղճուկ կաթիլներ էին քամում:

Մինչև գիշերը գիւղի պաշտպանողական բոլոր ենթապրուած միջոցներն ի կատար էին ածուած: Փողոցների մուաքերը փակուած էին սանդեառներով, խրամատներով և պատնէշներով: Եկեղեցու կտրին տեղ էին բռնել մի խումբ հրացանաւոր երիտասարդներ. մնացած խմբերը ցրուել էին այս ու այն կասկածելի փողոցներում: Անհրաժեշտ էր նաև թշնամիների ճանապարհի վրա պահապահներ գնել, որ նրանց երեալուն պէս իմաց տան պատրաստելու:

Այս նպատակով Ռաշիզը մի խումբ չոկեց և գիմեց գէպի Տիրամօր բլուրը. խումբն անմիջապէս ծաղլցելով բարձրացաւ և բլրի այս ու այն կողմում, այս ու այն ժայռի յետեւում յարմարաւոր տեղեր գրաւեց:

Վրա հասաւ գիշերը. խաւար և ահաւոր վիշեր: Ուհս-Պէտօն և Տէր-Մարուքը միասին քչեցին գիւղի բոլոր փողոցները, գիտեցին պատրաստութիւնները, բաշալերեցին պահպան երիտասարդներին, իսկ խոռված ու յուզուած կանանց ու երեխաներին խորհուրդ տուին գնալ քնելու, հաւատացնելով, որ դրութիւնն այնքան էլ վտանգաւոր չէ. Աս-

տուած ողորմած է, շուտով օգնութիւն կը-ստանան: Ոմանք՝ համեմատաբար աւելի սրբ-տունները, ներս մտան մի կերպ պառկեցին քնելու, ինչպէս և փոքրիկ մանուկները: Իսկ վախկունները թէկ ներս մտան, բայց քուն չը մօտեցաւ նրանց աչքերին, խեղճելով այս ու այն անկիւնում կուչ եկած նստեցին, ականջներն աղմուկի, հրացանաձգութեան պահելով: Եւ գիւղը լուց:

Կէս գիշերը մօտ էր. չորս կողմից ոչ մի ծայն չէր լսւում. միայն գետակը յամառ կերպով շարունակում էր ծեծել իր ժայռոտ ափերը և աղմկում էր շրջակալքը: Անլիշելի ժամանակներից նա ծեծում էր այդ ժայռերը, նոյն իսկ Բանոնը վաղուց էր սովորել նրա որոտմունքի տակ հանդիստ քնանալ, իսկ մանուկներն իրանց օրօրոցներում այդ ծայնով աւելի հանդիստ էին քնում: Սա մի հսկայական օրօր էր նրանց համար. բայց այսօր՝ այս գիշերուայ ահաւոր պահուն, կասես գետի ձայնն աւելի զօրեղ էր, գոռոցն աւելի ահաւոր, արթուն գիւղացիք անգամ սոսկում էին նրա ծայնից. անցաւ դարձեալ մի քանի ժամ:

Յանկարծ լսուեց մի հրացանի ծայն. ինչքան և բարձր էր գետի գոռոցը, դարձեալ չը կարողացաւ խլացնել այդ ծայնը, որ լսուեց Տիրամօր բլրի կողմից և որ միանգամայն

բաւական էր, որ զարհութամբ դիւղը՝ մինչեւ  
ամենափոքր երեխան ոտքի վրա լինէին: Շու-  
տավ այդ որոտին լեռնեց բազմաթիւ հրացան-  
ների տրաքոց, պարզ էր, որ Տիրամօր բլրի  
մօտ Ռաշիդի խումբն ընդհարւում էր թշնա-  
միների հետ: Հրացանածգութիւնը հետղհետէ  
ծոտենում է, և կէս ժամ չանցած Ռաշիդն  
իր ընկերներով ներս մտաւ դիւղը, ուր ա-  
մենքն արդէն զարթել էին: Մեծ թէ փոքր,  
մարդ թէ կին թափուկ էին փողոցները և  
սարսափած հետեւում էին ահաւոր անցքերին:

Գիւղից ոչ հեռու երևեցան ձիւաւորուած  
ստուերներ, և լսուեցին ստների ձայներ. և  
յանկարծ տասնեակ հրային լեզուներ սոսկալի  
որոտով ակօսեցին թանձր խաւարը և բազ-  
մաթիւ գնտակներ անախորժ վզվզոցով  
զարկուեցին այս ու այն պատճեշին, այս ու  
այն հողաթմբին: Երիտասարդները չորս կող-  
մից պատասխանեցին նոյնպիսի հրացանա-  
ծգութեամբ: Թշնամիների խմբի մէջ շփոթ ու  
ազմուկ բարձրացաւ: Սպանուածներ ընկան  
արդեօք, թէ ձիեր սատկեցին, այդ ոչ ոք  
չիմացաւ. միայն ստուերները ցրիւ եկան և  
լսուեց սրարշաւ հեռացող ձիերի արովիւն:  
Ասիանցիները անսպասելի դիմադրութեան  
հանդիպելով և դիւղը պաշապանուած զրտ-  
նելով՝ թողին հեռացան: Անշուշտ նրանք

փոքրիկ խմբով եկել էին մի փորձ անելու  
ապագայ յարձակումների աշողութեան հա-  
մար, կամ անակնկալ յարձակումով սարսա-  
փահար անելու քնած, անպատրաստ դիւղը.  
բայց նրանց յոլսերն ի դերեւ անցան:

Լոյսը բացուեց. դարձեալ արեւ ծագեց  
Մարալայ սարերի թիկունքից և արարաշ  
խարհի հետ լուսաւորեց նաև այս սարսափած  
դիւղը: Տների կոնուսաձև կտուրներից մի  
քանիսի վրա ծխի ոլորապտոյա սիւներ երեւ-  
ցան: Կանոյք վառեցին թոնիրները ճաշ  
եփելու: Ոչ ոք չը դնաց դաշտ աշխատելու,  
դիւղն այս առաւօտ չաղմկուեց դաշտ գնա-  
ցողների երդերով և ուրախ կատակներով:  
անսառւներն անդամ գոմերում փակուած  
մնացին տխուր բառաչելով:

Արեւ բարձրացաւ:

Կէսօրը մօտ էր, երբ յանկարծ Մարալայ  
սարերի հակառակ կողմից փոշու ամպեր  
բարձրացան. դիւղացիները կտուրները բար-  
ձրացած և հարիւրաւոր մարդիկ՝ մեծ ու  
փոքր, մարդ թէ կին ձեռքի թալթով աչքի  
վրա ստուեր անելով՝ հայեացքներն ուղղեցին  
հեռուն, դէպի այն կողմը, ուր բարձրանում  
էր փոշին: Տարակոյս չը կար, որ այդ թանձը,  
ամպանման փոշին բազմաթիւ ծիերի ստքերի  
տակից էր բարձրանում. բայց ովքեր էին

արդեօք եկողները. Ամիսն աղայի ծիաւորներն են, թէ ասիանցիների հրոսակախումբն է յարձակումն գործում հակառակ կողմից։ Գիւղում կրկին իրարանցում տիրեց, աղմուկ ու շփոթ բարձրացաւ. ամենքին տանջում էր այն միտքը, թի ի՞նչ կը լինի իրանց վիճակը. Եթէ եկողները ասիանցիները լինեն և այն էլ խիստ մեծ բազմութեամբ։ Մի ժամ չանցած, Բանոնի շրջակալրի բլուրները ծածկուեցին ծիաւորների ահապին բազմութեամբ. ընդհանուր տիրութիւնը ցնծութեան փոխուեց, երբ յայտնի եղաւ, որ եկողը Ամիսն աղան է իր բազմաթիւ. «Խուլամներով»։ Գիւղը փրը կուած էր, զիւղացիները գրկաբաց ընդունեցին աղային իր հետևորդների հետ. իսկ տէր-Մարուքն ու ռէս-Պէտօն շրջապատուած միւս իշխաններով ընդառաջ զնացին զիւղից գուրս և խորին յարգանքի արտայայտութիւններով ներս ընդունեցին պատուաւոր հիւրին։

Խրճիթների կոնուսաձև կտուրների վրա ոլորապաոլտ ծխերի սիւներ բարձրացան. այս ու այնուեկ լսուեցին մորթոտորող գառների բառաչ, ուլերի մկնոց, հաւերի նվճվոց. համարեա բոլոր աներում թանգագին հիւրերի համար հազուադիւտ կերակուրներ էին պատրաստում։ Գիւրդերը նաշեցին և հանդիսաւառան։

Գիշերը մօտենում էր. ասիանցիների նոր յարձակումն կարող էր տեղի ունենալ, մանաւանդ որ թշնամիները չը գիտէին Ամիսն աղայի օգնութեան մասին. հարկաւոր էր նախազգուշական միջոցներ ծեռք առնել։ Այս անգամ կարգավրութիւններ անողը բացառապէս Ամիսն աղան էր։ Որպէս զի թշնամիների յարձակման մասին շուտով դիւղին իմաց տրուի, որոշուեց Աստուածածնի բլրի վրա կրկին մի խումբ պահապաններ կարգել, դրանց հրացանի առաջին ծալնը թշնամիների մօտենալու նշան պէտք է համարուէր և անմիջապէս Ամիսն աղան կուղարկէր իր ծիաւորներին, որպէս զի թշնամուն հենց ձանապարհից հետ դարձնեն և կանանց ու երեխաներին արիւնոտ տեսարանների հանդիսատես չանեն։ Պահապան խմբի առաջնորդութիւնը յանձնուեց Ռաշիդին, որպէս հանապարհներին և տեղադրութեանը ծանօթ անձի. իսկ խումբը կազմուեց բացառապէս զիւղի երիտասարդներից, Ռաշիդի ընկերներից։ Ռաշիդը սիրով յանձն առաւ այս գործը, զիւղը, բոլորովին ապահով համարելով Ամիսն աղայի պաշտպանութեամբ։

Պահապան խումբը զիւղից դուրս գալով գէպի Աստուածածնի բլրակը դիմեց. երիտասարդները տեղաւորուեցին այս ու այն կող-

մում: Սպասում են. ոչ մէկի աչքին քուն չի մօտենում. նախորդ գիշերուայ փորձը խրա-  
տական է: Խաւար, շատ խաւար գիշեր է.  
ամպամած երկնքից լուսոյ մի նշոյլ անդամ  
չի ընկնում ու քօղով պատած երկրի վրա.  
մի քանի քայլ հեռու առարկաների ինչ լի-  
նելլ որոշել չի լինում: Համատարած լուս-  
թեան մէջ լսում է միայն գետակի շառա-  
չիւնը: Անցան ժամեր. արդէն մօտենում է  
կէս գիշերը. պահապաններից շատերը, վերջին  
օրերի անհանդիստ, անքուն անցրած գիշեր-  
ներից յետոյ, կամաց-կամաց ննջում են հրա-  
ցանների կոթերի վրա կուացրած իրանց յուր-  
նած զլուխները, ուրիշները կուռում են աւե-  
լի և աւելի սաստկացող քնի ցանկութեան  
դէմ և մերթ ծածկում են իրանց աչքերը,  
քաշ գցում զլուխները և, ապա յանկարծ  
զլուխները բարձրացնում, վեր ցատկում և  
վախեցած հայեացքով դիտում խաւար շրջա-  
կալը: Խաշիդն է միայն անքուն, անթարթ  
աչքերը խաւար տարածութեան մէջ յառած  
այս ու այն կողմ անհանդստութեամբ շրջում  
հրացանն ուսին, և մերթ սրան, մերթ նրան  
ուազով հրում, արթնացնում, որ զգոյշ կենան:  
Գիշերային խաւարի մէջ ահաւոր հրէշների  
պէս հազիւ ծրագրուող աւերակների ու զան-  
գուածները Խաշիդի վրա առանձին ճնշող

տպաւորութիւն են թողնում. յանկարծ  
նրանց միշից լսում է բուի չարագուշակ, ա-  
նախորժ «վուլ - վաւլ», Խաշիդի սիրտը  
ճմլուեց, գեռ մանկութիւնից նա լսել և խո-  
րին կերպով հաւատացել է, որ բուի ծայնը  
խորհրդաւոր կազ ունի մի ինչ-որ դիստ մեծ  
դժբախտութեան հետ, ահա՛ նա շրջելով վեր-  
ջապէս կանդ առաւ մի քնած երիտասարդի  
գլխավերել և կամացուկ հրեց ոտքով.

— Աւօ, ա՞յ Աւօ, դու էլ ես քնած, ամօթ  
չէ:

Աւօն սարսափած ու շփոթուած վեր ցատ-  
կեց, աչքերը արորեց, շուրջը նայեց:

— Զէ, Խաշիդ չան, չեմ քնել, հէնց էն-  
պէս աչքերս խփուեցին, փորձեց իրան արդա-  
րացնել նա:

Աւօն, Խաշիդի մանկութեան ընկերը, նրա  
սիրելին և իր մի հատիկ քրոշ ամուսինն էր:  
Երկու ընկերները նստեցին իրար մօտ:

— Գիտես ի՞նչ կայ, Աւօ, սկսեց Խաշիդը,  
սիրտս այնքան տխուր է, այնքան տխուր է,  
որ քիչ է մնում վշտից պատռուի. զարմանա-  
լի բան, քանի որ Ամին աղան մեղ օգնու-  
թեան չէր եկել, քանի որ մենք մենակ էինք,  
և անհոդ էի և ուրախ, այդ մարդի գալուց  
յետոյ ինչու եմ ես տխուր, ըլ գիտեմ:

— Է՞հ, Ռաշիդ, ի՞նչ ես սիրտդ ահ գցում, Աստուծով ի՞նչ է եղել որ...

— Սիրտս ահ չեմ գցում, Աւո չեմ վախենում, տխուր եմ, տխուր, հենց նոր էն անիժած «բայզուշը» այս տեղերում «վույ-վույ» կանչեց, թող Աստուծած բարին կատարի:

— Բայզուշը... հարցրեց Աւոն մի փոքր շփոթուած, պարզ էր, որ նրա վրա էլ այս նորութիւնն անախորժ տպաւորութիւն թողեց. դէ ի՞նչ արած, Աստուծած մարդի պէտք է քեօմագ լինի, սուրբ Աստուծածինն ենք կանչեր:

Երկուսով էլ լռեցին, խօսակցութիւնը շարունակել չ'ը լինում, որովհետև կրկին լսուեց բուի ահաւոր «վույ-վուլը»: Երկու ընկերները նայեցին իրար երես, աշխատելով այնտեղ կարդալ միմեանց ներքինը. գիշերային խաւարի մէջ այդ անկարելի եղաւ, միայն երկուսով էլ ակամայ աւելի պինդ սեղմեցին հրացաններն իրանց ձեռների մէջ և վեր կացան: Նայեցին դէպի գիւղը, նայեցին դէպի խաւարամած շրջակալը, նայեցին դէպի մառախլապատ երկինքը, ոչինչ չէր երեսում, լուռ էր ամեն կողմ, և այդ լռութիւնը մի ժանր քարի պէս ճնշում էր մեր երկու երիտասարդների սրտերը: Անցաւ դարձեալ մի ժամ: Յանկարծ մի անօրինակ, մի հսկայ լուսի ցնցուղ-

ներ ողջ շրջակալը լուսաւորելով հասան բլրին, ուր նստած էին երիտասարդ պահապանները՝ դրա հետ միասին գիւղի կողմից լսուեցին հրացանների ձայներ, պահապան երիտասարդները՝ քնած թէ արթուն մէկէն վեր ցատկեցին իրանց տեղերից և ամենքի ապշած, զարհուրած հայեացքներն ուղղուեցին գէպի գիւղը, որն այժմ ծփում էր հսկայական բոցերի ծովի մէջ: Համարեա իւրաքանչիւր խրճիթ իր կողքի կամ վրայի խոտի գէզի հետ վառւում էր և ամբողջ գիւղը ներկայացնում էր մի չը աեսնուած սոսկալի հնոց: Հրացանների ձայնների հետ միաժամանակ լսում էր և շների հաշոց ու կաղզանձոց, և մարդկանց հարայ հրոց, և կանանց աղէխարշ վայնասուն, և երեխանների սրտաճմլիկ նիչ: Պարզ էր, որ այնտեղ մի սարսափելի ողբերգութիւն էր կատարւում, որ գիւղը մի դժոխք էր դարձել, ուր գէհենի բոցերի մէջ կենդանի կենդանի խորովում էին բնակիչները: Երիտասարդները մի բոպէ չէին հաւատում իրանց աչքերին ու ականջներին, նրանց թւում էր, թէ սա մի երազ է, սակայն հրդեհը շարունակւում էր, ծայները լսում էին, ոչ մի կասկած չը կար, որ թշուան Բանոնը դո՞ւ: Էր գնում սև դաւաճանութեան:

— Տղէրք, կոչեց Ռաշիդը. մենք խաբուած ենք, Ամին աղան մեզ ծախեց, նա մեզ դաւաճանեց, նա գիտմամբ ուղարկեց մեզ այստեղ. իշնենք դէպի գիւղը:

Սաաց Ռաշիդը և համարեա ցած զլորուեց բլրից, նա այլ ևս չէր նայում վտանգներին, ժայռերին, քարափներին, խոռոչներին այլ կատաղած առիւծի պէս ոչ թէ իշնում, այլ գցում էր իրան։ Երիտասարդներն իրանց անվեհեր առաջնորդին հետեւելով նոյնպէս ցած թափուեցին այս ու այն քարափից, այս ու այն ժայռից։ Մի քանի բոպէ չանցած ամբողջ խոռոչն արդէն բլրի ստորոտումն էր և պատրաստուում էր վաղել երբ յանկարծ հակառակ կողմից ոտնածայներ լոււեցին, և մինչև որ նրանք կը գիտէին եկողներին, իրանց շրջապատուած գտան ասիւանցիների բազմաթիւ խճբերով։ Ակուեց ճակատ առ ճակատ մի սոսկալի կռիւ երկու անհաւասար ոյժերի մէջ։ Քաջարի խումբը վճռեց շատ թանդ ծախել իր կեանքը։ Կեանքի և մահուան յուսահատ օրհասական կռիւ էր այդ։ Ռաշիդը վիրաւոր գաղանի պէս որոտաց՝ քաջալերելով իր ընկերներին։ Թշնամիները թափուում էին նրանց հարուածների տակ, արիւնը ողողել էր նրանց և ոտների տակի հողը, բայց և խոռոշուածնիներին։

Նուազում էր. երկու կողմն էլ փոխադարձապէս թափում էր իր հակառակորդի դիմին տարիներից ի վեր մթերուած ատելու թեան թոյնը, վիրաւորները հոնդիւնով ընկնում էին տակաւին կենդանի մնացածների, կռուողների ոտների տակ, շատերը ճիշլու մահանում էին, մարդիկ մորթուում էին, արիւնը վաղում էր աղբիւրի պէս, և այս բոլորը լուսաւորուում էր գիւղի հրդեհի բոցերի լոյսով, որ գունատ, մեռելալին տեսք էր տալիս զարհուրելի տեսարանին։ Զը նայելով թշնամիների ահաւոր բազմութեանը, այնուամենախիւ Ռաշիդը վճռեց՝ ինչ էլ որ լինի, իր խմբի մնացորդով պատռել թշնամիների շղթան և հասնել գիւղին։ բայց այս յանդուգն փորձը սոսկալի վախճան ունեցաւ—Ռաշիդը մէկ էլ շուրջը նայեց և այս անգամ իր ընկերներից երեքին գտաւ իր շուրջը հարիւրաւոր թշնամիների մէջ։ Էլի մի բանի բոպէ և տարաբախտ երիտասարդը վերջին ընկերներից էլ զրկուելով վիրջապէս կենդանի-կենդանի թշնամիների ծեռքն ընկաւ։ Այսպէս էր եղել նախօաղալի հրամանը—ողջ-ողջ բոնել Ռաշիդին։

Արիւնաթաթախ և ուժասպառ քաջին կապուելով՝ դէպի նադօ աղալի տունը տարան, թշնամին երիտասարդը ձիու վրայից իր հրացալա, կատաղութիւնով լի աճքերը դէպի

հայրենի գիւղը դարձրեց, կրկին տեսաւ հազարաւոր հրեղէն լեզուները, որոնց զո՞հ էր գնում իր սիրելի վաթանը, լսեց այդ բոցերի միջից հնչուող աղէխարշ աղաղակները, նրա սիրար Ճմլուեց, աղիքներն ասես ոլորուեցին և արտասուքի խոշոր կաթիլները եկան կախուցան նրա արտեանունըներից:

— Անօրէննե՞ր, մոնչաց նա: Նրան տարան...

Մաշիղը չը սխալուեց: Ամին աղան ամենաստոր կերպով գաւառնեանեց նրան: Բարեկամական հրաւեր ստանալով բանոնցիներից, նա շտապեց անմիջապէս գաղտնի կերպով դաշն կռել իր նախկին թշնամի նադօ աղայի հետ: Նախապէս կաղմուած և երկու բէգերից ընդունուած ծրագրի համածայն, Ամին աղան իբրև բարեկամ մտաւ Բանոն և երբ Մաշիղին իր արիասիրտ ընկերների հետ միասին կարողոցաւ պատրուակով գիւղից հեռացնել, նրա մարդիկը կանխապէս ստացած հրամանի համածայն անպաշտպան մնացած գիւղը հարիւրաւոր կողմից կրակ տուին: Եւ այն ժամանակ, երբ զարհուրած գիւղացիները հասկացան Ամին աղայի գաւառնութիւնը և իրանց թշուառութիւնը, արդէն շատ ուշ էր, գիւղը բռնկուած էր բոցերով:

և սկսուած էր կոտորածը: Սկսուեց ընդհանուր փախուստ. հայրենի յարկն ու իրանց ինչքն ու ստացուածքը կրակին և թշնամիներին յանձնելով՝ նրանք բռնեցին իրանց մեծ ու փոքր զաւակների ծեռներից և գնդակների միջից անցնելով՝ ով կենդանի մնաց, գախաւ դէպի դաշտ, դէպի լեռներն ու ծորերը: Բնակիչների միծ մասը փախու, իսկ փրկութեան լոյսը կարած թշուառները բազմութեամբ դիմեցին Ամին աղայի գթասրտութեանը, որի հրամանով մի առ ժամանակ հրացանաձգութիւնը դադարեց:

— Ֆլանե՛ր, գոչեց Ամին աղան, տեսնում էր, որ ծեր կեանքն ու մահը իմ ծեռքին է. եթէ կամենում էր ապրել, բերեք իսկոյն այսուեղ և իմ առաջն ածեցէր ծեր հարստութիւնը, ծեր կանանց ու աղջիկների զարդերը:

— Առ, աղա՛, առ ինչ ուզեմ ես, միայն մեղ, մեր զաւակներին մի կոտորի, քեզ լինի մեր տրւնն էլ տեղն էլ, մեր հարստութիւնն էլ, թո՛ղ միայն մենք բանենք մեր զաւակների ծեռքից և գլուխ առնենք կորչենք այսուեղից, քո բաղդն ենք ընկել: Այսպէս էին աղաղակում Ամին աղայի ոտների տակ թափթփուած ծերեր ու կանալք բռնած իրանց զաւակների ծեռներից, որոնք զարհուրած չորս կողմի արիւնոտ տեսարաններից և համաճարակ

հրդեհից, իրանց սրտածմիկ ֆիչերը խառնում էին գոռացող բոյերի ձախների հետ։ Ամին աղայի ցանկութիւնը կատարուեց. կանայք իրանց պարանոցների և զլիսների զարդերը պոկելով աճեցին նրա առաջ, տղամարդիկ բերեցին իրանց տարիների դառն աշխատանքի պառւղները և թափեցին իրանց դահնի ոտների տակ, ուր մի ժամում դոյացաւ արծաթեալ և ոսկեալ զարդերի ու զրամների մի ահազին կոյտ։

Հէնց այդ ժամանակ ասիանցիներն էլ նախամտածուած ծրադրի համածայն Ռաշիդի խմբի հետ իրանց արիւնոտ գործը վերջացնելով՝ նադօ աղայի առաջնորդութեամբ դիւզը թափուեցին։

Երկու աղաները հին բարեկամների նման ժպիտները դէմքերին ողջագուրուեցին։

— Նադինջները (անհանգիստները) դինչացան, հարցրեց ամին աղան։

— Դինչացան, կարճ կերպով պատասխանեց նադօն։

— Իսկ նրանց զլիսաւո՞րը։

— Կենդանի բռնուած է. տիմսոս միայն, որ մենք էլ կորցրինք մօտ լիսուն մարդ։

Սամ մի քանի բառերով հաջորդուեց Աստուածածնի բլրի տակ տեղի ունեցած արիւնոտ գործի բոլոր պատմութիւնը։ Ապա երկու

աղաների մէջ մի կարճ խորհրդակցութիւն կատարուեց։ Թէ ինչ խօսեցին նրանք, ինչ վճռեցին, այդ ոչ ոք չը լսեց, միայն խորհրդից անձիչապէս յետոյ նրանք հրամալեցին բոյերից ու գնդակներից զերծ մնացած բոլոր բնակիչներին հաւաքել զիւղի հրապարակում։ Իրանց հայրենի լարկերը լափող բոյերի ահաւոր լուսաւորութեան տակ այդ թշուառները բաժանուեցին երկու խմբի, մի կողմում տղամարդիկ և միւս կողմում կանայք ու երեխաներ։ Մարզը կնոշից լաժանուեց, եղբայրը քրոջից, հայրը իր զաւակներից և ամենքը կարծես բնազդմամբ հասկանալով այդ պատրաստութիւնների բոլոր չարագուշակ նպատակն ու խորհուրդը՝ մի այնպիսի վայնասուն էին բարձրացրել, որից քարերն անդամ կարտասուէին, բայց այդ բոլոր ողբերին ու արտասուքներին նրանց դահիճները պատասխանում էին լպիրշ հռհառոցով։ Այս բոլորից յետոյ յանկարծ հարիւրաւոր հրացանների փողերն ուղղուեցին աղամարդկանց խմբի վրա, զնդակներն անախորժ վղվղոցով թռան և հարիւրաւոր զոհեր թաւալդոր ընկան երանց արեան մէջ ճապաղուած՝ սոսկալի հոնդիւն, ոռնոց ու հաւաչանք արձակելով արիւնոտ կրծքերից։ Կանայք իրանց աչքերով տեսան իրանց ամուսինների, զաւակների,

եղբայրների արեան մէջ թաւալգլոր խաղալը.  
մայրերը սրտաճաք եղան այդքան արեան տե-  
սարանի տուաշ, մանուկները կորած գառների  
պէս մորմօքած սրտերով ողբ ու ծէչ բար-  
ձրացրին տեսնելովիրանց հայրերի, եղբայրների  
գնդակահար լինելը. լուցին նրանց օրհասու-  
կան վերջին հառաջանքները: Մայրերը բռնե-  
ցին իրանց զաւակների ծեաներից և զրո՞ն  
առուին դէպի կոտորուող սիրելիները, դէպի  
գնդակներն ու մահր, որ նրանց հետ զրկա-  
խառնուած վերջ դնեն իրանց անպատճելի  
ցաւերով լի, իրանց անսահման թշուառ-  
կեանքին, որ դրանով զոնէ վերջին րոպէներին  
ամօքեն իրանց արեան մէջ ոլորուող, կծկուող,  
կսկծացող սիրելիներին. բայց այդ շնորհն էլ  
նրանց մերժուեց. հարիւրաւոր հրացանների  
կոթերի հարուածները նրանց իրանց տեղը  
դարձրին: Ընդհանուր զոռում-զոչումի, սպա-  
նուող ու վիրաւոր թշուառների հառաջանք-  
ների մէջ կրկին ու կրկին լսուեց հարիւ-  
րաւոր հրացանների որոտը. և երբ ծուխը  
վերացաւ, տեսարանը անտանելի էր. ամբողջ  
խմբից միայն մի քանի հոգի էին կենդանի  
մնացել դիակների շեղչակոյտի մէջ՝ սառած,  
անդայացած, կրած սարսափներից սպշած,  
լիմարացած հայեացքներով, և կարծես հար-  
ցնում էին ու զարմանում, թէ ընդհանուր

կոտորածի, համատարում մահերի մէջ իրանց  
կեանքն ինչու համար է խնայուած: Հրացա-  
նաձգութիւնը դադարեց, անօրէնները մօտե-  
ցան կենդանի մնացածներին, յետեւ յետեւ  
կապոտեցին իրար, և տռաչինի կրծքին հրա-  
ցանի փողն ուղղելով՝ փորձում էին իմանալ,  
թէ գնդակի ոյժը քանի մարմնից մի անգա-  
մից թափ կանցնի: Իրար կապոտուած զոհերը  
1—2 հոգով ցորենի խրձերի պէս զլորուե-  
ցին և մարդկային սպանդանոցը կատարեալ  
գարծաւ:

Դիւզը շարունակում էր վասուել. հրեղէն  
բոցերը թանձր ծխի միջից օծապատաքա բար-  
ձրանում լիզում էին երկնքի երեսը որպէս  
հազարզիխեան վիշապի արիւնազանգ հակայա-  
կան լեզուներ. օդը լցուած էր ծխի և խան-  
ծուած մարդկային մարմինների ճենճերա-  
հոսով:

Տղամարդկանց հետ իրանց սոսկալի դորձը  
վերչացնելուց յետով, անօրէնները մօտեցան  
կանանց խմբին: «Կոտորեցէք մեզ էլ, անաս-  
տուածներ», զոչում էին ամեն կողմից այս  
զոհերը: Բայց դահիները նրանց չը կոտորե-  
ցին, դրա փոխարէն նրանք սկսեցին չոկել  
խմբից երիտասարդ ու զեղեցիկ հարս ու աղ-  
ջիկներին և քաշ տալ զանազան կողմեր:  
թշուառները կախուած էին իրարից, պոկ

չէին դալիս. մայրը բռնել էր իր աղջկայ փեշից, գոռում է, ճչում, որ չը տանեն իր սիրասուն զաւակին. քաշում են աղջկան, նա էլ է քաշ դալիս գետնի երեսից, բարձրանում է դահճի սուրը և մօր ձեռքի կտրուած թաթն արիւնաթաթաւ ընկնում է աղջկայ ոտների տակ: Աղջկան տանում են...

Մի այլ կողմում, մի գեղեցիկ կին շրջապատուած է մի քանի ասիանցիներով. սրանցից իւրաքանչիւրն աշխատում է գեղեցկուհուն սեփականել, քաշը շունչում են զանազան կողմեր. կռւում, հայնոյում իրար. բայց համաձայնութիւն չի կայանում, այս պատճառով սրերով խողխողում են տարաբաղդ կնոշը, որ ոչ ոքի բաժին չը լինի:

Մի ուրիշ կնոջ նոյնպէս քաշում են դահիները, նա անզգայացել, թալկացել է, գետնի երեսին փոռուել, բայց բնազզով պինդ սեղմել է ծծի երեխան իր կրծքին. դահիճները խլում են երեխան կրծքից. մայրը բաց է անում աչքերը և այն բոպէին, երբ սոսկալի ճիչ է արձակում և թուլացած ծեռները դէպի զաւակը տարածում, վայրենին մանկան մի ոտից բըռնած՝ քանի ոյժ ունի շպրտում է նրան օղի մէջ. երեխան պտոյտներ գործելով աղիողորմ ձայն արձակելով ընկնում է վառուած գէղի մէջ: Ուշաթափ մայրը տարւում է...

Ահա մի կոյս աղջիկ, որին մի ասիանցի քաշ է տալիս երկար ժամերից. թշուառ ճչում է, հայնոյում իր դահճին, քաշ է ընկնում գետնի երեսին, նրան կապում են ձիու վրա, բայց վայր է ծգում իրան գլխիվար՝ շուտով մահ գտնելու համար. կրկին վերցնում են, կապում, կրկին վայր է գլորւում. փորձում են գարձեալ քաշելով տանել, իզու՞ր, նա կպչում է գետնին, նրա շորերը պատառուած ծուէն-ծուէն կախկխուել են գեղանի մարմնի վրա, որը տեղ-տեղ մերկացել է: Նրան հարուածում են, սպառնում են: Իզու՞ր, ոչինչ չի օղնում, նահապետական սուրբ բարքերով անուած աղջիկը վճռել է անարատ պահել իր կուսական պատիւը: Նա շարունակում է կռուել, նա վճռել է մեռնել, բայց չը գնալ, չը ծառացել իրը պագչոտութեան առարկայ թշնամիների աղտեղի կրքերին. ահա վերջապէս այդ անօրինակ զիմաղրութիւնից կատաղած գահիճները սրի մի հարուածով պատառում են կոյսի մատաղ կուրծքը. նահատակը թրպլատում է իր արեան մէջ և հանգստանում լաւիտեան...

Ամէն կողմ պղձութիւն, ամեն կողմ մահ, ամեն կողմ արիւն: Մի երկու ժամ չանցած, արիւնոտ հրապարակի վրա այլ ևս շահել գեղեցիկ կին ու աղջիկ չը մնաց, մեծ մասը

դիմագրելով՝ մահը գերադասեցին անարդ, անպատիւ կեանքից և իրանց դահիճների սրերով խողխողուեցին, իրանց արեամբ զնելով իրանց պատիւ անարատութիւնը։ Մնացածները բռնի տարուեցին, որպէս թշնամիների պաջոտառութեան առարկաներ։ Դիակների շեղակոյտի մէջ բազէներով շրջապատուած անպաշտպան թխսկան հաւի պէս իրանց նվիճացող ձագուկնելը դրկած մնացին միայն պառաւները՝ ոմանք ուշագնաց, ոմանք թուլացած մնկների վրա ընկած, ոմանք էլ չորացած ձեռները դէպի անողորմ երկինքն ուղղած։ Այլ ևս ոչ ոք չէր արտասուում, այսքան թշուտութիւնը ողբալու համար այնքան արտասուք որտեղից նարեին։ արտասուքի ժող էր հարկաւոր այնքան սրտերի մեջ հրդեհը մարելու համար։

— Տղէք, դարձաւ նազո աղան դահիճների խմբին, էս քաւթառ քածերի և շան լակուների համար չարժէ զնդակներ փչացնել։ մի կերպով դրանց մէն ու ձունը կտրեցէք մեր ականչներից։

Քիւրդերն իրանց ախրոշ հրամանը լաւ հասկացան. առաջին անգամը չէր, որ նրանք այսպիսի հրաման էին ստանում։ Մի քանի բողոքում խրճիթների առաջի ցորենի հորերի բերանները բացուեցին և բոլոր սարսափներից

խելազարութեան հասած այս կանանց ու երեխաներին քաշ տուին զէպի հորերը։ Եւ ահա զլորում են... մի հորի մէջ 10—15 մանուկներ, կանայք իրար վրա. զոհերը իրար կպած, կախւում են հորերի բերաններից թուլ, անզօր թերով՝ աշխատելով չընկնել փոսերի մէջ, փրկուել. կախւում են դահիճների փէշերից, ձեռներից, բռնում են նոյն իսկ նրանց մերկ սրերի ծայրերից՝ կտրտելով իրանց մատները։ Նրանց զէմքերը մահուան սարսափից այլանդակուել, ծամածուել են, աչքերը լայն բացուած մնացել են անթարթ յառած դահիճների երեսին. նրանք աղերսում, աղաչում են, բայց իղուր։ Հրացանների կոթերը և սրերի հարուածները նրանց դլորում են իրար յետեկից և շուտով մի քանի հոգի շտապ-շտապ հոգը թափում են նրանց վրա։ Հողի տակից երբեմներբեմն այս տեղից, այն տեղից զուրս են ցցւում մի երկու վլուխ, մի քանի ոտք կամ կծկուած բռուցցներ, տակից լսուում են անտանելի ծայներ. և հողի շերտը վերեկից հաստանում է ու հաստանում, իսկ նրա տակում կենդանի մեռածները կրծոտում են իրար, ծամում, պատառոտում են իրանց սեփական մարմինը, ոլորուում են հողի և արեան շաղախի մէջ, սոսկալի խուլ հոնդիւններ են արձակում, որից մարդուս մադերն են դիզանում գլխին։

Հողի շերտը դրսից տեղաեղ բարձր ու ցածր է լինում. աւելի վեր դժոնուող թշուառներն են, որոնք գերմարդկալին ճիգ են բանեցնում՝ բարձրանալ, զուրս զալ, կեանք և արե տեսնել, բայց իդուր. դահիճները զգուշ են, նրանք հսկում են, շտապով կոխկռտում են ոտներով, տրորում են, հաստացնում են հողի շերտերը, բայց և այնպէս ստորերկրեալ նվազները, մահամերձ նոււաղած հառաչանքները շարունակում են լսուել ու լսուել: Միւս հորերը նոյնպէս լցւում են: Բաղմութեան ուշքը գրաւում է մանաւանդ մի պատկառելի տարիք ունեցող կին, որ գեռ հոգու արիութիւնը չի կորցրել և շարունակում է բարձր ծայնով երկնքի վրէժինդրութիւնը կոչել թշնամիների գլխին: Յիսունի մօտ տարիները չեն կորացրել նրա բարձր իրանը. պառաւած այտերի վրա գեռ թեթև կերպով խաղում են անցեալ գեղեցկութեան հետքերը այնպէս, ինչպէս վերջալոյսին ժամկուած արեի հառագալիթները թող կերպով շարունակում են գեռ լուսաւորել արևմուաքը: Սա մաշիզի մայրն է, Բանոն դիւզի տիրուհին: Երկու բէզերը հրամայում են որան իրանց մօտ բերել: Մի քանի որբ, անտէր մնացած մանուկներով շրջապատուած, որոնք նվճվալով կախկխուած են նրա փէշերից, ձեռներից,

Խաթուն աիրուհին յաղթական քայլուածքով մօտենում է բէզերին: Արդէն հեռուեից նկատելով նրանց, պառաւի շրթունքները խորին ատելութիւնից դողում են, և ծնօտներն ակամալից իրար վրա սղմւում: Թէ այդ երկու զագաներից որին է նա աւելի ատում, այդ նրա համար էլ շատ որոշ չէ. նա նոյն իսկ ճանապարհին զնալով, մտածում է այդ մասին՝ նախօ աղան իրանց արնսխում թշնամին էր, այդ զիտէր Խաթուն աիրուհին. իսկ այս միւսը, ամ անօրէն, սա զաւաճանեց, սա մեր տունը քանդեց, մրմնչում են նրա շրթունքները: Սհանագալ կանգնած է իր երկու թշնամիների առաջ:

— Դու ես մաշիզի մայրը, առաջ զալով՝ հարցը եց Ամին աղան, իսկ Խաթուն տիրուհին փոխանակ պատասխանի կատաղած՝ թքեց բէզի երեսին...

Բէզի երեսի գոյնը թռաւ, շրջապատողների մէջ իրարանցում ընկաւ. այս բանը չափանց անսպասելի էր, և յիրաւի ով կարող էր երևակալի թէ մի թոյլ, անպաշտպան կին սիրտ կանէ այդ սարսափելի ժամին թքել բէզի երեսին:

— Թաղեցէք այս քաւթառին, որոտացին երկու բէզերը միանգամից: Երկու բոպէ չան-

ցած, Խաթուն տիրուհին արդէն զլորուած էր մի հորի մէջ:

Քիւրդ բէգերի հրամանով մի քանի ժամում ֆլաների շէն ու բազմամարդ դիւզը հսկայական դամբարան դարձաւ իր սեփական բնակիչների համար: Բայց ահա զիւղի հեռաւոր ծալքից՝ մի խումբ քիւրդերով շրջապատուած գալիս է մի զառամեալ ծերունի: Նրա զլուխը բաց է, սպիտակ մազերը խճնուած և անկանոն ծեռվ փռուած են նրա պատկառելի զլսի վրա՝ մի առանձին վսեմութիւն տալով այդ ծերունի գէմքին, որ զարդարուած է նոյնպէս խճնուած, նոյնպէս անկանոն կերպով ցրիւ եկած ալէզարդ մօրուքով: Մէկը բռնած ունի նրա պարանոցից ծգած պարանը և քաշում է, իսկ միւսները յետեից անխնայ ծէծում են նրա ալէզարդ զլուխը: Ամեն մի հարուածից յետոյ ծերունին արտասուքով լի աչքերը գէպի երկինք է ուղղում: Ազօթում է արդեօք, թէ օգնութիւն հայցում, այդ գիտուար է իմանալ, միայն այդ ժամանակ նա ներկայանում է մի մարմնացած վիշտ: Աս վատարախտ Տէր-Մարուքն է: Իր հայրենիքին, իր մերձաւորներին հասած այս անօրինակ թշուառութիւնը նրա մէջըն աւելի է կորացրել, աչքերի նախկին կրակը մարել է, հասակն աւելի է փոքրացրել, ասես թէ, նա

սղմուել, ճնշուել է անհուն թշուառութեան ծանր բեռի տակ: Նա այժմ մի զառամեալ, շատ զառամեալ ծերունի է: Բէգերի հրամանով Խաշիդի հայրը մինչեւ այժմ կապուած պահուում էր և այժմ միայն առաջնորդուեց զիւղի բնդհանուր սպանդանոցը, տեսնկու իր զաւակների, իր հօտի անձայր թշուառութիւնը: Այսպէս կամեցան այդ վայրենիները վրէժ լուծել Խաշիդից: Ընդհանուր զիւական քրքիչ բարձրացաւ, երբ տեսան նրան: Տարաբախտ ծերունու առաջ բացուեց մի անտանելի, չը տեսնուած տեսարան: Նրա ամբողջ հօտը ոչխարների պէս մորթուառուած, թափուած էր իր ոտների տակ, իսկ այս ու այն կողմից նրա ոտների տակ գեռ լուսում էին մահամերծ, աղէխարշ նվիզոցներ. Երկիրը հեծում տնքում էր՝ անկարող լինելով պարտկել իր ժոցում այդքան թշուառութիւն, այդքան արտասուք և արիւն:

Զարաբախտ ծերունին մարած աչքերով նայեց մարդկալին անլուր ոճրազործութեան այս անմեղ զոհերին, նայեց դահիճների հռհոացող խմբին և ցամաքած աչքերը երկինք ուղղելով՝ մրմնջաց:

— Երկինք, տեսո՞ր այս, լսեցի՞ր սրանց արիւնու կրծքերից զուրս պոռթկուած վերջին հառաջանքներն ու նզովի աղաղակները.

եթէ լսեցիր, հապա ուր են քո շանթ ու  
կայծակները, ողորմած երկինք, ինչու չես թա-  
փում այս անօրէնների զլիսին:

Ապա նա խաչանիշ նշանով կնքեց գիտկնե-  
րի կոյան ու մրմնչաց. «Հանգիստ ձեր ոսկոր-  
ներին, տարաբախտ դաւակներ. մարդիկ ձեղ  
չը խղճացին, աշխարհը մոռացաւ ձեզ, թող  
Աստուած գոնէ ձեր արդար արիւնք չը թող-  
նի այս մարդակեր անօրէններին»: Բազմու-  
թիւնք շարունակում էր հռհուալ՝ ճիւաղալին  
քրքիչով ծերունու անհուն թշուառութիւնը  
ժաղրելով:

— Կռեցրէ՛ք, հրամայեց նալո աղան:

Անմիշապէս վրա պրծան մի քանի քրգեր  
և ծերունուն քաշ տարով կանգնեցրին մի  
կողմ և տասնեակ հրացանների փողեր միան-  
գամից ուղղուեցին դէպի նա:

— Կացէ՛ք, կրկին պոռաց աղան. հանեցէ՛ք  
վրալից հագուստը, թող չարիւնոտուի, ափսոս  
է: Երկար սև վերարկուն ու կապան զուրս  
քաշեցին վզից, նա մնաց միմիայն սպիտակ  
շապկով: Նա ծունկ չոքեց և ձեռքերը երկինք  
բարձրացնելով՝ սկսեց աղօթել... Հրացանները  
տրաքեցին և ծերունին երեսի վրա ընկաւ իր  
արեան մէջ. աղօթքի մրմունչները սառած  
մնացին նրա գունստուած, դողդոչուն շըր-  
թունքների վրա...

Նալո աղալի բակի մի կողմում մութ գետ-  
նափոր մի գոմ կայ: Նոյն իսկ ցերեկը սրա  
ներսում խաւարն այնքան թանձր է, որ  
մտնողը բաւական ժամանակ ոչինչ չի տես-  
նում, մինչեւ որ աչքերն ընտելանում են ա-  
ռարակները որոշել այն աղօտ ու չնչն լոյսի  
շնորհիւ, որի հառագալթներն ասես վախվիսե-  
լով ցած են ընկնում առաստաղի վրա բա-  
ցուած փոքրիկ հերթիկեց, հաղիւնալ լուսաւո-  
րում են մի շատ փոքր տարածութիւն, չը  
համարձակուելով թափանցել հեռաւոր ան-  
կիւնների թանձր մթութեան մէջ: Խաւարի  
մէջ անախորժ կերպով նոճուացնում են ի-  
րանց միակերպ երզը ճպուաները և շահատա-  
կում են միներն ու դանազան միշաներ:  
Ահա այս գոմում մի սիւնի տակ, խոնաւ ու  
աղտոտ լատակի վրա նստած է մի փառաւոր  
տղամարդ. նրա ոտները հաստ շղթալով կա-  
պոտուած են և ամբացրած յետելի սիւնի վրա:  
Սա նաշխին է, որ նալո աղալի հրամանով  
պահւում է այստեղ մինչեւ նրա վերադարձը:  
Երիտասարդի ամբողջ գէմքն արաւալայտում է  
անստահման վիշտ: Նա զլուխը քաշ է զցել  
ոտների վրա և խորասուղուած է ծանր մրտ-  
քերի մէջ: Այն բոպէից, որ նրան բռնել և  
կապել են այս գարշահոտ գոմի մէջ, նա զեռ-  
ոչինչ չը զիտէ իր հայրենի դիւզի վիճակի

մասին, թէև այնքանն էլ ինչ նա տեսաւ իր ազգերով, բոլորովին բաւական են հաստատելու, որ իր տարաբախտ վաթանը հիմնայատակ կործանուած է: Իսկ բնակիչները... Միթէ անօրէնները նրանց էլ կոտորեցին, մտածում է նա... Նրա աչքերի առաջ դեռ երեսում են բոյերի հրեղէն լեզուները, նրա ականջում դեռ հնչում են այդ բայցերից դուրս թռչող հարիւրաւոր վատարախտաների վայնասունները, նա սրտի անսահման կոկիծով է լիշում Աստուածնի բլրի տակ իր շուրջն ընկած քաջ ընկերներին. զայրոյթը եռում է նրա կրծքի մէջ... Օ՛, ինչեւ կանէր նա, եթէ ադատ լինէր, կամ ինչու ինքն էլ չը մեռաւ միւսների հետ: Նա ակամայ լիշում է Աւոի հետ ունեցած խօսակցութիւնը, բուփ չարագուշակ «վույ-վույ»... Ապա նրա մաքերը խառնուում են, նա կորցնում է իր մաքերի թեր և մի առ ժամանակ ինքն էլ չի իմանում, թէ ինչի մասին է մտածում, ապա դարձեալ նրա մաքերը պարզուում են և յանկարծ լիշում է իր Զարէին: Խեղճ Զարէ, մտածում է նա, նրա մարդարքութիւնը կտարուեց. բայց ուր է նա, միթէ նա մոռացաւ իր Ռաշիդին, միթէ նա դաւաճանեց իր սիրածին... Ոչ, այդ անկարելի է. ինքը նանշում է Զարէին: Ապա նա մտաբերում է իր

անօրինակ սիրով անցեալը. քաղցը լիշողութիւնները լցնում են նրա սիրար մի անսահման հաճելի, մի գուրեկան զգացմունքով: Բայց այդ տեսում է միայն մի րոպէ, կրկին բոյերի ահաւոր տեսքը ներկայանում է նրա աչքին, կրկին ականջներում լսում են վայնասունները և ծանր, ողբալի իրականութիւնը անողօրմ կերպով ներկայանում է նրան հազարզիսեան հրէշի պէս: Ժամեր են անցնում և Ռաշիդը տանշւում, չարչարւում է մէկը միւսից աւելի սե, աւելի խաւար մտքերով:

Հոգեկան այս ժանր տանշանքների մէջ նրան մսիթարութիւն է պատճառում միմիայն Զարէի փոքրիկ քոյրը՝ վեց տարեկան Խաչէն: Սա է Ռաշիդին ամեն անգամ կերակուր բերում: Փոքրիկ վայրենու տեսք ունի Խաչէն. նա գլխաբաց է, սե, թանձր մազերը խճճուած են և անկանոն կերպով կախկխւած գէպի վար, իսկ առաջից ժածկում են նրա Ճակատը և համարեա աչքերը. այդ կլոր, սե աչքերը գեղեցիկ են, իսկ և իսկ Զարէի աչքերն են, բայց մազերի տակից հազիւ են երեսում և այս հանգամանքը նրա պլշացող հայեացըին մի առանձին արտաքայտութիւն է տալիս, ասես թէ փոքրիկ կատու լինի, որ մարդ է մտել, թէև նա յաճախակի աշխատում է

փոքրիկ ծեռներով յետ տանել մազերը: Խաչի դէմքը միշտ ուրախ է, միշտ ժպտուն, հաստ շրթունքներն ասես զարմանքից միշտ կիսաբաց են, միայն բարկանալիս՝ նա պինդ իրար վրա է սղմում իր ատամներն ու շրթունքները: Նրա ամբողջ զգեստը բաղկացած է մի հատիկ կտաւէ շապկից, որ ուսերից սկսած իջնում է մինչև սրունքները՝ վերևում բաց թողնելով նրա առողջ կուրծքը, որ երեւում է շապկի բացուածքից, իսկ ներքեւում ցեխի ու կեղտի մէջ սեւացած ոտները: Ահա այս փոքրիկին է յանձնուած Խաշիդին հաց ու շուր բերել. ով դիտէ, գուցէ այս բանի մէջ խառն է Զարեկի մատը:

Դեռ առաջին անգամ երբ փոքրիկ Խաչէն բերեց Խաշիդի աղքատիկ ճաշը, նա անմիշապէս չը հեռացաւ, այլ մնաց կանդնած և զարմանքով ու խղճահարութեամբ սկսեց նայել նրա ոտների հաստ շղթալին, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ձիու ոտների բխօվ:

— Սիր դրանք մեր Բաշօինն են, ասաց աղջիկը բաւական լոելուց յետոյ:

— Ի՞նչը, հարցյրեց Խաշիդն ակամայ գլուխը բարձրացնելով:

— Ա՛յ, սրանք, ասաց Խաչէն փոքրիկ մատը դէպի Խաշիդի ոտները մեկնելով. Բաշօին դաշտ ուղարկելիս ոտները սրանցով կապում

ենք, որ չերթայ կորչի. օ, շատ լաւ է վազում մեր Բաշօն, եթէ տեսնե՞ս. դու տեսել ես մեր Բաշօին:

Խաշիդը հասկացաւ, որ խօսքը ձիու մասին է. այս փոքրիկ աղջկայ մանկական շատախօսութիւնը նրան դուր եկաւ, ուստի և նա վճռեց շարունակել խօսակցութիւնը:

— Հապա ո՞ւր է ձեր Բաշօն, զիգէ:

— Վա, չ՞ս իմանում, հայրս հեծաւ դնաց Փլաների (հայ) գեղը, դնաց եղ, կով, ոչխար, ծի բերելու, էնքան կը բերի, էնքան կը բերի, որ... ինձ էլ խօստացաւ մի լաւ գառ բերել: Էնպէս լաւ գառ կը բերի, էնպէս լաւ գառ, որ... Ես մարդի չեմ տայ, Մստօին էլ չեմ տայ, նա միշտ մազերս քաշում է, երէկ էլ բաշեց, ես էլ մի պինդ չանգուեցի. տեսնում ես եղունդներս, էսպէս չանգուում եմ, կծում էլ եմ. թէ մէկ էլ մազերս քաշի, պինդ կը կծեմ. և նա սկսեց ցոլց տալ, թէ միւս անգամ ինչպէս պիտի չանգուի ու կծի իր փոքր եղբօրը՝ Մստօին:

— Խաչէ, Փլաներն ախր քեզ գառ չեն տայ, որ հայրդ բերի:

— Ո՞նց չեն տայ, վրդովուած պատասխանեց աղջիկը, և նրա աչքերը պապղացին մազերի տակից. հայրիկս թրով էնպէս կը զարկի Փլային, որ արիւն կը հանի, Փլան կը մեռնի,

գառն էլ կը բերի. հայրիկս էնէնց դօչաղ է:  
Գիտե՞ս, ես էլ կը զարկեմ ֆլաներին, թուր  
կառնեմ կը զարկեմ, վերջացրեց նա փոքրիկ  
բոռնցքը բարձրացնելով օդի մէջ:

— Ֆլաները քեզ ինչ են արել որ, խեղճ  
չեն. բա նրանց մալլ որ հայրդ բերի, նրանք  
ինչ անեն, մնան առանց մալի՞:

— Ինչ են արել, բան չեն արել, ֆլա են,  
փիս են էլի՞, նրանց պէտք է զարկել. նրանց  
մալլ շատ է, որ հայրիկս բոլորը բերի, նրանք  
էլի կը ճարեն. էս օր շատ բերին, էնքան բե-  
րին, էնքան բերին: Գառ չեն բերել, տաւար  
էլ, գառներ էլ կը բերեն, որ բերեն, ես իմ  
գառը կը բռնեմ, սպիտակ գառ կը բռնեմ,  
սպիտակը խօրօս է:

Ռաշիդը լոեց և զլուխը կախեց: Աղջիկը  
չէր հեռանում:

— Բրա, քեզ ինչի՞ են կապել, ախր ոտերդ  
կը ցաւեն, զրանք Բաշօի ոտերը կը դնեն, քո  
ոտերը ինչի՞ են կապել. ցաւում են, բրա.  
կաց, կաց, ասաց աղջիկը պատրաստուելով  
հեռանալ, կաց գնամ Զարէին ասեմ, գայ ոտերդ  
բանայ, նա զիտէ, նա Բաշօի ոտներն էլ շատ  
անդամ արձակում է, ասաց Խաչէն և դուրս  
թռաւ գոմից, թողնելով Ռաշիդին ամենայու-  
սահատական դրութեան մէջ:

«Փլաները փիս են, Փլաներին կը զարկեմ,  
Փլաների մալլ պէտք է խլել», աղջկայ այս  
խօսքերը դեռ շարունակում էին հնչել նրա  
ականջներում, նա մտածում էր այդ մասին.  
Ռոտեղից զիտէր Խաչէն այդ բոլորը, այդ  
փոքրիկ անմեղ երեխան իրանից չէր ասում,  
նրան սովորեցրել են մեծերը: Աշխ, անօրէն-  
նէր, մռմռաց նա ատամները սեղմելով...

Հէնց այդ բոպէին գոռնոր կրկին կամացուկ  
ծռուաց և աղօտ լոյսի մէջ ծրագրունց Խաչէի  
փոքրիկ զլուխը, իր պլշան աչքերով. նա վա-  
զելով հասաւ Խաշիդին, նրա դէմքն այլ ևս  
չէր ժալտում, շրթունքները սղմուած էին  
երար վրա, և բռունցքը շարժում էր օդի մէջ:

— Դու ֆլա ես—ասաց նա սպառնալից  
ծայնով մի ոտքը առաջ դրած, ասես յարծա-  
կուելու մտաղրութիւն ունէր—մենք քեզ չե՞նք  
արծակի. փի՞ս, փի՞ս ֆլա:

Ռաշիդը լուռ էր:

— Կաց՝ հայրիկս գայ, քեզ կը զարկի,  
փիս ֆլա. Զարէին հարցըի, թէ ինչու են  
կապել քեզ, նա բան չասաց, միտին վրաս  
նայեց. մայրիկիս հարցըի, ասաց, որ դու  
ֆլա ես. ես էլ քեզ հաց չեմ բերի, փի՞ս ֆլա,  
ասաց Խաչէն և բռունցքներ ցոյց տալով՝  
փախաւ գնաց:

Կէս զիշեր է: Ամենքը բնել են, չորս կողմի  
համատարած խաւարի հետ տիրել է և հա-  
մատարած լռութիւն: Լուս է մանաւանդ  
Ռաշիդի բանտը. գոմի հեռաւոր ծալրից,  
դռան մօտից միայն քնուժ մարդու խոմփոց  
է լսում. դա Ռաշիդի զիշերային պահա-  
պանն է, որ իր պարտքը մոռացած՝ վաղուց  
ընկղմուել է խոր քնի մէջ: Արթուն է միայն  
Ռաշիդը և մէկ էլ մի ուրիշ անծն՝ Զարէն  
որ օծի կծածի պէս պառկած տեղում թա-  
ւալւում է. իր սիրած տղամարդին փրկելու  
հոգսը նրան մի բոպէ անդամ դադար չի տա-  
լիս: Դեռ երէկ զիշեր, երբ ծիաւորների մի  
ամբողջ խումբ կապուտած Ռաշիդին շրջապա-  
տած բերին, ամենքը զարթեցին նայելու ալդ  
իգիմի վրա. ան, այն ի՞նչ էր, որ քաշեց  
Զարէն: Նա քիչ մնաց, որ խելագարուի, աչքերն  
արտասուքով լցուեցին, երբ տեսաւ նրան այն  
վիճակում. քիչ մնաց, որ վազէր փաթաթուէր  
նրա վզովը, բայց զսպեց իրան, ներս փախաւ  
և ծածկեց իր արտասուքները. անիծած Ահ-  
մօն՝ իրանց ծառան միայն կասկածով նայեց:  
Յետոյ Զարէն իմացաւ, որ Ռաշիդը ծիու  
բխովով շղթայուած՝ բանտարկուած է գոմում  
և այդ ժամանակից նա մտածում է մի հր-  
նարքով ազատել, փախցնել նրան, քանի դեռ  
իր հայրն ու եղբայրները չեն եկել: Նա զիտէ,

նա համոզուած է, որ եկան թէ չէ, Ռաշիդին  
կը սպանեն: Ասենք թէ նա այն ժամանակ էլ  
մէջ կընկնի և իր զիակով կը ժածկի նրան,  
եթէ իր աղերսանքները չը լսեն և նրան սպա-  
նել կամենան: Բայց ինչո՞ւ բանն այդտեղ  
հասցնել, լաւ է այժմ փրկել: Ի՞նչպէս անել,  
այդ չը գիտէ նա, ելք մտածել չի կարողա-  
նում. բայց այն միտքը, թէ իրանից մի քանի  
քայլ միայն հեռու, այնտեղ՝ այն դռան, այն  
պատի յետեռում իր Ռաշիդն է անարդ վիճա-  
կում նստած, և նրան անպատճառ մահ է  
սպառնում, Զարէի սիրտը լցնում է անսահ-  
ման ցաւով և նա վճռում է՝ ի՞նչպէս և լինի,  
թէկուզ իր կեանքի գնով փրկել իր սիրած,  
իր պաշտած իգիմին: «Ի՞նչպէս», կըկին հար-  
ցնում է նա իր մտքում. ներս մտնել գոմը  
չի կարելի, պահապան կայ այնտեղ. ասենք նա  
կարող է քնած լինել, բայց դռան ծալնից կը  
զարթնի, յետոյ...», այնուհետև թէ ի՞նչ կը  
պատահի, նա սարսափում է այդ բանից և  
աշխատում է չը մտածել այդ մասին: Երկար,  
շատ երկար այսպիսի մտքերով նա տանշուում  
է, վերջապէս նրա վլխում ծագում է մի բախ-  
տաւոր միտք: Խաչէն ցերեկը նրան սասաց՝  
թէ Ռաշիդին կապել են Բաշօի սիւնից, իսկ  
Զարէն զիտէ, որ հէնց այդ սիւնի վերեռում  
մի հերդիկ կայ: Գոմի կտուրը ցածր է, չէր

կարելի արդեօք այդ հերդիկից մի բան անել: Այս միտքը նրան թւաց միակ իրազործելին, մնում էր բխովի բանալին ձարել, նա այդ բանալու սովորական տեղը զիտէ:

Աղջիկը կամացուկ վերկացաւ տեղից, նրսաց, նայեց շուրջը, ականչ զրեց, ամենքը քնած են, լուռթիւն է. նա կանգնեց, առաջ շարժուեց, խաւարի մէջ դտաւ բանալին, և դէպի գոմն ուղղեց իր զգուշ քայլերը. նրա բոլոր շարժումներն արտայատում էին մի յանդուգն վճռականութիւն: Ահա նա կամացուկ մօտեցաւ գոմի դռանը, կանդ առաւ և սկսեց ականչ դնել. ոչ մի ձայն չի լսում ներսից, բացի մի անախորժ խռխռոցից, որ խռպոտ կրծքից արծակում է քնած պահապանը. ուրախութիւնը փայլեց նրա գէմքի վրա. նա շտապ-շտապ, բայց զգուշութեամբ բարձրացաւ գոմի կտուրը: Կտրից լսուող ոսանածայները սթափեցրին Ռաշիդին, և նա լսողութիւնը լարած ուշաղրութեամբ հետեւում է այդ ձայներին: Ահա այդ ոտնաձայները կամաց-կամաց մօտենում են, պարզ է, որ մէկը կտրի վրա քայլում է գէպի այնտեղը, ուր Ռաշիդն է: Բայց ով է սա, Տէր Աստուած, և ի՞նչ է կամենում, ի՞նչ է վնդրում այսպէս ուշ գիշերով: Անցան դարձեալ մի քանի բուպէներ, անտանելի երկար. խորհրդաւոր

անձնաւորութիւնը շարունակում էր շարժուել կտրի վրա, ահա վերջապէս նա կանգ առաւ հէնց Ռաշիդի զլխավերելը, և նա ոչ առանց երկիւղի զգաց, որ մէկը հերդիկը լայնացնելով աշխատում է յած կախուել, Ռաշիդը նոյն խոկ լսում է նրա ընդհատընդհատ շնչառութիւնը, նա քիչ էր մնում ձայն տայ:

— Ռաշիդ չան, ես եմ, կամացուկ փսփսաց Զարէն:

Զարմանքն ու անսահման բերկրանքը պատեցին Ռաշիդի սիրտը. նա հաւատում էր, որ Զարէն կաշխատի իր փրկութեան համար մի բան տնել, բայց գիշերուայ այս պահուն, արհամարհել բոլոր վտանգները և յանձն առնել մի այսպիսի յանդուգն ձեռնարկութիւն, այս բանը ենթադրել նա չէր կարող:

— Ես եմ, Ռաշիդ—կրկնեց Զարէն, իմանալով՝ որ զարմանքն ու ապշութիւնը բանել են Ռաշիդին,—ես եմ, առ բխովի բանալին, ոտներդ արձակի՞ր և կրկին յետ տուր ինձ:

Ռաշիդին թւում էր թէ այս բոլորը երազ է, և ուրիշ ոչինչ: Վերջապէս նա ուշքի եկաւ, ձեռքը մեխնեց, բոնեց Զարէի փափուկ ձեռքը և աշխատում էր խաւարի մէջ շրթունքները, մօտեցնել նրան, բայց այդ նրան չաշողուեց,

առաւ բանալին, շտապով բաց արեց ոտների փականքը և բանալին յետ տուեց Զարէին:

Մնացածը դու զիտես, փսփսաց Զարէն և հեռացաւ:

Անգիտակցաբար շարժեց Ռաշիդն իր հզօր ոտները, նրան թւում էր, թէ տասնեակ տարիներ է ինչ կապուած է եղել, երկու քայլ արեց, կասես իմանալու համար, թէ արձակումծ է իրօք, թէ այս բոլորը մի երազ է միայն. ազատութեան գիտակցութիւնը լցուց նրա սիրտը մի դուրեկան, մի քաղցր զգացմունքով, որպիսին զգում է մարզ, երբ ծանր հիւանդութիւնից յետոյ առողջանալ է սկսում: Այժմ դուրս ենելն ու փախչելը գժուար չէր նրա համար. փոյթ չէր նոյն իսկ, եթէ պահապանը զարթնի, նա նրա հետ իր հաշիւր հեշտ կը վերչացնի. նրան զբաղեցնողն այն միտքն է, թէ ուր գնայ և ինչպէս գնայ առանց որ և է զէնքի:

Եւ նա վճռեց պահապանին կողոպտել, ինչպէս և լինի: Ռաշիդը կամացուկ մօտեցաւ պահապանին. վերջինս զարթնեց հէնց այն ըռպէին, երբ զլխափերեւում կանգնած էր Ռաշիդը: Պահապանը վեր թռաւ տեղից, ձեռքը դէպի իր սուրը մեկնեց և փորձեց օգնութիւն աղաղակել, բայց Ռաշիդի երկաթէ մատները նրա կոկորդը սեղմեցին: Վատանդ զգալով՝

և անկարող լինելով զէնքի զիմել, պահապանն էլ ինքնապաշտպանութեան համար ձեռքը դէպի հակառակորդի կոկորդը մեկնեց: Սկսուեց մի սոսկալի մենամարտութիւն. պահապանն աշխատում էր օգնութիւն աղաղակել, բայց հզօր ձեռքով սեղմուած կոկորդը միայն անախորժ և հազիւ լսելի խոխոց էր հանում: Նրանք կպէլ, փաթաթուել էին իրար՝ ինչպէս երկու կատաղած օձեր, զոււս զիսի, կուրծք կրծքի, թև թեփ տուած, ոլորուած, կծկուած, փաթաթուած իրար և ամեն մէկը փոխադաբաբար աշխատում էր խեղդել ծիւսին: Անչափ կատաղութիւնից և մահու երկեղից նրանց ոյժերը տասնապատկուել և գերմարդկային էին դարձել. ամեն մէկը հզօր ցնցու մներով կամ սաստիկ ուժով սղմելով աշխատում էր փշրել հակառակորդի ոսկորները, կամ վայր զլորել. բայց ամեն մի այդպիսի փորձ վերչանում էր նրանով, որ երկսով էլ վայր էին զլորում, կամ ընկնում ծնկների վրա, քաշքշում էին իրար դէտնի երեսով, կատաղած ցուլերի պէս մոնչում էին և նրանց ոսկորները ճարճատում էին: Նրանց շնչառութիւնը փոխուել և դարձել էր հզօր տեքոց, որ դուրս էր պոոթկուում ուռած կրծքերից և խառնուելով ոտների դոփիւնի հետ, աղմկում էր գոմի թանձը խաւարի

խաղաղութիւնը։ Դա մի սոսկալի տեսարան էր, երկու մարդիկ խաւար, ամայի գոմում ամբողջ աշխարհից ծածուկ խեղդուած, կը թծուում էին իրար, ժնկները արորում էին յատակի վրա՝ խուլ դրնդիւն առաջացնելով. տասն անգամ նրանք ընկան գետին և վերկացան, զէնքը չէր գործ տեսնողը, նրանք գործում էին ձևոներով, եղունգներով, ատամներով, որպէս երկու դեեր, որոնք վճռել են ոչնչացնել իրար։ Երկսի մարմինն էլ թաց էր, լպրծուն հեղուկը ողողել էր նրանց մորթին ու շորերը. արիւն էր այդ, թէ քրտինք, այդ նրանք չը գիտէին, և նրանց չէր էլ հետաքրքրում, բայց շարունակում էին հեալով, խոխուալով հուապ տալ իրար կոկորդ։ Երկար տեեց այդ կոկորդ։ Ուաշիլը զօրեղ էր, բայց պահապանն էլ թոյլ չէր, նա պաշտպանուած էր օրհասական արշի պէս։ Վերջապէս Ուաշիլը մէկ էլ բոլոր ուժով հուապ տուեց հակառակորդի կոկորդը, նրա մատների տակ հոճուացին պարանոցի ոսկորները և պահապանը ուժասպառելով խուլ թրմփոցով գետին ընկաւ հակառակորդի մագերից մի խիտ փունչ սեղմած ձեռքով փետելով։ Պահապանը խեղդուած էր։ Ուաշիլը հանեց նրա շորերը, հադաւ, վերցրեց նրա հրացանը, փամփուշտները ու միւս զէնքերը և դուրս թռչելով գոնից, խաւարի մէջ անհետացաւ։

Երկար գնում էր նա, ինըն էլ չիմանալով՝ թէ դէպի ուր... Բարձրանում էր սարերը ինում էր ձորերը, և առանց յոգնածութիւն զգալու, առանց մի բոպէ հանգիստ առնելու, գնում էր ու գնում։ Արշալոյսը մօտ էր շառագունելու, երբ նա վերջապէս կառողացաւ որոշել, որ ինքը անզիտակցաբար դէպի իր հայրենի դիւղի սահմաններն է դիմել։ Ինչու էր գնում դէպի այդ գիւղը, ի՞նչն էր նրան քշում տանում դէպի իր աւերակ ծննդավայրը, այդ ինքն էլ չը գիտէր. միայն մի ներքին անյաղթելի հակումն նրան մղում էր և նա շարունակում էր գնալ անդադար։ Ահա վերջապէս նա Աստուածածնի բլրի ստորոտումն է, խորին ցաւով նա լիշեց իր ընկերներին. նրանց դիակները զեռ ալանդակուած, ուռած, ցաք ու ցրիւ փոռւած էին այդ բլրի ստորոտում։ Լոյսը բացուեց. այլ ևս առաջ գնալ չէր կարելի, նա դիւղին ծօտ է և անօրէնները դիւղում են, որ զեռ ժամկուած է թանձր ծխով. գիւղը չէ երեւում այդ ծխի միշից, որ զեռ շարունակում է պալան-պալան բարձրանալ դէպի վեր։ Աւերակները զեռ շարունակում են ծխալ, նրանց միշից կրկին լսւում են բազմազան ձայներ. բայց դրանք ոչ բնակիչների ուրախածայն աղաղակներն են և ոչ էլ կոտորուողների վայնասուն. ասիանցիներն

են, որոնք պատրաստւում են իրանց աւարը սալլերով ճանապարհ դնել։ Նա դիմեց բլուրն ի վեր՝ հաստատ վճռելով սպասել այնտեղ, մինչև թշնամիները հեռանան դիւղից։ Նա ինքն էլ համոզուած է, որ գիւղում այժմ իր ազգակիցներից մի կենդանի չունչ չի մնացել, և որ ինքը միայն դիակներ կը տեսնի, բայց և այնպէս անընկծելի ցանկութիւն ունի ժամառաջ շրջել իր սրտին այնքան մօտիկ վայրերում, տեսնել իր սիրելիների գոնէ գերեզմանները։ Յարմար դիրք որոշելով՝ նա նստեց և սպասեց։ Հայրենի գիւղի տեսքը ճմլեց նրա սիրտը և վառեց նրանում անյագ վրէժխնդրութեան ծարաւ։ բայց ի՞նչպէս վրէժխնդիր լինել, մենակ ինքն ի՞նչ կարող է անել թրշնամիների ահաւոր բազմութեանը։ Կեանքն այլ ևս նրա համար ոչ մի դին չունի, միայն նա կամենում է թանգ, շատ թանգ ծախել այդ մի հատիկ կեանքը։ Ա՛խ, ի՞նչ սիրով կը տայ նա իր կեանքը, եթէ հնար ունենայ նախապէս հէնց իր ձեռքով գնդակահար անել նադօին, այդ արիւնաբրու գաղանին։ Երկար մտածում էր նա, թէ ի՞նչպէս վրէժխնդիր լինի. յանկարծ նրա տխուր դէմքը ծամածուեց բաւականութիւն արտայատող մի տարօրինակ ժպտով. պարզ էր, որ նրա մըտքում ծագեց մի վճռական և խելացի միտք։

— Սպասի՛ր, անօրէ՛ն, մռմռաց նա և աւելի պինդ սեղմեց իր ձեռքի մէջ հրացանը։ Արեր բարձրացաւ. լսուեցին անասունների ձայներ, սալլերի ճռինչ, ասես ամբողջ գիւղը գաղթում էր. թշնամիները բնակիչներին կոտորելուց յատով, նրանց սալլերով կողում էին նրանց արդար քրտնքի պտուղները։ Ուաշիղը հասկացաւ այդ։

Ոհա՛ անցնում են երեք՝ ասիանցիներ և առաջ արած քշում են մի քանի հարիւր ոչխար ու գառներ, օդը թնդում է սրանց խառնինաղանճ բառաչից. նա ակամայ յիշեց փոքրիկ Խաչէին. նրա գառն էլ անշուշտ այստեղ է. ի՞նքան կուրախանայ, երբ տեսնի՛ այ, այն փոքրիկ սպիտակ գառը։ Ուաշիղին թւում է, որ Խաչէն անպատճառ այն սպիտակ գառը կը բռնի, այս, շատ կուրախանայ Խաչէն։ Բայց քանի՛ քանի անմեղ մանուկներ զոհուեցին, մինչև որ այդ գառը Խաչէին հասաւ, և նա ակամայ ատելութիւն զդաց և՛ գէպի այն սպիտակ փոքրիկ գառը, և գէպի Խաչէն։ Երեք ասիանցիներն ուրախ են աջող որսից վերադարձող շան նման։ նրանց ուրախութիւնը կատաղեցնում է Ուաշիղին, քիչ է ծնում հրացանը երեսն առնի և մի երկուսին զնդակահար անի. նա նոյն իսկ անդիտակցար ձեռքը դէպի հրացանը տարաւ, բայց

կրկին յետ քաշեց, սպասելու, համբերելու  
հաստատ վճռով. նրանք անցան:

Ահա մի այլ խումբ ասիանցիներ՝ հաստավիզ  
եղներ լծած քշում են տասնեակ սալեր. սը-  
րանք էլ կրում են զգեստներ, կապերաներ,  
անկողիններ և տան այլ կահ-կարասիք: Այս  
սալերից մէկը մանաւանդ առանձնապէս  
գրաւեց Ռաշիդի ուշաղրութիւնը, նրա վրա  
բարձած էին եկեղեցական սրբազն անօթներ,  
սկիհ, բուրփառ, մօմակալներ, արծաթեալ  
խաչեր, զրբեր, եկեղեցական զգեստներ, շուր-  
ջառ, վակաս, ժամաշապիկներ և այլն և այլն...  
Ռաշիդի շրթունքները դողլողացին և ատամ-  
նեցը իրար վրա սղմուեցին, երբ տեսաւ այդ  
բոլորը: Նա սրտի խորին ցաւով լիշեց իր ծե-  
րունի հօրը. արդեօք ուր է նա, սպանուած՝  
թէ կենդանի է. ուր է իր մայրը, միթէ այդ  
ծերունիներին էլ չը խնայեցին այս մարդա-  
կերները: Նա լիշեց, թէ ինչպէս իր հայրը այդ  
զգեստներով զգեստաւորուած՝ սրբազն խոր-  
հուրդ էր կատարում, լիշեց թէ ինչպէս նա դող-  
լոչուն շրթունքներով հաւատացեալ հօտին ի  
տես բարձրացնումէր այդ սրբազն սկիհը: Յիշեց,  
թէ ինչպէս ինքը խնկարկում էր ահա այն  
բուրփառով, հաջած այն ժամաշապիկը և քանի-  
քանի անգամ երկիւղած սրտով համբուրել է  
ահա այն խաչերը մանկութիւնից սկսած, երբ

դեռ նոր էր իր հօր մօտ սովորում «Խաչ,  
օգնեալ ինձ»: Ուրիշ շատ, շատ բան լիշեց նա.  
մանկական լիշողութիւնները մէկը միւսից  
աւելի գրաւիչ, աւելի քաղցր, եկան պաշարե-  
ցին նրա յոզնած միտքը: «Խաչ, օգնեալ ինձ»,  
մրմնչում էին նրա շրթունքները, և նա այդ  
բառերը կրկնում էր խորին հաւատով: Դեռ  
երբէք նա խաչի օգնութեանը այդքան կարօտ  
էր եղել, և երբէք աւելի հաւատով, աւելի  
չերմեռանդութեամբ չէր դիմել նրան, քան  
թէ այս անգամ: Տիսուր իրականութիւնը  
կրկին սասակացաւ նրա տէքի առաջ, նուի-  
րական անօթներին հասցրած անարգանքը,  
անօրէնների այս անամօթ հոհուացող խումբը  
նրան վիրաւորեցին մինչեւ հոգու խորքը.  
«Տէ՛ր, ինչո՞ւ թողիր Քո եկեղեցին, որ այս ա-  
նօրէնների անարգութեանը մատնուի», մըր-  
մրնչաց նա: Սպա նա կրկին հրացանը ձեռք  
առաւ, ուղղեց դէպի թշնամիները, նրա համ-  
բերութիւնը սպառում էր. բայց բանակա-  
նութիւնը այս անգամ էլ լաղթող հանդիսա-  
ցաւ և նա մի անգամ էլ ձեռքը յետ քաշեց՝  
վճուելով ինչ և լինի համբերել և սպասել  
նրան...

Սնցան դարձեալ այլ բաղմաթիւ սալեր.  
բարձուած իր հալրենակիցների հարսու-  
թեամբ, նրանց՝ տարիների դառն աշխատանքի

արդար վաստակներով։ տարուեցին և բազմաթիւ չահել հարս ու աղջիկներ, որոնց տեսել էր, որոնց ճանաչում էր Ռաշիդը, և նա տարաւ, տարաւ այդ բոլորն առանց մի կաթիլ արտասունքի։ միայն դառն ժպիտը երբեմն խաղացնում, ծամաժռում էր նրա դողգողուն, պինդ իրար վրա սղմած շրմունքները։ Գերմարդկային համբերութիւն էր հարկաւոր այս բոլորը տանելու համար, բայց Ռաշիդը տարաւ, համբերեց, այս ահազին փորձութիւնից չը գալթակղուեց և իրան չը մատնեց հրացանածգութեամբ։ Նա խմում էր դառնութեան բաժակը մինչև տակը, նա շարունակում էր կուտակել կատաղի վրէժինդրութեան թոյնը յատկապէս մի անձի գլխին թափելու, այն անձի, որ այս բոլոր չարիքի սկզբնապատճառն է, որ իր հայրենիքն աւերի և սրածութեան մատնողն է։ Նա համոզուած էր, որ այդ անձն այստեղից է անցնելու։ Եւ նա սպասում էր...

Շատ սալլեր եկան անց կացան, շատ բան տարուեց, բազմաթիւ խմբեր ուրախածայն աղաղակներով ու երգով եկան անց կացան։ Արդէն երեկոյ էր. արել մայր մտաւ. վերջին սալլերն էլ անցան, գիւղի թալանը վերջացաւ. Թեթև մառախուղն եկաւ պարուեց շրջակայթը, բայց նա գեռ չը կար. Ռաշիդին աիրեց

խորին անհանգստառութիւն... բայց ահա հեռւում երկաց ծիաւորների մի խումբ. Ռաշիդը լարեց իր բոլոր ուշադրութիւնը։ Շատ հեռուից երեւում էր մէկը սպիտակ կատաղի ձիու վրա նստած. Ռաշիդը ճանաչեց իր ձերմակին և նրա աչքերը լցուեցին արտասուքով։ Վաղուց, շատ վաղուց նա ալսպէս չէր արտասուել. վշտի անսահմանութիւնից ցածաքել, չորացել էին նրա աղբիւրները. նա չը գիտէր՝ ո՞ր մէկ թշուառութիւնը ողբար, այլքան արտասուք նա ո՞րտեղից վերցնէր, բայց իր նժոյգի, իր ձերմակի, իր սիրելի ընկերի համար նա ալնքան արտասուք ունէր. և նա կուշտ արտասուեց. «Խաչ, օղնեա ինձ», կրկին մրմնչաց նա և դառնայով դէպի աւերակ մենաստանը՝ խաչակնքեց երեսը խորին երկիւղածութեամբ։ Զիաւորների խումբը մօտեցաւ. Ռաշիդի սիրտն սկսեց արագ-արագ բարախել, նա հրացանը պատրաստեց։ Խմբի առաջից հպարտ-հպարտ գնում էր նալո աղան ձերմակի վրա նստած, յաղթական ժպիտն երեսին։ Ահա նրանք գտնւում են բլրի ստորոտում. Ռաշիդը հրացանն երեսն առաւ ու աչքեց նաղօ աղայի կրծքին։ Հրացանը որոտաց և բէզը գլխավայր ընկաւ գետին, բայց մի ոտքը մնաց ասպանդակում։ Զին հրացանի անակնկալ որոտից կատաղած

և նստողի ընկնելուց սաստիկ խրտնած՝ փրնչ-  
չացնելով թռաւ դէպի դաշար՝ իր յետեից  
գետնի երեսից քաշ տալով նազօի արիւնա-  
թաթախ դիակը։ Թշնամիների բանակում  
տիրեց սարսափելի աղմուկ և իրարանցում։  
Ոմանք անակնկալ դէպքից զարհուրած դէս  
ու դէն փախան՝ բլրի վրա թշնամիների ա-  
հաւոր բազմութիւն ենթազրելով։ ուրիշներլու  
«վայ լը մըն բափօ» գոչելով քշեցին իրանց  
ձիերը կատաղած ձերմակի յետեից, որ շարու-  
նակում էր դաշտի մեջ շրջաններ կազմել՝  
քաշ տալով գետնից ալյանդակուած դիակը,  
ասես ուխտել էր իր տիրոջ հետ միասին  
վրէժխնդիր լինել ընդհանուր թշնամուց...

Այս ընդհանուր շփոթի՝ աղմուկի, իրար-  
անցման բոպէին, երբ գեռ սլանում էր ձեր-  
մակը, Ռաշիզը բլրի հակառակ կողմից շատ-  
պով ցած էր իջնում։ Որքան եղաւ նրա  
զարմանքն ու ուրախութիւնը, երբ մի ժայռի  
տակ թափնուած դտաւ իր սիրելի Աւօին։  
Դուրս եկաւ, որ այս երիտասարդը կուի  
ժամանակ ժանր հարուած է ընդունել դիսին,  
վայր է ընկել, երբ ամենը հեռացել են,  
ուշը է եկել և համարեա սողալով բար-  
ձրացել է այս բլուրը՝ ապահովութիւն փրն-  
դրելով։

Նրանք առաջ գնացին։

Գիշեր է։ Լուսինը բարձրացաւ Մարալայ  
սարերի թիկունքից և իր պաղ ճառագայթ-  
ներով լուսաւորեց լեռ, ձոր ու դաշտ։ Կոր-  
ծանուած դիւզի վրա էլ մի բանի ճառա-  
գայթներ զաղտագողի, ասես վախվախելով  
ընկան, բայց կրկին յետ փախան։ ամպի մի  
փոքրիկ սե պատառ փակեց լուսինի դէմքը,  
կարծես թէ մայր բնութիւնն ամաչում էր  
ցոյց տալ, լոյս աշխահ հանել իր զաւակների  
պժգալի գործերը։ Բայց լուսինը երկար չը  
մնաց ամպի տակ ծածկուած, նա գուրս եկաւ  
բարձրացաւ երկնակամարի վրա և աւերակ  
զիւզը լուսաւորուեց։ Տեղ-տեղ աւերակները  
դեռ շարունակում էին ծխալ, խեղդող խան-  
ծահոտը տակաւին բռնել էր շրչակալը։  
այսաեղ ու այնտեղ երեսում էին հսկայ մոխո-  
րակոյտեր, զրանք ծխաշունչ գերեզմաններ  
էին, որոնց տակ, ով գիտէ, քանի՛ տասնեակ  
մեծ ու փոքր կենդանի էակներ անիւնացան՝  
իրանց վերջին հառաչանքը մենմերու շըր-  
թունքներից ծխերի ու բոցի հետ դէպի եր-  
կինը ուղղելով։ Ռաշիզը անձայն, անշշուկ  
զլուխը կրծքին կախած՝ թափառում է այս  
աւերակների, այս գերեզմանների մէջ, որպէս  
մի վշտի ուրուական, կամ որպէս մահուան  
ոգի, թափառում է, ինքն էլ չիմանալով՝ թէ  
ինչ է փնդրում այս հսկայական դամբարա-

նում: Նրան քայլ առ քայլ հետևում է մի ուրիշը, նոյնպէս վշտահար, նոյնպէս լուռ. սա էլ Աւօն է, Ռաշիդի մի հատիկ կենդանի մնացած ընկերը: Աւերակ գիւղը բոլորովին անկենդան չէ. այս ու այն քանդուած տան միջից, այս ու այն փողոցից երբեմն լսւում են փախող, հեռացող ոտնածայներ, զրանք քաղցած գազաններն են, որոնք դիակների, արեան հոտ առած՝ խմբերով դիմել են այստեղ, կրծոտում, քաշքում են մարդկային վայրագութեան զոհերին: Կենդանի մարդ տեսնելով նրանք մոմուալով թողնում են իրանց արիւնոտ որսը և զզուելի լեզուով շրթունքները լիզելով մի քանի քայլ հեռու փախում կամ կանգնում են, կամ պառկում խաւարի մէջ, որտեղից նրանց կատաղի աչքերը փայլում են, որպէս զոլգ ճրագներ՝ սոսկում աղջելով նոյն իսկ ամենասրաւապինդ մարդուն: Խաւարի մէջ նրանք սպասում են մարադ մտած, մինչև որ մարդն անցնում է, ապա կրկին ոստիւններով յարձակում են դիակների վրա՝ իրանց պժգալի խնճոյքը շարունակելու համար և քանի՛ ան են... կան այնպիսիները, որոնք փախուստի ժամանակ խլում, քաշ են տալիս իրանց հետ մի ոտք, մի ծեռք, շատ անդամ նոյն իսկ մի ամբողջ դիակ: Ռաշիդն ու Աւօն կամաց-կամաց առաջացան

և հասան վերջապէս ընդհանուր կոտորածի տեղը: Դեռ գիւղը չը տեսած, նրա իսկական վիճակը երևակայելու անկարող լինելով՝ նրանք երկով էլ բուռն ցանկութիւն ունեին ժամ առաջ հասնել արիւնոտ տեղերին, իրանց աչքով տեսնել զարհուրելի իսականութիւնը. նրանք համոզուած էլ էին, որ միմիայն սոսկում պատճառող երևոյթների հանդիսատես պիտի լինեն, բայց այն, ինչ որ այժմ ներկայացաւ նրանց ապշած աչքերին, միանգամայն վեր էր նրանց երևակայութիւնից, և ինչե՛ր չէին տայ նրանք այդ ըոպէին, որ լուսինը մէկ էլ խաւարէր, յետ քաշէր իր ճառագայթները, թագնուէր մոայլ ամպի տակ, անժափանցիկ խաւարով պատէր այս արիւնոտ վայրերը իրանց արիւնոտ տեսարաններով: Դիակներ ու դիակներ, մեծ ու փոքր, մարդթէ կին, մեր թէ երիտասարդ՝ ուռած, այլանդակուած, ոմանց աչքերը դուրս ճողուած, բերաններն արիւնագանգ, ուրիշների փորոտիքը թափուուած, կամ կրծքերը պատառուած, ոմանք առանց զիսի, կամ առանց ծեռքի, ամենքն էլ մերկ, հրէշաւոր ծեռով մէկը միւսի վրա, ոտների տակ, մէշքին, կողքի վրա ընկած: Մարդ-գազանների թէրի թողածը լրացրել էին իսկական գողանները. այս ու այն կողմում ընկած էին մարդ-

կալին մսերի կտորտանքը, խանձուած մարմինների կրծոտուած ոսկորներ... Երկու երիտասարդները կանգ առան սառած, քարացած. արտասուք չը կար նրանց աչքերում, որ դոնէ մի քանի կաթիներով զովացնէին իրանց այրուած սիրտը և բնչպէս կարելի էր մի քանի կաթիներով ողբալ աղջքան մեծ թշուառութիւնը, մարել սրտի այնքան մեծ հրդեհը: Խաշիղը երկար մնաց կանգնած աչքերը մի կետի վրա յառած. մի րոպէ նա մոռացաւ նոյն իսկ, թէ ինքը ուր է կանգնած. նրան թուաց, թէ երազ է տեսնում և այն՝ սարսափելի երազ: Տեսարանները նրան ճնշում են, նա աշխատում է շուտով զգաստանալ, աղատուել այդ ճնշող տեսարաններից, սակայն իզնուր, այլանդակուած զիակները շարունակում են նրա աչքի առաջ մնալ և զարհուրելի իրականութիւնն իր բոլոր սարսափներով մնում է անխուսափելի...

Խաշիղը յանկարծ շփեց աչքերը և քնից արթնացածի պէս սկսեց պրպաել զիակները. նա երկար փնդրում էր, իսկ Աւօն լուռ, անձայն հետեւում էր նրան: Վերջապէս Խաշիղը կանգ առաւ մի զիակի առաջ և ծունկ չօքեց, նա դտաւ իր հօր մարմինը: Ծերունու ալեղարդ զլսի մազերն ու միրուքը ճապաղուած էին արեան մէջ և բոսրային գոյն

էին ստացել, կրծքի լայն վէրքից դուրս բըղիսած արիւնը ներկել էր սպիտակ շապիկը և մի փոքրիկ խորութեան մէջ գետնի վրա հաւաքուել, լճացել, սառել էր: Սակայն նրա վէմքը խաղաղ էր ինչպէս քնած մարդու. միայն աչքերն էին կիսաբաց, որոնք ուզզուած էին դէպի երկինք, դէպի յաւիտենականի աթոռը. կարծես թէ այդ ծերունին դեռ բողոքում էր այս անլուր ոճրագործութեան դէմ: Հօր զիակի առաջ ծունկ չօքած որդին մի քանի կաթիլ արտասուք թափեց նահատակի արիւնոտ դէմքի վրա. սա իր սեփական վիշտն էր և այսքանի համար հազիւ նա արտասուք ունէր: Երկար արտասւում էր. նա գերեզմանական լուսթիւն էր տիրում նրա շուրջը և լուսինը շարունակում էր տիսուր, պաղ շիթեր թափել աւիւնոտ հրապարակի վրա, որպէս վկայ հօր զիակի վրա ողբացող զաւակի անսահման վշտին. Սգում էր նաև Աւօն:

— Աւօ, ընդհատեց լոսութիւնը վերջապէս Խաշիղը, սիրելիս, սա իմ հայրն է, քո էլ հայրն է. այս բոլոր թշուառների բազմութիւնից թաղենք գոյնէ այս մէկին եկեղեցում:

— Թաղենք, Խաշիդ շան: Երկու ընկերները վեր կացան և երկու կողմից բարձրացը ին զիակը. բայց դեռ հազիւ մի երկու քայլ արեգիս դէպի լայն վէրքից դուրս բըղիսած արիւնը ներկել էր սպիտակ շապիկը և մի փոքրիկ խորութեան մէջ գետնի վրա հաւաքուել, լճացել, սառել էր: Սակայն նրա վէմքը խաղաղ էր ինչպէս քնած մարդու. միայն աչքերն էին կիսաբաց, որոնք ուզզուած էին դէպի երկինք, դէպի յաւիտենականի աթոռը. կարծես թէ այդ ծերունին դեռ բողոքում էր այս անլուր ոճրագործութեան դէմ: Հօր զիակի առաջ ծունկ չօքած որդին մի քանի կաթիլ արտասուք թափեց նահատակի արիւնոտ դէմքի վրա. սա իր սեփական վիշտն էր և այսքանի համար հազիւ նա արտասուք ունէր: Երկար արտասւում էր. նա գերեզմանական լուսթիւն էր տիրում նրա շուրջը և լուսինը շարունակում էր տիսուր, պաղ շիթեր թափել աւիւնոտ հրապարակի վրա, որպէս վկայ հօր զիակի վրա ողբացող զաւակի անսահման վշտին. Սգում էր նաև Աւօն:

յին, որ նրանց ականջին հասաւ մի վերին աստիճանի տարօրինակ ծայն և նրանք ակամայեց վար դրին երանց բեռք:

— Պօյ, պօյ, Ռաշիդ շան, մացինք ես ու գո՞ւն... զըմմէն քնուկեն, զըմմէն գային... մենք լէ չը քնէ՞նք, Ռաշիդ, մութ քշեր ա...

Երկու երիտասարդները սոսկումով բարձրացրին իրանց գլուխները և զարմացմամբ տեսան դէպի իրանց վազող մի զզզուած, նիհար, չորացած կին, ոտաբորիկ, զլխարաց, խճնուած մազերով, նման մի կատարեալ ուրուականի: Նրանք ճանաչեցին նրան: Դա իրանց գիւղե ծուռ Մանիշակն էր, նախկին չէն ու բախտաւոր գիւղի միակ թշուարը: Բոլոր մանուկները սրան ճանաչում էին, բոլորի էլ սա և՝ բարեկամն էր, և թշնամին: Երբ փողոցի մի ժայրում երեսում էր ծուռ Մանիշակը, մանուկները սովորաբար խմբեր էին կազմում և ծոտենալով կոչում էին՝ «ծուռ Մանիշակ, ծուռ Մանիշակ», քարեր էին դյում և զուարձանում, քանի որ Մանիշակը չէր բարկացել. բայց հէնց որ նրան համբերութիւնից հանում էին, նա կատաղում էր, փէշի մէջ բազմաթիւ քարեր էր հաւաքում և զյում դէպի մանուկները, որոնք հոհուոցով փախչում էին դանաղան կողմէր, իսկ ծուռը աջողեցնում էր մէկն ու մէկին բռնել ու կծել. այս պատճա-

ռով մանուկներ և՝ սիրում էին նրան և՝ վախենում նրանից: Ուաշիդն ու Աւօն էլ իրանց մանկութիւնից գիտէին ծուռ Մանիշակին, տեսել էին նրան այն ժամանակից միշտ այս վիճակում: Թէ Էրբ էր նա խելագարուել և ինչո՞ւ համար, այդ համարեա ոչ ոք չը գիտէր և կամ եթէ գիտեցողներ էլ կային, կարիք չէին համարում պատմել, և երօք այդ բանով ոչ ոք չէր էլ հետաքրքրուում, ամենքն էլ զիտէին, որ Մանիշակը ծուռ էր և ուրիշ ոչինչ: Ամեն տուն նա ազատ մուտք ունէր, ամենքն էլ նրան կերակրում էին սիրով. կուշա ուտեկուց յետոյ նա պառկում, քնում էր այս ու այն փողոցում մի պատի տակ, կամ արագութեամբ գնում էր գաշտ և աննպատակ վազվզում այս ու այն արտի մէջ, ծորում, մարգագետիններում: Շատ անգամ նա օրուայ մեծ մասն անց էր կացնում Տիրամօր բլրի վրա, աւերակ տանարի մէջ, ուր սիրում էր ամբողջ ժամերով անկապ բառերով աղօթել, աւելում էր սրբավալրը, վառում էր ուխտաւորների բերած մոմերը և առհասարակ ծառայում էր տաճարին ինչպէս Տիրամօր «զուլ»: Շատ հաւանական է, որ ընդհանուր կողապուտի ժամանակ Մանիշակը Աստուածածնի վանքումն է եղել, և կենդանի է մնացել, մտածեց Ռաշիդը, ապա թէ ոչ՝

գաղանները սրան էլ չէին խնայի: Յետոյ յանկարծ նրա մտքում ծագեց, թէ նրանք կարող էին դիտմամբ սրան խնայել, յատկապէս այս աւերակների մէջ թափառելու, սպանուածների թշուառութիւնը ծաղրելու համար, և այս միտքը մեխի պէս ցցուեց նրա վիլսում: Այս, մոմուում էր նա, նրանք այս գժին կենդանի էն թողել՝ այս զարհուրելի տեսարանը էլ աւելի ահաւոր, էլ աւելի կատարեալ գարձնելու համար... Այսնդակուած, արիւնաթաթախ դիակներ, որոնց քաշըշում են գաղանները, ծխացող աւերակներ և սրանց մէջ թափառող խենթ պառաւ,—այս տեսարանը քիչ էր մնում Ռաշիդի սիրտը ճաքեցներ զալրութից և վշտից.

— Տէր Աստուած, ես ինչու եմ ապրում. օ, անօրէններ...

Մինչ երկու երիտասարդները ապշած նայում էին դէպի պառաւը, նա շարունակում էր վազգել դիակների մէջ, ցատկել նրանց վրայից. ապա նա կանգ առաւ, երկար նալեց մի դիակի, ինչ որ խօսեց հետո, անցաւ դէպի միւսը, նոյն բանն արեց, ոտքով հրեց մի քանիսին, կրկն կատաղի ոստիւններով ցատկուով վրաներից, ծափ տալով, «պօյ-պօյ» պոռալով հասաւ Ռաշիդին ու Աւօին, որոնք շարունակում էին դիտել նրա արածները:

— Պօյ, պօյ, Ռաշիդ, Աւօ, էս լէ էրէցնի, իմալ կարմիր շապիկ խաքիրի, կաց, կաց, երիցու աչ պաքեմ, ասաց խենթը և կռանալով համբուրեց նահատակի աչը, ապա զլուխը բարձրացնելով՝ երկար նալեց երկնքին ինչ որ ասելով, որից միայն այսքանն էր լսում: «Ա՞խ, Աստուած, ախ Աստուած», եղուում էր, որ թշուառի խանդարուած ուղեղի մեջ նշմարտութեան մի նշով ծագեց. կասես թէ նա հասկանում էր, որ մի ինչ որ շատ վատ բան է կատարուած:

— Մանիշակը ձե հէյրան, էս ո՞ն էս մալ արաց, վախ, մեղք է է... բա մէր Տիրամէր դո՞րն էր... վախ անօրէններ... տե՛ս, տե՛ս բանին են քնուկ համար... Ռաշիդ չան, քնուկ են... հարցյրեց խենթը.

— Քնուկ չեն, Մանիշակ, սպանուկ են. սպանուկ են, արի թաղենք, Մանիշակ, արի վերուցենք թաղենք. կը գամ, Մանիշակ:

— Հազ կենէք, թաղենք, Ռաշիդ չան, Աւօ, ձե մեռնիմ թաղենք, էս գիշեր, գաղաններ կը տեսնա՞ք, համմաւ կուտեն, խեղճ են էէ, խեղճ չե՞ն. ապա խեղճ են. մէր էրէց, մեռնիմ բո աչուն. հալիֆ, հալիֆ, դէ վերէք, լաօ, դէ վերէք...

Երկու երիտասարդները կրկին վերցրէն իրանց թանկաղին բեռը և շարժուեցին դէսի

նկեղեցի. իսկ ծուռ Մանիշակն ալիդ միջոցին յետևներից քայլելով՝ կրկնում էր անդադար՝ «փառք Քե, Աստուած, փառք Քե, Աստուած»։ հասան եկեղեցուն և ներս մտան քանդուած դոնից: Ասիանցիները չէին խնայել և Աստուածու տունը. եկեղեցու կառւրը վլած էր, սեղանի քարերը քանդուած և շուռ տուած, խաչկալի մնացորդները դեռ ծխում էին, զարդ անօթեղէնից ոչինչ չէր մնացել: Յուղարկաւորները խորին երկիւղածութեամբ վար դրին դիակը և սկսեցին փորել յատակը. փորում էին դաշոյնով, սրով, ձեռներով, իսկ ծուռ Մանիշակը քաշում էր հողը զգէպի մի կողմ: Անցան ժամեր, փոսր փորուած էր, դիակը վերցրին տեղաւորեցին գերեզմանի մէջ և հողով ժամկեցին, իսկ Մանիշակը շարունակում էր կրկնել՝ «փառք Քե, Աստուած, փառք Քե, Աստուած»։ Դամբարանը պատրաստ էր, Ռաշիդը մէկ էլ ծունկ չոքեց, համբուրեց նուիրական հողակոյտը, նրա օքինաւին հետեւեցնակե Աւօն:

— Աւօ, ասաց Ռաշիդը, մէնք կատարեցինք մեր նուիրական պարտականութիւններից մէկը. այնքան ննջեցեալներ թաղող անձը մէզը էր, որ անթաղ մնար. տեսար, որ դադաններն էլ չէին պղծել տէրտէրիս սուրբ մարմինը. երեխ Աստուածու մատը կար այս

բանի մէջ. մնում է կատարել մեր երկրորդ պարտքը: Մէնք աշխարհի վրա այլ ես ոչինչ չունենք, որի համար արժենար ապրել. Եկ այս սուրբ գերեզմանի առաջ, այս սուրբ տաճարի մէջ ուխտենք վրէժինդիր լինել և ապա մեռնել խաղաղ հոգով:

— Իւաշիդ, Ճակատագիրը մեղ վաղուց է կապել իրար հետ. դու գիտես, որ մինչև իսկ քո անծնական վիշտն անգամ ես իմ վիշտն եմ համարել, քո ուրախութիւնը իմ ուրախութիւնն է եղել. այժմ, երբ ընդհանուր վիշտն է կապում մեղ, մի՞թէ ես յետ կը մնամ քեղանից, կը հեռանամ քեղանից. արա՛ ինչ կամենում ես, ես քեզ հետ եմ միշտ և իմ կեանքը քոնն է:

Նրանք գրկուեցին, համբուրուեցին, կրկին ծունկ չոքեցին, համբուրեցին Տէր-Մարուքի դամբարանը:

— Մանիշակ, մէնք կերթանք, դու մնա՛, զնա՛ չանդրքները թաղի. կերթան Մանիշակ, վարձքի է՛տ, քաշէ լից յորնի հորերը, ասաց Ռաշիդը:

— Եա՛, դո՞ր կերթաք, ասաց Մանիշակը, ձի մենակ կը թողնէք. դէ որ էս չափ, դացէք Տէրամօր օօտ, ճամփսէք թող կեալ մօտ ձի:

— Եա՛, իսա՛, Մանիշակ, դու քելա, էթամ Տէրամօր թամբխեմ կեալ մօտ քե, ասաց

Արաշիզը և երկու ընկերները դուրս գտղով  
եկեղեցուց անլայտացան խաւարի մէջ, իսկ  
պառաւը ծափ տալով, ցատկուելով կանչվրը-  
տելով կրկին վազեց դէպի դիակները:

— Սաքը էրէք, պոռաց նա, մըկաց Տիրա-  
մէր կուգալ, ապա առաջին դիակի ոտքից  
բռնելով սկսեց քաշել դէպի մօտակալ ցորենի  
հորը, յետոյ տարաւ երկրորդը, երրորդը, չոր-  
րորդը, մինչև որ փոսը լցուեց՝ ապա ձեռ-  
քերով չանգուելով գետինը՝ հողով ծածկեց  
տարօրինակ գերեզմանը՝ «փառք Քե, Աս-  
տուած» կրկնելով:

Երբ տեսնում էր գաղաններին դիակներ  
քաշը ելիս, նա դարհուրելի ծամաճութիւն-  
ներ էր անում, ճվճլում, պոռում՝ ճչում,  
ծվծլում, գաղանները փախչում էին և նա  
շարունակում էր քաշ տալ կիսով չափ  
կերուած, այլանդակուած դիակները դէպի  
հորերը:

Եւ մինչև լոյս դիւղի աւերակների մէջ  
լսում էր ծուռ Մանիշակի ձայնը, և մինչև  
լոյս ցորենի հորերը լցում էին դիակներով...

Սշուն էր. լեռներն ու դաշտերը կամաց-  
կամաց մերկացան. Նրանց կանաչաղարդ և  
գոյնղղոյն զգեստը փոխուեց, մահուան գեղնու-  
թիւնն ամենուրեք պատեց: Մեռնող բնու-  
թեան կեանքի վերջին նշոյներն էլ հետղհետէ-

քաղւում էին. գեղնած խոտերի և չորացած  
ժաղիկների մէջ տեղ-տեղ երեացող կանաչաւուն  
բարակ ծլերը և ուշացած ժաղիկները որբա-  
ցած սգաւոր մանուկների էին նմանում,  
որոնց վիճակուած էր անտերութիւնից զոհ  
գնալ աշխարհի պատահարներին ցուրտ լեռ-  
նային հովլ կատաղաբար փչում էր նրանց  
վրտ և նրանք տարուբերում էին իրանց  
խղճուկ վլուխները, որպէս վշտահար թշու-  
առներ: Երկնակամարը յածախ ծածկում էր  
թանձը միապաղազ թուխպերով և շատ ան-  
դամ օր ու գիշեր այդ սկացած ամպերից  
մանրամաղ կաթիլներով քամւում էր տնծծել՝  
ողողելով սարեր, ծորեր, գաշտեր: Բաւականին  
դդուի ցուրտ էր լինում մանաւանդ գիշեր-  
ները. լուսաբացին խաղաղ շրերի մակերևոյթը  
ծածկում էր շատ բարակ սառուցով, որ ա-  
ռաւօտեան արեկ առաջին ճառաղայթների  
թեթև տաքութիւնից հալւում էր կամ թա-  
փանցիկ կտորներով խաղում շրի երեսին՝ և  
այդ ժամանակ խիստ համելի էր որ և է  
պատի տակ որ և է թմբի կրծքին նստել  
արեկող անել յօրանշելով—արեկի տաքու-  
թիւնը գուր էր գալիս: Լուռ էին գաշտերն  
ու լեռները. աւելի և աւելի սակաւ. էին այն  
տեղերում մարդիկ երեսում, հովիւներն էին  
դեռ շարունակում դաշտ բշել իրանց հօտերը,

բայց նրանք էլ դադարել էին երդելուց, նրանց սրինգների ձախը չէր թնդացնում լեռները քաղցր արծագանքներով, հազիւ երբեմն մի լեռան լետեկից որ և է քիւրդ հնչում էր իր վայրենի «լոլօն», նա կանչում էր իր ընկերոջը, ով զիտէ՝ ինչու համար: Թռչուններն էլ թռել գնացել էին դէպի հարաւ, երբեմն երբեմն միայն ուշացած կռունկների մի երամ յայտնում էր երկնակամարի վրայ իր կիսաշրջան շղթայով և տիսուր, մելամաղձոտ կղղոցով վրդովում էր ընդհանուր խաղաղութիւնը. բայց այդ էլ տեսում էր մի քանի բոպէ միայն, սրանք էլ շտապում էին ժամ առաջ հեռանալ այս անհիւրընկալ դարձած աշխարհից դէպի հարաւ:

Ռաշիդը կորաւ. ասիանցիներն այլ ևս նրա մասին ոչ մի տեղեկութիւն չունեին. նրանք համոզուած էին, որ նա իր միւս հավրենակիցների պէս սահմանն անցաւ և գնաց կովկասում ապաստան և մի կտոր հաց վնդուելու. վաղուց էր, ինչ Ռաշիդը դադարել էր նրանց հետաքրքրել, աւերակ Բանսնի հետ մոռացութեան արուեց և նրա հերոս պաշտպանը: Ասիանցիները համարձակ տիրեցին Մարալայ սարերի ծաղկաւէս արօտատեղերին և ականակիտ աղբիւրներին և խազաղ վայելում էին իրանց յաղթութեան պտուղները: Բայց այդ

խաղաղութիւնը երկար չը տևեց: Մի օր յանկարծ հովիւները լուր բերին, թէ Աստուածածնի բլրի վրա և միւս սարերում զաչաղ շանֆիղանների մի խումբ է լոյս ընկել, որ օր ցերեկով յարձակումներ է գործում, սպանութիւններ է անում: Մի քանի որ յետոյ լեռնալին գետակը երկու ասիանցու զիխատուած, ալյանդակուած դիակ դուրս դցեց, և այնուհետեւ համարեա իւրաքանչիւր օր դաշտերում, լեռների մէջ, կամ գետում մէկ-երկու դիակներ էին յայտնուում կամ ասիանցիների, կամ ուրիշ էլիաթի քրդերի: Ասիանցիների էլիաթում ամենքն իրար զիպան, այլ ևս կասկածի տեղիք չը մնաց, որ լեռներում վտանգաւոր մարդիկ են բուն դրել: Հովիւները մանաւանդ առանձին զգուշութեան միջոցներ ծեռք առան. այլ ևս ոչ ոք իր ովսարները շատ հեռաւոր լեռները չէր քշում, ոմանք էլ իրանց հօտերը միացրին և 2—3 հոգով միասին էին արածացնում ոչխարները:

Անցան դարձեալ մի քանի օրեր. կրկին այս ու այն քարի տակ, այս ու այն ծորում գտնուեցին ասիանցիների դիակներ և դրա հետ միասին հովիւներն սկսեցին հաստատ հաւատացնել, թէ այդ «զաչաղները» ոչ այլ ոք են եթէ ոչ Աստուածածնի բլրի վրա բուռ դրած դեերը, որոնք ապրում են այնտեղ ծուռ

Մանիշակի հետ և ուշացած անցորդներին՝  
մտնաւանդ երեկոյեան պահուն, բռնում են,  
խեղդում, զցում գետը, կամ տանում, կոր-  
ցնում։ Առաջ էլ ասիանցիները համոզուած  
էին, որ այդ բլրի վրայի աւերակների մէջ  
գեեր կան, որոնք միայն ծուռ Մանիշակի  
բարեկամներն են, առաջ էլ նրանք գիշեր  
ժամանակ առանց սոսկումի չէին անցնում  
այդ տեղից, բայց այս անգամ այդ երկիւղն  
ու սոսկումը ահապին գարծաւ և ամենքն էլ  
համոզուեցին, որ այնտեղի դեերն են կոտո-  
րում մարդկանց և այդ բանը նրանք բացա-  
տրում էին իրանց այն անգթութիւններով, որ  
դորձեցին Բանոնում և ուրիշ տեղերում։  
Եղան նրանց մէջ նոյն իսկ մարդիկ, որոնք  
սկսեցին համարձակ կերպով դատապարտել  
այդ կոտորածները, որոնց պատճառով Աս-  
տուած այնպէս բարկացել էր նրանց վրա։  
Ծուռ Մանիշակն էլ արդարե շարունակում  
էր այնտեղ ապրել և երբեմն-երբեմն ցած էր  
իշնում, դալիս քրդերի մէջ հաց հաւաքում,  
ուտում, կամ փէշերը լցրած տանում. առաջ  
էլ նա սովոր էր երբեմն ասիանցիների մէջ  
իշնել, և նրան այստեղ էլ բոլորը ճանաչում  
էին և կերակրում էին։ Դեերի մասին ա-  
հաւաք լուրերից յետով ասիանցիներն սկսեցին  
ատելութեամբ վերաբերուել ծուռ Մանիշակին,

ոմանք էլ նրան բռնում էին ծեծում, հարց-  
նում, թէ ով կայ բլրի վրա. այդ բոլոր հար-  
ցերին ծուռ Մանիշակը պատասխանում էր  
զարհուրելի ծամածութիւններով և անհաս-  
կանալի բացականչութիւններով, կամ ծափ  
էր տալիս և մատների վրա արագ-արագ հա-  
մարում և մի ինչ որ բան մամալով փախ-  
չում էր գնում, հեռաւում կանգնում, չանչ  
անում և ծիծաղում ասիանցիների վրա։  
Ծուռ Մանիշակի այս բոլոր խորհրդաւոր  
շարժումները էլ աւելի մեծացրին ասիանցի-  
ների երկիւղը և ամենքը համոզուեցին, որ  
անպիտան «շիննին» (ծուռը) հացը դւերի  
հետ է ուտում Աստուածածնի բլրի վրա։ Եւ  
ոչ ոք այլ ևս երեկոյեան պահուն շատ ան-  
գամ նոյն իսկ ցերեկով այնտեղից չէր անց-  
նում։ Ընդհանուրի սարսափը աւելի կատա-  
րեալ եղաւ, երբ մի ծերունի պատճեց մի  
այսպիսի բան էլ, թէ շատ շատ տարիներ ա-  
ռաջ մի քիւրդ տուն է շինել, դուռ չի ունե-  
ցել, գիշերով գնացել է այն վանքի դուռը  
հանել, շալակել բերել է տուն, բայց ո՞քան  
մեծ է եղել իր սարսափը, երբ յանկարծ նկա-  
տել է, որ դուռը կպած է իր թիկունքից.  
Ինչքան աշխատել է պոկել, ցած դնել, չի կա-  
րողացել, սախալուած դուռը յետ է տարել,  
բողացել, սախալուած դուռը յետ է տարել,  
զրել է իր տեղում, և երբ փորձել է ցած

իշնել, հէնց այդ ժամանակ դեերը նրան բըռնել են զլիավայր ցած զլորել սարից քարերի մէջ, ուր նա չախչախուել է. առաւօտը նրա արիւնալուայ դիակն են բերել: Տինաւուրց այս գէպքի պատմութիւնը սկսեց բերանէ բերան պատմուել՝ ամենքի սրտերը սարսափով լրցնելով: Դեերը շարունակում էին անցորդներ որսալ, խեղդել, կամ սպանել, գետը զցել, իսկ ծուռ Մանիշակն էլ առաջուայ պէս անգագար գալիս էր, ճամածութիւններ անում, ճեծում, բայց և այնպէս՝ հաց առնում, գնում:

Մի ցուրտ գիշեր էր: Լեռնային մի դարասափի վրա ոչխարներին մաղալ տուած նստուել էին երեք ասիանցի հովիւներ. նրանք ուրեմն զլուխ զինուած էին:

Ա.թարի կրակը պլալում էր նրանց առաջ՝ իր գառն ծխի բարակ սիւնը զիշերային խաւարի մէջ կորցնելով: Շատ հեռուից երեւում էր այդ կրակը. պահապան շները շնթոկել էին հօտի այս ու այն կողմում և հսկում էին: Հովիւները խօսում էին անցած գնացած բաներից, մի-մի անգամ աթարի կտորտանք շարելով պլալացող կրակի վրա:

— Հայ զիգի համ... ասաց նրանցից մինը. մի ժամանակ մեր այս կողմերը ոչխար բերելը դադաղա էր (արգելուած). լաւ պրծանք բանցիներից ու Ռաշիդից:

— Պրծանք, վրա բերեց ընկերը, պրծանք, ամա մեր բէզին էլ վրան զրինք:

— Ռաշիդ, բալի Ռաշիդ, էլի հայիփն առաւ, լաւ առաւ. մարդը մի խօսքով՝ իդիթ էր, իգիթ: Եանի մեղքս ի՞նչ թաղցնեմ, ախպէր, ես շատ կափսոսալի, եթէ նրան սպանէին, լաւ, որ վախսաւ պրծաւ:

— Տեսնես ի՞նչ էլաւ Ռաշիդը ախըր, շարունակեց առաջինը, հէնց իզով թողով կորաւ համա...

— Կուռօնե՛ր, ասաց յանկարծ երրորդը, որ մինչեւ այդ ժամանակ լուռ լսում էր աչքերը կրակին յառած,—կուռօներ, մի բան ընկաւ միտս, էկ անիծած Ռաշիդը կորչող պտուղ չէր, արի՝ տես, որ մեր սարերի զաշաղը հէնց ինքը Ռաշիդը լինի. ի՞նչ դև, ի՞նչ բան, դևս մըն է, տօ: Նրա վաթանը մենք քարուքանդ արինք, նա էնպէս հեշտութեամբ մեզնից ձեռք մի բաշի, չի՞...

— Է՛հ, ի՞նչ ես ասում, շամէր (այ մարդ), ի՞նչ Ռաշիդ, ի՞նչ բան. մեր հասանը էն օրը տեսել է, թէ ինչպէս սարից իշել է դեր և ընկել իր քամակից, անշախ վախել է պրծել. մինչեւ հիմա էլ հիւնդէ. մէկ նրան հարցրու, տես ի՞նչ է, պատմում, ասում է, հաւատա՞ տես ի՞նչ է, պատմում, ասում է, հաւատա՞ բոյլ երկինք էր հասնում, ձեռներ ունի գերոյլ երկինք էր հասնում, ձեռներ ունի գերոյլ պէս, տաս մարդու չափ մի անգամ է բանի պէս,

քայլ ծգում, աչքերից, ասում է, կրակ էր թափում, էնպէս էլ ձէն էր հանում, էնպէս ձէն, որ Աստուած ազատի, մարդ զարդանդում էր: Զէ, շանրմ, դե է, դե:

Վերջինս իր խօսքը հազիւ էր վերջացրել, երբ շները կատաղի հաջոցով թռան և անլայտացան խաւարի մէջ: Երեք հովիւներն էլ մէկէն վեր թռան տեղներից, հրացանները առան և դէպի այն կողմը դիմեցին:

— Ո՞վ է, պոռաց հովիւներից մէկը:

— Աշիր եմ, լսելի եղաւ խաւարի միջից, քշեցէք շներին:

Հովիւները միասին երկիւղով առաջացան, շներին հալածեցին:

Յայտնուեց, որ եկողը մի հոգի է, ոտքից դլուխ զինուած:

— Եվարէ-բա-խէր (բարի իրիկուն), ասաց եկողը:

— Խէր հատի (բարի եկար), պատասխանեցին հովիւները, և միասին դէպի կրակը դիմելով՝ տեղ ցոյց տուին հիւրին կրակի առաջ, իրանք էլ հանդստացած՝ կրկին շարուեցին իրանց տեղերում: Այդ ժամանակ նրանք իրանց սովորականին համեմատ կրկին ողջունեցին նորեկին՝ աչ ձեռքները շրթունքների և ապա Ճակատի վրա դնելով, կամենալով ասել, թէ մեր զինուած:

Գիւր ես: Ապա սկսուեց սովորական հարց ու փորձը հիւրի ով լինելու և ճանապարհորդութեան նպատակի մասին. երեաց, որ եկողը շիկակների նւազի աղայի մարդկանցից է և գնում է նազո աղայի որդու՝ Հակի բէզի օգնութիւնը խնորելու թշնամի ցեղի դէմ: Ճանապարհորդին գիշերը վրա է հասել, ցուրաք նրան նեղել է, կրակ տեսնելով նա շեղուել է ճանապարհից, եկել է մի փոքր տաքանայ, հանգստանայ և անցնի:

— Խէր հատի (բարի եկար), գարձեալ կրկնեցին հովիւները նրա կարճ պատմութիւնը լսելուց յետոյ և բոլորովին հանգստացան. շները մոմուալով դնացին իրանց նախկին տեղերում շնթռելու, հովիւներից մէկը կրակի վրա տարթ շարելով սկսեց փէն, որը բորբոքուեց և առատ ծուխ արձակեց դէպի խաւար երկնակամարը և ապա կապտագոյն բոյերով սկսեց վառուել ու պլայլալ մի հաճելի չերմութիւն տարածելով իր շուրջը: Մի ուրիշ հովիւ քանդեց իր պարկը և մի կտոր պանիր և գարու հաց հանելով տուեց հիւրին ասելով:

— Ա՛ռ, անուշ արա, բրա, սոված կը լինես:

Հիւրն առաւ պանիրն ու հացը և սկսեց ախորժակով ուտել, պարզ էր, որ նա վաղուց բան չէր կերել:

Ընդհատուած խօսակցութիւնը կրկին շարունակուեց:

— Գիտե՞ս, բրա, ասաց մի հովիւ նորեկին դառնալով, այս կողմերում դաշաղ է լոյս ընկել, մենք ալսպիսի անօրինակ բան տեսած չէինք, ցաւն այն է, որ ոչ ոք էլ տեսած չէ այդ անիծած դաշաղին. մէկն ասում է՝ թէ դե է, միւսներն ասում են՝ թէ ջանվիւան է, արի ու բան հասկացի. իսկ այդ անիծած զաշաղը թէ գեր շարունակում է մերոնց կոտորել ու կոտորել, քանիսին սպանեց համ... շատերի դիակներն էլ չենք դտել, ասում են թէ փախցնում ուտառմ է; Ուաշիղից ու Բանոնից պրծանք, հիմա էլ այս զաշաղների—գերի կրակն ենք ընկել. լաւ որ դու սալամաթ եկար:

— Տօ ջամէր (այ ձարդ), ասաց նորեկը, զաշաղը մեզ ի՞նչ պիտի անէ, նա էլ մեզ նման մարդ չի, մեզ նման ծեռք ու ոտք չունի. ես զարմանում եմ, որ ասում էք՝ մեզ կոտորում են. տո դուք աշիր չ՞ք, որ ալսպիսի բաներ էք խօսում, ամօթ է՝ դես ո՞րն է, ես դերից հէջ չեմ վախենում:

— Այդ այդպէս է, ասաց դերի մասին կասկած յախոնող հովիւր. բայց արի տես, որ այդ զաշաղը կամ դեր հէնց ինքը Ուաշիղը լինի, այն ժամանակ վայն եկել է մեզ տարել.

նա հայիֆ կառնի, հայիֆ. ես ասում եմ, սրանք չեն հաւատում:

— Կուռօներ, գիտէք ի՞նչ կայ, ասաց մի հովիւ խորհրդաւոր եղանակով. ասում են, որ Ուաշիղին մեր ծեռքից ազատողը Զարէն է եղել, նրանց խուլամը (ժառան) տեսել է, թէ ինչպէս նա լալիս էր, երբ Ուաշիղին կապած բերին. ախր Զարէն ինչու պէտք է լար, եթէ նա մի ժամուկ բան չունէր: Մէկ էլ նրա բխօվներն ով բացեց, խօմ չարգել չեր կարող:

— Տօ, ի՞նչ ես խօսում, անխելք, այդպէս էլ բան կը լինի, ասաց հիւրը. Զարէն ինչու պէտք է նրան օդնէր փախչելու, նա չը գիտէր, որ Ուաշիղը «գեավուր-ֆլա» է... Մէկ էլ՝ ով ասաց, թէ նրա ոտները բացել են, նրա բխօվներն էլ հէջ չերկացին, ով գիտէ, ի՞նչ սատանալական միջոցով է փախել, Զարէն ինչու պէտք է նրան ազատէր:

— Ո՞վ գիտէ, ախպէր, շարունակեց առավնը, կնիկ աղքեն, դրանց հաւատալ չի լինի, շատ բաներ էլ են ասում... այ հիմայ էլ Ամին աղյօի տղան ուզում է Զարէին, բայց սա չի առնում. տղան վճռել է փախցնել, իսկ Զարէն խաբար է արել, ասել է, թէ փախցնեն, կամ երան կը սպանի կամ փախցնողին:

Այս տարօրինակ յայտնութիւնը բոլորի վրա  
էլ անախորժ տպաւորութիւն գործեց. մի  
փոքր ժամանակ տիրեց խորին լոռութիւն:

— Կուռօնե՞ր, ընդհատեց լոռութիւնը մի  
հովիւ, երնէկ նրան, ով կառնի Զարէին, մարդ  
նրա պէս կնիկ ունենայ, թոռուն է, թոռուն:

— Դու էլ թռուուն դտար էլի՛, վրա բերեց  
երկրորդը, ես իմ ֆլա-Մարօի մի ոտքը նրա  
զլիսի հետ չեմ փոխի. որ տեսնես էկ՝, կասես  
հիւրի փէրի լինի. ափսոս անիծածը շատ է  
նազ անում, շատ է տղտղում:

— Տօ, էտ ո՞րտեղից ես ճանկել, չը լինի՞  
թէ Բանոնից է, ասաց հիւրը:

— Բա ո՞րտեղից, անաշէն, էլ ով չը տա-  
րաւ, հիմա մեր էիի մէջ մերոնցից շատ ֆլա-  
կնիւներ իան, ենուն սիրունները, կապէս սի-  
րունները, չոկել ենք էկ՝, գէշերին կոտորե-  
ցինք: Մեր դըքները նախանձից տրաքւում  
են, ամեն օր կոխւ, դալմաղալ, ֆլաների հետ  
մէծւում են. օյին է, օյին: Բայց ես իմ կնկան  
չեմ թողնում Մարօի մաղին դիազի. շատ սի-  
րուն էկ... ափսոս, շատ է լալիս...

— Ինչու է լալիս, հետաքրքրուեց հիւրը:

— Երբ դիւղը կրակ տուինք, շարունակեց  
խօսակիցը. ես մտայ մի տուն. աեսնում եմ  
մարդ չը կայ, ընկայ բան-ման հաւաքելու,  
յանկարծ թօնդրից մի երեխալի ձայն եկաւ,

ծոփկ անեմ, տեսնեմ էտ իմ Մարօն երեխու-  
հետ կծկուել է թոնըի մէջ դուրս արի, ա-  
սացի, — դուրս կը գամ, ասայ, ամա քո բախ-  
տըն եմ ընկել, երեխուս խնայիր: Ես խօսք  
տուի, նա դուրս եկաւ: Տեսնում եմ, շատ  
սիրուն է, երեխան խլեցի, դէն դցեցի, իսկ իը  
ձեռքից բռնելով քաշ տուի: Մագեար գալի՛ ո  
է, «Երեխէս, երեխէս» գոչում էր անդաղար և  
ծղւում է դէպի երեխան: Ես սուրս բարձրացրի,  
ասում եմ՝ թէ չը դա, կը սպանեմ: — Սպանի՛ր  
ասում է, բայց առանց երեխուս չեմ դալ:  
Տերսն ինձ կարեց, իրան թողեցի, երեխային  
հասայ, թըով կէս արի. շան քամ, ասացի,  
դէ առ քեզ երեխայ, պրծամր... դէ գնանք.  
քաշ տուի, թուլացաւ, ընկաւ. ճարս կտրած  
շալակեցի տարպայ, հիմա լալիս է իր լուկում  
համար:

Ինչքան և ազօտ էր կրակի լոյսը, այնու-  
ամենայնիւ եթէ հովիւները ուշադրութեամբ  
նայէին, կարող էին աեսնել թէ ինչպէս այդ  
բոլոր պատմութեան ընթացքում նորեկի  
դէմքը մէրթ բորբոքւում էր, կարմրում,  
մէրթ սպրզնում, գունատուում, վերջին դէպ-  
քում նա ատամներն իրար վրայ էր սղմում,  
կրնառում, թուքը դժուարութեամբ կուլ տա-  
լիս, իսկ աչքերը վառւում էին մի անսովոր  
կատաղութեան կրակով. կարելի էր կարծել,

որ այդ մարդը գերմարդկային ճիզեր էր դորժ դնում խեղելու իր մէջ աւելի և աւելի զօրացող զարոյթի մի բուռն զգացմունք, որ մօտ էր պոռմկուելու նրա ուռած ու անհանդիստ կրծքից:

— Ախպէր, ես ֆլաներից բան չեմ տարել, ասաց երկրորդ հովիւր. ոչ կնիկ հասաւ ինձ, ոչ ապրանք, ես ուշ հասայ. բոլոր թալանից ինձ միայն մի դանակի կոթ է բաժին ընկել: Մի օր քշում եմ ոչխարներս, տեսնեմ շները դաշտում մի հատ մեծ դիակ են ուտում, անիծածի ոսկորներն այնպէս մեծ էին, այնպէս մեծ, արևն էլ տուել էր, ճենքը դուրս եկել, ոսկորները դեղնացրել: Թամահս եկաւ, պոկեցի կռան ոսկորը և տեսէք, թէ ինչ փառաւոր դանակի կոթ դուրս եկաւ. և նա ցոյց տուեց իր դանակը՝ դեղին ոսկէ կոթով:

— Դու բան չես տարել, վրա բերեց երրորդը, բա իմանաս ձեր Մահմուղի արածը. տնաշէնը շատ աղահ է, շատ աղահ: Թալանի օրն է, ես ու Մահմուղը տուն ենք դառնում. մի բարի տակից մի ծայն եկաւ. Մահմուղը կանդ առաւ. «Կաց, ասում է, այս տեղերը ֆլայի հոտ է դալիս»: Ման եկանք, մի շահէլ կնիկ՝ երեխան դրկին դտանք մի բարի յետեռում թագնուած: Անիծածն էլ լաւ հագնուած էր. դիտե՞ք, այդ շները միշտ այդպէս:

Են, փախչելու ժամանակ ամենալաւ շորերն են հագնում, որ տանեն հետները: Այս կնիկը մեղ տեսաւ թէ չէ, ընկաւ մեր ծիերի ոտների առաջ, աղաչեց թէ ինձ մի՛ սպանէք: Զենք սպանիլ, ասացինք, միայն դու խօսք տուր մեզ հետ գալ և կրօնդ փոխել: — Հա՛, կը փոխեմ ասաց, միայն ինձ ու երեխայիս խնայեցէք, մի՛ սպանէք... Դէ առաջ ընկիր դնանք, ասացինք: Գնացինք: Ճանապարհին ես Մահմուղին ասում եմ՝ Կուռօ, մենք լաւ կնիկներ տարել ենք, սա էլ էնքան սիրուն չի, ինչներիս է պէտք: Թողնենք կորչի երթայ, դուր ենք տանում, գլխներիս ցաւ շինում:

— «Զէ, պէտք է տանեմ, ասում է, աւել թիքան աչք չի հանի:

— «Ճեսայ ագանութիւն է անում, սուս կացայ: Մի քիչ էլ գնացինք, յանկարծ Մահմուղը դարձաւ դէպի ինձ. — «Գիտես ի՞նչ կայ, ասաց, ես էլ փոշմանեցի, նայում եմ այդ քածին, դուրբս չի դալիս, սպանենք, անցնենք. ափսոս միայն շորերին եմ դալիս, կարիւնոտունն»: — Այդ բանը դու ինձ յանձնիր ասացի, ես սրան այնպէս կը սպանեմ, որ շորերի վրա մի կաթիլ արիւն էլ չի թափուի: Մենք առաջ գնացինք և հասանք մի առուել:

— «Է՞լ, կնիկ, ձայն տուի ես. կաց, լաւ որ առուի հասանք. դէ՛ շուտ, շորերդ հան

մտիր ջուրը լողացիր, մաքրուիր, որ կրօնդ փոխես, դառնաս մեր կրօնին։ Կնիկն աղաչանք պաղատանք ընկաւ, թէ ամօթ է, ախր ձեզ մօտ ես ի՞նչպէս շորերս հանեմ, տկլորանամ, թողէք տուն համնենք, այնտեղ կը լողանամ՝ ձեր ուղածի պէս։ Ես ականչ չարի։ Զէ, իլլահ պէտք է այստեղ լողանաս, ասացի։ Տեսաւ ճար չը կայ, սկսեց շորերը հանել, մենք էլ նայում, թամաշա էինք անում։ Մտաւ ջուրը լողացաւ, դուրս եկաւ, որ շորերը հագնի, ասացի՝ կնիկ, դեռ շորերդ մի հագնիր, կաց այսպէս, տեսնենք սիրուն ես։ Նա երեսը մեզ դարձրեց, կանդ առաւ, ամաչելով, կծկուելով։ Դէ շուտ արի, միւս կողմդ էլ նայենք. նա շուռ եկաւ, մէջքը դէպի մեզ. ես այդ բոպէին հրացանս քաշեցի և հէնց մէջքից տուեցի, վեր ընկաւ երեխայի մօտ և շունչը փեց։ Մտեցանք շորերը հաւաքեցինք, իսկ երեխան այդ ժամանակ թաթերով դէպի մօր մարմինը դնաց և ձեռներն արեան մէջ թաթախելով՝ սկսեց զարկել մօր մարմնին, խաղալ, և մէկ մեղ եր նայում, միժաղում, մէկ՝ մօրը։ Մենք ձիերս բշեցինք և...

Այս խօսքի վրա հիւրը յանկարծ ոտքի կանգնեց և կատաղած որոտաց ահուելի ձայնով.

— Այս, դուք անաստուած զաղաններ, այժմ ով կաղատէ ձեզ Ռաշիդի վրէժխնդրու-

թիւնից... Աւօ, գոչեց նա ահազնազղորդ ձայնով և սարերում արծագանքը կրկնուեց՝ «օօօ»։ Ռաշիդի տնունը, որոտալից ձայնը սարսափով պատեց երեքին էլ և մինչև որ նրանք կը կարողանային փախչելու կամ պաշտպանելու մասին մտածել, Ռաշիդի հրացանը որոտաց և վերջին պատմութիւնն անողը թրսլրտաց իր արեան մէջ, սոսկալի խոխոց արձակելով։ Նոյն ժամին, խաւարի միջից յայտնուեց Աւօն. այս նոր մարդու երևալը միանգամայն որտանաք արաւ մնացած երկսին, որոնք կարծեցին թէ բազմաթիւ թշնամիներով են շրջապատուած և սկսեցին փախչել. բայց Աւօի գնդակը երկրորդին էլ տապալեց. երրորդը միայն կարողացաւ անհետանալ խաւարի մէջ։

«Հաւար, հաւար», լսուեց ամենայն կողմից. ասիանցիների ամբողջ էլիաթը՝ մարդ թէ կին, ծեր թէ մանուկ, տղայ թէ աղջիկ, ով միայն կարող էր որ և է զէնք վերցնել, որ և է կերպով օդնել իւրայիններին՝ գուրս եկան վրաններից, և ով ինչպէս կարող էր զինուեց։ Բերանէ բերան թռչում էր այն յուղիչ լուրը, թէ զեղաչաղն ինքը Ռաշիդն է՝ կատաղի բաշերի հետ միացած. և ահա այդ սարսափելի խումբն է, որ վերջին ամիսների ընթացքում ահ ու սարսափի է տարածել լեռներում։

Այդպիսի պատմութիւնից յետոյ թէ պատմողը և թէ լուղը միաբերան գոռում էին՝ «հաւար, հաւար»։ Ամենը քաշալերում էին իրար, վառում էր ընդհանուր ֆանատիկոսութիւնը դէպի այդ մի բուռն ֆլաները, որոնք իրանց յանդուզն յարձակումներով այնքան զոհեր էին խել նրանցից, այնքան սարսափ տարածել նրանց մէջ։ Պէտք էր և այս խմբից ազատուել, և ահա ամենը վճռական գործողութիւնների համար վազում էին։ Քիչ յետոյ բոլոր զինուած բազմութիւնը դիմեց դէպի դաշտ։ Կանաչը ու աղջիկները յետ չը մնացին տղամարդկանցից, նրանք էլ էին վազում, սրպէս զի գոնէ մի-մի քար զարկեն այդ անիծած զաշաղների զլիին, որոնք այնքան շատերին ալրիացրին։

Լոյսը բացուելու վրա էր, երբ դէպի Աստուածածնի բլուրը վազող Ռաշիդն ու Աւօն յետ նայելով՝ տեսան ահազին աղմկուող բազմութիւնը, որ սեին էր տալիս դաշտում։ Հայնովանքի, նղովի և սպառնալիքի ձայները հարիւրաւոր բերաններից թռչով հասնում էին նրանց ականջին։ Նրանք զգացին, որ վճռական ըոպէ է մօտենում։ Վախչել անյաւտանալ աւելի հեռու տեղ, կամ պաշտպանութիւն փնդրել որ և է մէկի մօտ՝ անհնարին էր։ միակ ելքը ժամ տռաշ Աստուածածնի

բլուրը բարձրանալն էր։ Եթէ հետքերը ը գտնեն, կամ չը վստահանան բարձրանալ՝ նրանց կարծիքով այդ գեերի բոյնը, լաւ կը լինի, մտածում էինք նրանք, իսկ եթէ յամառ կերպով հալածեն և փորձեն զագամը բարձրանալ, այն ժամանակ թող Աստուածոյ կամքը լինի, գոնէ նրանք կը կարողանան մի քանի տասնեակ էլ իրանց հալրենիքի արիւնարբութշնամիներից այն աշխարհն ուղարկելու—վրէժինդրութեամբ լցուած, բորբոքուած սրտերի համար դա կը լինի մի քանի կաթիլ զովացուցիչ յօղ։ Եւ նրանք Աստուածուն յանձնելով իրանց՝ զօռ տուեցին ոտներին։ Առաւոտեան աղջամուղչն օգնում էր փախստականներին, թշնամիները գեռ նրանց չէին տեսնում, բայց և այնպէս շտապում վազում էին դէպի Աստուածածնի բլուրը, նրանց բնազդով թւում էր, որ այդ բլրակը պիտի լինի զաշաղների ապաստանը, չէ՞ որ այդ տեղից էր միշտ իշնում մարդակեր դեր։ Դաշտերն ու լեռները թնդում էին խառնիճաղանձ ծայների արձագանքներից, որոնք առաւոտեան զով օդի մէջ աւելի հեշտութեամբ և աւելի հեռու էին տարածւում ու կրկնուում հաղար ու մի եղանակով։ Անընդհատ լսւում էր հրացանների սրոտը, ասիանցիները կրակ էին տալիս տառոտը, ասիանցիները կրակ էին տալիս տառոտը, աննպատակ, առանց թշնամութեան մէջ աննպատակ,

մուս տեսնելու, ընդհանուր զայրովթով և  
վրէժխնզրութեամբ լցուած բաղմութիւնը  
ինքն իրան հաշիւ չէր տալիս իր արածի  
համար, նրա գործողութիւնները որոշ կարգի,  
չափի տակ չէին ընկնում, մարդիկ զիտէին  
միայն, որ առաջներին թշնամի կայ և որ  
պէտք է հրացան կրակել և վազել: Փախստա-  
կանները չէին պատասխանում՝ կրկնակի նպա-  
տակով. նախ՝ որ խնայում էին իրանց փամ-  
փուշտի պաշարը աւելի նեղ ժամանակի հա-  
մար, և երկրորդ չէին կամենում մատնել  
իրանց տեղը. նրանք դաղտագողի, քարերի  
ետեից, փոսերի միջից շտապում էին զէպի  
բլուրը: Ահա վերջապէս նրանք բլրի ստորոտի  
դառիվայրի վրա են: Լոյսը բացուեց, տսիան-  
ցիք նկատեցին, թէ ինչպէս երկու հոգի  
շտապ զէպի բլուրն են բարձրանում. զայրովելի  
մի ընդհանուր աղաղակ դուրս թռաւ ամենքի  
կրծքից—«սէր պսան ֆլա» (շան տղայ հայ),  
գոռացին ամենքը և հրացանները կրկին միան-  
դամից որոտացին: Աւօն կուրծքը բռնեց և  
ընկաւ, վերը մահացու էր: Այս դժբաղդու-  
թիւնը սոսկում աղղեց Ռաշիդին: Ինչ անելը չի-  
մանալով նա սկզբում կանգնած մնաց, և ապա  
թէ ուշքի գալով հասկացաւ, որ ուրիշ ելք չը  
կայ, ուստի և վճռեց կանգնել ընկերոջ մօտ և  
մինչև մահ պաշտպանել նրան իր կրծքով.

— Ռաշիդ... ես մեռնում եմ... փախիր և ազա-  
տուիր... գոնէ զու... ես...

Աւօն, Աւօն... քեզ թողնել...

— Փախիր, Եղաւ պատասխանը և Աւօն  
շունչը փչեց:

Էլ նար չը կար. Ռաշիդը խորեն ցաւով  
ստիպուեց շորունակել իր փախուստը մենակ:  
Նա բարձրանում էր աշխատելով՝ որքան կա-  
րելի է պաշտպանուած զիրքի մէջ լինել քա-  
րերի յետեւում: Ահա վերջապէս նա բլրի կա-  
տարի վրա է. ահա նա յետ դարձաւ և հրա-  
ցանիմի հատիկ-հատիկ պայմիւններով գնդակներ  
է զցում զէպի վար, դէպի ստորոտը, ուր հասել է  
թշնամիների բաղմութիւնը, որոնք իրար են  
խառնուել, աղմկում, ճշում են: Ռաշիդի զին-  
գակներն ապարգիւն չեն անցնում. նրա հրա-  
ցանի ամեն մի ձայնից յետոյ ներքեւում մէկն  
ու մէկը ոռնոցով վայր է զլորւում և բաղ-  
մութիւնը զարհուրելի նղովեի աղաղակ է  
բարձրացնում, բայց և ոչ ոք չի շտապում  
բլուրն ի վեր բարձրանալ: Նրանք դեռ խոր-  
հում են այն մասին, թէ արդեօք բարձրա-  
նալ թէ ոչ. նրանք համոզուած են, որ բայի  
այս մէկից բլրի գագաթին՝ ով զիտէ քանի  
հարիւր մարդակերներ կան դարան մտած և  
թէ այս մէկը միմիայն նրանց վեր հանելու  
նպատակով է մէճ-մէճակ տնկուել բլրի ծալքին

և անվախ ու համարձակ գնդակներ է թափում այս ահագին բազմութեան վրա: Ումանք առաջարկում էին յետ դառնալ՝ բոլոր աշխրէթներին լուր տալ և մի քանի հազարավ միասին յարձակուել, ուրիշները ամօթ էին համարում փախչել մի խումբ ֆլաների առաջից. իսկ Ռաշիդը շարունակում էր գնդակները թափել թշնամիների գյխին:

— Պօյ պօյ, Ծաշիդ, ես էլ եկալ, յանկարծ  
կոչեց ծուռ Մանիշակը և ովզ զիտէ որտեղից  
ցցուեց Ծաշիդի կողքին։ Նա կատաղարար  
սկսեց սարից քարեր պոկել և զլորել գէպի  
թշնամիները։ Նրա գէմքը սարսափելի էր, աչ-  
քերը վառւում էին, բերանը ծռուած էր մի  
կողմք, նա զարհուրելի աղազակ էր բարձրաց-  
նում քարերը զլորելով։ Եւ մինչդզեռ բազմու-  
թիւնն այսպիս շարունակում էր տատանուել,  
վիճել, աղմկուել, յանկարծ մի վերին աստի-  
նանի անսպասելի բան պատահեց, — բլրի կա-  
տարին հէնց Ծաշիդի կողքին քրդական  
տարագով մի գեղեցիկ աղջիկ երևաց, և նրանք  
երկսով անմիշապէս հեռանալով անյալտացան  
բլրի աւերակների մէջ, ծուռ Մանիշակին մէնակ  
թողնելով՝ կոռւելու ահազին բազմութեան հետ։  
Սկս բանը տեսան ամենքը, բայց ոչ ոք չէր  
հաւատառմ իր աչքերին։ ախր ի՞նչ գործ ունէր  
ասիանցու աղջիկն այնտեղ. ով է նա, ի՞նչպէս,

Ե՞րբ և ի՞նչու համար պիտի բարձրանար  
այնտեղ, ահա՝ այն հարցերը, որ տալիս էին  
իրար, բայց ոչ ոք չեր կարողանում գտնացու-  
ցիչ պատասխան տալ: Ոմանք նրան մի չար  
ոզի էին համարում, որ երեաց այնտեղ իրանց  
խաբելու, վերև հանելու համար, որ կոտո-  
րուեն. ուրիշներն ասում էին, որ նա աղջկաչ  
շորեր հազած մի տղամարդ է, որ ով գիտէ  
ի՞նչ չար նպատակով է ալգակէս ալլափօխուել,  
և ամենքին պատեց նախապաշարմունքի,  
սնահաւատութեան սարսափը, ամենքը եկան  
այն համոզման, որ վտանգաւոր է բարձրա-  
նալ այդ գեերի բոյնը և արդէն պատրաստ-  
ում էին յետ գառնալ, փախչել, երբ բաղմու-  
թիւնից մէկը յանկարծ գոռաց.

— զարէն է՛ր...

— Զարէն է՞ր, Զարէն է՞ր, կոչեցին այստեղից, այնտեղից մի քանի ձավներ. Զարէն է անհաւատների մօտ բարձրացել:

ապահանասնը առ բարեկարգ կատարի  
Եւ նրանք չը սխալուեցին, բլրի կատարի  
ովին ոչ այլ ոք էր, բայց եթէ Զարէն: Հենց  
այն բողէից, երբ հաւարն ընկաւ և յախանի  
եղաւ, որ բազմութիւնը Ռաշիդի վրա է  
գնում, Զարէն վճռեց ինչպէս և լինի Ռաշիդին  
հասնել, նրան մենակ չը թողնել այդ ծանր  
ժամին, կամ նրա հետ աղասուել, կամ նրա  
հետ մեռնել: Բազմութեան հետ նա ել դաշտ

վաղեց, ամենից արագ, ամենից առաջ: Բլրի ստորոտում բաղմութեան սպասելը, տատանուելը մի յարմար միջոց եղաւ նրա համար իր նպատակին հասնելու և մինչդեռ ասիսնցիները մտածում էին՝ բարձրանալ թէ ոչ, Զարէն բլրի հակառակ կողմից, համարեա անմատչելի տեղերից ամենից ծածուկ, արհամարելով ամեն մի վտանդ, գաղտնազողի կերպով բարձրացաւ, կախուելով մացառներից, չանգուելով ժայռերը, արիւնուելով ծեռներն ու ոտները: Սա մի աննման հերոսութիւն էր, որ յանձն առաւ ի սէր Ռաշիդի այս տարօրինակ լեռնական աղջիկը, և զլուխ տարաւ անսպասելի աշողութեամբ: Ապշութիւնը և հիացմունքը տիրեց Ռաշիդին, երբ յանկարծ տեսաւ իր մօտ Զարէին, արիւնաթաթախ, հեալով, քրտնաթոր: Նրա ծեռները թուլացան, մի անսահման հանելի, մի դուրեկան դդացողութիւն անցաւ նրա ամբողջ մարմնով և ախորժելի կերպով սարսուեցրեց նրա ամբողջ մարմինը, երբ զդաց իր ծեռքի մէջ սիրած աղջկայ դողդոչուն ծեռքը, երբ առաւ իր զրկի մէջ նրա մարմինը: Էլ ինչու կոռու, մտածում էր նա, վրէժինդիրութիւնը յագեցած է, նա այժմ երշանիկ է, սիրած էակը իր մօտն է, մահը նրան այլ ևս սարսափելի չէ, այսքան երշանկութեան համար նա պատրաստ

է հաղար անգամ մահ ընդունել: Այսքան անձնուիրութիւն, այսքան սէր մի լեռնական աղջկայ մէջ՝ նա երեակայել անգամ չէր կարող: Այժմ միայն զգաց, թէ ի՞նչպիսի սիրու էր բարախում այս անվեհեր հերոսուհու կրծքի տակ և նրա հոգին համակրւեց մի անսահման ցաւով այս պարզ անմեղ աղջկայ համար, որ կամաւ իր բաղդը նրա բաղդի հետ է միացրել և յանձն է առել նրա սիրոյ համար այսքան անօրինակ մարտիրոսութիւն: Ռաշիդն իր սիրած մէկ լնկերից զրկուել էր բաղդը էր նրա համար այս երկրորդն ունենալ, ուստի նա վճռեց ամեն հնար գործ գնել աղատուել, ապրել Զարէի համար: Կեանքի մասին նա մինչեւ այժմ շատ քիչ էր մտածում, որովհեաւ կորցրել էր ամեն ինչ, կեանքը ներկայանում էր նրա համար որպէս մի սոսկալի դատարկութիւն, բայց այս աղջկայ անօրինակ սէրը լցրեց այդ դատարկութիւնը և նա վճռեց շնչել, ապրել և փայտայել իր Զարէին... Ոյս մտքերով բռնուած, Ռաշիդը Զարէի հետ միասին շապառվ շարժուեց բլրի զանազան կողմէրը փախչելու մի ճանապարհ վնասուելով, բայց նրա յուսերն ի գերեւ անցան, բլուրը բոլոր բաց կողմերից շրջապատուած էր թրշնամիներով, աղատ էր մնում միայն մի կողմը, որ աեղից շառաչելով հոսում էր որբնթաց,

կատաղի գետակը: Յուսահատ ու խորտակուած սրտով նրանք յետ դարձան և շուարած մնացին աւերակների մէջ կանդնած:

— Զարէն էր, կրկին պոռաց բաղմութիւնը բլրի ստորոտում, երբ ամեն տեղ փնդրելով, նրան չը դտան, մինչդեռ ճանապարհին նրան ամենքն էլ տեսել էին՝ յուղուած, մտախոհ::

Զարէն էր, նզովը նրա դլխին, մոմուացին ամենքը և սկսեցին չորս կողմից բարձրանալ դէպի բլուրը զարհուրելի աղաղակներով: Այդ աւսնելով՝ ծուռ Մանիշակը վաղէվազ եկաւ և առանց մի բառ ասելու բռնեց Ռաշիդի ծեռքից և շտապով զիմեց դէպի գետակը: Ինչ էր կամենում նա անել, այդ չը դիտէին Ռաշիդն ու Զարէն, բայց ուրիշ որ և է հնար չունենալով՝ նրանք դնացին նրա ետևից: Ծուռ Մանիշակը մօտենալով այն տեղին, ուր ժայռի հատուածը իշնում էր դէպի դետակը, կանդ առաւ. այստեղ բարձրանում էր աւերակ մենաստանի խորանի մի պատը, իսկ այդ պատի հիմքի մօտ բուսել էին հաղարճի բաղմաթիւ թփեր. պառաւն շտապով յետ քաշեց այդ թփերը և բացուեց մի պտուտակաւոր անցք, որ ոլոր մոլոր շաւիղներով իշնում էր դէպի գետի յատակը: Հինօրեայ մենաստանի առաջին բնակիչները երեխ փո-

րել էին այս անցքը վտանգաւոր ժամանակ գետից ջուր վերցնելու համար. սա մի կատարեալ երկնային պարդե էր: Ռաշիդը մինչև այժմ այդ անցքի գոյութեան մասին ոչինչ չը դիտէին և ուրիշները իսկ պառաւը նրանքից էր իմացել, այդ միայն ինքը դիտէր: Երկու սիրահարները շտապով ցած թռան այդ փոսի մէջ և շարունակեցին ցած իշնել, մինչև ծուռ Մանիշակը թփերը կարգի բերեց հորի անցքի վրա և հեռացաւ գնաց: Հէնց այդ ժամանակ զինուած ու կատաղած բաղմութիւնը կատարեին հասնելով՝ սկսեց վլնդուել իր զոհերին, բայց նրանց չանքերն ի զուր անցան. նրանց առաջ ներկայացաւ միայն ծամածութիւններ անող պառաւը, որ կասես թէ ծաղըում էր այդ բազմութեանը: Ընդհանուր կատաղութեանը չափ չը կար:

— Ի՞նչ եղան նրանք, հարցնում են նրան ամեն կողմից հարուածելով:

— Պօյ պօյ, չեմ գինա, սարը կերաւ, չեմ զինայ, սարը կերաւ, անդադար կրկնում էր պառաւը ի պատասխան նրանց բոլոր հարցերին:

Զալբորթով լցուած ասիանցիները քաշառուին պառաւին դէպի ժայռի բարձր բարակաւոր անցքի վայր դորեցին նրան վր և բոլոր թափով վայր դորեցին նրան

անգունդի մէջ, ուր գոռում էր դետակը՝ վրորելով իր պղտոր ալիքները:

Իսկ այդ ժամանակ Ռաշիդն ու Զարէն նստած էին իրանց խոր ապաստարանում, և սկզբում բաւական ժամանակ լուռ ականչ էին դնում մերթ գետի շառաչին, որ այստեղ աւելի դօրեղ էր լսում, և մերթ վերեկց լսող աղաղակներին:

Վերջապէս լռութիւնն ընդհատեց Ռաշիդը:  
— Զարէ չան, այս ի՞նչ արիր, ասաց Ռաշիդը, ախր ինչու եկար, մի թէ չեիր հասկանում, որ իմ կեանքը վտանգի մէջ է, որ ես դլուխ դնելու տեղ չունեմ:

— Ո՞, Ռաշիդ չան, դու Զարէին դեռ չես ձանաչում, պատասխանեց աղջիկը, խաւարի մէջ աւելի և աւելի մօտ կաչելով սիրած երիտասարդին. Ես եկայ հէնց այն պատճառով, որ դու վտանգի մէջ ես. Էլ ինչու մնայի, Երբ պէտք է դու վտանգուէիր, չէ՞ որ քո մահր իմ մահն էլ է. լաւ չէ՞ր դո՞նէ քեզ հետ միասին մեռնել. Ես եկայ, որ յոյց տամ, թէ արժանի եմ եղել իմ անման Ռաշիդին:

— Բայց դու մոռացար, Զարէ, որ ես մեր ցեղի, նոյն իսկ մեր տան թշնամին եմ, քանիսին սպանեցի ձերոնցից: Ամաչում եմ ասել, ես իմ կեանքով քեզ եմ պարտական, դու ինձ աղատեցիր, իսկ ես քո հօրն էլ չը խնայեցի,

Ես... Ես... չէի կարող դու զիտես, իմ վաթանը... իմ ծնողները...

Նա չը կարողացաւ շարունակել, ծայնը կերկերաց և լոեց, աղջիկն զգաց իր ծեռքի վրա մի կաթիլ տաք արտասուր, ուստի մօտեցաւ և համբուրեց նրա աչքերը ասելով.

— Լսիր, Ռաշիդ չան, մի խօսիր այդ բաների մասին, մենք ասիանցիներս արեան տեղ՝ արիւն, զոհի տեղ՝ զոհ, թալանի տեղ՝ թալան և սիրոյ փոխարէն սէր տալ զիտենք: Դու ես սպանել իմ հօրը, ես ալդ զիտեմ, հապա քո հօրը... քո վաթանը... Ո՞, Ռաշիդ, մեր վիճակը նոյնն է, բացի սիրուց մենք իրար այլ ես պարտական չենք: Երբ դուրս գանք այս տեղից, առ և տար ինձ այնտեղ, ուր ձեր ֆլաները շատ են. Ես էլ ֆլա կը գառնամ: Յիշում ե՞ս, ես քեզ առաջ էլ ասացի, այն ժամանակ չը համաձայնեցիր: Կը տանե՞ս ինձ, Ռաշիդ չան, համ, կը տանե՞ս... կը կնում էր աղջիկը վաթաթուելով իր սիրածի պարանոցին,

— Կը տանեմ, կը տանեմ, Զարէ չան, էլ ի՞նչ մնաց ինձ այստեղ, որ մնամ: Սպասիր գիշերը վրա հասնի, նրանք հեռանան:

Երկու սիրահարները, սիրոյ բուռն արտայալութեան գիրկն ընկած, երեակայել ան-

գամ չը կարողացան, թէ ի՞նչ սարսափելի վախճան ունեցաւ խեղճ պառաւր:

Իսկ թշնամիները բլրի վրա երկար փնդուելուց յետոյ վերջապէս համոզուեցին, որ երկու սիրահարները, երեխ յուսահատուած, ժայռի կատարից ցած են զլորուել դետի մէջ և այնտեղ մահ գտել... Այդ մտքով մասամբ դոհացած՝ նրանք կամաց-կամաց թողին հեռացան:

Հասաւ խաւար զիշերը, նրա հետ միասին հասաւ նաև Ռաշիդի և Զարէի փրկութեան ժամը...

1897 թ.

## Բ Ա Շ Ո Ն

Աշնան վերջն էր: Վաղ առաւօտեան ցուրտը խիստ զգալի էր. պարզկայ, ցուրտ զիշերուայ հետքերն երեւում էին. սառած, կարծրացած գետինը ծածկուած էր եղեամի նուրբ, բազմանկիւն թերթիկների բարակ սփոնցով: Դա մի սիրուն, սպիտակ քող էր, որ կարծես զիշերային ցրտից կուչ եկած, մրսած գետինը շտապել էր զցել իր վրա, ծածկել իր մերկութիւնը, և այդպիսով մի փոքր տաքանալ, նիրհել մինչեւ արեխ ծագումը: Հորիզոնը եղերող լեռնաշղթալի ամենաբարձր գագաթները, որոնք անհոգութեամբ ցցուել էին իրար կողքի, նոյնպէս սպիտակ էին. ծօտեցող ծմեռը իր տիրապետութիւնը հաստատել էր այնտեղ, նրանք արդէն ձիւնով ծածկուած էին և սպառնալից հայեացքով նայում էին գէպի վար, գէպի իրանց ոտների տակ սփոռուող դաշտն ու զիւղերը:

Ճերմակ հաղնուած լեռների թիկունքից  
արեղակը բացեց իր կենսատու աչքը. երկիրն  
էլ կարծես հէնց դրան էր սպասում. նո դէն  
զցեց իր վրա փռած թափանցիկ, փայլուն  
քօղը. սառած գետինը մի առանձին հաճուքով  
սկսեց ներս ժձել արեկի տաքութիւնը, որ  
բիւրաւոր ճառագայթներով թափում էր ա-  
նամպ, չինչ երկնակամարից: Գետնից խիստ  
թափանցիկ, հազիւ նկատելի գոլորշի էր բար-  
ձրանում, ամբողջ գիշերը շունչը պահած,  
մնջած երկիրը կասես այժմ էր միայն ադա-  
հաբար շունչ առնում. արեգակը շոյում էր  
նրան: Սակայն պատերի ստուերները դեռ մի  
առանձին հաճուքով շարունակում էին պահ-  
պանել անցած գիշերուայ ցրտի նշանները.  
այդ աեղերում գեռ փայլում էր եղւամի սպի-  
տակ շերտը իր ծրացնող տեսքով: Խաւարն  
ու ստուերը եղբարներ են, առաջինի սկսածը՝  
երկրորդը յամառութեամբ շարունակում էր:

Դէպի արեելք նայող պատերի տակ համե-  
լի էր կունուռուել, նստել. այդ տեղերում ա-  
րել նիրհեցնող քնքշութեամբ շոյում էր մերկ  
մարմինը. տաքութիւնն առատ էր այնտեղ:  
Դաժան ձմեռուայ խստութիւնները կրող ա-  
մեն մի թշուառ, ամեն մի մուրացիկ քաղցր  
իշողութիւններ է պահպանում աշնանալին  
պատերի տակ տաքացնող արեկի մասին: Դա

մի անցած երշանկութիւն է, որի մասին երա-  
զելն անդամ ախորժելի է լինում խեղճերին:

Օրը կիրակի էր. Ի... աւանի խանութները  
փակ էին. բայց չը նայելով դրան, վաղ առա-  
ւոտից շուկայում մի արտասովոր կենդանու-  
թիւն էր սկսուել: Աշունը, մանաւանդ ուշ  
աշունը, տենդալին գործունէութեան, կենսա-  
կան ատզնապի մի շրջան է մարդկանց հա-  
մար: Այն անհաճոյ, խստասիրտ հիւրը, որ  
ձմեռ անունն է կրում, այդ ժամանակ զգաց-  
ում է ամենուրեք բնութեան մէջ: Անսանձ  
ու ցուրտ հողմերը, իրանց անախորժ շու-  
կով, սուր վզվզոցով սարսեցուցիչ բաներ են  
պատմում այդ անխուսափելի հիւրի մասին:  
Թէկ միայն խեղճութիւնն է գողում այդ  
սպառնալի ծայներից, բայց և այնպէս ամենըն  
են շտապում, ամենըն են անհանգիստ լինում.  
ունեոր և չունեոր, բախտաւոր ու թշուառ  
հաւասար եռանդով սկսում են պատրաստու-  
թիւններ տեսնել, որ դաժան հիւրի գալս-  
տեանն անպատրաստ չը գտնուեն: Գիւղացին  
այդ ժամանակ շտապում է իր արդար քըր-  
տինքի պտուղները, Աստուծոյ տուած բարիքը  
դաշտերից հաւաքել, ծառերից պոկել, գետնից  
դուրս հանել, տուն բերել, կամ քաղաք տա-  
նել վաճառել. իսկ բաղաքարիցն ամբողջ տա-  
րին վաստակարեկ զիւղացիներից կամաց-կա-

մաց դուրս կորզած դրամի մի մասը այժմ  
ստիպուած է կամայ ակամայ յետ տալ իր  
նախկին աիրոջը, — նա իր ծմեռուայ անհրա-  
ժշտ պաշարը պիտի գնէ դիւղացիներից:

Այդ օրը ի... տւանի շուկայումն էլ զերերը  
փուխուել էին. վաճառողն այս անդամ երկրա-  
գործ դիւղացին էր, գնողը՝ վաճառական քա-  
ղաքացին: Շուկայի ընդարձակ հրապարակը  
ծածկող գեղկական սալլերն ի՞նչ բարիք ա-  
սես, որ չէին բերել: Բաղմակեղու և բաղմա-  
տարակ խայտաբղետ ամբոխը լցրել էր շու-  
կայի ամեն մի տնկիւնը և բոլոր խօսակցու-  
թիւնը, աղաղակը, հայհոյանքը, կանչն ու  
ծիծաղը միախառնուելով՝ կաղմում էին մի  
ընդհանուր, անհասկանալի հսկայական մրա-  
մոց: Ոտարօրիկ, կիսամերկ, թուխ մարմինը  
մի բարակ մաֆրաշով հաղիւ ծածկող թուր-  
քը, սալլի վրա կանգնած, մի խումբ գնողնե-  
րին կաղամբ էր վաճառում. մեծ փափախով  
չուխաւոր հալլ՝ վառելիք. ուսւ զինուորը՝ հին  
զինուորական շորեր և ահաղին երկարավիզ  
կօշիկներ. մի խումբ քրդեր ծիւնոտ սարերից  
յած գալով հրապարակ էին բերել մի քանի  
եզներ, ոչխարներ ու գորգեր: Դէմքերն ալլան-  
դակ, մազերը խոխւ, կուրծքն ու ստինքները  
բաց, կեղտոտ և թուխ հարմինը մի հատիկ  
շապկով միայն ծածկած գնչու կանակը և աղ-

շիկները շալակներով դաշտերից հաւաքած  
ցախ էին բերել և իրանց գողդողացող մերկ  
լամուկների հետ մի անկիւնում կծկուել էին.  
հայ բօշաները՝ մազեր ու շիւերից գործած  
սպաներ էին վաճառում:

Դեռ յուրտ էր, բայց ասես թէ ոք չէր  
մրսում, և՛ գնողը և՛ վաճառողը հաւասար  
եռանդով էին բռնուած. նրանց համար երեխ  
այդ յուրան անդգալի էր դարձել: Մրսում  
էին միայն նրանք, որոնք ոչինչ չունեին գնե-  
լու կամ վաճառելու, որոնք անողորմ ձակա-  
տագրի վճռով անմասն էին ծնացել այդ  
աղմկալի կեանքից և լոկ տիսուր հանդիսա-  
տեսներ էին — գրանք հայ գաղթական-  
ներն էին:

Շուկայի արևմտեան կողմի խանութների  
բարձր պատշտամբն էր նրանց մշտական կա-  
յանը: Այդ պատշտամբը նախում էր դէպի ա-  
րեելք, առաւտեան արեգակն ամենից առաջ  
այնտեղ էր թափում իր չերմ շոզերը և մերկ  
մարմինները բնազդօրէն այնտեղ էին դիմում,  
աշխատելով՝ որքան կարելի է աւելի մօտ լի-  
նել պատին, որքան կարելի է աւելի ձառա-  
դալիթներ որսալ: Ոչ մէկը միւսի վրա ստուեր  
չէր գցում, այդ լաւ չէր լինի, դա խեղձերի  
հարեանութեան օրէնքին հակառակ էր,  
ստուերը կը մրսեցնէր: Բաց, մազոտ կրծքեր,

ախուր, յոդնած դէմքեր. մերկ, վախտ, չլուս  
ուներ մի գծով խիտ առ խիտ շարուած էին  
արեւոտ պատի տակ և լուս, անմռունչ դի-  
տում էին շուկայի կենդանի իրարանցումը  
ախուր հայեացքով:

Եռեկան լցնող բազմութիւնը այդ ժամին  
երկու բանակի էր բաժանւում և նրանցից  
ոչ մինը միւսի հետ գործ չունէր, ոչ մինը  
միւսով չէր հետաքրքրուում. առաջինը վաճա-  
ռող և գնող մարդկանց բանակն էր, որ շտա-  
պում էր իր եսասէր կեանքի պահանջներին  
դոհացումն տալ. այդ էր նրա ամենամեծ  
հոգսը: Իսկ երկրորդը՝ այս խղճալի հանդիսա-  
տեսների խումբն էր, որի ամենամեծ ջանքը,  
հոգսը, հետաքրքրութեան առարկան այդ բո-  
պէին այն էր, որ ինչքան կարելի է պատի  
տակ աւելի տաք անկիւն գրաւի, աւելի մօտ  
կպչի իր հարեւանի մարմնին: Արեւի տաքու-  
թիւնը շուկայումն անդամ չէր վաճառւում,  
ի՞նչու խեղճերը չօգտուէին դոնէ բնութեան  
ձրի շնորհից:

Արեւ կամաց-կամաց բարձրացաւ. պատի  
տակ տաքութիւնն ալժմ աւելի առատ էր.  
մերկ միսն այլ ևս չէր սրթսրթում: Մըսող  
մարմինները տաքացան, մաքերն այդ հոգսից  
պրծան, իրար կողքի նստած հարեւաններն  
այժմ միայն պահտնչ զգացին մի բան ասել,

ձայն հանել, խօսակցել, տպաւորութիւններ  
հաղորդել իրար: Նարքի մէջ այս ու այնտեղ  
թեթև փսփսոց սկսուեց, որ կամաց-կամաց  
տարածուերով ու մէծանալով՝ բռնեց ամբողչ  
շարքը և դարձաւ բաւական բարձր շնչիւն:  
Խօսակցութեան նիւթ շատ գար, այդ օրը  
շուկան կարծես դիտմամբ մի այնպիսի տե-  
սարան էր ներկայացնում, որ կեանքի ամենա-  
մեծ գաւոնութիւնները ճաշակած, հազար ու  
մի զրկանքների ենթարկուած, հալածական,  
անտապաստան թշուառներն աւելի խոր զգան  
իրանց կացութեան բոլոր սարսափր: Խուլ  
մռմռոց բարձրացնող այս ամբոխը կարծես  
նրա համար էր այդպէս իրար զլխով դիպած,  
նրա համար էր եռանգով առնում, վաճա-  
ռում, որ խեղճերի այն շարքն աւելի լաւ  
հասկանալ, թէ մինչև որ աստիճան ինքը  
թշուառ է և թէ ինչպէս անպատրաստ պիտի  
դիմաւորի մօտեցող ձմրանը, որն ահա այն  
սարերի կատարներից իր ցուրտ, սպանիչ  
հայեացըն ուղղել է այս խեղճերի վրա, ինչ-  
պէս որսը դիտող գազանը: Հարստութիւնից  
մինչեւ մուրացկանութիւնը մի քայլ է միայն  
և այդ ճակատագրական քայլն արել էր այդ  
շարքը. նա համոզուած էր, որ ինքը միմիայն  
մուրալ կարող է, ուրիշ հնար չունի: Մու-  
րալ... ի՞նչ հեշտ է ասել. սայլի վրա դողդո-

դաշող այն քաղցած, կիսամերկ թուրքը չի մուրում, նա իր արդար քրտնքի արդիւնքն է վաճառում, այն մաղեր և զամբիւղներ վաճառող բօշաներն էլ չեն մուրում, իրանց ձեռագործն են հրապարակ բերել, մինչեւ իսկ անառունից ոչնչով չը զանազանուող այն գնչուների խումբն էլ այսօր դադիմականի նախանձն էր շարժում, նա էլ էր ապրանք վաճառում, նա էլ էր փող աշխատում: Հապա այն ծովլ վայրենին, այն աւազակ քո՞ւրզը, որ երբէք աշխատել չը գիտէ, բայց երբէք էլ չի մուրում. նա էլ է հպարտ-հպարտ վաճառանոց բերել «իր» ապրանքը: Ոչ ոք չի մուրում, ամենքը վաստակ ունեն, ապրուստի ճար, հնար ունեն, մտածում էին շարքի խեղճերը: Ինչու միայն իրանք են դրկուած պատուաւոր կերպով ապրուստ հայթայթելու միջոցներից: Այդ հարցերի մասին նրանք երկար փսփսացին, երկար խօսեցին, բայց ոչ մի ուրիշ պատուաւոր կերպով ապրուստ հայթայթելու միջոցներից: Այդ հարցերի մասին նրանք երկար փսփսացին, երկար խօսեցին, բայց ոչ մի ուրիշ պատուաւոր կերպով ապրուստ հայթայթելու միջոցներից: Այդ հարցերի մասին է, նրանց Ճակատագիրն է. Աստուած է այդպէս կամեցել, ուրիշ ճար չը կայ: Ճակատագրական այս եղբակացութեանը հետեւցին զանազան կողմերից լսուող հառաչանքի ծալներ, և ապա մի երկար լուսահատական «ախ» անցաւ շարքի մի ծալքից միւս ծալքը: Մռայլ

կննոուած ճակատները ասես քաշ ընկան ծնշող մտքերի ծանրութիւնից, յօնքերը կիտուեցին, շլուա ձեռները իրար հետ փակուեցին և մի առժամանակ լրութիւն տիրեց և ապա կրկին սկսեցին խօսել իրանց սև օրից, իրանց «օլուղ չօջուղի» սովածութիւնից, իրանց անձալը խեղնութիւնից:

Սկզբից մինչև վերջը լուռ էր միայն նրանցից մէկը, այն թխագէմ մազոտ մարդը, որ շարքի բոլորովին վերջումն էր նստած: Նա իր կեանքի վերջալուսին մօտեցած մի ծերունի էր. այդ վկայում էին նրա բոլորովին ճերմակ միրուքն ու մազերը. նա միշահասակ էր, նիհար, բայց ամուր մարմնակազմով, որ իր վրա կրում էր դեռ անցեալ զօրութեան հետքերը: Մռայլ և կնճռուած դէմքի վրա ամենից աւելի աչքի ընկնողը նրա չափազանց խիտ և հաստ սպիտակ յօնքերն էին, որոնց հովանու տակ վառւում էին մի զոյտ խոր ընկած, բայց խիստ աչքեր. չը նայելով իր խղճուկ արաւաքինին, այդ մարդու հայեացքը չանդուկ յանդուզն և վճռական էր: Թանձր, երկար հերմակ միրուքը, որ ծածկում էր նրա թաւամազ կուրծքը, սկսւում էր հէնց աչքերի տակից՝ տալով նրա դէմքին մի վայրենի կենդանու մռայլ տեսք: Նրա դէմքը մի այնպիսի արտակալտութիւն ունէր, որ կարծես

ստեղծուած էր կատաղի բարկութեան, մռայլի,  
տիսրութեան համար և չը գիտէր, թէ ինչ ա-  
սել է ժպիտ ու խնդութիւն. նա խսւար,  
ամպամած երկինք էր յիշեցնում, որ այնպէս  
հաշտ է շանթ ու կալծակների հետ:

Նա Ա.-Եցի գաղթական էր. հարեանները  
նրան աւչի Ղզրօ էին կանչում, որովհետեւ  
նա իրանց գիւղի մի հատիկ որսորդն էր:  
Ղզրօն նստած էր, իսկ նրա պատառոտուած  
վերնազգեստի վիշով փաթաթուած, մի կող-  
մում կծուած էր նրա եօթ տարեկան թոռը՝  
փոքրիկ թումօն, մի տիսուր, մռայլ երեխայ:  
Այս էր դաժանատեսիլ որսորդի ամբողջ ըն-  
տանիքը: Նա ունեցէլ էր նաև ուրիշ հարա-  
զաաններ, բայց նրանք այլ ես չը կային: Ղզրօն  
երբէք չէր խօսում նրանց մասին. մարդկային  
ոչ մի ոյժ չէր կարող նրան ստիպել, որ պատ-  
մի, թէ ուր են մնացել զաւակները, իր հա-  
րազատները: Արեան մի զարհուրելի քող ծած-  
կում էր նրա սիրելիների պատմութիւնը և  
Ղզրօն չէր կարողանում յետ քաշել այդ քողը,  
— այդ նրա ոյժից վեր էր: Օտարի թշուա-  
ռութիւնը հեշտ է պատմուած: Ղզրօի հա-  
րեանները, համազիւղացիները պատմում էին  
նրա ընտանիքի անցքերը, պատմում էին մի  
արիւնոտ գործի մանրամասնութիւններ, բայց  
միշտ ծածուկ, միշտ զդուշութեամբ, այնպէս

որ Ղզրօն երբէք չիմանայ, թէ իր գաղանիքը  
տարածւում է աշխարհում:

Իր արտաքինի նման մի մռայլ դաժան  
հոգի էր բնակւում այդ մարդու մէջ: Ասու մ  
էին, որ քառասուն և աւելի տարիներ նա  
ոսի տակ է առւել իր հալքենի երկրի լեռները,  
ձորերը, ծմակներն ու գաշտերը. Նրա մազերը  
սպիտակել էին արիւն թափելով: Ահաւոր  
ժայռերի, մենաւոր, խուլ ձորերի մէջ արչերի,  
գալերի և այլ գաղանների հետ մզած բազ-  
մաթիւ կոխները այդ մարդուն տուել էին  
գաղանի սրտոտութիւն. Նա չը գիտէր, ինչ  
ասել է վախ, զդուշութիւն. Նրա համար տա-  
րին՝ եղանակների փոփոխութիւն, և օքը՝  
կիշեր ու ցերեկ, ցուրա ու խաւար չունէր:  
Տարուայ ամեն մի եղանակում շաբաթներով  
գրսում, գաշտում, ձորում գիշերելլը նրա հա-  
մար ամենասովորական բան էր. ընութեան  
խստութիւնները նա տանում էր այնպիսի  
անհոգութեամբ և անտարբերութեամբ, ինչ-  
պէս իր սիրած լեռների ժայռերը, որոնց  
մըրկածէծ կուրծքերը միշտ բաց են խոռված  
երկնքի ամպրոպների առաջ: Գիւղում, իր  
տանը, ուր նա խիստ սակաւ էր երեսում,  
սովորաբար նա միշտ մռայլ էր, միշտ դաժան:  
Գիւղում գեռ ոչ ոք նրա ժպիտը չէր տեսել.  
ասում էին միայն, որ նա էլ ժպաալու ժա-  
ասում էին միայն, որ նա էլ ժպաալու ժա-

մանակ ունի, որ նրա մռավոտ դէմքն էլ երբեմն ցնծութեան արտայատութիւն է ստանում, որ նրա շրթունքների վրայից էլ ժայխար երկոտ կերպով սահում է և անցնում, բայց այն ժամանակ միայն, երբ քարափի զլսին իր ձեռքով գնդակահար եղած դալլը, արշը կամ աղուէսր զլսի վրա պառյաներ գործելով՝ արնաթաթախ ընկնում էր նրա ուների տակ. Ղզրօն այդ ժամին նայում էր իր որսին և ժպտում այնպէս, ինչպէս ամպամած երկինքը սիրում է երբեմն իր մի պատառուածքից ցոյց տալ արեկի ժպիտը:

Ղզրօն վայրենի լեռների նոյնքան վայրենի զաւակն էր. նրա մէջ ապրում էր բնութեան այդ հսկաների անընկելի, դաժան ովին. նա մարդկալին հասարակութեանը չէր պատկանում և կարծես թէ խառնուել էր լեռների վայրենի բնակիչների մեծ ընտանիքին և նրանց պէս նա էլ էր սիրում սպանութիւն, նա էլ էր սիրում արիւն: Եաբաթ չէր անցնի, որ աւչի Ղզրօն մի որ և է սպանած կենդանու արիւնաթաթախ դիակ ուսին դցած գիւղը չը մտնէր: Դուրս էին թափւում աներից գիւղի բնակիչները՝ մեծ ու փոքր, մարդ ու կին, մանը երեխաներ՝ տեսնելու Ղզրօնի նոր որսը և նրա լազթական մուտքը: Այդ ժամանակ անցնում էր գիւղի փողոցներով այդ

մռայլ մարդը առանց իրան ուղեկցող բազմութեանը նայելու և իր որսը տանում էր կամ իրանց տունը, կամ տէրտէրենց տունը և այդ դէպքում չէր մոռանում Աստուծոյ պաշտօնեացից թողութիւն խնդրել իր թափած արեան համար: Մի երկու օրից յետոյ Ղզրօն կրկին անյատանում էր:

Մի անգամ էլ Ղզրօն գիւղ մտաւ մի անօրինակ, մի զարհուրելի որս ուսին դցած: Դա ոչ այծեամ էր և ոչ վայրի գաղան, այլ մի սպանուած երիտասարդի արիւնաթաթախ դիակ: Այդ օրը Ղզրօն ժպտում էր մի սպանիչ, մի զարհուրելի ժպիտով և աչքերը գետին չէր գցել, բայց երեսում էր, որ այս անգամ նա ընկճուած էր իր բեռի ծանրութեան նա զնացքը իր նախկին խրոխուութիւնը չունէր: Բազմութիւնը չորս կողմից վրա վագից:

— Յէ, ի՞նչ ժողնվաք, որոտաց նա, Ղզրօն աւ չէք տեսեր. էս էլ էլման աւ ի, եա, ըլլը դերու աւն ի, ին նէմիր չանավար ի, էսոնց նէմիր խալերն են:

Բազմութիւնը սոսկման ճիչ արձակեց, այդ զարհուրելի մարդը այդքան անտարբերութեամբ իր միակ որդու արիւնաթաթաւ դիակն էր բերում գաշտից: Տան հոգսը, դաշտակն էր բերում գաշտից: Տան հոգսը, դաշտակն բոլոր աշխատանքները ծերունի որսորդը

վաղուց իր այդ որդու ուսին էր թողել. և  
այդ օրը զժբաղդ երիտասարդը դաշտում վար  
էր անում. քրդերը յարձակուել էին նրա վրա  
գոյք եղները խելու համար. բայց Ղզրօի որ-  
դին անմասն չէր հօր քաջութիւնից, նա հեշ-  
տութեամբ չէր ընկնուել և արիւնալի կոփուր  
վերջացել էր ծի քրդի և Ղզրօի որդու մա-  
հուամբ: Եղները տարել էին: Որսից շատ ուշ  
վերադառնալով Ղզրօն իր սեփական արտի  
մէջ գտել էր որդու դիակը և այժմ բերում  
էր ծի այնպիսի սառնասրտութեամբ, որ տեղի  
սոսկում էր պատճառում ամենքին, քան թէ  
արիւնաթաթախ դիակը: Նո հասաւ վերջա-  
պէս իրանց տունը, դիակը վար դրեց տան  
մէջ և մինչ ուրիշները ողբ ու կական բար-  
ձրացրին, ինքը նստեց նրա կողքին առանց  
ծի կաթիլ արտասուքի: Երկար ժամանակ  
լուռ էր, ապա վերցրեց մեռած որդու ձեռքը,  
նայեց, նայեց և ասաց՝

— Հօ, ափօն հէյրան էսա ձեռիդ լա՞,  
էստով սպանիր քրդուն.

Ծերունին իր ծանր վշտի մէջ միսիթար-  
ուում էր այն բանով, որ աւչի Ղզրօի որդին  
թանդ է ծախել իր կեանքը, առանց զոհ  
առնելու զոհ չէ տուել:

Սնցան օրեր. Ղզրօն կրկին անյայտացաւ:  
Այս անդամ նա ուղ ևս վայրի կենդանիներ

էր որսում. նրա զարհուրելի վրէժինդրու-  
թիւնը բաւականութիւն էր պահանջում, նա  
իր որդու սպանողներին էր փնդրում: Քիչ  
յետոյ յայտնի եղաւ, որ նա այս ու այն կիրճի  
առաջը փակելով, այս ու այն ժայռի տակ  
կծկուելով՝ վերջապէս աջողեցրել է սպանել  
մի քանի հոգի. դրանցից մէկը իր խսկական  
արնպարտն է եղել: Ղզրօն իր այրած սիրտը  
հովացնելու համար՝ այս վերջինի արիւնից  
մի բուռն խմելուց յետոյ վերադարձաւ գիւղ:  
Այստեղ բաղզը նրան առաջնից աւելի մեծ  
փորձութիւն էր պատրաստել. նրա բացակա-  
յութեան ժամանակ Ա... գիւղը քրդական մի  
կատաղի հրօսակի յարձակման էր ենթար-  
կուել. շատ ուրիշների հետ Ղզրօի այրի հարսն  
ու աղջիկը գերի էին տարուել: Այս սարսա-  
փելի անցքն իմանալով՝ ծերունի որսորդը  
մի առժամանակ բարացած մնաց, պարզ էր,  
որ իր ընտանեկան պատուի այդ աստիճան  
կոսիտ անարդանքը նրան շանթահարեց: Նա  
զարհուրելի անցքի մանրամասնութիւնների  
մէջ չը մտաւ, միայն հարցրեց դէպրի ժամա-  
նակի մասին և իմացաւ, որ չարաբաստիկ  
օրէց երկու չարաթ է անցել:

Ղզրօն կրկին անյայտացաւ. սգաւոր գիւղն  
այժմ բնազդով սպասում էր, որ նա մի անօ-  
րինակ, նոյն իսկ զարհուրելի գործ կը կատարի.

դրա հետ միասին ոչ ոք չկը հաւատում, թէ  
նա կարող է իր սիրելիներին յետ խլել և  
ի՞նչ միտք ունէր, երբ պատվի անարգանքը  
կատարուած էր արդէն, երբ անշուշտ գերի  
վարուած կանալը զո՞ն էին դարձել դահիճների  
պղծութեան. բայց ծեր որսորդը դնաց: Մի  
ամբողջ շաբաթ նա չը կար, և ահա մի օր  
յանկարծ նա երեաց զիւղում մէն միալնակ,  
ոչ ոք չիմացաւ, թէ նա մուր էր դնացել և  
ի՞նչ է արել: Բայց զիւղ հասնելուն պէս նա  
մի այնպիսի դործ կատարեց, որ ամենքը  
շուարած մնացին, իսկ աւելի շատերն սկսե-  
ցին կարծել, թէ ծերունին վշտից խելագա-  
րուել է: Եւ լիրաւի նա խելագարի արժանի  
դործ կատարեց. իր բոլոր ունեցած չունեցածը  
հաւաքեց, ածեց իր խրճիթի մէջ և իր ձեռ-  
քով կրակ տուեց բոլորին: Որսորդի տունն  
ու ստացուածքը կորաւ բոցերի և ծխի մէջ  
իսկ ինքը, այդ դարմանալի մարդը, փոքրիկ  
թումօի ձեռքից բռնած անխռով կանգնած  
էր հրդեհի առաջ և շարունակում էր նետել  
նրա մէջ ինչ որ ձեռքն էր ընկնում. նա կան-  
դնած մնաց, մինչև որ վառուեց վերջին գե-  
րանը, մոխիր դարձաւ վերջին չոփր: Այս խե-  
լագար դործը վերջացնելուց յետոյ, շալակեց  
իր թուանը՝ որբ մնացած փոքրիկ թումօին  
և առանց մի բառ արտասանելու դուրս

գնաց զիւղից: Ոչ ոք չիմացաւ, թէ նա ուր  
զնաց. սակայն Ա... զիւղը շուտապվ իմացաւ,  
որ այդ քարասիրտ մարդը մի սոսկալի դործ  
է կատարել. իր խրճիթը կրակ տալուց առաջ  
նա գնացել, գտել էր իր առևանդած հարսին  
ու աղջկան և նրանց վիրաւորուած պատիւր  
փրկելու ուրիշ ոչ մի հնար չունենալով՝ իր  
ձեռքով սպանել էր երկու հարազատներին,  
որպէս զի վերցուեն աշխարհից նրա ընտանե-  
կան պատուի անարգութեան այդ կենդանի  
վկաները: Իմացուեց նոյնպէս, որ նա կրակ էր  
տուել իր խրճիթը բոլոր ունեցած չունեցա-  
ծով, որ ոչինչ չընկնի ատելի բրդերի ձեռքը:  
Այսպէս էր հեռացել Ղորօն իր հալքենի զիւղից  
փոքրիկ թումօի հետ:

Եւ այժմ այս տարօրինակ զոյզը թափա-  
ռում էր աշխարհի երեսին անտուն, անա-  
պաստան: Ղորօն մուրում էր և թումօին  
կերակրում. այդ վնաս չունէր, խեղճութիւնը  
միշտ սկերես է եղել, ծերունին իր վիճակի  
դառնութիւնը տանում էր անտրտունչ. բայց  
կար մի ուրիշ բան, որ կրծում էր նրա սիր-  
ար, գալարում էր նրա աղիքները և առանց  
այն էլ նրա դաժան գէմքը դարձնում էր էլ  
աւելի մռայլ, էլ աւելի ահաւոր: Նրան տան-  
ջում էր թումօն, այդ խղճուկ որբը: Երբ  
Ղորօն երկար նայում էր այդ մանկան մեծ

կապոյտ աչքերին, երբ դիտում էր նրա քայլուածքը, այն ժամանակ նրա մարմնով մի սպանիչ սարսուռ էր անցնում, արիւնն ասես թէ կանգ էր առնում նրա երախների մէջ փոքրիկ որբի աչքերը, հայեացքը, քայլուածքը այնքան յիշեցնում էին իր տարաբաղդ մօրը, որի անմեղ արեան մէջ թաթախել էր նա իր ձեռքը: Ճիշդ ալդպէս նայեց թշուառ զոհը իր երեսին, երբ նա մահացու հարուածն իշեցնում էր նրա կոծքին: Ապա աղջկը... Նախշուն չէրիքը, որ իր առանձին սիրոյ, առանձին գգուանքի առարկան էր... Ո՞ր մէկին մոռանար Ղզրօն, ի՞նչպէս մոռանար: Ժամանակը նշել էր նրա մաքից իր կատարած այդ զարհուրելի, անսիրտ, արիւնոտ զործի արդարացուցիչ բարոյական պատճառները, նրա ճնշուած, շփոթուած միտքն այլ ևս չէր կարողանում հաշիւ տալ իրան, թէ ինքը մինչեւ որ աստիճան բարոյական իրաւունք ունէր թափել իր հարազատների արիւնը: Այն ժամանակ, օ, այն անէծքի արժանի ժամանակը, նա լաւ յիշում է, այդ բանը նրան բոլորովին բնական, բոլորովին հասկանալի, արդար, իրաւացի էր թւում, բայց այժմ... իր ընտոնիքի պատիւր այդքան անսիրտ, այլքան զարհուրելի միջոցով անարատ պահելու նախկին գիտակցութիւնը տեղի էր

տուել մի անսահման խղճահարութեան, որ անքուն որդնի պէս օր ու զիշեր անդադար կրծում էր նրա սիրտը, ճալում աղիքները, այնպէս որ նա երբեմն սրտի անսահման ցաւից ծալում էր ձեռները, կծկում, գալարուում էր, ինչպէս վիրաւոր օձ: Աւելի սարափելի էին նրա համար այս ու այն գոմում, այս ու այն անմարդաբնակ, յետ ընկած խրճիթում, կամ աւերակի մէջ անցրած զիշերները. իր զոհերի արիւնոտ ուրուականները հազար ու մի ձեռքով յայտնուած էին խաւարի մէջ, նիհար վուտ ձեռներով խեղդում էին նրա կոկորդը. զարհուրած ծերունին փակում էր աչքերը, աշխատելով չը տեսնել այդ ուրուականներին, բայց իգուր, նոյն խակ խաւարի մէջ պարզ ծրագրուում էին նրանց վերքերը, որոնցից շայտում էր արիւնը, պարզ լուում էր նրանց օրհասական խռխռոցը: Օ՛, գոնէ այդ թումօն չը լինէր, որպէս զի այլ ևս ոչինչ չը կապէր նրան այս անիրաւ աշխարհի հետ, այն ժամանակ նա շատ հեշտութեամբ վերջ կը տար եր զարհուրելի տանշանքներին. արիւն թափելու սովոր որսորդի ձեռքը մի վայրիեան անզամ չէր դոզաց, նա հանգիստ սրտով կը կարէր իր կոկորդը, և Աստուած իրաւունք չը ունենայ նրանից հաշիւ պահանջելու ինքնասպանութեան համար, որովհետեւ նա

Ամենակալի աթոռի առաջ այնպիսի պատմութիւններ կանէր, որ Երկնալինների բնակավայրը կը դոզար, հրեշտակներն անդամ սուդ կանէին, աստղերի փալուն դէմքը կը մռայլուէր. խեղճ Նղրօն ի՞նչպէս տանէր ակքան ցաւը: Բայց Թումօն կայ, նա ապրում է, ուր թողնել նրան, ում յանձնել այս անտէր, անտիրական որբիկին: Եւ Նղրօն ապրում էր, ապրում էր միայն և եթ իր Թումօնի համար, ուրիշների պէս նա էլ էր դռները թակում, հայի փշրանքներ հաւաքում և կերակրում Թումօնին: Համարեա ոչ ոքի հետ չէր խօսում Նղրօն, նրա երեսին դեռ ոչ ոք ժայտի նման մի բան չէր նշմարել. միշտ մտախոն, միշտ տփուր ու վշարքեկ էր նա: Շրջելու ժամանակ նա երբէք չէր բարձրացնում իր ալէզարդ գլուխը. նայողը կարող էր կարծել, թէ այդ ծերունին մի խիստ թանգագին բան է կորցրել, որ անդադար փնդրում է: Երբեմն-երբեմն նրա շրթունքները չղածգաբար շարժում, քաշըշում էին, կարծես թէ մի բան էր առում, խօսում էր մէկի հետ, բայց ոչ ոք չէր կարող ասել, թէ ինքը երբ և իցէ լսել է, թէ ի՞նչ է ասում նա: Նրա միակ և անբաժան ընկերը իր Թումօն էր, որին փայփայում էր լոռութեամբ, ձեռքից բռնած ման էր ածում, պաշտպանում էր փողոցների շներից, և զի-

շերները իր վերնազգեստի ծուէնների մէջ փաթաթելով նրա փոքրիկ մարմինը՝ զրկում էր ու քնում իր որչի մէջ: Զարմանալի էր նաև այդ փոքրիկ երեխան. նա գեռ իր մանկութիւնը չանցրած ծերացել էր արդէնու Դաման, մռայլու պապի յարատել թախիմնէ էր պատճառ, թէ իր ծնողներից այդքան վաղաժամ և այդպէս եղերական ծեռով զրկուելու բնազդը, այդ յայտնի չէր, բայց մանուկը նորնպէս տրխուր էր, նորնպէս մռայլ ու լուակեաց, որպէս եր պապը: Նրանը շատ քիչ էին խօսում իրար հետ, բայց լոռութեամբ հասկանում էին իրար. ոչ մէկին չէր զարմայնում միւսի դէմքի ախուր արտայայտութիւնը. մշտական թախիծն ու տրտմութիւնը նրանց հետ եղբայր էին դարձել և ընդհակառակը նրանցից ամեն մէկը կապչէր, էթէ միւսի դէմքի վրա յանկարծ ժպիտ նշմարէր:

Ամենքի հետ միասին այսօր Ըղրօն էլ էր նստել շուկայի արեւոտ պատի տակ և հակառակ իր մշտական սովորութեան գետնին չէր նայում—նրա հայեացքն ուղղուած էր դէպի այն քրդերի եղների նախիրը: Նա նայում էր դէպի այն կողմը անվերջ, առանց ձանձրանալու, առանց յողներու, անմթարթ աչքերով, որոնք այսօր թաւ ձերմակ յօնքերի տակից էլ աւելի դաժան, էլ աւելի մռայլ էին երեսւմ:

Ի՞նչ էր որոնում նա այն կողմում, ի՞նչ էր մտածում: Կամաց-կամաց նրա աչքերը սկսեցին թացանալ և այդ մարդը, որ իր միակ որդու արիւնաթաթաւ դիմակը շալակել բերել էր դաշտից առանց մի կաթիլ արտասուք թափելու, որ իր հարազատներին իր ձեռքով խողխողել էր դժոխալին սառնասրտութեամբ, որին ծանօթ չէր սրտի թուլութիւն, լաց, արտասուք,—այդ երկաթէ մարդը գուցէ իր կեանքում առաջին անգամ արտասուել սկսեց: Խոշոր էին արտասուքի կաթիներն այս անգամ, նրանք թափելում էին առատ, անընդհատ, ասես թէ մի անսպառ աղբիւրից: Կարծես թէ տարիներից ի վեր մթերուած այդ հեղուկը այսօր առաջին անգամ քանդել էր իր պատուարը և անարդել թափելում էր ներքեւ, թրչելով նրա թանձր միրուքն ու կուրծքը: Պապի արտասուքները տեսաւ թումօն և առանց պատճառն իմանալու ինքն էլ արտասուել սկսեց. քիչ յետոյ նա էլ իր հայեցքն ուղղեց դէպի այն կողմը, ուր պապն էր նայում: Ինչ կար այնտեղ, ինչու էր արտասում Ղզրօն:

Շուկայում կեանքը շարունակում էր եռգալ. շատ բան վաճառուեց, գնուեց, վաճառուել էին նաև քրգերի եզները, բացի մէկից, որի համար խիստ մեծ զին էր պահանջում

տէրը: Դա մի բարձր, հաստավիղ, կարմրագոյն եղ էր. գեղեցիկ էր մանաւանդ նրա զլուխը. երկու սուր եղչեւրները աղեղնածե կորացել էին դէպի զլիի վերի մասը, իսկ լայն ճակատի հէնց կենարոնում մի մեծ սպիտակ բիծ ունէր, որ մի առանձին շքեղութիւն էլ տալիս նրա զլիխն: Ահա այս եզանն էր նայում Ղզրօն և կարծես թէ այդ կենդանին էլ իր մեծ աչքերը ուղղել էր յատկապէն Ղզրօնի վրա: Նայում էին իրար այդ կենդանին և այդ մարդը, նայում էին յամառութեամբ, առանց յոգնելու և տսես թէ լուռ խօսում էին իրար հետ, բաներ էին պատմում և հասկանում իրար: Ի՞նչ էին խօսում նրանք, ով կարող էր իմանալ, ով էր ուշագրութիւն դարձնում նրանց վրա, ով կարող էր կարծել անգամ, թէ մի անասունի և մարդու մէջ մտքերի փոխանակութիւնը հնարաւոր է: Բայց այդ երկու էակները շարունակում էին նայել իրար, նըրանց հայեցքների միջոյով կարծես էլեքտրական հոսանք էր հաղորդուում. մարդն արտասում էր, իսկ եղը կարծես դիտում էր այդ արտասուքները. երկար շարունակուեց այդ տեսարանը: Յանկարծ փոքրիկ թումօի դէմքի վրա անսահման բերկութիւն փալլեց. նա սաստիկ զարմացած ու յուղուած իր նիհար մատը դէպի եղը մեկնեց ու բացականչեց.

— Բաշօն, պապէ՛, մեր Բաշօն...\*):

Եւ առանց իր պապի պատասխանին սպասելու, երեխան ցած թռաւ պատշգամբից, եղանը հասաւ, անսահման երջանկութեամբ զրկեց նրա զլուխը և սկսեց իր մանկական շրթունքներով անվերջ, տաք համբոյրներ տալ նրա դնչին, ճակատին: Կենդանին զլուխը քաշ էր զյել, դունչը չէր հեռացնում երեխայի կրծքից, ասես թէ: Նրան հաճելի էր երկար մնալ այդ վիճակում, նրա մեծ աչքերը կարծես ասում էին «ի՞նչ լսւ է, ի՞նչ դուրեկան է այսպէս մնալ»: Բայց երեխան թողեց նրան, կրկին լետ եկաւ և կարծելով՝ թէ իր պատապը չի հասկացել բանի էութիւնը, չի իմացել, որ ինքը գտել է իրանց Բաշօնն, բռնեց նրա ուսից, ցնցեց և ձեռքը դէպի եզր մեկնելով՝ յուղուած, շնչակտուր գոչեց.

— Պապէ՛, այ պապէ՛, էսա մեր Բաշօնի, վայ, եաման պապէ՛, էմալ չի:

— Խա, քե մեռնի՞մ, մեր Բաշօն ի, պատասխանեց Ղզրօն արտասուքից խեղզուելով՝ բայց առանց տեղից վեր կենալու: Այս անդամ նրան նալեցին շատերը հարեաններից, իր արտասուքն այլ ևս ծաժկել չէր կարող,

ուստի քաշեց իր ցնցոտիների մի ժուէնը և նրանով սրբեց աչքերը. մինչդեռ երեխան պատասխանով քաշալերուած կրկին ցած թռաւ պատշգամբից, շտապով վազեց հասաւ եղանը, զրկեց նրա զլուխը, շոյեց, համբուրեց և ի վերջոյ ականչից բռնելով՝ քաշ տուեց դէպի պատշգամբը, դէպի արտասուռղ պապը:

Ահազին կենդանին զարմանալի հնազանդութեամբ սկսեց քայլել այդ փոքրիկի լեռեից հանդիսաւոր դանդաղութեամբ: Մինչև այդ ժամանակ այդ բոլորը կատարեալ անտարբերութեամբ դիտող քիւրկը յանկարծ առաջացաւ դէպի «իր» եզր, իսկ այս ու այն կողմից հետաքրքիր բազմութիւն հաւաքուեց և շըրշապատեց եղանը, երեխային ու քրղին:

— Դէն, դէն, ձամպայ տուէ՛ք, ձվւում էր թումօն, մերն ի, թորդէք տանեմ, մեր Բաշօն ի, մատաղ էղնիմ Բաշօնն:

Եզր շարունակում էր դնալ. քիւրլը նրանց առաջը փակեց:

— Ի՞նչ ես անում, տղա, ասաց նա, թող տուր, ուր ես տանում իմ եզր:

— Մերն ի, մեր Բաշօն ի, քեզ ի՞նչ կը տանեմ, պատասխանեց թումօն, աշխատելով առաջ գնալ:

— Զերը չի, մեռնեմ քեզ, ասաց քիւրլը

\*) Հայ գիւղերում բաշօն են կոչում ճակատներին սպիտակ չչ ունեցող անասունները:

քաղցրութեամբ, իմն է, մատաղ, թող տուր, մի տար:

— Պապէ շան, այ պապէ՛, ճչաց երեխան բարկացած ու լացակամած, բայց առանց թողնելու եղան ականջը, քիւրդը չէ թորդում Բաշօն բերեմ էէ՛...

Ղզրօի ծայնը չը լսուեց, նա չէր էլ երեւում, որովհետեւ շրջանաձև բոլորած բազմութեան յետեւումն էր մնացել իր տեղում նստած: Նա չէր կարողանում տեսնել, թէ ի՞նչ է կատարում այնտեղ, միայն լսում էր իր թումօի յուսահատ մանկական աղաղակները:

Քիւրդը տեսաւ, որ գործը քանի գնում մեծանում է. նա ծանրակշիռ առիթներ ունէր այդ հանգամանքից վախենալու. նա լաւ հասկանում էր, որ այդ փոքրիկը չի սխալում. այդ եղբ՝ Բաշօն, այն երկրից էր բերուել, որ իր արիւնածալաւ եղբայրների ծեռքով մոխրակոյաերի էր վերածուել, ուր մարդիկ իրանց բոլոր ստացուածքը, բոլոր ունեցած չունեցածը տալով հանդերձ մի ստրկական կեսնք վարելու իրաւունք անդամ ձեռք բերել չէին կարողացել և փախել էին այնտեղից առանց յետ նայելու: Եւ մի՞թէ չէր կարող պատահել, որ այս եղբ հէնց այստեղ նստած գաղթականներից մէկն ու մէկին պատկանէր: Այս մտքերը մի վայրկեանում անցան քրդի զլխից. նա

վճռեց խոյս տալ և այդ կասկածաւոր տէղից հեռացնել եղը, ուստի մօտեցաւ, որ կենդանու ականջը դուրս քաշի երեխալի ծեռքից. բայց նա կախուել էր իր բոլոր մանկական ոլժով, չէր բաժանեւում, ճչում էր.

— Մեր Բաշօն ի, չեմ տա պապէ՛, այ պապէ...

Քիւրդը վերջապէս տեսնելով, որ այդ փոքրիկից հեշտութեամբ աղատուելու ճար չը կայ, մինչդեռ շտապելն անհրաժեշտ է, թափով հրցեց թումօին եղան առաջից: Երեխան ընկաւ և սկսեց աղիողորմ ծայնով արտասուել պոռալով. «Բաշօն, Բաշօն»: Քիւրդը քշեց եղը:

Ղզրօն լսեց թումօի աղիողորմ արտասուելու և հառաչանքի ծայնը. ապա տեսաւ թէ ինչպէս քիւրդը տանում է իր Բաշօին, այն եղը, որի հետ այնքան տարիներ վարել է իր արտերը, կրել է, ծեծել է իր ցորենը: Բաշօն նրա ամբողջ գոմի զարդն էր, նրա սիրելին, նրա երկրորդ որդին, միս... նրա համար սպանուեց իր շահիլ շիւան կտրիճը, իր մի հատիկ որդին: Այսօր՝ երբ առաջին անդամ տեսաւ Բաշօին, նրան թուաց, թէ իր զաւակին է տեսնում, նրա աչքերին է նայում, նրա հետ է խօսում: Ահա թէ ինչու արտասուքները թափուեցին նրա աչքերից, վաղուց կուտակուած արտասուքները. տիր վիշտն էլ մի

սահման ունի, որից այն կողմը տանել այլ ևս  
անհնարին է լինում նոյն իսկ ամենապինդ  
սրտերի համար։ Բաղզի բոլոր հարուածները  
մինչև այժմ հետզհետէ, կամաց կամաց էին  
թափուել նրա զլխին։ Նա իր չար ճակատագրի  
դառնութեան բաժակը միանգամից չէր խծել,  
այլ կաթիլ կաթիլ, ահա թէ ինչու նրա սիր-  
տը չէր պատռուել վշտից, աչքերը չէին կու-  
րացել արտասուքներից և նա կարողացել էր  
ապրել, կարողացել էր կրել անպատճելի ցաւե-  
րը։ Բայց այսօր... Օ՛, այս եղբ, այդ անզու-  
գական Բաշօն, իր մէջ միացնելով Ղզրօի բո-  
լոր թշուառութիւնները, միանգամից թափեց  
նրա առաջ վշտերի մի ծով, միանգամից բա-  
ցեց գեռ նոր փակուած վէրքերը։ սար լինէր  
կը փլէր, ժայռ լինէր կը հալուէր, Ղզրօի  
սիրան ինչպէս դիմանար... Եւ նա արտասուեց,  
արտասուեց տաք, ախորժ արտասուքներով,  
որոնցից նրա կրակուած սիրար հովանում էր,  
ուռած կուրծքը թեթևանում։ Արտասուելուց  
բացի ուրիշ ինչ կարող էր անել, աւելի լաւ  
կը լինէր բոլորովին չը տեսնէր Բաշօն և նա  
կը շատապէր հեռանալ, եթէ կարողանար, եթէ  
ոտները չը դողլողացին, չը ծալուէին, վկա՞ է  
Աստուած, խոյս կը տար արտասուերով, որ-  
պէս զի չը տեսնէ իր դժոխալին ցաւերի այդ  
մարմնացումը, իր Բաշօն։ ուրիշ ինչ անէր.

փորձէր քրդեց խել այդ մի հատիկ եղը, այն  
բոլորից յետոյ մի եղ... ինչի՞ համար, ինչի՞  
էր հարկաւոր։ բայց թումօն չի թողնում,  
տես, ինչպէս է նչում նա, ի՞նչպէս արտաս-  
ւում է ողբալի ձախնով։ Օ՛, ինչ զոհեր էր բե-  
րել Ղզրօն միայն քիւրդ չը տեսնելու համար,  
ինչքան ճանապարհ էր կտրել որքան սարեր  
ու ձորեր անցել իր այդ արիւնարրու թշնա-  
միներին այլ ևս երբէք չը պատահելու համար.  
բայց... դարձեալ քիւրդ...

Ղզրօն զգաց, թէ ինչպէս մի ինչ որ բան  
եռաց իր կրծքի մէջ, թէ ինչպէս մի զօրեղ  
հոսանք անցաւ նրա բոլոր ջղերի մէջ, շար-  
ժեց, զնցեց, դողացը մարմինը, մկանունք-  
ները ձգձգուեցին և լայնացած, մեծացած աչ-  
քերը վառուեցին կատաղութեան կրակով։  
զայրոյթի՞ թէ վրէժինդրութեան փոթորիկ  
էր այդ, որ անշաւ նրա ամբողջ մարմնով։  
նրա շնչառութիւնն ընդհատում էր, արիւնն  
սկսեց աւելի և աւելի արագութեածք շար-  
ժուել երակների մէջ, սրտի բարախութը սաստ-  
կացաւ, ժեր որսորդի մէջ զարթնեց արիւն  
թափելու, սպանութիւն գործելու անյագ,  
անյաղթելի տենչը. թումօն նշում էր, հառա-  
չում էր, և Ղզրօին թւաց, որ այդ քիւրդը,  
օ, դարձեալ քիւրդը, թումօն էլ սպանեց,  
սպանեց օրը ցերեկով, շուկալի ահազին բագ-

մութեան մէջ. դէ քիւրդը, երբ սպանել կամենայ, ում կը նայի, ում կը հարցնի. քիչ այդպիսի գէպքէր են եղել այն «վէրան» երկրում։ Ղզրօն համոզուած էր նոյն իսկ, որ այդ տնիծեալ քիւրդը այն ծիւնոտ սարերի յետեկց յատկապէս դրա համար է վեր կացել եկել, յատկապէս թումօին մորթելու համար է այստեղ հասել. այդ արդէն անտանելի էր. Ղզրօն յանկարծ ամեն բան մոռացաւ, այլ ևս ոչինչ չէր լիշում, ոչինչ չէր տեսնում, չը գիտէր, թէ ուր է գտնուում. մի հատիկ միայն գիտակցութիւն մնաց նրա գլխում, այդ այն էր, թէ անմիջապէս պէտք է այդ զարհուրելի քրդի կոկորդը կարել, ինչով և լինի։ Եւ ահա նու կատաղած վեր ցատկեց տեղից, մի ակնթարթում պատուց ամբոխի շղթան, հասաւ քրդին, և բազմութիւնը միայն այն ժամանակ տեսաւ Ղզրօին, երբ նա երկու ձեռքով գրկած յաղթանդամ քրդի իրանը, գաղանի կատաղութեամբ կրծում էր իր ախոյեանի կոկորդը։ Ամբոխը սոսկման ճիչ արձակեց. գա կոիւ չէր, այլ մի ուրիշ զարհուրելի բան. միայն կատաղած էդ գաղրը կարող էր ալդպէս կրծել իր ձագուկների թշնամու կոկորդը։ Քիւրդը ցաւից ոոնում էր, ճիգ էր գործ դուռմ գուրս պրծնել կատաղի որսորդի ձեռներից, ձգձգում էր, ողորում, կուչ գալիս, կամ հարուածում Ղզր-

րօին, փետում նրա մաղերը, բայց իզնւր. այդ վտիս, ջարդուած ծերունին մի կատաղած առիւծ էր դարձել. նրա լուս, չորացած ծեռները մի երկաթեայ օղակ էին կազմել որ վայրկեան առ վայրկեան սղմւում, նեղանում էր և նրա միջից դուրս պէճնելու ասես ոչ մի հնար չը կար. Ղզրօն ոչ մի բառ չէր արտասանում, նա միայն խռապու մոնցիւններ էր արձակում և կարծես ուխտել էր քրդի ահազին մարմնի բոլոր կենսական հիւթը, բոլոր արիւնը ծծելով դուրս քաշեց կոկորդից, մինչ գեռ փոքրիկ թումօն պապի փէշերից քաշընկած նչում էր, արտասաւում էր աղէկառուր ձայնով։ Եւ այս բոլորն այնքան արագ կատարուեց, որ բազմութիւնն սկզբում շուարած մնաց, շուկայում առեւտուրը դադարեց, ամենքը դէպի այդ զարհուրելի տեսարանը վազեցին և մինչեւ որ մարդիկ կը կարողանալին հաշւի առնել կատարուող իրողութիւնը, կը հասկանալին բանի էութիւնը, քրդի վիճակը լուսահատական դարձաւ, նրա կոկորդից զզուելի արիւնը դուրս ցալտեց և կարմիր գոյնով ներկեց երկուսի կուրծքը։

— Օգնեցէք, հառաչում էր քիւրդը, մեռայ, օգնեցէք։

Յիրաւի, նա մօտ էր ուժասպառ լինելու։ Այդ նկատեցին համարեա ամենքը և բազմու-

թիւնից մի քանի ձեռներ միանգամից մեկնուեցին դէպի երկու ախոցեանները նրանց իրարից բաժանելու համար: Բայց այդ այնքան էլ հեշտ չեր: Ծեր որսորդի մէջ զոււս էր բարձրացրել նրա ներսում քնած գաղանք: վաղուց հետէ նրա սրտում մթերուած վրէժինդրութեան թոյնը գուրս էր թափուում միանգամից: կատաղած Ղզրօն տղրուկի պէս կպել էր հսկայ քրդի կրծքին, համարեած ածկուել էր նրա զբկի մէջ և ոչ իր թշնամու երկար ձեռների հարուածները, որոնք անընդհատ վերելից թափուում էին նրա զբլիին, ոչ այս ու այն կողմից քաշըշող ձեռները չէին կարողանում ազատել քրդին նրա ձեռքից:

— Վայ մեռայ, ոռնում էր քիւրդը, օդնեցէք:

Սակայն իզնուր. Ղզրօն ահաւոր մռնչիւններ արձակելով խեղդում էր քրդին, որ վերջիվերջոյ ուժասպառուած զետին փռուեց և Ղզրօն էլ վրան ընկաւ: Հէնց այդ ժամին վրա հասաւ ոստիկանը և հաղիւ կարելի եղաւ Ղզրօին վերցնել և զոհին խլել նրա ձեռքից: Արիւնաթաթախ քրդին ոտքի կանգնեցրին. նրա կոկորդի վրա խոշոր վէրք էր բացուած և արիւն առատութեածք հոսում էր: Առսկալի էր նաև Ղզրօի տեսքը. նա շնչառպառուում, հեռում էր. լայնացած քթածակերը քիչ էր

մնում տրաքուկին, բորբոքուած, արիւնով լցուած աչքերը քիչ էր մնում զուրս թռչէին իրանց խորշերից, մազերը խոիւ, իսկ շրթունքներն ու երկար ճերմակ միրուքը ներկուած էր բոսորալին հեղուկով. այդ բոպէին նա նմանում էր մի արիւնարբու գաղանի, որ հէնց նոր պատռատել, լափել էր իր որսը:

— Օ՛, անօրէններ, հառաչում էր նա, էսա երկրի մէջ էլ չը խլանք ձեր ձեռէն. սարեր չափինք, ձորեր ընցանք, խեղճ ու կրակ մեր ձմերու խէտ էլանք էկանք, զըմմէն լէ ձեր թորգինք, էլման չը պրծանք, էլ դ՞որ էրթանք, դ՞որ թաղենք մեր ուեաւոր գլօխներ, դ՞որ...

Ոստիկանը մօտեցաւ նրան, ուսր բռնեց ասելով՝

— Դէ՞ն, ծերունի, գնանք, արի իմ յետեից: Ղզրօն զարմացած ու ապուշ կտրած նայեց ոստիկանին, առանց բան հասկանալու, վերջինս կրկնեց իր հրամանը:

— Եա՛, դու ի՞նչ կուզես, դ՞որ էթանք, հարցրեց Ղզրօն:

— Բանտ:

— Ինչի՞ խամար:

— Արիւն ես թափել, տե՛ս, արիւն թափեցիր, աւ ելացրեց ոստիկանը դէպի վիրաւոր քիւրդը ձեռք մեկնելով:

— Խայեր լսա՞ք, քրդու արունն եմ թափեր, քրդու արունն... ասաց Ղզրօն և երկարու չղածգաբար ծիծաղեց խելագարի ծիծաղով: — Քրդի արունը թանդ ի, խա՛, խա՛, եռ գինամ, գինամ, էսա երկրի մէջ շան արունն էլ թանդ ի, շարունակում էր Ղզրօն:

— Գնանք, կրկնեց ծանձրացած ոստիկանը, ընդհատելով նրա խօսքերը:

— Եթանք, էթանք, թախսիրքեարեմ, սուչունեմ, էթանք հաֆս, ապա: Ես արունք էրի, քրդի գեղալ շանէն արուն խանի: Հէ, աղա՛ չան, բո ոտաց մեռնիմ, ապա էնա վերան երկրի մէջ ըսկի մէկ չը խարցուց, ո՞ն մորթեց մեր ճժեր, եսիր տարաւ մեր օղլուշաղ, ո՞ն քանդեց մեր գեղեր, կրակեց մեր տներ, գէզեր, արտեր, տօ, զլմմէն էսա արնխում շներ արին էէ... Տօ էնա իմ եղն ի, վախ, իմ խորոտ Բաշօն ի, իմ տղէն էնոր մատաղ էլաւ, բե մեռնիմ. դէ ես ի՞նչզ էնիմ, ո՞ր չուրն ընկնիմ: Շէն մնա ծեր երկիր, էսա տեղ քրդու էրկու պուտ արունն էլ թանդ ի, հայինու... Խայեր, էլ ընչի խամար կապրէք, դէ թորդ ծովեր քան զրմմէնուս ծածկեն, թորդ սարեր վլեն վլը մեր կօտին, արնի սէլափ մեր երկիր բռնեց, չօլեր, ծորեր, դաշտեր զրմմէն կուփ արուն կարեց, ո՞րն ասաց խայի արուն թանդ ի: Էթանք, աղա՛, էթանք, թախսիրքեարեմ,

խողն էսա սեաւոր զլխուս — վերչացրեց նա, երկու ձեռքով պինդ հարուածեց իր զլխին և ոստիկանի առաջն ընկնելով դէպի բանա գնաց:

— Պատպէ՛, դ՞որ կերթաս, քուրդն էլ ման Բաշօն տարաւ, գոռաց Թումօն դէպի պապը վաղելով, երբ տեսաւ, որ քուրդն սկսեց քչլ եղը:

— Թորդ լաօ, թորդ, ասաց Ղզրօն, Բաշօն մեր չի, քրդուն ի, թորդ տանի, բե մեռնիմ, մեր տուն լէ մերը չի, մեր արտ լէ մերը չի, մեր արուն լէ մերը չի, խայը բանը չունի, զրմմէն լէ քրդուն ի, էնոր արունը թանդ ի: Նա զնաց:

Թումօն արտասուելով՝ կրկին յետ դարձաւ և վաղէվազ Բաշօն հասաւ. մէկ էլ փորձեց կախուել նրա ականչից, մէկ էլ «պապէ՛» գոռաց. բայց այս անգամ պապը նրան ուշք չէր դարձնում և առանց յետ նայելու քալում էր: Երեխան մղկտալով թողեց եպան ականչը, վաղեց դէպի պապը, կախ ընկաւ նրա փէշից արտասուքի միջից պոռալով՝ «Բաշօն, պապէ՛, Բաշօն, պապէ՛»: Եւ ալսպէս երկար ժամանակ երեխան չէր իմանում, թէ երկու սիրելիներից որին առաւելութիւն ապա. նրա պապէն ու Բաշօն գնում էին զանազան կողմէր, նրանք այլ ես ուշք չէին դարձնում ալդ փոքրիկի ահապին վշտի վրա և աւելի ու աւելի հեռանում էին իրարից. մտնուկը չէր իմա-

նում Բաշօհի յետեից վազի, որին քիւրդն էր  
տանում, թէ պապէի յետեից, որին ոստիկանն  
էր տանում: Էլի մի քանի անդամ նա շշկուած  
վազեց դէպի Բաշօհ, կրկին յետ դարձաւ դէպի  
հեռացող պապը, քաշ ընկաւ նրա փէշերից,  
աղաչելով՝ որ յետ դառնայ, Բաշօհն խի բըր-  
դից, ապա տեսնելով, որ պապը չի լսում ի-  
րան, թափով յետ դարձաւ, վազեց դէպի եղը  
և առաջը կտրեց. բայց յանկարծ նկատեց, որ  
պապին ու Բաշօհն բաժանող տարածութիւ-  
նը խիստ մեծացաւ, և պապն այլ ևս նրա  
ձայնն էլ լսել չի կարող, նա մի յուսահատա-  
կան ճիչ արձակեց, վերջնականապէս թողեց  
Բաշօհն, որ քուրդը տանի, իսկ ինքը յետ  
գառնալով՝ վազեց դէպի պապը, դէպի բանտը:  
Բայց պապէն չը կար այլ ևս, նրան ներս էին  
տարել բանտը և դռները փակել էին... Իզուր  
էր մանուկը իր փոքրիկ բունցըներով թա-  
կում հաստ, երկաթապատ դուռը, որի յե-  
տեւում ծածկուած էր նրա պապէն, իզնւր էր  
ճչում, տղէկտուր ձայնով արտասուում, ոտները  
դէտին տալիս, դուռը չը բացուեց: Յոդնած,  
ուժասպառ ու յուսահատ նա նստեց բանտի  
դռանը, փոքրիկ զլուխը ծեռների մէջ առաւ  
և սկսեց մեղմէի արտասուել:

Նա այժմ կատարեալ որբ էր:  
Ոչ պապէն կար, ոչ Բաշօհ:

## Զ Ն Դ Ա Ն Ո Ւ Մ

(ՅԱՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ).

«Ես բանտարկուած էի, 189... թւի ամառը.  
ի՞նչպէս և ինչու համար, այդ ես չը գիտէի,  
չը գիտեմ և այժմ, այդ բանն այնքան արագ,  
այնպէս անսպասելի կերպով կատարուեց, որ  
ես անկարող եղայ հասկանալ, թէ ի՞նչ է կա-  
տարում ինձ հետ: Բայց ես բանտարկուած էի,  
այդ անկասկած էր, բոլորը, ինչ որ ինձ շըր-  
շապատում էր, անողորմ կերպով վկայում էր,  
որ ես բանտարկուած էի: Իսկապէս բանտ չէր  
այն, այլ մի բուն, մէր երկրում նրան «զնդան»  
են անուանում: Այդ զնդանը նեղլիկ էր ու ցածր,  
բայց այդ բառերով գժուար է արտակայտել,  
թէ որքան ցածր էր նա: Երբ ես փորձում էի  
ոտքի կանգնել, ստիպուած էի լինում կոտ-  
ուքի մինչեւ մէջքս, իսկ երբ կամենում էի  
նալ մինչեւ մէջքս, իսկ երբ կամենում էի  
պառկել, պէտք էր լինում մէջքս մի պատին

դէմ տալ և ուներս հակառակ պատին ցից  
անել՝ կազմելով մի աղեղ։ Խաւար էր ներսը,  
համարեա զիշեր, լոյսի մի քանի խիստ աղօտ  
շիթեր ասես վախվախելով թափանցում էին  
գոան վրայի փոքրիկ, շատ փոքրիկ ճեղքից,  
որ հազիւ եղան աչքի մեծութիւն ունէր։ Այդ-  
քան չնչին լոյս գուցէ մեռելներն կը իրանց գե-  
րեզմանում ունենան. վատատես չէի, աչքանով  
կը կարողացայ պատերը նշմարել։ Ինչ գոյն  
ունէին նրանք, այդ գժուար էր որոշել, միայն  
ինձ թւում էր որ նրանց գոյնը և՛ սե էր, և՛  
կանաչ, և՛ կարմիր, և՛ սպիտակ. քանի մի գոյ-  
ների զգուելի խառնուրդ, տեղ-տեղ խոնաւու-  
թիւնից մամռակալած, բորբոսնած։ Պատերը  
ճեղքեր ունէին, մանր, հազիւ նկատելի ճեղ-  
քեր. դրանցից մինի մէջ ես կարողացայ նշմա-  
րել մի սպիտակ բան, և մատներով գուրս բա-  
շեցի այն, դա լուցկու ամանի մի կտոր էր,  
որի վրա ինչ որ գրեր կային. ես հետաքրքր-  
ուեցի իմանալ, թէ ի՞նչ է կտակել իր տա-  
րաբաղդ յետնորդներին մի նախկին բանտար-  
կեալ, որ այս գժոխքից գուցէ կախաղան է  
առաջնորդուել կամ աքսորավայր... Բարեբաղ-  
դարար լուցկի կար մօտս։ Լուցկին վառեցի.  
«ով և լինես դու, իմ խեղճ բազդակից և յա-  
ջորդ, զրած էր այնտեղ, ոչինչ չը խոստովա-  
նես, ոչ մի անուն չը տաս, եթէ գիտես. քաղցր»

խօսքերով չը խաբուես, խոստովանութիւնը  
չի փրկի քեզ»։ Հանդիսա սոկորներիդ, եթէ  
մեռած ես, մրմնչացի ես։ Ի՞նչ խորհրդաւոր  
գաս էր. այդ, որ այս մահու աշխարհի բնա-  
կիչները տալիս էին իրանց յետնորդներին։  
«Յատակի վրա նշմարեցի ինչ որ ծակեր.  
միայն մկներն են այլպիսի ծակեր բաց անում,  
երեսի այնուեղ ներքեռում նրանց մի ամբողջ  
գիւղ կայ, մտածեցի ես։ Այս հանգամանքն ինձ  
ցաւ չը պատճառեց, նոյն իսկ միսիթարեց։  
Բանտի, այն էլ այսպիսի բանտի ճնշող, սպա-  
նիչ միայնութեան մէջ որ և է կենդանու-  
թիւնութեան գիտակցութիւնը սփոփիչ է, փոլթ  
չէ նոյն իսկ, եթէ դա մի զգուելի մուկ լինի։  
Ժամեր անցան, ժանր, յաւիտենականութեան  
չափ երկար ժամեր, թափիծը ճնշում էր  
հոգիս Ես՝ աչքերս ակամայ ուզզած յատակի  
ժակերին, ակնապիշ դիտում էի, սպասելով՝  
որ գոնէ մկներից մէկն ու մէկը գուրս գայ.  
միայն կենդանի շունչը կարող էր մի փոքր  
թեթեացնել իմ ծանր վիճակը, լիշեցնել ինձ,  
որ աշխարհը դեռ կայ, դեռ ապրում է, որ  
որ աշխարհը դեռ կայ, դեռ ապրում է, որ  
որ ու արե, աստղեր ու լուսին, երկինք ու  
երկիր անցած գնացած բաներ չեն, որ բնու-  
թեան կեանքը դեռ չի գաղարել, շարունակ-  
ում է։  
«Բանտ, ի՞նչ մօտ է զգում մարդ այդտեղից

դերեզմանը. մի բայլ միայն, մի հատիկ քայլէ մինչև յաւիտենական բնակարանը. և միթէ նոյն խկ այդ բանար հէնց գերեզման չէր, ուր ես թաղուած էի կենդանի... Օդը զարհուրելի էր, այնպէս ծանր, որ անկարելի էր շնչել, գարշահոտութիւնն անտանելի էր. մկներն իրանց ներկայութեամբ պատճառառած միխթարութիւնը շատ թանդ էին վաճառում բանտարկեալին. գարշահոտութիւնը նրանց բացած անցերից էր փչում, որովհետեւ հէնց բանտի տակից էր անցնում քաղաքի աղբատար խողովակը:

«Օրուայ ո՞ր ժամն էր, ես չը գիտէի. կէսօք էր արդեօք, երեկ՞յ, թէ զիշեր, բայց ի՞ց զնդանում արդէն խաւար էր և լուս, միայն պատի մի նեղքում ձռջուայնում էր իր տխուր միակերպ երգը խաւարի և միայնութեան սիրահար նպուռը: Ես ականչ էի դընում. «ճը՞ռ, ճը՞»։ այդ էլ մի բան էր, այդ էլ սփոփիչ էր... Յանկարծ զգացի ձեռքիս վրա տաք, քնքոյշ շնչառութիւն։ Առանց այդ ձեռքս շարժելու, ես զգուշութեամբ մօտեցրի միւս ձեռքս և բռնեցի մի փափլիկ տուարկայ. դա մի մեծ մուկն էր, փափուկ թաւշանման մորթիով. նա երկիւղի կամ անհանգստութեան ոչ մի ցոյց չարեց, այլ շարունակում էր լիզել ձեռքերս և ով գիտէ՝ բանի գմբազդ-

ների արիւնոտ վկրքերն էր լիզել այս կենդանին... նա կամաց-կամաց բարձրացաւ դէպի ուսս, նա խաղում էր մազերիս հետ, ես նրան չը քշեցի, չը հալածեցի, և իրաւունք էլ չունէի, նա իր սեփական բնակարանումն էր, նա այստեղ տէր էր, ես էի միայն անկոչ հիւրի պէս ներս եկել խռովելու նրա կեանքի միակերպութիւնը, խանգարելու նրա հանդիսարք։ Ահա նա վար իշաւ և հեռացաւ. ինձ վրա երեկ ոչինչ ախորժելի բան չը դտաւ, արթիւն էր փնդրում, ով գիտէր... նա ծածկուեց իր բնում, ես մնացի դարձեալ միավնակ. միայն նպուռը անհասկանալի եռանդով շարունակում էր իր երդը՝ «ճ՝ ըռ, ճ՝ ըռ»։ միշարունակում էր իր երդը՝ «ճ՝ ըռ, ճ՝ ըռ»։ միշարկերպ, միաձայն, ասես թէ վիրշ առնելու էր ողորմելի միշատի այս տխուր ձեղեղին. էնչ էր որոնում այդ խղճալի կենդանին այս էնչ էր որոնում այդ խղճալի կենդանին այս էնչ էր ամբողջ աշխարհարկը բնում. միթէ ամբողջ աշխարհարկը բնում մի այլ յարմարաւոր տեղ չէր դտել իր բնակութեան համար, ով կարող էր իմանալ. բնակութեան համար, ով կարող էր իմանալ.

«Ահա նա էլ լռեց։ Լուս էր շուրջու, խոր, ահաւոր լուսութիւն, միայն զրոխից լուսում էր պահապանի ոտնածալնը, նա անվերջ դնում

դալիս էր խաւար միջանցքում, մերթ ընդ  
մերթ կանդ էր առնում, ականչ դնում և  
կրկին շարունակում դնալ գալ միշտ միա-  
կերպ, միշտ համաշափ քայլերով:

«Գուցէ կէս գիշերն անցած լինէր, բայց  
քունը շարունակում էր խուսափել իմ աչ-  
քերից, մարմնիս մի փոքր յարմար դրութիւն  
տալու բոլոր փորձերս անաջող անցան, ես  
անկարող եղալ նոյն խսկ խոնաւ գետնի վրա  
հանդիսա առնելու բարիքը վայելել: Սահ-  
պուած նստեցի և մտածում էի իմ դրութեան  
վրա, մտածում էի անվերջ... մտածելու էլ  
շատ և շատ բան կար: Ես ապշած էի մնա-  
ցել, այն աստիճան այս կացութիւնս ինձ  
յանկարծակի եկաւ:—Միթէ ես բանտար-  
կուած եմ, մտածում էի ես. ինչու, ո՞ր յան-  
ցանքիս համար. ես յանցանք չեմ զործել, ինչ-  
պէս կարող եմ ես բանտարկուած լինել. միթէ  
բոլորովին անմեղ մարդը այս ահաւոր  
զնդանի մէջ կը նետուի, այդ անհնարին է:  
Սշարհում օրէնք ու արդարութիւն չը կա՞յ  
ալիս: Մի՛ գուցէ այս բոլորը երազ է միայն,  
և այս բանտը իր զգուելի պատերով, և այս  
մկները, և այս ճպուան իր միաձայն տխուր  
մեղեղիով, բոլորը, բոլորը, գուցէ երազ են և  
ուրիշ ոչինչ: Այս, ուրիշ կերպ չի էլ կարող  
լինել, սա երազ է, երազ է...

«Երաղ է, մրմնջում էի ես գոհութեամբ...  
ահա մեր տունը, ահա կինս, ահա զաւակ-  
ներս... խեղճե՞ր, ի՞նչ սարսափելի կը լինէր  
ձեր վիճակը, եթէ այս սարսափելի երազն ի-  
րականութիւն լինէր, եթէ յիրաւի ես բան-  
տարկուած լինէի: Վաղ առաւօտը ես անկող-  
նից վեր կացայ, կինս չուր գուեց ինձ լուա-  
ցուելու, սա նրա տմենօրեայ պարտքն է,  
ապա բոլորեցինը թէյի սեղանի շուրջը՝ չա-  
րաննի հրաշեան անպատճառ ուզում է իմ  
ծնկան վրա նստած թէյ խմել, այս բանի  
գէմ բողոքում է ամենափոքրիկը, այն սեաչայ  
նուշանիկը, որ թաթիկները մեկնած, մօր  
զրկից ծգւում է դէպի ինձ. ես նրան էլ եմ  
առնում և նստայնում միւս ծնկանս վրա,  
երկու փոքրիկ գանգուր զլխիկները ծածկւում  
են կրծքիս վրա. ես ժպտում եմ, նայում եմ  
ամուսնուս. նա էլ է ժպտում. ի՞նչ լաւ է,  
ի՞նչ քաղցր է. երջանիկ ենք մենք:

«Ճ՛րու» բացուեց զուռը. դա երկելի խա-  
նութի աշակերտն է, որ գալիս է բանալին  
տանի գուռը բանալ, մինչև իմ դնալը. ես յետ  
նայեցի դէպի գուռը, ծնկանս վրայից ցած-  
սողաց փոքրիկ նուշանիկը և վայր ընկաւ-  
սատակի վրա, նա ճշաց ցաւից, ես նրա ծայ-  
սատակի վրա, նա ճշաց ցաւից, իմ առաջ կանգնած էր  
նից վեր ցատկեցի, իմ առաջ կանգնած էր  
լամպը ձեռքին բռնած մի դաժան պատեր,

մի դե: Ո՞վ էր դա, ի՞նչ եղաւ խանութիշակերտք: Աչքերս տրորում եմ, նայում, նայում, Տէր-Աստուած, սա թիւրք է, ի՞նչ է ուզում ինձանից, ինչու է այսպէս վաղ առաւօտ ներս խցկուել մեր տունը. դարձեալ նայում եմ և չեմ կարողանում հասկանալ, թէ երկու պատկերներից ո՞րն է երազ. իմ տունն ու ընտանիքը, թէ այս ներս մտնողը՝ իր դաժան զարհուրելի պատկելով. ո՞վ է սա...

— Վե՛ր կաց, բաւական է մրափես, գոչեց անձանօթ պատկերը և ոտքի մի ժանր հարուած հասցրեց կողքիս ջաւը խիստ էր, քունս խսպառ փախաւ, ես ոտքի կանգնեցի, ամեն բան պարզուեց. իմ առաջ կանգնած էր ինքը բանտապետը և այս վերջին սարսափելի պատկերը անողորմ իրականութիւն էր, միայն այն՝ իմ երշանկութեան, իմ տան ու ընտանիքի պատկերն էր երազ, որ չքացաւ. ասես թէ դառն ճակատապիրը ցոյց տուեց ինձ այդ մխիթարական երևոյթը, որպէս զի աւելի ժանր լինի իրականութեան պատճառած ցաւը...

— Հետեխիր ինձ, հրամացեց բանտապետք դուրս գալով դռնից. ես անխօս գուրս եկայ: Դրսում, դռան առաջ մեղ սպասում էին երկու զինուորներ հրացանները ուսներին. նրանք անցան իմ աշ ու ծախ կողմերը և մենք

առաջ շարժուեցինք. զինուորների հրացանների սուխնները պարզ, սարսեցուցիչ փայլ էին արձակում բանտապետի լամպի աղօտ լոյսի տակ, որը քայլում էր իմ առջևից: Մենք անցանք բանտի երկար, նեղ ինչպէս խողովակ միջանցքը, դուրս եկանք բակը: Զորս կողմներս խաւար էր և անմարդ. վերև նայեցի, երկինքն իր տեղում, սատղերն ամեն օրուայ պէս պլազմով փայլում էին այնտեղ՝ կատարելով իրանց սովորական ընթացքը: Ես ագահութեամբ ծծում էի թարմ օդը. բակն ընդարձակ էր, գնում ենք գնում, վերջ չը կայ:

— Ո՞ւր էք տանում ինձ, հարցրի ես վերշապէս:

Դա մի սխալ էր իմ կողմից, լոելն աւելի խոհեմութիւն էր, որովհետեւ պատասխանի փոխարէն ես թիկունքիս վրա մի սաստիկ հարուած զգացի, զինուորներից մէկը հրացանիթով վերջ դրեց իմ հետաքրքրութեանը:

— Գնա՛ առանց խօսելու, ասաց նա: Սակայն հարուածից լետոյ այդ հրամանն աւելորդ էր, ես այլ ևս խօսելու չէի, փորձը շատ գառն էր:

Ահա վերշապէս մի երկար, ուղղաձիգ դրուած, նեղ, փթած սանդուղը, որով վերին արակն ենք բարձրանում. իւրաքանչիւր աստիճանը ճռՃռում է մեր ոտների տակ, բայց

մենք բարձրանում ենք խարխավելով, ահա և երկորդ յարկը. մի պատշգամբի վրա ենք, բանտապեար մի դուռ բացեց, ինձ ներս տարաւ: Նեղ, կիսախաւար ու երկար սենեակ էր այն, խիստ յածր առասասազով, որը սենեակին աւելի անախորժ, աւելի ճնշող տեսք էր տալիս: Սենեակի խորքում զրուած էր մի սեղան, որի վրա զրուած մոմք աղօտ, վախկոտ հառագայթներ էր արձակում իր շուրջը՝ հազիւլուսաւորելով մի փոքրիկ աարածութիւն և մի քանի անորոշ գէմքեր: Սեղանի ճակատին նստած էր մի դաժան, մռայլ պաշտօնեալ և թերթում էր ինչ որ թղթեր. նրա աչ և ձախ կողմերում կանգնած էին երկու ահաւոր մարդիկ՝ ունենալով ձեռքերին մի-մի հաստ պարան, ծալրերին երկաթէ հաստ դնդեր ամրացրած. նստող պաշտօնեան ինձ տեսնելով՝ զլուխը բարձրացրեց, ձեռքով աչքերի վրա հովանի արաւ և սկսեց դիտել:

— Լսի՛ր, զաւակս, ասաց նա քաղցրութեամբ, յանցանքը գործելուց և բռնուելուց յետով, փրկութիւնը միմիայն խոսափանութիւնն է. քեզ աղատութիւն կը շնորհեմ, եթէ դու ինձ կը խոստովսնես բոլոր քո արածները ամենայն անկեղծութեամբ, և մասաւանդ՝ կանուանես քո ընկերներին:

— Բայց ես ոչ մի յանցանք չունեմ, որ

խոսափանուեմ, ես նոյն իսկ չը գիտեմ, թէ ինչու համար եմ բանտարկուած. աղաչում եմ, նախ դուք ասացէք ինձ, թէ որն է իմ յանցանքը:

— Դու լաւ գիտես.

— Ես ոչինչ չը գիտեմ:

— Ասա, շուտ, ովքեր են ընկերներդ:

— Ես ընկերներ չունեմ:

— Չունե՞ս:

— «Հալավթ», գոռաց քննիչը ահաւոր ծալնով. ես սկզբում այդ բառի միարը չը հասկացալ, բայց երբ երկու զինուած պահապահները երկաթածալը պարանները ծեռներին մօտեցան, ինձ և կանգնեցին իմ աչ ու ծախ կողմերում, մինչդեռ միւս երկուսը բռնեցին ծեռներս, այն մինչդեռ միւս երկուսը կողմերու համար ուղղում են թիւն գուրս կորզելու համար ուղղում են տանջել ինձ: Ես յիշեցի բանտի պատի մէջ լուցկու առւփի այն կտորը իր խորհրդաւած լուցկու առւփի այն կտորը իր խոսաւոր բառերով: Այդ խօսքերը կատարելու ահաւոր ժամն էր, թոյլ մարմինս առաջիկայ եթէ դու ինձ կը խոստովսնես բոլոր քո արածները ամենայն անկեղծութեամբ, և մասաւանդ՝ կանուանես քո ընկերներին:

— Սկսեցէք, հրամայեց քննիչը: Ես տեսալ,

թէ ի՞նչպէս երկու պարանձերի հաստ գնդերը բարձրացան օղի մէջ, սպառնալից պտոյտ գործեցին զլխիս վերև. էլ այնուհետեւ չեմ լիշում, թէ ինչ կատարուեց, միայն գիտեմ, որ աչքերից կայժեր ցայտեցին, զլուխս պտուեց, սենեակը արագ շրջան կատարեց, մի մօմի և քննիչի փոխարէն վայրկեանապէս տասնեակները տեսալ, ականջներումս լսուեց ինչ որ աղմուկ և ես գեաին փոռուեցի բոլորովին անզգայ...

Երբ ես աչքերս բաց արի, ինձ բանտում գտայ. երեկի ցերեկ էր, որովհետեւ պատերը որոշել կարողացավ: Շորերս բոլորովին թաց էին. ամբողջ մարմինս սաստիկ ցաւում էր. մի աչքս գոցուած էր, ոչինչ չէր տեսնում, գէմքիս կէսը անտանելի ցաւում էր. ես շօշափեցի, յօնքիս վրա մի մեծ ուռուցք կար. ի՞նչ էր պատահել ինձ հետ, հասկանալ չէի կարողանում երկար ժամանակ. ինչու էին թաց շորերս, ի՞նչ ցաւ, ի՞նչ յոդնածութիւն էր, որ պատել էր մարմինս, ի՞նչ ուռուցք էր յօնքիս վրա և ես մտածում էի երկար... Դուռս թխկաց, ներս մտաւ բանտապեար. այդ գէմքը դարձեալ տեսել էի, անցեալ գիշերն էր. օ, ես լիշեցի բոլորը, բոլորը. խաւար գիշերը, հրացանի կոթի հարուածը, այն սարսափելի սենեակն իր նոյնքան սարսափելի մարդկան-

ցով, հարց ու փորձը, այն ահաւոր «հալաթները», անողորմ ծեծը, որից լետոյ անշուշտ ես ուշաթափուել եմ, չուր են ածել զլխիս, որ ուշքի գամ, երբ չանք երն ապարդիւն են անցել, բերել են ծգել զնդանը՝ ապրելու կամ մեռնելու համար. բայց ես ապրում էի դեռ... Եւ այս զարհուրելի բանտապեար ինչ որ ուտելիք էր բերել ինձ՝ ողբալի կեանքով շարունակելու համար:

— Առ, լակի՛ր, ասաց նա ցած դնելով մի կեղառա խեցատ՝ անտանելի հեղուկով լի, ուր վիտում էին մամուկների և այլ միջատների մարմինները:

Բանտապեար հեռացաւ, դուռը փակուեց: Վաղուց էր ինչ բան չէի կերել բաղցու խիստ մեծ էր, բայց և այնպէս զգացի, որ անկարող եմ ուտել այդ զաղորելի հեղուկը, եթէ նոյն իսկ սովամահ լինելու վտանգի մէջ լինեմ: Ի՞նչ պէտք էր անել. մէկ էլ կռացայ խեցատի ի՞նչ պէտք էր անել. մէկ էլ կռացայ խեցատի վրա, մէկ էլ խառնեցի հեղուկը. մամուկները շատ էին, իղուր էր, պէտք էր մի ուրիշ տեսնել: Յանկարծ լիշեցի, որ երբ ինձ հար տեսնել: Յանկարծ լիշեցի, մի քանի ոսկիներ բանտ էին առաջնորդում, մի քանի ոսկիներ վերցրի հետս, բայց մնացել էին արդեօք, թէ վերցրի հետս, բայց մնացել էին արդեօք, զինուորները հանել են. նաևցի, մի բաղդ էր, զինուորները հանել են. նաևցի, մոտեցել էին զրպաններս մոռացել են զրպաններս խառնել, դուռը թակեցի, բանտապեար մօտեցաւ:

— Լոհիր, բանտապես, աղաչում եմ քեզ, ի  
սէր Աստուծոյ, ողորմած եղիր, և մեռնում  
եմ քաղցից, բայց այս հեղուկն ուտել չեմ կա-  
րող, գնիր ինձ համար մի փոքր հաց ու  
պահիր:

— Բախշի՞շ, բացականչեց նա:

Ես տուի մի ոսկին, ուրիշ ճար չը կար. նա  
դնաց և քիչ յետոյ բերեց ինձ մի փոքր հաց  
ու պանիր և դռան ծակից ներս դցեց. ես  
խարխափելով ճանկեցի յատակի վրայից և ա-  
գահութեամբ ուտել սկսեցի: Շուտով կշտացայ,  
մնացածը պահեցի գրպանում՝ ուրիշ անդամ  
ուտելու համար: Յողնած, ջարդուած մարմինս  
քնի անյաղթելի պահանջ ունէր տակաւին.  
Ճեծն այդ կողմից մի բարիք էր, ես քնում էի  
անվերջ՝ մոռանալով կացութեանս սարսափը:  
Դեռ հազիւ աչքերս փակուել էին, երբ գրպա-  
նիս մէջ ինչ որ կենդանու խլվոյը ինձ  
զարթեցրեց: Այնաեղ մի մեծ մուկ կար, նո  
եկել էր գողաճալու իմ պաշարը: Դժուար  
թէ աշխարհում երբ և իցէ որ և է աւելի  
անսիրտ գողութիւն կատարուած լինէր, բան  
այն, որ այս մուկն էր կամենում անել: Սա  
կատարեալ ոճրագործութիւն էր: Ես շտապե-  
ցի հալածել նրան և պանիրն ու հացը ծոցս  
գրի, պինդ փաթաթեցի. այժմ ապահով էի,  
որ պաշարս վտանգից դուրս էր, ուստի նո-

րէն աչքերս դոցեցի և քուն մտայ: Սակայն  
մի երկու րոպէից կրկին զարթնեցի, որով-  
հետեւ մուկն աշխատում էր ծոցս մտնել, կըր-  
ծուառմ էր շորերիս կարերը, խառնում էր  
կուրծքս յամառ, աներես կերպով: Ես կրկին  
հալածեցի նրան և կրկին քնեցի, բայց նա  
դարձեալ եկաւ ինձ զարթեցրեց: Եւ այսպէս  
երկար ժամանակ մենք կռւում էինք, ինձ  
համար դա կեանքի և մահու կռիւ էր, մուկն  
էլ երեխ զարմանալի ախորժակ ունէր պանիր  
ուտելու: Միւս կողմից քնելու պահանջն ան-  
ընկճելի դարձաւ. ես թուլանում էի, ճարս  
կարուած զոհեցի պաշարս, սրտի առանձին  
ցաւով ծոցիցս հանեցի այն հացն ու պանի-  
րը, գցեցի յամառ մկան առաջ և խոր քուն  
մտայ:

Երեկի կէս գիշեր էր, երբ ինձ արթնացրեց  
բանտապետն իր ոտի սովորական հարուածով:  
Աչքերս բաց արի. նա գեի պէս առաջս էր  
ցցուած լամպը ձեռքին. ես հասկացայ, որ այս  
անգամ էլ ինձ սպասում է նախորդ գիշերուայ  
տանջանքը, բայց հաշտուած լինելով վիճակիս  
հետ, առանց մի բառ արտասանելու վեր կա-  
ցայ: Լամպի լոյսն ընկաւ յատկապէս այն  
նեղքի վրայ, ուր սպիտակին էր տալիս լուց-  
կու տուփի այն չնչին կտորը. ինձ թւում էր,  
որ իմ նահատակ ընկերն է այնաեղից զգու-

շութեամբ թարթում իր աչըր և ինծ քաջարերում, ես կարծես թէ լսում էի նրա փրսփոցը՝ «ոչի՞նչ չը խոստովանես»։ Ես դուրս եկայ բանտապետի հետ, զարձեալ ինծ ուղեկից եղան երկու զինուորներ, որոնցից մէկը խիստ կարճահասաւկ, փոքրիկ մարդ էր, նիհար, բայց տարօրինակ երես ունէր, զգուելի ու չար՝ փոքրիկ կատուի աչքերով։ Ինծ ներս տարան մի և նոյն սենեակը, ուր նստած էր նոյն քննիչը, սկսուեց նոյն հարց ու փորձը՝ որը կրկին վերջացաւ անողորմ ծեծով։ միայն այս անգամ երեկի իմ ակնյալանի ուժասպառութիւնը տեսնելով և վախենալով յանկարձաման տնել, հարուածում էին ինծ հալաթների հակառակ ծայրով, որ երկաթ չունէր։ Բայց և այնպէս՝ ծեծից վերջը ես արդէն ուժասպառ էի, ոտքի վրա կանգնել չեի կարողանում, գլուխս պտըտում էր. վիրաւորուած և ուռած յօնքս հարուածներից պաշտպանելու ջանքերս իզուր անցան, մի ծանր հարուած էլ նոյն ուռուցքի վրա իշաւ, աչքս կրկին փակուեց. ցաւն անտանելի էր։ Այս վիճակում ինծ յանձնեցին այդ փոքրիկ զինուորին՝ որ բանտ առաջնորդի։ Տաղիւ բայց լում էի երերալով։

— Շուտ-շուտ դնա՛, դեաւուր, շտապեցրեց ինծ զինուորը։

Ես ոչինչ չասացի, այլ լուռ շարունակեցի քայլել՝ հաղիւ ոտներս փոխելով։

— Շուտ դնա, տսում եմ քեզ, կրկնեց զինուորը, հրելով ինծ հրացանով։ Ես վար ընկալ ծնկներիս վրա և կրկին ոտքի ելալ։

— Տեսնում ես, որ չեմ կարողանում աւելի արագ դնալ, ախր Աստուած ունես, պատասխանեցի ես համբերութիւնս հատած։

Հասանք սանդուղքի ճալրին. Ես զեռ նոր ոտքս առաջին աստիճանի վրա էի զրել, երբ զինուորը յեակեցու մի քացի տուեց, ես բոլոր տատիճանների վրայից զլորուելով ներքեւ ընկալ և մնացի ընկած։ Ծալուած ոտքս անտանելի ցաւում էր, ինծ թւում էր՝ թէ կոտրուել է։ Ես չեմ համարձակւում նոյն իսկ շարժել, այդ ժամանակ իմ դահինը վերել սանդուղքի ծայրին կանգնած հռհռալով ծիժածաղում էր, ապա սկսեց հանդարտ ցած իշնել՝ շարունակելով ծիժաղել և ծաղրել իմ անծայր թշուառ վիճակը։ Տեսնելով այդ աստիճան անխիղճ, քարասիրտ անամօթութիւն, մի այնպիսի կատաղութիւն եկաւ վրաս, որ եթէ ոտքի կանգնել կարողանալի, եթէ ոչժերս մի փոքր ինծ չը դաւաճանէին, անպատճառ կը խեղդէի այդ հրէշին։ Վերջապէս նա ցած իշաւ։

— Վե՛ր կաց, դնանք, ասաց։

— Ուաքս կոտրուեց, չեմ կարող գնալ, պատասխանեցի ես: Նա մի փոքր կանգ առաւ, մտածեց, ապա բռնեց ոտքիցս և փորձեց քաշէքաշ տանել, բայց չը կարողացաւ, դա նրա ոլժից վեր էր:

— Վեր կաց, ասում եմ քեզ, ատամները կրծաելով կրկնեց նա և կրկին խփեց հրացանի կոթով: Սա արդէն չափաղանց էր. այդ աստիճանի տմարդի վարժունքը արիւնը դլուխս խփեց, ես վայրկենապէս փոխուեցի: Մի անօրինակ գօրութիւն ցնցեց իմ բոլոր թուլացած անդամներս, մոռացայ ամեն ինչ՝ և՛ բանտր, և՛ ծեծը, և՛ ոտքիս անտանելի ցաւը, և՛ սարսափելի վտանգը, գերմարդկային նիդ գործ դրի, վեր ցատկեցի, երկու ձեռքով բռնեցի այդ գաճաճի զզուելի կոկորդը... փորձեց ծչալ, բայց իդուր, ես սղմում էի քանի կարող էի. յուղմունքիցս ատամներս ճարճատում էին իրար վրա սղմած: Կրածս տանշանքներից սրտումս մթերուած վրէժինդրութեան բոլոր թոյնը թափում էի այս մի հատիկ անպիտանի վրա, որ իր զզուելի արտաքինի պէս էլ չար հոգի ունէր: Բանտի խաւար բակում ոչ ոք չը կար, նա ծամածուում էր իմ ձեռների մէջ, ոլորուում էր, աշխատելով գոռալ: Իմ ոլժերն էլ նուազեցին. զգացածս գօրութիւնը մի վայրկենական յուղմունքի

արդիւնք էր, որ արագութեամբ անցաւ. նըրան յաջորդեց իմ մարմնի համարեա մեռելալին դրութիւնը, և ես կրկին վայր ընկայ. նա ազատուեց և ծչաց: Եկան մի քանի հոգի. իմ վիճակը սարսափելի եղաւ. ես չը գիտեմ, թէ ինչ կատարուեց ինձ հետ. գոյզանների մի խումբ քրքրում, բղկառում էր իմ վիրաւոր, ուժասպառ մարմինը: Այնուհետև երբ էին ինձ բանտ տարել՝ ես չը գիտեմ. միայն յաջորդ օրը, երբ աչքերս բաց արի, ոտներս շղթայակապ, դտալ. ծանր, ժանդոտած շղթաներ, որոնց շարժելու անդամ ես էլ ոյժ չունէի: Նայեցի բռնութեան և սարկութեան այդ դարաւոր բարեկամին, որ առանձին սիրով գրը կել էր իմ վիրաւոր ոտները. չը գիտեմ ինչու, ձեռքով շօշափեցի նրա ժանդոտ օղակները, նրանք սառն էին, մահու սառնութիւն, որից սարսուեց մարմինս. ձեռքս յետ բաշեցի, փորձեցի ոտքի կանգնել, շղթան ահաւոր շառաչիւն հանեց, կարծես դժգոհ նոյն իսկ այդ անմեղ շարժումից. չէ՞ որ նա անշարժութեան խորհրդանշանն էր:

Այսպիսով անցաւ տասն օր: Իմ վիճակի մէջ ոչ մի փոփոխութիւն տեղի չունեցաւ: Ամեն գիշեր իմ զարհուրելի շղթան հազիւքալով ես տարւում էի վերև, ինձ սովորաց տալով ես տարւում էի վերև, ինձ սովորական եղանակով ձեռում էին յանցանքս խոս-

տովանել տալու համար, և քաշ տալով, էլի ետք բերում բանտն էին դցում խսպառ ուշաթափ: Վերջին օրերը ես զգացի, որ եթէ էլի ծիքանի օր այսպէս շարունակուի իմ զրութիւնը, ես անպատճառ կը մեռնեմ: Սակայն օդնութիւնը հասաւ. կինս վաճառել էր իմ խանութի բոլոր ապրանքը, մի խոշոր գումար էր տուել իմ քննիչին, միւս օրն ինձ աղատեցին շղթաներից և հանեցին բանտի ընդհանուր բաժինը տարան, ուր կեանքը համեստատարար աւելի տանելի էր:

Բանտի այս ընդհանուր բաժինը երկու յարկից բաղկացած մի ընդարձակ շինութիւն էր, թէւ հոտած, կեղտոտ, միշտաներով լի, բայց համեմատելով իմ զնդանի հետ, սա արքայութիւն կարող էր համարուել և ես երշանիկ համարեցի ինձ, որ վերջապէս գուրս եկալ այն դժոխքից: Այստեղ գոնէ մարդիկ կալին, լայն արձակ տեղ կար, կարելի էր ոտները ծգել, ձեկնուել քնել. անկողին ինարկէ չը կար, բայց մի փսիաթ ճարւում էր՝ տակներս դցելու համար, այդ էլ մի բան է, և ես շատ գոհ էի: Բանտն էլ մի հետաքրքիր աշխարհ է, ուր ամեն տեսակ մարդիկ ակամայ կենակյութեան են զատապարտուած, և մի հոգեբանի դիտողութիւնների համար առատ ու հետաքրքիր նիւթ է ներկայացնում: Մարդ-

կալին հոգին նման է ծովին, որի մակերեսով թրխաղաղ է, սիրուն, հարթ-հաւասար, բայց իր ներսում, յաւիտենական խաւարի և խորհրդաւոր անյայտութեան մէջ բազմաթիւ պատկերներ, հրաշալի երկովթներ ունի թագցրած: Ահա մի բանտարկեալ. Տուալ ու անհամբոլ է նրա դէմքը, խոժոռ, նոյն իսկ թունալից են աչքերը, իսկ և իսկ աւազակ, չարագործ: Ահա մի ուրիշը դէմքը ժպտուն, պայծառ ճակատ, գրաւիչ աչքեր, ահա մի երրորդը՝ վշտահար, մտազբաղ դէմք ունի, լուսէ, և, բայց ոչ ոք սիրտ ձի անում խօսել հետո, կարծես թաղնուած հրաբուղիս լինի. մի ուրիշը՝ յանդուղն ու անվախ, կարծես իր տանը լինի, բոց ու շանթ ունի աչքերի մէջ, արհամարհում է ամեն ինչ: Եւ սրանք բոլորն էլ մարդում է ամեն ինչ: Եւ սրանք բոլորն էլ օրէնքով՝ աւելանտարկեալներ են, բոլորն էլ օրէնքով՝ աւելանտարկեալներ են, բոլորն էլ օրէնքով՝ չամաց կամ պակաս չտիտով յանցաւոր են նաև լի կամ պակաս չտիտով յանցաւորը, չուած: Բայց ով է իսկական յանցաւորը, ոնքրագործը, և ով է անմեղ, ով է կոչումով՝ անդրագործը, և ով է անմեղ, ով է կոչումով՝ ինչ չարագործ, և ով պատահարի, շըշանի, ի բնէ չարագործ, և ով պատահարի, շըշանի, տեղական ծախող պայմանների զոհ: Ի՞նչպէս իմանալ, ի՞նչպէս որոշել: Այստեղ էլ մարդիկ ապրում էին բանտին յատուկ մի կեանքով, ապրում էին բանտին յատուկ մի կեանքով, ուրախանում ասում խօսում էին, զբօսնում, ուրախանում ասում խօսում էին, սաղեր էին սարքում, պարում էին, երէին, խաղեր էին սարքում, պարում էին, երէմն էլ կուռում էին: Ես ամենից շատ վախերէմն էլ կուռում էին:

նում էի այդ կռիւներից, որովհետեւ հէնց առաջին օրը ես նկատեցի, որ կռիւների ժամանակ բանարկեալներից ոմանք իրանց զգեստի ծածուկ տեղերից փալուն դանակներ էին գուբա քաշում: Բանառմ, գատապարտուած չարագործը զինուած, կայ աւելի փտանգաւոր բան. ինչի՞ց է փախենում նա: Կային այնպիսիները, որոնք մի քանի օրից յետոյ պիտի առաջնորդուէին գէպի աքսոր և նրանք էլ դանակ ունէին: Դանակները բերում էին բանափի վերակացուները բախչիշ ստանալով. բանտարկեալներն իբր թէ բերել էին տալիս իրանց առօրեալ պէտքերի համար, բայց իրօք ամենայանցաւոր նպատակներով. այդ գանակների սպառնալիքով նրանք կողոպտում էին համեմատաբար աւելի հարուստ բանտարկեալներին և նրանցով պաշտպանում. էին կռիւների ժամանուկ:

Դանակ չունէր միայն ըստ երեսըթին մի խեղճ բանտարկեալ, որ իմ գիշերալին հորեւանն էր, կողը-կողքի տուած էինք պառկում: Մենք կամաց-կամաց բարեկամացանք. երկուսս էլ խեղճ էինք, երկուսս էլ առանց դանակ, չարագործների բազմութեան մէջ երկուսս էլ կարօտ պաշտպանութեան: Նա կարծահասակ էր, բայց շուշ մարմին ունէր. զէմքն առանձին աչքի ընկնող, արտայալուիչ գծեր չու-

նէր, աւելի մեղմ էր, քան թէ չար, միայն կապոյա աչքերը ինչ որ մի առանձին բան ունէին իրանց փայլի մէջ. ես նրանցից փախենում էի. բնաղդն ինձ ասում էր, որ այնտեղ թաղուած կայ ինչ որ սարսափելի կրակ, որի բորբոքումը ահաւոր հետեւանքներ կարող է ունենալ: Նա աղգով յոյն էր, անունը Միխալօ: Խե՛զն Միխալօ, նա պատմեց ինձ. իր անցեալը, արիւնոտ գրամաներով լի մի կեանք էր ունեցել: Սա երկրորդ անգամն էր, որ նրան բանտարկել էին: Առաջին անգամ նրան բանտարկել էին իր կնոշ սիրականին սպանելու համար, այդ սպանութիւնը նա պարժանքով էր յիշում. «Ես իրաւունք ունէի, իմ պատիւն էր անարդուած, այնպէս չէ», մռմռում էր նա: Մի քանի ամիս բանտում մնալուց յետոյ, նա փախել էր և երկար ժամանակ թափառական կեանք էր վարել: Իր կեանքի այդ տատանդական շրջանում նա ինքնապաշտպանութեան ժամանակ սպանել էր երկու փոլիս իր սեփական տան մէջ, ինքն ապա աջողեցրել էր փախչել, բայց նրա փոխարէն անմեղ եղբայրն էր բանտարկուել, որպէս աւազակին ապատան տուող: Լսելով անմեղ եղբօր բանտարկութեան լուրը, նա իսկոյն վճռել էր իրան կութեան լուրը, նա իսկոյն վճռել էր իրան եշխանութեան ձեռքը յանձնն՝ եղբօրն աղախանութեան ձեռքը յանձնն՝ եղբօրն աղախանութեան համար. բայց հէնց այդ ժումանակ նա

իմացել էր, որ վերջին դէպքում, երբ փօլիս-  
ներն իր տեղը գտել էին, մատնազլր իր մի  
ընկերն է եղել, այդ պատճառով նա երկար  
ժամանակ սկսել էր հնարքներ որոնել այդ  
դաւաճան ընկերոջը սպանելու, բայց այդ նր-  
ան չէր աջողուել և նա առանց իր վրէժ-  
խնդրութեան յազուրդ տալու, ստիպուած է՛ս  
եղել բանտ մտնել: Բայց նրա յոյսերը չէին  
իրականացել. իշխանութիւնը նրան բանտար-  
կելով, եղբօրը ազատութիւն չէր շնորհել, նու  
էլ բանտումն էր: Միխալօն սրտի տռանձին  
ցաւով պատմեց վերջին հանդամանքը: Իրան  
դատապարտել էին արդէն, իսկ եղբօր մասին  
կայանալիք վճռից նա տեղեկութիւն չունէր:

«Ինձ դատապարտել են 101 աարուայ բան-  
տարկութեան, սա ինձ առանձին ցաւ չի  
պատճառում, ես առանց այդ էլ իմ կեանքը  
կորած էի համարում, աւելացրեց նա. Ինձ  
տանջողը մէկ այս խեղճ, անմեղ եղբօրս բան-  
տարկութիւնն է և մէկ էլ այն՝ որ չը կարո-  
ղացայ դաւաճան ընկերից վրէժխնդիր լինել»: Որովհետեւ ինքն էր եղել եղբօր դժբախտու-  
թեան պատճառը, ուստի սաստիկ ամաջում  
էր նրանից, նրան պատահելիս համարեա միշտ  
կարմրում էր և գլուխը քաշ դցում. նրանք  
երբէք չեին խօսում իրանց ցաւերից, ըստ ե-  
րեսիթին երկուսն էլ դոհ էին, որ մէկը ստո-

րին և միւսը վերին յարկումն է բանասր-  
կուած, այսպիսով նրանք ազատուել էին յա-  
նախ իրար տեսնելու առիթներից:

Մի առաւօտ ես իմ բարեկամ Միխալօն  
գտայ սաստիկ մտազբաղ և յուզուած. բան-  
տում առանձին դէպք, աշանձին փոփոխու-  
թիւն աեղի չէր ունեցել, եթէ չը հաշուեինք  
այն, որ նախորդ գիշերը մի նոր բանտարկեալ  
էին բերել և առաջնորդել վերին յարկը, ուր  
էր նաև Միխալօնի եղբայրը: Բայց ի՞նչ յարա-  
բերութիւն կարող էր ունենալ այս նոր անձի  
յայտնուելլ Միխալօնի յուզութիւն հեա. ով  
էր այդ նոր գժբաղզը և ի՞նչ բանի համար  
էր առաջնորդուել այս գժոխքը, ես չը գիտէի:  
Երեկի բարեկամս դիտէր մի բան, նա բայցում  
էր անդադար, ծեռբերը շփում էր արագ  
արագ, և շանթալից հայեացըներ էր գցում  
նորեկի վրա ամեն անգամ, երբ նա տոիթ էր  
ունենում ստորին յարկն իշնել. այդ ժամա-  
նակ նորեկն էլ էր շփոթւում, կարծես թէ  
իրօք նրանք հասկանում էին իրար, ինչպէս  
երկու սիսերիմ հակառակորդներ, կամաց-կա-  
մաց Միխալօն իսպառ լուց, էլ ոչինչ չէր  
խօսում, ինձանով էլ ամենեին չէր զբաղ-  
ւում, ես էլ չէի համարձակւում անհանգիստ  
ուում, ես էլ չէի համարձակւում անհանգիստ  
ուում: Մի անել նրան իմ հարցերով: Սպասում էի: Մի  
անել նրան իմ հարցերով:

— Կսի՞ր, ընկեր, թէ սիրում ես ինձ,  
դնի՞ր ինձ համար մի գանակ. դու թէ փող  
ունիս և թէ քեզ հաւատում են. տեսնում  
ես, բոլորը գանակ ունեն, թող մէկն էլ մենք  
ունենանք, ով գիտէ, գուցէ հարկաւոր լինի:

Այդ պահանջը ոչ այնքան տարօրինակ,  
որքան չարագուշակ թւաց ինձ, իմ մարմնով  
սարսուռ անցաւ. մերժել չէի համարձակում,  
աշխատեցի զանազան պատճառաբանութիւն-  
ներով գժուարութիւններ ցոյց տալ, նա  
հասկացաւ, որ ցանկութիւն չունիմ կատա-  
րել նրա խնդիրը:

— Լաւ, ասաց նա, քո կամքն է:

Բայց այդ երեք բառը նո այնպիսի եղանա-  
կով արտասանեց, որ ես սարսափեցի. վրէժ-  
թնդրութիւն էր հնչում նրանց իւրաքան-  
չիւր վանկից. նրա շրթունքները ցնցւում  
էին, աչքերն ստացան ինչ որ զարհուրելի  
արտայալառութիւն. ես զգացի, որ իմ մերժումը  
շատ վատ վախճան է ունենալու. Միխալօն  
այդ ինձ չէր ների: Ստիպուեցի կատարել նրա  
ցանկութիւնը. նա զանակն ստացաւ. մեծ,  
փայլուն գանակ էր, վրան նայեց սիրով և  
զրեց իր բարձի տակ: Նա այնուհետեւ ինձ  
հետ աւելի քաղցր էր փարւում, մի անգամ  
նոյն խոկ համբուրեց ծակատս. բայց ես էլ  
աւելի վախենալ սկսեցի նրանից, մանաւանդ

գիշերները: Եւ լիրաւի, ի՞նչպէս չը մտածէի,  
որ այդ արիւնարբու մարդը թէկուզ հէնց իր  
զուարծութեան համար այդ փայլուն պարզ  
երկաթը կոկորդս կը միմի: Գիշերները նրա  
ամեն մի շարժման ժամանակ ես խելագարի  
պէս վեր էի ցատկում բնաթռթախի: Գուցէ  
ծիծաղելի համարուի իմ այլքան երկչուսու-  
թիւնը, բայց հաւատացնում եմ, որ ես սար-  
սափելի գիշերներ անց կացրի, այդ մարդը  
գարձաւ ինձ համար մի մշտական կօշմար,  
որ անդաղար սղմում էր իմ կոկորդը, անդա-  
ղար խեղղում էր ինձ, առանց վերջնականա-  
պէս մահացնելու:

Վերջապէս մօտեցաւ իմ աղատութեան օրը,  
յաշորդ առաւօտ ես պիտի գուրս գալի բան-  
տից. իմ ուրախութիւնն անսահման էր. ես  
պատրաստ էի այդ վերջին գիշերն անքուն  
անց կացնել, կէս գիշերին մօտ հաղիւ քնեցի:  
Որչափ ժամանակ էի քնել, ես չեմ կարող ա-  
սել բայց յանկարծ արթնացայ սաստիկ աղ-  
մուկից, որ լսում էր բանտի վերնալարկից,  
ես նայեցի, ուշադրութիւնս լարեցի, լսում էի  
ոտնածայներ, վիրաւորի հառաչանք, մեռնողի  
հոնդիւն: Կողքս նայեցի, ընկերս չը կար: Մի  
ակնթարժում վեր վազեցի՝ սարսափելի տե-  
սարանի ականատես լինելու նախազգացումով:  
Եւ լիրաւի տեսարանն այնտեղ ահաւոր էր.

իմ ընկերոջ խեղճ եղբայրը կուրծքը պատառուած գալարւում էր իր արեան մէջ սոսկալի հառաջանքներ արծակելով. իսկ Միխալօն՝ արիւնոտ դանակը ձեռքին կանգնած էր խելագարի պէս աչքերը չռած, արիւնակալած, հեռում էր, ասես թէ նրան պակասում էր օդ շնչառութեան համար, կուրծքը բարձր ու ցածր էր լինում, ամբողջ մարմինը դողդողում էր, նա նայում էր իր շուրջը, կարծես չը հասկանալով, թէ ի՞նչ է կատարուել:

Մէկ էլ յանկարծ վիրաւորը աչքերը բաց արեց, նայեց իր եղբորը և նուազած ծայնով հաղիւ շնչաց.

— Միխալօ, ինչու սպանեցիր ինձ:

Ելդ ժամանակ մի աւելի սարսափելի բան կատարուեց. Միխալօի կրծքից մի այնպիսի հառաջանք, այնպիսի աղաղակ դուրս թռաւ, որ սոսկումով պատեց ամենքիս. անբաւ ցաւերի տակ ճնշուած սրտի մի զարհուրելի ճիչ էր այն, որ գեռ հնչում է իմ ականջներում. ապա նա բուռն թափով արիւնոտ դանակն իր կուրծքը մխեց և ընկաւ եղբօր դիակի վրա:

Յետոյ միայն մենք իմացանք այդ դրամայի բուռն պատճառը: Դուրս եկաւ, որ նորեկ բանտարկեալը Միխալօին մատողն է եղել,

ահա՛ թէ ինչու Միխալօն այնպէս յուղուեց, երբ առաջին անգամ տեսաւ նրան: Որոշելով այդ զիշեր նրան սպանել, Միխալօն նախապէս զիտել էր նրա պառկելու տեղը, բայց մի ճակատազրական թիւրիմացութեամբ, թէ ինքնապաշտպանութեան բնաղեպվ յատկապէս այդ զիշեր դաւաճանը փոխել էր իր տեղը Միխալօի եղբօր հետ: Զարագործը իր սասաիկ կատաղութիւնից կուրացած և մասամբ դիշերային խաւարի պատճառով չէր կարողացել ճանաչել իր զո՞ր և սովանել էր հարազատ եղբօրը, վինչդեռ նորեկ բանտարկեալը, Միխալօի արիւնարբու թշնամի հէնց նոյն դիշերը փախել էր բանտից կաշառելով պահպաններին:

Ես նայեցի այդ երկու դիակներին, և սիրացուեցի արիւնով: Ես զգացի, թէ ի՞նչ մեծ մասնակցութիւն եմ յանձն առել այս զարհուրելի դրամայի մէջ՝ դանակ տալով չարագործի ծեռքը: Յուսահատ արտասուբները խեղղեցին իմ կոկորդը. նզովեցի այն ըոպէն, երբ ինձ զնդանից աղատելով այս ընդհանուր բաժինը բերին. միների հասարակութիւնը հաղար անգամ գերադասելի էր: Երբ ես վարիչաց ներքին կաթիլ-կաթիլ ընկնում առաստաղի ճեղքերից կաթիլ-կաթիլ ընկնում

էր կարմիր, զարհուրելի հեղուկը: Յաշորդ  
առաւօտ ինձ արծակեցին այդ դժոխքից. բայց  
ևս արդէն ձերացել էի»:

1896 թ.

### ՅԱՐԵՒԱՆՆԵՐԸ

Մարտօն և Յովակը լաւ հարեաններ էին.  
Երկուսով էլ մեծ ընկառիքի տէր, երկուսով  
էլ աշխատաւոր, իրանց ցաւն ու հոգար,  
իրանց «խէրն» ու «շառը» իմացող, աև օրուայ  
համար մտածող, ժիր երկրագործներ էին:  
Մի բարակ պատ էր բաժանում միայն նրանց  
խրճիթները իրարից, բայց երկու հարեաննե-  
րի փոխադարձ բարեկամական զգացմունքն  
այնքան զօրեղ էր, որ նրանք իրանց բնակա-  
րանների այսքան մերձաւորութեամբ չը բա-  
ւականանալով՝ մի փոքրիկ ծակ էին բաց  
արել կից պատի վրա և այսպիսով երկու  
խրճիթները դարձել էին համարեա մի ընդ-  
հանուր խրճիթ, որովհետև շնորհիւ այդ  
փոքրիկ անցքի, պատի երկու կողմում զանա-  
զան յարկերի տակ ապրողները շատ լաւ

իմանում էին, թէ ի՞նչ է կատարում հարեանի տանը. ով է այնտեղ, ինչ է խօսում, ի՞նչ են անում, ե՞րբ ևն քնում, ե՞րբ վեր կենում: Երկու հարեանները դադանիբներ չունեին իրարից թագյներու, այս պատճառով փոքրիկ անցըր ոչինչ անյարմարութիւն չը ներկայացնելուց զատ, նաև ծառայում էր իրեւ յարմար միջոց զանազան ամանների, գործիքների, շատ անգամ կերակրի, փոխհացի, կրակի փոխանակութեան և որ ամենից զլխաւորն է՝ վտանգի ժամանակ դա անփոխարինելի ծառայութիւն էր մատուցանում հարեաններին—այնտեղից օդնութիւն աղաղակելը շատ հեշտ էր: Հարեաններից իւրաքանչիւրն ունէր իր արտը և այն՝ մշակելու համար մի զոլոտ հաստավիզ եղը, որ իրանց զաւակների չափ սիրելի էին նրանց: Արտ ու եղ տուն ու լնտանիք, թէև չորս հասկացողութիւններ էին, բայց երկու հարեանների համար զրանք միացել, կազմել էին մի հասկացողողութիւն, որ կազմում էր նրանց կեանքի խորհուրդը, նրանց անդադրում աշխատանքի դրդիչը, յարաւե հոգայողութեան, ընքոյշխանամբի առարկան: Գիւղական ընտանեկան կեանքի զանազան երեսութիւնների մասին երկու հարեանները համարեա մի և նոյն հասկացողութիւնն ունէին, և իրանց գործունէում

թեան մէջ մի և նոյն մտքերով, մի և նոյն զգացմունքներով էին առաջնորդուում: Մի տարօրինակ զուգաղիպութեամբ նրանց տարիքն էլ նոյնն էր և կարծես իրանց այդ նմանութիւնը կատարեալ դարձնելու համար երկու սովոր էլ ծխում էին միատեսակ չիրուխներով և ծխում էին անդադար, աղահարսար, մանաւանդ երբ միասին էին. այդ ժամանակ ասես թէ իւրաքանչիւրն իր օրինակով քաշալերում էր ընկերին աւելի առատ ծուխ արձեկել: Գիւղամիջում, սաքւում, զիւղական յարկերում զոյդ հարեանները միշտ միասին էին նստում և քուլա-քուլա ծուխ արձակում դէպի վեր:

Սկս հանգամանքն էր պատճառ երեխ, որ Ն... զիւղացիները նրանց անուանում էին «Երկու չիրուխներ»: Երբ Մարտօն ու Յովակը կերակի չիրուխներ»: Երբ Մարտօն ու Յովակը կերակի կած ծխի ամպեր բարձրացնելով դիմում էին զիւղամէջ զիւղացիները ժպտալով ասում զիւղամէջ զիւղացիներն եկան»: Հակին իրար՝ «Երկու չիրուխներն եկան»: Հակին վրար՝ «Երկու չիրուխներն եկան»: Հակին վրար չէին վրգովուում այդ մականունից, ըւանները չէին վրգովուում այդ հազիւ պատահի որովհետեւ հայ զիւղերում հազիւ պատահի մի զիւղացի, որ զոյդ անուն չունենալ, զիւղը մի զիւղացի, որ զոյդ անուն չունենալ, զիւղը մականուններ դնելու բարձրագոյն իրաւունքը մականուններ դնելու բարձրագոյն իրաւունքը ներ ունի. հարեանները զիւղէին, որ իրանք ներ ունի. հարեանները զիւղէին, որ իրանք չիրուխ» են, բայց հանգիստ էին, որովհետեւ

Ն... գիւղում կար նաև «Պոչով Հայրապետ»,  
«Սատանալ Սաքօ» «Աղուէս Մկօ» և այլն:

Նատ կողմերով իրար նման հարեանները  
սակայն չնշին տարբերութիւն էլ ունէին  
իրարից. նախ՝ Մարտօն իր գէմքին մի մեծ  
սպի ունէր, որից զուրկ էր Յովակը, և եր-  
կրորդ՝ Յովակը երկրագործ լինելուց զատ  
նաև հոչակաւոր սնը լսչի էր \*), մինչդեռ  
Մարտօն զուրկ էր որ և է այցորինակ հրմ-  
տութիւնից. սակայն այս չնշին տարբերու-  
թիւնները մազի չափ անդամ չէին նսեմաց-  
նում հարեանների փոխադարձ համակրու-  
թիւնն ու սէրը: Կար մի այլ հանգամանք,  
որ դրանցից աւելի կարեոր էր. Յովակը  
քրդերի հետ առանձին բարեկամութիւն ունէր,  
նրանցից առանձին յարգանք էր վայելում  
շնորհիւ իր բժշկական հմտութեան, մինչդեռ  
Մարտօն քիւրդ տեսնել չէր կարողանում և  
նրանց ատում էր հոգու բոլոր զօրութեամբ:

— Աղջի՛ նազէ՛, փակիր էն պատի ծակը,  
ասում էր Մարտօն ամեն անդամ, երբ իր խրճիթը  
ներս մտնելով՝ լսում էր հարեանի տնից որ և  
է քրդի ծայն. նա կատաղում էր մանաւանդ՝  
երբ Յովակի քիւրդ ծայնն էր լսում.

\*) Հայ գիւղերում սնը լսչի են կոչում այն անձինք, որոնք  
մարմի շարդուած կամ դուրս ընկած ուկորները անդը զցելու  
և գարպետութեամբ կապելու հմտութիւնն ունեն:

սրան նա ամենից աւելի էր ատում: Աղջիկն  
զգուշութեամբ փակում էր պատի ծակը որ և  
է քուրջով, ապա թէ Մարտօն հանգստացած  
տեղ էր բռնում թոնրան շրթին, մռմռալով՝  
— Տունը շինել է քրդի տուն, հողը խել-  
քի՛զ, շունը կապում է պանրի տեղ:

Այս հանգամանքը երկու հարեանների բա-  
րեկամութեան ամենացաւոտ կողմն էր. այս  
կէտի վրա ոչ մէկը միւսին գիշողութիւն չէր  
անում: Մարտօն ներել չէր կարողանում Յո-  
վակին սրա բարեկամութիւնը քրդերի հետ,  
Յովակն էլ զարմանում էր Մարտօնի պնդա-  
դլուխ յամառութեան վրա, որ չէր ուզում  
հասկանալ այն պարզ, աշկարա բանը, թէ  
քրդի բարեկամութիւնից ոչինչ անպատճու-  
թիւն չի ծագի և որ նոյն իսկ նա երեմն  
օգտակար է: Եւ երկու հարեանները վիճում  
էին այս խնդրի վրա, վիճում էին շատ փո-  
ղուց, մի քանի տարիներ, և ոչ մէկը միւսին  
տեղի չէր տալիս, ոչ մէկը միւսին համոզել  
չէր կարողանում: Այժմ էլ ամեն անդամ երբ  
որ և է տեղ երկու շիրուխները միասին ծուխ  
էին շնչում և նրանց տէրերը վիճում էին,  
իւրաքանչիւր գիւղացի հաստատ գիտեր, որ  
վէճը քրդերի մասին է: Սովորաբար նախա-  
յարձակը միշտ Մարտօն էր լինում, նաև էր  
կուի նշանը տալիս:

— Էլի Երէկ ուր էիր Յովակ, հարցնում  
էր Մարտօն, թէւ շատ լաւ զիտէր հարեա-  
նի ուր լինելը:

— Ուր պիտի լինէի, պատասխանում էր  
Յովակը, չը հասկանալ ձեւացնելով հարեանի  
ձիաքը, շէլս Մահմուլն էր կանչել. խեղճի  
տղան երէկ ծիուց ընկել ոտքը երկու տեղ  
կոտրուել էր, դնացի կապեցի:

— Վիզը կոտրուէր, ոտքն ի՞նչ է, մռմռում  
էր Մարտօն, իբր թէ ինքն իրան, բայց իրօք  
հարեանին բարկացնելու համար:

— Էլի սկսեց:

— Ի՞նչ սկսեց, քիւրզը որ ոսկի էլ լինի,  
չէրդ չը պէտք է զցես. ասել եմ, էլի կասեմ, որ  
քիւրզը շուն է, աղան է, կեղտոտ է, գող է,  
աւաղակ է, ապէրախտ է, այ դու ում բարե-  
կամն ես. հասկացա՞ր...

— Դու հէնց շարունակ քո էշն ես քշում,  
մէկ այնտեղ լինէիր, տեսնէիր թէ ի՞նչ պա-  
տիւներ արեց ինձ շէլսը, էլ դառ մորթե՛լ,  
էլ փլաւ եփե՛լ...

— Հայ հողը քո դլիսին, հողը քո դլիսին,  
այդ ում դառներն են, ում հացն է:

— Խօմ քոնը չէ...

— Տօ, անխելք, իմը չէ, քոնն է, քոնը չէ,  
հարեանինն է, մի խօսքով շէլսինը չէ, մե՛րն  
է, մե՛րը:

— Ինչ ուզում ես ասա՛, բայց ես բրդերեց՝  
բացի պատից, ուրիշ բան չէմ տեսել, վնաս  
չէմ ստացել:

— Տե՛ս, ցոյց էր տալիս Մարտօն իր աշ  
այտի վրայի մեծ սպին, որ սրի հարուածի ար-  
դիւնք էր, էն տարին, երբ ես Բայաղէտ էի...

Բայց հէնց որ նա սկսում էր Բայաղէտի  
հարիւր անդամ կրկնած իր արկածը, Յովակը  
ձեռքով մի անհանդիստ շարժում էր անում,  
չիրուխը թափ էր տալիս գետնին և խրում  
գոտիկը, վեր էր կենում տեղից և շարժում  
գէպի տուն, մինչդեռ Մարտօն առանց կարո-  
ղանալու վերջացնել իր սկսած պատմութիւ-  
նը, մատը զրած իր այտի սպիի վրա, նայում  
էր հեռացող հարեանի լետերից վրդովուած  
հայեացըով և մռմռում.

— Կը փոշմանե՞ս մի օր, տեսնենք ե՞րբ...  
Մարտօնի սպին իր պատմութիւնն ունէր  
և այն էլ ահաւոր պատմութիւնը: 1877 թ.  
ուուս—թիւրքական պատերազմին քիւրդերն  
իրանց անդօր կատաղութեան և վրէժինդրու-  
թեան թոյնը թափեցին Ալաշկերտի և յատ-  
կապէս Բայաղէտի անզէն հայերի դլիսին, որ-  
պէս ուուսաց բարեկամների: Զար ճակատա-  
պէս ուուսաց բարեկամների: Զար ճակատա-  
պէս ուուսաց բարեկամների:

գործած բոլոր սարսափները, նա տեսել էր նաև իր քեռու ընտանիքի կոտորածը, ինքն էլ հրաշբով էր ճողոպրել մահից սրի մի ծանր հարուածից յետոյ, նոյն իսկ իր ազգականների՝ երեխաների, կանանց և աղամարդկանց դիակների շեղակոյտի տակ մնալով ամբողջ երեսուն ժամ։ Այդ չարաբաստիկ օրից այնքան դարձուրելի եղեռնագործութիւններին վկալ լինելուց յետոյ, Մարտօն այլ ևս քիւրդ տեսնել չէր կարողանում և նրանց ատելով առում էր։ Յովակը չէր կարող խոյս չը տալ Մարտօի առաջից, Բայազէտի արկածն այնպիսի հղօր, անժխտելի ապացուց էր քրդերի անսիրտ գազանութեան, այնպիսի հղօր յենակէտ էր Մարտօի իրաւունքի, որ հարեանը կամայ ակամայ լուռմ էր և շտապում խոյս տալ վեճին վերջ տալու համար, սակայն առանց երբէք հրաժարուելու իր համոզունքից եւ այսպէս տարիների ընթացքում քանի՛ քանի՛ անգամ էին վիճել նրանք մի և նոյն խնդրի մասին, Մարտօն այդ ժամանակում ովկիտէ քանի անգամ էր կրկնել Բայազէտի սարսափների և իր սպիթ պատմութիւնը, քանի՛ անգամ նազէն փակել և բացել էր երկու խրճիթների կից պատի ծակը, բայց և այնպէս երկու հարեանները շարունակում էին մնալ լաւ բարեկամներ, շարունակում էին

միասին նստել և ծխել իրանց միանման չերուխները, խօսել իրանց առօրեալ ցաւերից, հոգսերից, իրանց դաշտալին և տնալին աշխատանքներից։ Քրդերի մասին ունեցած նրանց վէճը մի թեժե ամպ էր միայն, որ գալիս էր մի քանի վայրկեանով մի փոքր մթագնելու նրանց բարեկամութեան պայծառ հորիզոնը, բայց և խօսին ցրիւ էր գալիս՝ տեղ տալով արեւի վառ ճառագայթներին։ Եւ երկու հարեանները մնում էին հաշտ ու սիրով, ինչպէս երկու եղբայրներ։

Հաստաւ 189... թ. մի չարաբաստիկ տարի և ոչ մի անգամ երկու հարեանների կից պատի ծակը այնպէս երկար փակ չէր մնացել, որքան այդ տարին։ Ամբան վերջն էր, գիւղական աշխատանքների ամենատաք ժամանակը, երբ մի անգամ Մարտօն տուն մտնելով՝ բացականչեց։

— Օօհ, էլի էդ շան ձէնն եկաւ, աղջի, շուտ, փակիր էդ ծակը։ Հարեանի տնից նույնեց մերգոփ ծայնը։ Աղջիկը շտապով կատարեց հօր հրամանը և այս անգամ ծակը փակ մնաց մինչև բառասուն օր, որովհետեւ մերգոփ ոտքը կոտրուել էր և նրան բերել էին իր ըերվագի տունը խնամուելու և բժշկուելու համար։ Այդ բոլոր ժամանակ Մարտօի երեսից ժպիտը կորաւ, նա էլ չէր խօսում հարեանի ժպիտը կորաւ, նա էլ չէր խօսում հարեանի ժպիտը կորաւ, նա էլ չէր խօսում նրան և ամեն անգամ հետ, չէր պատահում նրան և ամեն անգամ

խրճիթ մտնելով նայում էր կալած ծակին  
և մռմռում. «Տունը շինել է քրդի տուն,  
հողը բո զլիսին»:

Օրեր անցան. զիւղացիկ շտապ-շտապ վեր-  
չացնում էին իրանց աշխատանքները, ժամա-  
նակը թանգ էր. շուտով բնութիւնը կը խրս-  
տանար. իսկ Յովակը չը դիտէր՝ իր անկոչ հիւ-  
րին խնամի, թէ իր կալուկուար վերջացնի.  
Նա լետ էր մնացել, մինչդեռ ուրիշները իրանց  
աշնանալին վար ու ցանքն էին սկսել, խեղճ  
Յովակը գեռ իր հէշանն էր տակն ու վրա ա-  
նում, ուրիշ գէպքում նա կը դիմէր Մարտօի  
օգնութեանը, բայց այս անդամ չէր համարձակ-  
ւում, մէջտեղ Ռոզգօն կար. Մարտօն էլ ասես՝  
ուխտելէր թողնել, որ Յովակը այս անդամ մէնակ  
խմի փորձութեան դառը բաժակը, որ խրտառուի:  
Եւ Յովակը քամեց այդ բաժակը մինչև տակը:

Ուշ աշուն էր. տարուայ այն ժամանակը,  
երբ բնութիւնն իր տիրութեան մէջ անդամ  
մի մեղմ փայլ, դունատ, մելամաղձուա գեղեց-  
կութիւն ունի. այլպէս է լինում իր կեանքի  
վերջալուսին մօտեցած, իր զարդերից կապ-  
տուած նախկին գեղեցկուհին, որը իր սպոյ  
զգեստի մէջ, իր խոր վշտի մէջ անդամ ան-  
ցեալ փառքի, անցեալ փայլի, գեղեցկութեան  
թեթև յոլքերը գեռ պահում է, որոնցից  
շուտով զրկուելու ճակատազրական, անհրաժեշ-

տութիւնը խորին ախրութեան քօղով պա-  
տում է նրա գէմքը: Բնութեան սպոյ զգեստը  
գեղնագոյն է. սար ու գաշտ, ձոր ու հովիտ  
միապաղաղ գեղին գոյն են զգենում, բայց այդ  
համատարած դեղնութեան մէջ տեղտեղ  
երեւմ են մռացուած դժոյն ծագիկներ,  
խնճուկ խոտեր: Լուռ են դաշտերն ու աճալի,  
մարդիկ քաշուել են դաշտերից, իրաւունքն  
այժմ գաղաններին է. բայց և այնպէս մի ծո-  
րում, մի լեռան լանչի վրա գեռ երեւմ է  
մի աղքատ կին իր փոքրիկ աղջկայ հետ,  
որոնք ինչ որ հաւաքում են գետնից, բար-  
ձրանում են վեր, իշնում են ծորը, լուռ ու  
մունչ փորփորում խոնաւ գետինը և ածում  
իրանց պարկերի մէջ. ով զիտէ ի՞նչ արմտիք,  
ի՞նչ մռացուած բարիք, որ բնութիւնը սի-  
րում է ժամուկ պահել՝ իր աղքատ, խեղճ  
զաւակներին տալու համար: Աւելի հեռու  
լայնատարած հարթութեան վրա, ուր խա-  
զում է աշնանալին հովը, վղդացնելով չոր  
խոտերի տերեազուրկ ծալըերը, սեին է տա-  
լիս մի հատիկ ստուեր, որ մերթ բարձրա-  
նում է, մերթ կռանում. ծեր նախրապանն է  
այն, որ ամրանը այստեղ ու այնտեղ կիտակ  
արած իր ցախսերն այժմ ի մի է հաւաքում:  
Ահա նա կապում է իր շալակը և մէջին  
զնելով՝ ճանապարհ է բնինում գէպի զիւղը

ծանր տնբալով. ինչքան ճանապարհ ունի  
անցնելու, հեռաւոր դաշտերից մինչև գիշեղ...  
հեշտ է ասել, մարդք ծեր է, շալակը ժանր.  
շրջակայի ամայութիւնն էլ աւելի է մեծա-  
ցնում տարածութիւնը. բայց ծերունը ճար  
չունի, պիտի տանի այդ ժանրութիւնը, ձմեռը  
մօտ է, վառելիք է հարկաւոր: Երկինքն էլ է  
լուս, ոգը չի աղմկւում թուզունների ծայնե-  
րով, բայց երբեմն յայտնւում է մի հատիկ  
մոլորուած կռունկ, որ տխուր կղղում է և  
շտապում դէպի հարաւ: Եւ այս բոլորի վրա  
գեռ փայլում է վերելից արել, տխուր, աշ-  
նանալին արե, որի ճառագայթների մեղմ  
շերմութիւնն այնքան քաղցր են: այնքան  
դուրեկան ուշ աշնանը:

Այն տարին ոչ որի համար արեկի աշնա-  
նալին ճառագայթները այնքան թանգ, այն-  
քան զրաւիչ չին, որքան այն մի հատիկ  
դիւզայու համար, որ ն... զիւղի դաշտերի  
ամենահեռաւոր ժայրում զոյտ եղներով գեռ  
վարում էր մի մոռացուած զետին, մինչեռ  
չորս կողմի արտերն արդէն ծլել էին, վարու-  
ցանքը վաղուց վերջացել: Հաստավիզ, սիրուն  
եղներ էին, որոնք զլուխները դանդաղ օրօրե-  
լով՝ քաշում էին արօրը, խոր ակօսներ թող-  
նելով յետեռում. զիւղացին չլուտ ծեռքով  
բռնել էր մաճը և քաջալերում լծկաններին,

որ շուտ շարժուեն: Խեղճ թովակ, մրգգօյ  
հիւանդութեան պատճառով՝ նրա արտը մինչև  
այժմ մնացել էր առանց վարելու, նա գեռ մի  
հատիկ սերմ չէր գցել գետին. ահա մի քանի  
օր է, ինչ այն անկոչ հիւրը բժշկուելով՝ վեր-  
ջապէս հեռացաւ և այժմ թովակը դաշտումն  
է. նա իրաւունք ունի շաապելու, շատ է յետ  
մնացել, ձմեռը մօտ է. թովակը, սակայն, չէ  
յուսահատւում, երկնքում Աստուած կայ,  
ներբեռում զոյտ եղներ՝ այս սիրուն Բօգօն  
ու կարմիրը, երեխաներն անհաջ չեն մնայ...  
Աստուած, եղներ, շլուտ հղօր ծեռք, այս բո-  
լորը միասին թովակի սրտում ծագեցրին  
յուսոյ մի նշոյ, — յոյս, ի՞նչ սիրուն բան է  
յոյսը. Թովակը նայեց զէպ երկինք, այնտեղից  
էլ արել գեռ հաշտ ժպտում էր, գեռ տաք  
էր օրը, գեռ ժամանակ կար. Թովակն էլ  
ժպտաց և նոյն իսկ սկսեց երգել.

Արևն իշաւ սարի մէջքին,  
Դէ՛հ, շուտ, Բօգօ, բէ՛ մեռնեմ  
Ղշեր զրմմէն թուան դացին,  
Վարույտնքս ե՞րբ անեմ:

Օրը կարճ է, զործը երկար,  
Դէ՛հ, շուտ, Կարմիր, բէ՛ մեռնեմ,  
Վայ թէ ձիւնը բռնի դաշտ, սար,  
Ցորեն, գարին ե՞րբ ցանեմ:

Հովլը փչեց սարի ծէրէն,  
Դէ՛հ, շուտ, ե՛ղներ, ծե՛ մեռնեմ,  
Ծաղիկ, կանաչ հատան դաշտէն,  
Զեր պաշարը ե՛րբ ժողվէմ.

Ոտիգ մեռնեմ, քաշիր, կարմիր,  
Շուտով շրջենք ակօմներ,  
Սիրուն Բօզօ, շուտ արա՛, ժի՛ր,  
Շուտ, որ հոգանք մեր ցաւեր:

Թո՞ղ որ երկինք վերից տեսնի  
Մեր ճիգ, մեր շանք, մեր հոգսեր,  
Նա գթոտ է, գեռ օր կանի,  
Դէ՛հ, շուտ, իմ ժի՛ր ընկերներ:

Դաշտերի տխուր ամայութեան մէջ շրջա-  
կայըի խուլ լոռութեան մէջ մենաւոր դիւզա-  
ցու այս երդը հնչում էր որպէս հակապատ-  
վեր բնութեան մահամերձ վիճակի. դա յոյսն  
էր, որ սիրուն բաներ էր ասում չարքաշ  
գիւղացուն, որ նրան ողի էր ներշնչում, ոյժ  
էր տալիս նրա շուտ ծեռքին՝ մաճը պինդ  
բռնելու համար:

— Բարի աշողում, եղներիդ ոչժ, լսեց Յո-  
վակը յանկարծ իր յետեից. նա յետ նայեց,  
առաջը կանդնած էր Մարտօն իր արօրով ու  
եղներով:

— Բարի՛ եկար. հօհօ, եղներ, հօհօ, եղներ:  
Եղները կանդ առան:

— Լաւ շուտ ես եկել, Յովակ:

— Դէ ի՞նչ անեմ, յետ եմ մնացել, էս տարի  
էլ իմ բանն էսպէս էլաւ:

— Որ անցաւ զլուխոդ Աւետարանի տակ  
զնես, յետ կը մնաս, բա ի՞նչ կը լինես, շների  
ցաւը քեզ են տուել, ասես թէ երեխալի, ըն-  
տանիքի տէր չը լինես:

Երկու հարեւաններն իրար մօտեցան և նրա-  
տեցին մի թմբի վրա, չիբուխները դուրս քա-  
շեցին, ծուխը բարձրացրին միաժամանակ և  
վաղեմի վէճը դարձեալը սկսուեց: Այս անգամ  
Մարտօն աւելի խիստ, աւելի անողորմ էր,  
քան երբ և իցէ. քառասուն օր շարունակ  
հաւաքած իր զալրութը միանդամից թափում  
էր Յովակի զլիխին, վերջինս այսօր չէր կարո-  
ղանում իր պաշտպանութեան համար նոյն  
իսկ մի բառ գտնել. դատապարտուածի համ-  
բերութեամբ նա տանում էր հարեւանի բոլոր  
յանդիմանութիւնները և միայն սպասում էր  
այն օրհնեալ բօպէին, երբ Մարտօն վերջապէս  
կըսկսի Բայազէտի պատմութիւնը, որ վերկե-  
նալ խոյս տայ: Հակառակի պէս այսօր Մար-  
տօն կարծես լաւ հասկանալով հարեւանի նեղ  
վիճակը, ամենակին չէր էլ մտածում Բայա-  
զէտի արկածի մասին և շարունակում էր  
բղկաւել Յովակին ծակող խօսքերով:

— Ախր նրանք ի՞նչ են արել քեզ, որ այդ-քան ատում ես, այ անաշէն, ասաց վերջապէս Յովակը:

Այս հարցը միանգամայն անտեղի և անհետեղի էր, քանի որ յայտնի էր, թէ «նրանք» ի՞նչ էին արել Մարտօին, բայց Յովակը յուսահատուած այդ հարցը տուեց. դա խեղզուողի վերջին ճիգն էր, որը աշխատում է բռնել մի տերև։ Սակայն անսպասելի կերպով հէնց այդ անտեղի հարցը նրան փրկեց։ Մարտօն կատաղութիւնից իրան կորցրեց, մոռացաւ ամեն ինչ մոռացաւ, որ ինքը պիտի միշոց չը տար հարեանին աղատուել էր ձեռքից և բացականչեց.

— Ինչպէս, ի՞նչ են արել տե՛ս, և նա մատը դրեց իր սպիթ վրա. — աչքերդ կոյր Ես, չ՞ս տեսնում. Էն տարին որ ես Բայաղէտ էի...

Յովակը չիբուխը թափ տուեց գետնին, խրեց իր գօտին, վեր կացաւ, մածը ձեռք առաւ, իսկ Մարտօն կանչեց յետեից.

— Կը փոշմաննս մի օր, տեսնենք երբ...

Յովակը չը գիտէր, թէ Մարտօն ուր է գնում իր արօրով ու եզներով, բայց երբ օրավարի ծալրը հասնելով՝ նա յետ դարձրեց իր եղները, տեսաւ, որ այդ խստասիրտ հարեանը օրավարի միւս կողմից ակօս ձգաժ,

հանդարտ վարում է. Մարտօն նկել էր իր հարեանին օղնելու՝ բաւական համարելով նրա կրած պատիմքը։ Յովակը ժողովաց:

Երկու հարեանները լուռ շարունակում էին իրանց աշխատանքն արաի զանազան կողմերից և ամեն տնդամ, երբ մէկը հասնում էր մի ծալրին միւսն էլ մի և նոյն ժամանակ հասնում էր հակառակ ծալրին։ Արևն իշտներքւ գէպի հորիղոնը եղերող լեռները. արդէն երեկոյ էր, օրավարն էլ վերջանալու վրա էր, Յովակը կարող էր վաղը սերծ դցել և այն դարձեալ շնորհւ իր բարկացկոտ հարեանի, որի այսօրուայ օդնութիւնն այնքան թանկ էր, այնքան ի գէպի ժամանակին։ Յովակը լաւ էր ճանաչում Մարտօնն. նա գիտէր, որ այդ խիստ մարզը նաև նոյնքան բարի է, բայց և այնպէս նա չէր սպասում, որ վըրդովուած հարեանը կը մեղմանայ, նրան օդնութեան կը գալ։ Յովակն այս էլ էր վերադրում Աստուծու զթութեանը, նրա անսահման ողորմութեանը գէպի անհարները, նեղեալները։

— Բարե քեզ, քիրվա, հնչեց նրա յետեից մի ծալն. Յովակը յետ նայեց. նրա առաջ կանգնած էր Որդոն մի ուրիշ քրոի հետ, երկուսով էլ լաւ դինուած. ի՞նչ էր նշակում այդ։

— Հազար բարի, քիրվա միրդո՛, պատասխանեց Յովակը կանգնացնելով եղները. առ, քի'րվա, չէ՞ քեղ ասացի՞ մի առ ժամանակ տանից դուրս չը գաս, ման չը գաս, ուաքդ հաղիւ մի փոքր պնդացել է, շարունակեց Յովակը բժշկի և բարեկամի հոդացողութեամբ:

— Դէ, քի'րվա, ի՞նչ անեմ, տան, ընտանիքի, ցաւ ու հոգսի տէր ենք, զիտս էլի՛, որ դուրս չը գամ, ապրուստ չի լինում, զլուխ պահել լի լինում:

— Տէջ չէ, մի քանի օր էլ համբերէիր, անաշէն: ԶԵ՞ս կազում:

— Մի քիչ, բայց ցաւը վերչացել է:

— Է՞հ, փառք Աստուծու, էդ թողնենք. է, խէ՛ր ընլի, քի'րվա:

— Խէ՛ր է, փառք Աստուծու, ասաց միզգոն ընկերոջ վրա խորհրդաւոր ակնարկ դցելով. խէր չէլած, ի՞նչ պիտի լինի. քեզ մօտ եմ եկել, տուն գնացի, ասին արտն ես, եկալ:

— Ի՞նչ կայ:

— Քիրվա Յովակ, մէնք աղ ու հաց ենք կերել միասին, ես չեմ կարող մոռանալ. աղ ու հաց մոռացողի աչքերը կը կուրանան. երէկ մի բան իմացաւ, Սատամբօլից հօհմ (հրաման) է եկել, որ մէր կուրմանչները (քրգեր) ֆլաներին թալանեն: էսօր է, էդուց է, ձեր գիւղում էլ մալ, ապրանք չի մնալ: Ուզիղ

ասած, սիրտս շատ է ցաւում քեզ համար. դէ ես մէնտկ ի՞նչ կարող եմ անել մեր սաղ էլիաթի դէմ. միտք արի, վճռեցի դալ գոնէ այս բանը քեղ յայտնել, որ զդոյշ լինես. մէկ էլ... մէկ էլ... ասացի՞ դնամ քիրվայիս եղները բերեմ. դէ մի և նոյն է, որ ես չը տանեմ, ուրիշները կը տանեն, ափսո՞ս են, լու եղներ են, ինչու ուրիշները տանեն. Մատօ, գու եղներն արծակիր. քիրվայի մալը քիրվային է հալար այնպէս չէ, քի'րվա չան:

Այդ միջոցին Մատօն ամենայն հանդարտութեամբ արծակում էր եղները:

Յովակը լուռ էր. նա էլ չէր հասկանում թէ ի՞նչ է կատարուում իր շուրջը. այս անսակնկալ հարուածից նրա ուղեղն այնպէս յնցուեց, որ միտքը խաւարեց. լիշողութիւնից յնցուեց, որ միտքը խաւարեց. լիշողութիւնից ամեն բան՝ և եղները, և իր վարունչուեց ամեն բան՝ և եղները, և տունն ու գաւակները: Նրա մտքում յանը, միայն մի հատիկ լուսաւոր կէտ, ուր մնաց միայն մի հատիկ լուսաւոր կէտ, ուր մստած էր Մարտօի զայրացած պատկերը, ստած էր մի հատիկ զգացմունք, և այն սրտումն էլ մի հատիկ զգացմունք, նա ատմօթի, անծայլը ամօթի զգացմունք. նա ատմօթի, մաչում էր Մարտօից, ամաչում էր իր վէճերի, մաչում էր Մարտօից, ամաչում էր իր վէճերի, իր յամառութեան համար և չէր համարծակ-իր յամառութեան համար կողմը, ուր լում իսկ նայել արտի հակառակ կողմը, ուր լում իսկ նայել արտի հակառակ կողմը, ուր մայդամաց նա իրան վատ զգաց, զլուխը

պտըտուեց, ոտները դողդողացին, աչքերում  
լոյսը պակասեց, նա հազիւ էր նշմարում  
Մստօին, որ աշխատում էր արձակել թօզօի  
սամաթելր: Յովակը նատեց նուաղած. այլպէս  
լաւ էր. այժմ նա նորէն աչքերը վեր բարձ-  
րացրեց, թօզօն արձակուած էր արդէն, լուծն  
ու արօրը ընկած էին ցելի մէջ: Յովակը նա-  
յում էր այժմ Ռըզզօին երկար, երկար.  
Քիւրդը յանկարծ շարժուեց. նա դեռ կաղում  
էր. այդ նկատեց Յովակը և այժմ նրա մըտ-  
քերն ուրիշ կերպարանը առան, նա լիշեց  
քրդի ոտքը, լիշեց այն բոլոր զոհերը, որ նա  
յանձն էր առել այս գաղանի բժշկութեան  
համար, խօմ մեղք չէր զործել, նա բարիք էր  
արել: Միթէ աշխարհում բարերարութիւնն  
այսպիսի վախճան է ունենում. օ, Յովակը  
երբէ՛ք, երբէ՛ք աշխարհն այդ աստիճան չար,  
այդ աստիճան ապերախտ, անամօթ ապե-  
րախտ չէր երեակայել: Եզները տանում են,  
թող տանեն, ի՞նչ արժեն զոյգ եզները այն  
մեծ կորուստի առաջ, որ կրեց Յովակը. ի՞նչ  
արժէ նոյն իսկ ամբողջ աշխարհը, երբ կորաւ  
հաւատը, որ նրան մինչեւ այսօր ոյժ ու ողի  
էր տալիս, հաւատը դէպի մարդը, դէպի նրա  
դէթ մի հատիկ առաքինութիւնը, դէպի նրա  
երախտադիտական զդացմունքը: Մինչև այժմ  
Յովակն ուրիշ համոզմունք ունէր. նա հաւա-

տայտած էր, թէ բարիքով գաղանի մէջ կա-  
րելի է զսպել արեան անզուսպ ծարաւը. չէ  
որ շունը սիրում է այն ձեռքը, որից փշրանք-  
ներ է ստացել, իսկ մարզը... խօմ շնից վատ  
չէ նա... բայց այժմ այս ի՞նչ է աեսնում, նա  
սխալուած է... Մարտօն իրաւունք ունէր... է  
որ այլպէս է, որ աշխարհում իշխողը չարն  
է, միայն չարն ու գաղանութիւնը, միայն  
անսիրտ, ու ապերախտութիւնը, էլ ինչո՞ւ  
ապրել, էլ ինչո՞ւ համար է շէն մնում երկնքի  
այս հաստատութիւնը, ինչո՞ւ նա փուլ չի  
դալիս և միանգամայն խորտակում այս մեղ-  
սալից աշխարհը: Զըհեղեղ՝ Զըհեղեղ... ի՞նչ սիրուն  
բան կը լինէր. մի անգամ խօմ եղաւ, մի հոգի  
աղատուեց, թող մէկ էլ լինի. ով կը պրծնի...  
«Մարտօն... Մարտօն... Մարտօն...» կրկնում էր  
նա անդադար ի պատասխան իր վերշին հար-  
ցին, նա արժանի է. հա՞, միայն նա է ար-  
ժանի...

— Մստօ, Մստօ, վաղի՛ր այն եզներն էլ  
արձակիր բեր, հնչեց Ռըզզօի ձայնը. Յովակը  
ցնցուեց, նա հասկացաւ, որ խօսը Մարտօի  
եզների մասին է, այդ արդէն սարսափելի էր.  
Յովակն այդ տանել չէր կարող, իր եզները  
թող տանեն, իր տունը թող աւերեն, իրան  
սպանեն, կտոր-կտոր անեն, կամ նոյն իսկ ող  
ող խորովեն, բերթեն, իրաւունք ունեն,

ինքը մեղաւոր է, որովհետև լիմար է, աւանակ է. անպէտք մարդ է աշխարհում. իսկ Մարտօն... նա յանցանք չունի. աշխարհն ապերախտ է, ինքը Յովակը չի ուզում մասնակից լինել այդ սև ապերախտութեան, թոյլ ասլով՝ որ իր բարերարի եղները տանեն. օ, նա այդ չի թոյլ տայ, նա կը սպանուի, բայց Մարտօնի եղները իր արտից այս օր չը պիտի տարուեն:

— Մի՛ շարժուիր, Մստօ, այն եղները գուրք չէք տանի, նրանք իմը չեն, ասաց Յովակը բրդի առաջը կարելով, բռունցըները սղմած և դողդողուն ձախնով:

— Աւելի լաւ, որ քոնր չեն, ուրեմն քո բանն էլ չէ խառնուել այդ գործին:

— Իմ յանն է, և դուք այն եղները տուաց արեան չէք տանի, կրկնեց Յովակը վճռական ձախնով: Որդո՞ն սպրզնեց, նա այդ չէր սպասում այդ խեղճ, ողորմելի Յովակից, որին միշտ այնքան հու—հնազանդ էր աեւել. ուստի ասաց զայրացած.

— Քի՛րվա, դու իմ համբերութիւնն ի չարն ես գործ դնում, դու մոռանում ես, որ մի ուրիշն ես այսքան չէի համբերի:

— Այժմ էլ մի՛ համբերիր, սպանի՛ր, փառք Աստուծու ոտք այժմ լաւացել է, բայց այն եղները դու չես տանի:

Նա դողում էր, բռունցքները չղածդաբար ցնցւում էին. նախսկին թոյլ բարի Յովակը, որ մրջիւն անդամ կոխ տալ չէր կամենաչ, այժմ կատաղած էր և պատրաստ էր անօրինակ յանդկնութեան. «Ձեմ թողնի՛», նչում էր նա,

Մարտօն արտի հակառակ ծալրից երկար դիտում էր այդ տեսարանը. բայց երբ քրդերն արծակեցին եղները, երբ տեսաւ Յովակին, որ մենակ բռնել էր երկու գաղանների առաջը, ասես՝ գարծեալ ամաչելով հարեանին կանչել օգնութեան, երբ վերջապէս տեսաւ, թէ ինչ պէս այդ խեղճը լուսահատական չանքեր է անում՝ պաշտպանելու իր ընկերոջ եղները, ինչով... ինչպէս... երկու բռունցը ըստ ընդդէմ սրերի և հրացանների, Մարտօն սիրան արիւնով լցուեց. նո թողեց իր եղները, շտարիւնով լցուեց. նո թողեց իր եղները, շտարիւնով կոռուողները. բայց առանց մի բառ ալեց գէպի կոռուողները. բայց առանց մի բառ ասելու, անցաւ նրանց մօտից, հասաւ Յովակի եղներին, մէկի ականջից բռնելով՝ քաշ տուեց ու քշեց:

Թէ Յովակը և թէ մանաւանդ երկու քրդերն այն սպաթինան սպլամած էին այս մարդու արարքի վրա, որ գալարեցին վիճելուց և

Նայում էին, սպասելով՝ թէ ինչով կը վերջանայ այս բոլորը։ Բայց երբ Մարտօն հանդարառութեամբ վարել սկսեց, Որպես առաջ անցու կատաղած, բռնեց նրա ձեռքը զոչելով՝  
— ի՞նչ ես անում։  
— Վար եմ անում։  
— Քեզ ո՞վ ասաց, որ լծես եղները։  
— Իսկ քեզ ո՞վ ասաց, որ արձակես։  
— Դրանք իմ քերվացի եղներն են, ինձ կը հասնեն։  
— Սրանք իմ հարեանի եղներն են, բայց ոչ քեզ կը հասնեն և ոչ էլ ինձ, նրանք անտեր չեն։  
— Հեռու, քեզ ասում եմ, անխելք ֆլա։  
— Հօ հօ, Բօզօ, հօ հօ կարմիր, շարունակեց Մարտօն քշել եղները, անուշաղիր թողնելով քրդի վերջին հրամանը, այդ արդէն չափաղանց էր. քիւրդը կատաղեց, նայած բերեց ուսից հրացանը, բայց մինչև որ կը պատրաստէր, մինչեւ որ կուզդէր յանդուզն ֆլայի վրա, վերջինս ձեռքն արագութեամբ իր կարճ աբայի տակ տարաւ, դուրս քաշեց այնտեղից մի փոքրիկ, փայլուն բան և ուղղեց իր հակառակորդի կրծքին. ատրճանակը որոտաց և Որպես ոռնալով զետին զլորուեց հրացանը ձեռքին. բայց հէնց նոյն փայրկենին լուսեց մի երկրորդ որոտ և Մարտօն նոյնպէս

ընկաւ ակօսի մէջ. դա Մատօն էր, որ իր ընկերոջ վրէժը հանեց, յետելից՝ դաւաճանի պէս, զնդակահար անելով Մարտօն։ Յովակը վաղեց ընկաւ ընկերոջ դիակի վրա, մազերը փետելով, զիսին տալուկ իսկ Մատօն շատպեց կապեց վիրաւոր Որպեսին մի եղան վրա, միւսներն էլ առաջ առած, քշեց գնաց։  
Արեր մալր մտաւ. խաւարն իջաւ երկրի վրա. Մարտօն ժանր հառաջում էր, նա այլ ես հարեանին ցոյց չը տուեց իր հին սպին. աշ ձեռքը դրել էր թարմ, արիւնահոս վէրքի վրա և կարծես ուղղում էր ասել. «Յովակի, այս էլ չես տեսնում»։ Տարիների վէճը վերջացաւ. հեռացող եղները տխուր բառաջում էին, Մարտօն շարունակում էր ժանր տնկառ. Յովակն արտասուում էր, սպասելով՝ որ մէկն օդութեան գայ՝ այս թանկագին բեռը տեսութեան գայ՝ այս թանկագին բեռը տեսելի շափոխելու համար. բայց խաւարն աւելի և աւելի թանձրանում էր, գաշտի ամալութիւնն ահաւոր գառնում. արդէն ուշ դիշեր էր, ահաւոր, ճնշող դիշեր. երկու հարեանները մարդու զիշեր, էրկու հարեանները մարդնով. մէկ էլ չորս կողմը նայեց, լարեց իր տեսողութիւնը խաւարի մէջ՝ մի լոյս, մի լոյս, մի ստուեր որոշելու համար. լարեց իր լոյ-

Դութիւնը՝ ոտնաձայնը լսելու համար. իդուր  
և ապարգիւն ջանքեր. հեռուից լսուեց ծիախն  
դալի չարագուշակ ոռնոցը, իսկ խաւարն  
ասես՝ էլ աւելի խտացաւ. ոչ ոք չը կար, ոչ  
մի օգնութիւն այդ ահաւոր խաւարի, այդ  
խուլ ամայութեան մէջ. մենակ էին հա-  
րեանները՝ դազաններով շրջապատուած: Յո-  
վակն զգաց, որ այնաեղ, ուր արիւն է հո-  
սում, արտասուրն աւելորդ է և անօդուա,  
դործ էր հարկաւոր՝ եզրոր փրկելու համար:  
Ուստի նա վերկացաւ, գերմարդկալին ոյժ  
դործ գրեց, առաւ իր մէջին թանկազին  
բեռը և շարժուեց դէպի դիւղը:

Ճանապարհը երկար էր և սարսափելի,  
խորդուբորդը շատ, խաւարը թանձր, հոգե-  
մաշ. Յովակն ընկնում էր, բայց կրկին վե-  
էր կենում և խարխափելով շարունակում էր  
առաջ գնալ. նրան ոյժ էր տալիս այն յոյսը,  
թէ շուտով արշալոյսը կը ծագի, խաւարը  
կը չբանայ, ընկերը կը փրկուի, և նա գնում  
էր աչքերն անդադար արևելքին յառած:

— «Օ», երբ կը բացուի արշալոյսը», մտա-  
ծում էր նա:

## Ա Ք Ա Ղ Ա Ղ Ը

Ան ժամանակ գունատ կարաուը  
իր արցունքէ բնի մէջ սկսեց մահու  
ոլխուր մեղեդին:

Շետակէ

Այն օրը զարհուրելի անցքեր անցան չ...  
դիւղի գլխով: Օրը ցերեկով քնեց այդ դիւղը,  
ընդ միշտ քնեց, միանդամից քնեց. այնպիսի՝  
ժամանակ էր: Վրա հասաւ մռայլ դիշերը.  
Պարմանալի է, թէ ինչու այնքան մռայլ են  
լինում մեծ ոճիրներին լաշորդող դիշերները.  
բնութիւնն ուրեմն կոյր, սնկիտակից ոյժ չէ,  
նա զիտակցական, քնքոյշ մայր է ամենքին,  
բարիներին և չարերին: Թշուառ մայր, որ  
ամազում է իր զաւակների ոճիրներից և  
թանձր քօղով է ծածկում զարհուրելի պատ-  
կերը. կամ գուցէ երկնքի ու երկրի մէջ որը-  
բութեան մի մրցութիւն կայ, երկիրն էլ է  
աշխատում նոյնքան սուրբ լինել, որքան եր-  
կինքն է, անբիծ, անարատ, արդար, ճշմարիտ:

Խեղճ, անհուն զարերից նրա այդ նուիրական նիզերն ապարդիւն են անցնում սկսած այն օրից, երբ մարդ արարածը սկսեց իր յանցագործութիւնը. և ամեն անգամ, երբ մարդկացին մի նոր ոճիր պղծում է երկրի երեսը, երբ մի նոր անարդարութիւն է կատարւում այստեղ ներքեռւմ, խեղճ մայրն խսկոյն քաշում է իր վրա խաւարի թանձր քողը, որպէս զի երկինքը չը տեսնէ, և այսպէս դարե՞ր... և ով զիտէ, գեռ մինչեւ երբ...

Սյսօր առանձնապէս թանձր էր խաւարը: Հոգեմաշ ամայութեան վրա իշխում էր «մեծ լոռութիւնը», որ միշտ զարմանալի անցքերի պատմութիւն զիտէ և յայտնի չէ, թէ ինչու և ում համար է պահում. ժամանակի հետ համրութեան դաշն են կռում և զլորւում դէպի յաւիտենականութիւն: Քանի քանի անցքեր մեր երկնքի տակ այսպէս անցել են գնացել: Հ... զիւղի վրա էլ այդ օրը իշաւ «մեծ լոռութիւնը» իր հետ ունենալով ամայութիւնն ու խաւարը. և սրանցից վեր, ու տարածութեան մէջ մեռելութեան շունչն անտեսանելի կերպով խաղում էր ցուրտ, սպանիչ խորհրդաւորութեամբ. և այս բոլորը մարդու գործ էր, նրա ձեռքով կատարուած. երկինքն ու երկիրը տխուր հանդիսատեսներ էին, ամաչում էին...

Ամայութիւնը սարսափի մայրն է, որովհետեւ մահուան շունչ է փչում ամայութիւնից. կենդանին ե՞րբ չէ վախեցել մահից. գոնէ մի ձայն հնչէր, մի հատիկ ձայն. ինչու, ի՞նչ արժէ մի ձայնը «մեծ լոռութեան», այս սպանիչ խաւարի մէջ, մի՛թէ մի ձայնը կարող է լցնել այս զարհուրելի դատարկութիւնը: Խոռվ սարսափի ժամին ով է քննում, ով է դատում. թող մի ծալն լինի, դա կենդանութեան նշան է. ի՞նչ փոլթ, թէ որտեղից է գալիս, բաւական է որ ձայն լինի, նա կարծես կը մեղմացնէ խաւարի մէջ իշխող մեռելութեան ցուրտը, ել սիրտ չի ճարի, էլ հոգի չի ցաւի, խաւար մթնոլորդն էլ այնպէս չի խեղդի, այնքան ծանր չի լինի:

Բայց ով պիտի հանէ այդ ձայնը. զիւղում կենդանի շունչ կմյ. ով գետէ, գուցէ և կալ. ի՞նչպէս սիրտ անի, ծալն հանի. միակ կենդանի շունչը ընդհանուր մեռելութեան մէջ նոյնպէս մեռնում է ահից. կենդանի էակը խաւար լոռութեան մէջ իր նմանին գտնելու լոյսով է ձայն հանում, այլապէս նա չի համարձակուի ճշալ: Հեշտ է, յանկարծ սարսափելի ամայութեան մէջ հնչուած ձայնը մեռնի մենակ, անպատասխան. դա սոսկալի է մահից:

Զայն չը կայ, լուռ է զիւղը, շուն չի հաշում, կատու չի մլաւում, դուռ չի ճոռում,

մարդ չի հազում, երեխայ չի ճշում, ոտնաձայն չը կայ. քննած են ամենքն արգեօք. բայց մի՞թէ քնած զիւղն այսպէս մեռնում է, սա ի՞նչ քուն է... Խաւար է, զժուար է իմանալ, ոչինչ չի երեւում, միայն լռութիւն և ամայութիւն: Կէս զիշերային հովն է միայն իր սովորական անհոգութեամբ փչում մեղմով, ինչ որ շշուկ, ինչ որ փսփսոց բարձրացնում, կոմոց՝ ինչպէս դաւազրութիւն, խորհրդաւոր՝ ինչպէս ոգիների զրոյց. նա էլ է զիտակից լռութեան տակ ծածկուած գաղտնիքին, նա նոյն իսկ պատմում է ինչ որ բաներ, բայց նրա լեզուն գուցէ միայն ասուղերին է հասկանալի, դա գերմարդկային լեզու է:

Ահա վերջապէս մի ծայն, աքաղաղը կանչեց, մի հատ աքաղաղ, բարձր, զիլ ծայնով: Ո՞վ չէր ճանաչում այդ աքաղաղին. դա Մէլիքենց աքաղաղն է. մեծ, փետուրները մուգկարմիր, պոչը փառահեղ կանաչ. ամենից աւելի գեղեցիկ, ամենից աւելի կռուան, ամենից առաջ կանչող. այսպէս էր այդ աքաղաղ: Այսօր էլ նա կանչեց առաջինը ըստ իր սովորականին: Խղճուկ թեաւորի մի նիչ էր այն, որ գուրս եկաւ Մէլիքենց գոմից, լայնատարած արծագանքներով կրկնուեց «քնած» զիւղի վրա և մեռաւ խաւար հեռաւորութեան մէջ: Կրկին լռութիւն, որ այս անգամ

էլ աւելի ահաւոր գարձաւ, որովհետեւ այդ մի ծայնին ուրիշները չը լաջորգեցին. միթէ այս զիւղում մի աքաղաղ կալ միայն, մի հատ կենդանի շունչ, այն էլ աքաղաղ... սարսափելի՛ է:

Ողորմելի թռչունն ինքն էլ գնախեցաւ, ինչպէս կարող էր վախենալ մի աքաղաղ: Նա մեծ լիշողութիւն չունէր, բայց ընազդը նրան չարագուշակ բաներ էր ասում. նա զգում էր, որ երէկ զիշեր այս ժամին իրերն այսպէս չէին ընթանում աշխարհում: Նա զիտէր, որ իրանից անմիշապէս յետոյ սովորաբար հարեանենց աքաղաղը պիտի ծայնէր, մի բան, որ նրան սաստիկ կատաղեցնում էր և այդ պատճառով նա երկրորդ անգամ իր հակառակորդի շիզրու էլ աւելի ուժզին, էլ աւելի բարձր էր կանչում: Բայց այսօր հակառակորդի ծայնը չը կար, աքաղաղն սպասում էր զարմացած: Լոռութիւնը չարագուշակ էր: Այդ էլ երկար չը զբաղեցրեց մոռացկոտ թռչունին. նա նոյն իսկ անհոգ կերպով, ախորժ արամագրութեամբ փորձեց գուրգուրել իր ամենից սիրելի ամուսնուն, այն սկ հաւին, որ միշտ կողքին էր տեղ բռնում թառի վրա և աէդ ամուսնու վաղորդեան առաջին գուրգուրանքները վայելում հպարտութեամբ: Աքաղաղը մեկնեց իր աշ թեւն ու կտուցը, բայց ապշած մնաց, կողքը դատարկ էր, ընկերու-

հին չը կար. նա վշտացած ու դալրացած դարձաւ դէպի ձախ կողմի բնկերուհին, դարձեալ դատարկութիւն: Լուռ ու դատարկ էր նրա շուրջը, լուռ էր նաև իր հակառակորդը: Ժամեր անցան. կենդանին մոռացաւ կարձես իր միայնութիւնը և պատրաստուեց երկրորդ անգամ կանչել: Նա թափահարեց իր թեւերը և կանչեց ուժգին. ձայնը կրկին արձագանքներով կրկնուեց խաւար տարածութեան մէջ և մեռաւ հեռու, հեռու, միայնակ, անպատասխան:

Աքաղաղը սպասում էր: Նա զիտէր, որ իր երկրորդ կանչեց լետոյ գոմի գուռը ճռռալով կր բացուի, ներս կը դայ հօտաղը քթոցը շալակած, անասունները փնչացնելով ոտքի կր կանգնեն, նրանց կեր տալու ժամն է այն: Նա լաւ կանչեց, ուժգին, լի կոկորդով, այնպէս որ կարող էր ամբողջ գիւղը զարթեցնել և սակայն գուռը չը ճռռաց, հօտաղը չեկաւ, անասունները չը շարժուեցին, գոմը զարձանալի լուռ էր: Ի՞նչ էր պատահել, թռչնի ուղեղն այդ հասկանալ չէր կարողանում, սակայն նա սկսում էր վախենալ, այդ ամայութիւնն ու լրութիւնը նրան վախ էին աղդում, բնազդը նրան ասում էր, որ ինչ որ վատ, շատ վատ բան է կատարուել, աշխարհի կարդը խանգարուել է, և թռչունը փոքրացաւ, կծկուեց, տիրեց...

Հասաւ երրորդ անգամ կանչելու ժամանակը, որից յետոյ գիւղը կամաց կամաց պիտի սոքի ենէր: Ահա աքաղաղը կրկին թափ ի թափ առւեց իր թեւերը, բարձրացրեց, ծղեց պարանոցը և կանչեց քանի ոչ ունէր, երկար զի՞լ: Կանչեց և սպասեց: Նրանից յետոյ առաջին զարթնողը զիւղում քահանան պիտի լինէր, նա պէտք է դուրս գար գոնից աղօթք մրճնչալով վաղորդեան կիսախաւարի մէջ: Մէջ երկիրեղկանի դռան բացուելու և փակուելու թրխկոցը հասնում էր նոյն իսկ մինչև Մէլիքինց տունը, աքաղաղն էլ էր լսում այդ թրխկոցը, որ նրա համար այնպէս սովորական էր գարձել: Դրանից քիչ լետոյ լսում էր զիւղական եկեղեցու կոչնակների ձայնը, որ մեղմ, թրթուուն հնչիւններով առաւօտեան զով զեփիւոի թեւերի վրա տարածում էր քնած զիւղի վրա, որպէս երկնային օրհնաբեր մեղեղի: Այդ ձայնից զարթնում էին ամենքը՝ աղօթաւորներն ու աշխատաւորները. Տեր բերանները յօրանչելով աղօթքներ էին մրճնչում, պառաւները խաչակնքում էին երեսները զանգակների ամեն մի զօղանչիւնի հետ և զիսախաւար փողոցների միջից, ինչպէս ուրուականներ, զիմում էին դէպի Աստուծոյ տունը: Տների մէջ էլ կեանք ու շարժում էր սկսում:

Սակայն այսօր ոչ քահանայի գուռը թրբիս  
կաց, ոչ զանգակի ձայնը լսուեց: Ուր էր  
քահանան, ինչու էր լուռ կոչնակը, ինչ էր  
պատահել, այդ էլ չը կարողացաւ հասկանալ  
աքաղաղը, բայց կրկին երկիւղի բնաղզը խո-  
սեց նրա մէջ. այսպէս չէր երէկ գիշեր: Այս  
անգամ նա սկսեց կանչել անբնդհատ, իրար  
վրա: Այն ժամն էր, երբ հովիւր պիտի գուրս  
քշէր իր հօտը, նրա սրնգի մելամաղծոտ ձայնը  
մեղմիկ, լալկան ելեէններով սովորաբար նախ  
հնչում էր զիւղին մօտիկ, ապա կամաց կա-  
մաց իր հօտի հետ միասին հեռանում էր  
զէպի դաշտերն ու լեռները: Նրան հետեւում  
էին հօտաղ-տաւարածների խմբական երգերը,  
գութանների և սալլերի ճռինչը, անասուն-  
ների բառաչը: Դիշերալին հանգստից յետոյ  
առաւօտեան կիսախաւարի մէջ զիւղն ամ-  
բողջ ասես ծփծուում, յօրանջում էր ամենօ-  
րեալ աշխատանքը վերսկսելու համար: Աքա-  
ղաղն այսօր կանչում էր և սպասում մէջ  
ընդ մէջ: Սրինդ չը կար, հովիւր չը կար, հօտ  
չը կար. հօտաղներն այսօր չէին երգում, գու-  
թանները չէին շարժում, սալլերը չէին  
ճռնում, լուռ էր ամեն ի՞նչ:

Աքաղաղն էլ լուեց իսպառ յուսահատուած:  
Նա այժմ կուզէր ցած իշնել թառից, բայց  
վախենում էր, ուր իշնել այդ լուռթեան մէջ,

այդ սարսափելի ամայութեան մէջ, չէ՞ որ նա  
էլ կենդանի էր, կեանք էր փնդրում: Օ-,  
գոնէ շուառով լոյսը բացուէր, գոնէ մի բան  
աեսնէր խեղճ թռչունը, բայց այսօր լոյսն էլ  
ծանը էր գալիս և խաւարը կարծես հեռա-  
նալու, չքանալու միտք չունէր: Վատաբաղդ  
թռչնի ուղեղն էլ էր աշխատում, աքաղաղը  
մտածում էր երեկի, ինչպէս որ կարող էր  
մտածել մի թռչուն, բայց հարց' ըր ծանը  
էին նրա ողօրծելի ուղեղի համար: Նա չը  
կիրակ, թէ ինչ է պատահել զիւղին, ուր են  
իր ընկերուհիները, ինչու է ինքը մենակ, ինչու  
չի գուրս գալիս քահանան, ինչու է համրացել  
կոչնակը, ուր է հովիւր, ուր է նրա հօտը, ովի  
տարաւ, ով թալանեց, հօտաղներն ինչու չեն  
երգում, ով նրանց պապանձեցրեց այլպէս ան-  
սիրա կերպով, մի գուցէ քնած են ամենքը, այդ  
ինչ երկար քուն է այսօրուակ քունը: Ողործելի  
թռչունը չէր լիշում իր աչքով տեսածները:  
Թռչունը չէր լիշում իր աչքով տեսածները:

Սարսափելի բան էր, ով էր կենդանի թռ-  
չել այդ մի շունչը. ընդհանուր մեռելութեան-  
դէ ինչի՞ պէտք էր այն, Խօսի՛ր խեղճ թռու-  
չուն, տե՛ս, ձայնդ մինչեւ երկինք կը հասնի...  
Եւ աքաղաղը կանչում էր ու կանչում. ում  
պիտի զարթեցնէր, շրջապատի քունը ծանը  
էր, յաւիտենական, և նրա ձայնն անզօր,  
թռչ. բայց կանչում էր իր թառի բար-  
թռչ.

ձրութիւնից բուռն թափով, կանչում էր  
ուժդին քանի կալող էր, գոնէ այդպէս էր  
թւում նրան. և իրօք թւում էր միայն, ո-  
րովհետեւ նրա ծայնն այժմ կոկորդից դուրս  
էր գալիս մի տեսակ ողբազին, նուազած,  
լալազին: նա էլ թեերը չէր թափահարում,  
էլ հպարտ չէր իր հնչուն ծայնով, միայնու-  
թիւնը և լրութիւնը խորտակեց նրան, նա  
կանչում էր և կծկում, զլուխը քաշ դցում,  
ասես թէ խորհում էր, տխուր էր:

Մէկ էլ յանկարծ մի ոտնածալն լսուեց գո-  
մում. վերջապէս նա էլ մենակ չէր. մէկը  
ներս մտաւ. աքաղաղն ոյժ առաւ, քաշա-  
լերուեց, այս անգամ վերջապէս նա թափ  
տուեց թեերը և խսկապէս կանչեց իր լաւ-  
օրերի պէս, կանչեց և ցած թռաւ թառից:  
զրկու աչքեր էին փայլում գոմի կիսախաւա-  
րի մէջ, պաղ, պսպղուն, սարսափելի աչքեր:  
Սքաղաղը տեսաւ. հասկացան արդեօք, թէ  
ի՞նչ էին ասում այդ աչքերը. գուցէ, որով-  
հետեւ նա նորից փործ փործեց թառը բար-  
ձրանալ, սակայն իդուր, երկու աչքերը մօտե-  
ցան, տաք շունչը փչեց թռչնի վրա, նա հա-  
զիւ կարողացաւ վերջին անգամ մի տխուր  
ճիչ արծակել դայլի բերանում:

Վերջացաւ. Հ... զիւղում էլ ոչինչ չը կար,  
էլ ոչ ոք չը կար...

## ՄԱՅՐԵՐԸ

«Շատ ձմեռների սառնամանիքներ հա-  
լուեցին, հասաւ գարունը, եկան ձիեռո-  
նակները, ոկնցաղասէր մարդիկ տեսան  
և խնդացին, բայց նրանք երբէք չը կարո-  
ղացան տեսնել իրանց սիրելիներին»:

Խպէւ

### I.

Գիւղական փոքրիկ եկեղեցու կիսախաւարի  
մէջ խնկի ծուխը պարանպալան բարձրանու մ  
էր այն երեկոյ և բակ կապում փոքրիկ լու-  
սամուտների շուրջը: Կանթեղի աղօտ լոյսի  
առաջ քահանան մռամբուխ քաղում էր ա-  
ղօմբները և բազմաթիւ ժամաւորները մերթ  
գետնատարած խոնաւ խսիրների վրայ, մերթ  
ոտքի կանգնած ու բաղկատարած՝ մրմնչում  
էին մի բնդիանուր ու խուլ մոմուց հանելով:  
Կանանց բաժնում սեացած սեան վրայ կա-

խուած էր Աստուածածնի նկարը մի մզլած,  
դեղնած շրջանակի մէջ և նրա առաջ կանդ-  
նած էր մի տարիքաւոր կին՝ Սուսանը։ Ալ  
կինը և այդ նկարը երկու մալրեր էին, որոնք  
նայում էին իրար ակնապիշ և կարծես չանք  
էին անում հասկանալ միմեանց մտքերը, կար-  
դալ միմեանց սրտերը։ Տիրամալրը վերեւումն  
էր՝ սեան վրայ, Սուսանը ներքեւում՝ գետնի  
վրայ, մէկը սուրբ էր, կարող և հրաշագործ,  
միւսը՝ խեղճ, վշտահար, անզօր մի պառաւ,  
որ եկել էր նրա առաջ լաց լինելու, աղեր-  
սելու։ Միաժնի փոքրիկ, գանգրահեր զլուխը  
սղմած իր կուսական կրծքին, Աստուածա-  
մալրը խանդաղատանքով ու ժպտով նայում  
էր վար, իր ստների տակ սողացող, գալա-  
րուող բազմութեանը, նայում էր նոյն ժպտով  
նաև Սուսանին, որ եկել էր ցաւոտ կուրծքը  
նրա առաջ բանալու։

Շրջանակի վրայ վեց փոքրիկ, գալար մեղ-  
րամոմեր, վշտատեսիլ ու գեղին, պլազլով  
վառւում էին և գունատ ու խորհրդաւոր  
լուսով՝ երերուն, ազօտ փայլ էին տալիս Աս-  
տուածամօր հեղ դէմքին, փոքրիկ Քրիստոսի  
լիքը, ձիւնափայլ մարմնին, որ այդ փայլի  
մէջ լողում էր ինչպէս մուդ լճի վրայ վաղոր-  
դեան մշուշի մէջ լողացող սպիտակ կարապը։  
Խսկի ծուխը չորս կողմէց կաթնագոյն քու-

լաներով գալարւում, պտոյտներ էր կազմում  
աստուածային մօր և զաւակի շուրջը և կար-  
ծես աշխատում էր իր ծալքերի մէջ պարու-  
րել և վեր տանել այդ երկնալին զոյգը։ չէ՞ որ  
նրանք այնքան շատ բան ունեին պատմելու  
աշխարհից, այնքան արցունքներ Ամենակալի  
գահի առաջ փռելու։

Վաղուց էր այնտեղ կանդնած Սուսանը։  
Եկեղեցու զանզի ծախնը լսելուն պէս նա  
եկաւ, հասաւ, իր գողգոջուն ու պառաւ մաս-  
ներով մեղրամոմերը կպցը այրուած, սեա-  
ցած շրջանակին, համբուրեց, երեսը խաչա-  
կնքեց և քարացաւ իր տեղում։ Մոմերի կէսն  
արդէն վառուել էր և Սուսանը կանգնած էր  
զեռ միեւնոյն տեղում, արտասուաթոր աչքերը  
չէր հեռացնում Տիրամօր պատկերից, դողդո-  
ղացող շրթունքներից բառերը թափւում էին,  
հա՛ թափւում, կրակի խօսքերը, ցաւի, աղեր-  
սանքի, պաղատանքի խօսքերը—Սուսանը ա-  
զօթում էր։ Արտասուրի կաթիլները ժայռի  
վրայ փշուող վաակի ցնցուղների պէս յոր-  
դառաստ գուրս էին ցալտում աչքերից և գլոր-  
ւում ծեր դէմքի խորշումների վրայով, ու  
փոքրիկ հոսանուա ակօներ կազմում աչքերի  
տակից մինչեւ ծնօտը։ Սուսանն աղօթում էր  
իր միակ որդու, իր դարիբ, թափառական

Սաքօի համար, որ քանի մի օր առաջ թողեց,  
գնաց դէպի մութ անյալտը, դէպի հեռուն...

«Ով սուրբ Տիրամէր, ասում էր նա, բոլոր  
յաւոտ սրտերի, բոլոր վշտացած հողիների,  
բոլոր մղկտացող մայրերի դու դժոտ մայր,  
ձեռքս քո փէշն եմ ծգել, էրուած, մորմո-  
քուած սիրտս բերել եմ քո սուրբ ոտների  
տակ դնելու. բաց այն, Տիրամէր, տես, ար-  
ցունքը մի կողմ, կրակը միւս կողմն են բռնել  
սրտիս և արցունքը վառ կրակը մարել չի կա-  
րողանում, բոցերը շատ են. բաց այն ու նա-  
յիր՝ անճարների մայր, չէ դու սրտերի կրակը  
հասկանալ, զգալ գիտես, տես ինչեր կան իմ  
եփուած սրտում, ու յետոյ մի ճար, մի դար-  
ման, ողորմած, ողորմած թագուհի: Իմ ծով  
մեղքից էս ծեր օրերիս ֆալաղը մի դաղ բա-  
շեց սրտիս, մի խորը դաղ և էրուած տեղը  
դեռ միսում է, միսում. դու խօ տեսար, սուրբ  
մայր, թէ էս մէկ չիւանս, սարի պէս տղա-  
մարդ, ինչպէս կտոր կտոր արին անօրէնները.  
ախ ցաւով ծնած, մեծացրած զաւակիս էս  
կոտրած ծեռներովս արիւնուա գերեղման իշեցրի:  
Ի՞նչ անեմ, դուցէ իմ մեղքից, դուցէ Աս-  
տուած էր վրաս բարկացէլ: Այս մէկն էլ  
գնաց... մղկտացի, աղաւեցի, լաց եղալ, ձեռք  
ու սուքն ընկայ, որ չը գնայ, բայց գնաց...  
թէ ուր, այն դու ինձանից լաւ գիտես, Տի-

րամէր... հեռու սարերում, ծորերում քարը՝  
բարձ, ժայռն՝ անկողին, օձերի հետ ջուրը,  
գաղանների հետ բունը կիսելով՝ նա թափա-  
ռում է և ես անտէր, անտիրական, ձեռքս  
չոր գետնին, սիրտս՝ դող, հոգիս՝ ցաւած, օրս՝  
սկ, թաց աչքս դրանը բռնած գիշեր, ցերեկ  
մղկտում, վշվում եմ: Տիրամէր, ողորմած մէ-  
րիկ, քո ոտն եմ եկել ևս էլ չեմ տեսնում  
նրան, դու անշուշտ տեսնում ես, ախ, քո  
բարի, քո ողորմած, քո բաղցը աչքը նրանից  
մի՛ հեռացրու, քո սուրբ հովանին ամպի պէս  
նրա վլխից պակաս մի՛ արա, չարից, ցաւից,  
դարգից, արիւնից նրան ազատ պահիր, չէ  
դու կարող ես, չէ որ թէ դու ուզես, մութ  
ամպն էլ նրա վլխով չի անցնի: Սրախ վրայ  
էլ սաղ տեղ չի մնացել, ողջ խոցոտուած՝ պա-  
տառ-պատառ է եղած, էլ տեղ չը կայ նոր  
դանակ միսելու, էլ տեղ չը կայ մի նոր դաղ  
քաշելու, էլ ճար չը կայ նոր խոց բանալու.  
Նրա սկ յատակում, ինչպէս սկ լինը մութ  
ալրում, արիւնը ծով է կապել ու ցաւերիս  
բոցերից եռ է գալիս, պղպճում ինչպէս լի  
կաթսան օչաղի վրայ: Փրկիր նրան, իմ զա-  
ւակին, Տիրամէր, բարեխօս եղիր նրա մօտ,  
որ այնպէս սիրով գրկել, սղմում ես քո սուրբ  
կրծքին. տես նա ինչպէս փարում է քո մայ-  
կրծքին. տես նա ինչպէս փարում է քո մայ-  
կրծքին. ստինքներին, ինչպէս ուզում է լսել  
բական ստինքներին,

քո սրտի ծայնը, մայր, մայր, ախր ես էլ եմ  
մայր, ես էլ սիրու ունեմ, կուրծք ունեմ, մայ-  
րական կաթովս քանիսին կերակրեցի, կրծքիս  
վրայ քանիսին չերմացրի և էլ չը կան, չը  
կան, ոչ մէկը չը կայ, ութ ծնունդ նստեցի,  
ութ երկունք քաշեցի, և այժմ էն մէկն է:  
Խօնչպէս գիմանամ, սուրբ Տիրամէր, կուրծքս  
չոր է, սիրտս մարած, մոփիր դարձած դարզի  
բոցից, սպիտակ մազերիս վրայ ու կապած,  
մէջքս երկու տակ ծալուած, մեռայ գերեզ-  
մանները լիզելով, չոր հողը զրկելով իմ շա-  
րանշարան արնակոլ մեռեների ու չը կայ  
մէկը, որ սղմեմ կրծքիս, չը կայ մէկը, որ իմ  
սրտի ծայնը լսի, չէ ես էլ խեղճ եմ, մեղք  
եմ, մայր եմ, պառաւած, անզօր մայր, ով  
դու բոլոր թշուառների, խեղճերի, անճարների  
ողորմած մայր: Ուխտ եմ անում քո սուրբ  
պատկերի առաջ, թո՞ղ լսի ինձ մեր ամենի  
տերը, սուրբ Աստուածորդիդ, ամէն երեկոյ  
այստեղ քո առաջը կը վառեմ վեց մոմբ,  
կ'ընկնեմ, կը լիզեմ սառը հողը. անճարի պէս  
փէշերիցդ կը կախուեմ, քեզ հանդիսա չեմ  
տայ, քո աչքից չեմ հեռանայ, այստեղ կը  
ճչամ, կը սգամ, կը լամ, կ'աղաղակեռ երկրն-  
քովը մէկ, որ զու ինձ լսես, որ իմ միակ դա-  
ւակին փրկես, պահես, պաշտպանես: Օ՛, ո-  
ղորմած Տիրամէր, քո սիրտը լայն է, սէրդ՝

անչափ, մենակ նրան մի հասիր, աղաչում եմ,  
նախ հասիր բոլոր ուրիշ անճարներին, խեղճե-  
րին, նեղեալներին, քեզ կանչողներին, որ այն-  
քան շատ են մեր վերան աշխարհում, մեր սև  
երկնքի տակ, ամենից վերջը միայն իմ ծայնը  
լսիր, մեղաւոր սրտիս խնդիրը կատարիր, մայր,  
մայր, բոլոր վշտացած հոգիներին, անտէր-ան-  
ճարների ողորմած մայր»:

Մոմերը մէկիկ-մէկիկ ալրուեցին ու մարե-  
ցին, Աստուածածնի և Քրիստոսի դէմքերը  
կամաց-կամաց լուծուեցին ու կորան խաւարի  
մէջ քահանայի ծայնը լոեց, աղօթաւորների  
մրմունչները դադարեցին, եկեղեցին դատար-  
կուեց, կանանց բաժնից էլ սպիտակ չարսա-  
ւաւոր ստուերներն իրար լեռելից մեղմով դրւըս  
զնացին. Սուսանն այնտեղ մնաց մենակ և դեռ  
աղօթում էր, գեռ նա աչքերը վար չէր բե-  
րում Տիրամօր պատկերից, գեռ չորացած բա-  
զուկները տարածած նա օգնութիւն, գթու-  
թիւն էր աղերսում և լալիս էր ու լալիս...

— Որդի, այ Սուսան խաթուն.

Սուսանը շարունակում էր աղօթքը, այժմ  
նա ծունկ էր չոքել և չէր տեսնում, թէ ինչ  
է կատարւում էր շուրջը, չէր էլ լսում ովինչ:

— Սուսան խաթուն, ուշ է: Ժամը պրծաւ,  
որդի:

Կինը զլուխը բարձրացրեց, խօսողը ծերունի քահանան էր:

— Տէրտէր ջան, աշխիդ մեռնեմ, աղօթում եմ:

— Հա, որդի, գիտեմ, որ աղօթում ես, լաւ ես անում, թող Աստուած լսի, ասում եմ, որ ժամը պրծաւ, էլ մարդ չը կայ, տե՛ս:

— Դու գիտես չէ, հայր ջան, էն մէկն էնպէս բէմուրադ եղաւ, մէկէլները գնացին, արեան ծով էր, խեղդեց բոլորին, էս մէկն էլ չոլերն ընկաւ, ես եկել եմ Աստուածածնի փէշերից կախուել:

— Լաւ ես անում, զաւակս, լաւ ես անում, բայց ուշ է արդէն:

— Գիտե՞ս, հայր ջան, չեմ թողնի, չեմ թողնի նրա փէշերը. ամէն օր էսպէս կը գամ, ես ինչ եմ արել, որ էսքան սեր մենակ քաշեմ, որ էսքան ցաւը մենակ ինձ տան, մեղք չեմ, մայր եմ է՛, սա էլ մայր է, էս Տիրամէրը, տես, տես ինչպէս գրկել է իր զաւակին, տես ինչպէս սղմում է կրծքին, իսկ ես ոչ չունեմ, ոչ ո՞ք: Դու գիտես չէ, տէրտէր ջան, չէ քեզ հետ գրինք հողը արնակոլով զաւակներիս:

— Հա հա, որդի, դէ հիմա բաւական է, մնացածն էլ էգուց:

— Տէրտէր, ոտիդ մեռնեմ, դուման բոնեց

իմ զլխին, ի՞նչ զուման, սար ու ծոր մթնեց. Էս չար օրերին, էս չար ժամանակին, նա էլ թողեց, գնաց... ես էլ ուր դնամ, չոր զլուխս ուր տանեմ, դէ Տիրամէրն այստեղ է, ամեն օր կը գամ, մոմ էլ կը բերեմ, կիրակիներն էլ թազայ հաց կը թխեմ, կը բաժնեմ, մատաղ կ'անեմ, արցունք էլ դեռ ունեմ, աչքերս դեռ չեն մարել, այ էս հողը կը թրչեմ, դէ նա էլ մայր է, սիրտ ունի, սրտի մռմուռը կը հասկանայ, մի ճար կ'անի, էնպէս չէ, հայր ջան:

— Ալդպէս է, որդի, ամեն օր արի, աղօթիր, Տիրամէրը ողորմած է, բարեխօս կը լինի, իսկ հիմա գնանք, տես այսօր ուշ է, մոմերդ մարել են:

Սուսանը կարծես միայն այժմ նկատեց, որ մոմերը վառուել, վերչացել են, նայեց վեր, խաւարի մէջ, սեան վրայ պատկերներն էլ չեին երեսում, էլ Աստուածածնի կարմիր պարեցոտը և կապոլտ ծածկոցը չէր նշմարւում, էլ նրա հեզ աչքերը ժպտով չին նայում վար, փոքրիկ Քրիստոսի ծիւնաթոյր մարմինը եկեղեցու խաւարամած մթնոլորտում էլ չէր լողում մի կտոր ճերմակ ամպի պէս, այդ բոլորի փոխարէն, փոքրիկ, ծխոտ շրջանակի մէջ հազիւ նշմարւում էին մի քանի անորոշ բժեր, մութ ստուերներ:

Սուսանը խաչակնքեց երեսը ու կամաց-կա-

մաց երերալով դուրս գնաց: Քահանան կանգնած նայում էր նրան իտեւից և երբ այդ փոքրիկ, գոզգոչուն ստուերը խսպառ ծածկուեց դրսի խաւարի մէջ, նա դլուխն օրօրեց խօրհրդաւոր ձեռի:

Խեղճ կին, ասաց նա կամացուկ, ի՞նչ է լինելու վերջը, խելքն արգէն կարծես տեղը չէ, փառք քեզ Աստուած, հաղար բերան միառք:

Դուրսը մութ էր:

## II.

Էլի գարուններ եկան բոլորեցին Սուսանի պլխով, էլի դաշտ ու ծորեր ծաղիկներով ու կանաչներով ծածկուեցին: Բակի մի հատիկ խնծորենին մի քանի անգամ ծաղկեց և բուրմունք արծակեց իր շուրջը, պատերի նեղ ճեղքերի մէջ ճնճղուկները բուն զրեցին և ծագեր հանեցին. հօտերն ու նախիրները դաշտերը կենդանացրին, իսկ արագիլներն արգէն մի քանի անգամ չուեցին հեռու, հեռու և կրկն վերապարձան: Էլի աշուններ եկան իրանց վրհատեցուցիչ քամիներով և ծառերի տերեները լիզեցին, թռչուններն ահազին ու ախուր երամներով թռղին ու հեռացան գեղնած դաշտերից. կռունկները վշտոտ կղղոցով սև ցելերի վրայ հատիկներ մուրալով երկնքի երեսից

անցան, բայց Սուսանի որդին չը կար ու չը կար: Մենակ էր Սուսանն իր խրճիթում, մենակ ու մոռացուած. նրան մխիթարիչ ու ընկեր մնացել էր իրանց ծեր շունը, որ իր տիրունու պէս այնքան բաներ էր տեսել և նրա պէս կարծես սպասում էր մէկին: Երբ գարնանը բակի խնճորենու վրայ առաջին կոկոնները բացւում էին, Սուսանը նայում էր ուշադրութեամբ ծառի ճիւղերին և դառնում իր ոտների տակ թաւալող շանը:

— Բօղար, խնճորենին ծաղկել է, շուտով նա կը դայ, այնպէս չէ:

Եւ Բօղարը օրօրում էր իր պոչը, շեշտակի նայում տիրուհու աչքերին ասես ի նշան համաձայնութեան: Անցնում էր գարունը, անցնում էր ամառը, էլի վրայ էլին հասնում աշնանային ցրտերը, խնճորենին մերկանում էր տերեներից և տխրութեամբ օրօրում իր կատարը ցուրտ հովերի առաջ, Սուսանը նայում էր վշտով և կրկին դառնում իր շանը.

— Բօղար, չեկաւ, չեկաւ բէրազգը, գարնանը կը դայ, այնպէս չէ:

Եւ շունը կրկին օրօրում էր իր պոչը և պաւաւն սպասում էր յուսով նոր դարնանը, որ խնճորենին ծաղկի, որ թռչունները վերադառնան և նրանց հետ միասին Սաքօն յայտնուի:

Նա սպասում էր և Սաքօի հածար կամաց-  
կամաց պատրաստում էր փափուկ, շատ փա-  
փուկ անկողին: Բուրզը հաւաքել էր տարինե-  
րի ընթացքում և մատներով մաքրում էր տ-  
մեն օր, ապա կարում և անկողինը դնում էր  
ծալքը, յետոյ նրան թւում էր, թէ հարկա-  
ւոր է քանդել, նորէն փափկացնել, ցած էր  
բերում և վերսկսում տասն անգամ կրկնած  
աշխատանքը:

Դրա հետ միաժամանակ նա կատարում էր  
իր ուխար սրբութեամբ. ամեն երեկոյ գնում  
էր եկեղեցի, վեց մոմք դողդոչուն ձեռքով  
կպցնում Տիրամօր պատկերի սեացած, այ-  
րուած շրջանակի վրայ, ձեռքերը տարածում  
էր դէպի վեր, դէպի երկինք և աղօթում, ա-  
ղօթում: Եւ ամեն երեկոյ աղօթքից յետոյ,  
երբ բոլոր ժամաւորները դուրս էին դնում,  
նա դառնում էր տէրտէրին.

— Սաքօն կը գա՞յ, այնպէս չէ, տէրտէր.

— Հա, որդի, ի հարկէ կը գայ, քո այն-  
քան արցունքը, աղօթքները...

— Բերանդ տաճար է, տէրտէր ջան, տա-  
ճար, բերնիդ մեռնեմ, ասա՛, ասա՛, այսպէս  
ասա՛, դու որ ասում ես, Տիրամէրն էլ ժպտում  
է, յոյսը սրտիս մէջ վարդի պէս բացւում է:

— Հապա, որդի, Տիրամէրը մւմ ինդիրն է

թողել անկատար, երկնքի դռները նրա բարե-  
խօսութեան առաջ միշտ բաց են:

Եւ Սուսանը յուսով ու հանգստացած տուն  
էր վերադառնում, ուր նրան սպասում էր Բո-  
դարը, որ կաղկանձելով փաթաթւում էր տի-  
րուհու ոտներին: Սուսանը, հաւատացած էր,  
որ որդին կը գայ, անպատճառ կը գայ, ի՞նչ-  
պէս կարող էր Տիրամայրը խարել նրան, նա  
այնպէս ժպտով, այնպէս քաղցր է նայում վե-  
րից, երբ Սուսանը մօմերը վառում է և աղօ-  
թել սկսում: Ի՞նչպէս կարող է նա չը լսել  
մի մօր աղաչանք, որ այնքան տառապել է,  
այնպէս տանջուել, այնքան լացել, մրմնչացել:  
Ինչու պէտք է Տիրամէրը այնքան ցաւեր մի-  
ան նրան բաժին տայ. մէկ էլ ի՞նչ դժուար  
է նրա համար կատարել մի մօր այսքան ա-  
ղաչանքը. որ նա կամենայ, որ նա մի քաղցր  
աչք ծգի, բաւական է, մնացածը հեշտ է, Սու-  
սանի որդին ինքն իրան կը գայ ողջ և ա-  
ռողջ:

Եւ ամիսներ ու տարիներ էին անցնում  
Սուսանի զլխով, որդին չը կար ու չը կար,  
բայց նա չէր յուսահատւում, Տիրամէրը ժրպ-  
տում էր և նա հաւատացած էր, որ Սաքօն  
կը գայ:

— Տիրամօր փէշիցն եծ բռնել, ասում էր  
նա յաճախ իր հարեւաններին, Տիրամօր փէ-

շից... չորս տարի է, նա ինձ ամեն օր ժրպ-  
տում է... նա ինձ խռոտանում է... Տիրամօր  
ժպիշտը...

Տարեանները լսում էին և խորհրդաւոր  
ձեռվ պյուխներն օրօրում կրկնելով՝

— Խեղն կին, էւէղն կին:

Սուսանը սպասում էր... նա յանախ երեա-  
կայում էր այն օրը, այն վայրկեանը, երբ զա-  
ւակը կը դայ... Նախ բակի դուռը ճռում է  
բարձր, յետոյ թրբիսկ, ծածկում է... շունը,  
այս խելօք Բօղարը, վազում է կատաղած,  
ըայց յանկարծ ծայնը կարում է, շներն ախր  
չեն մոռանում տէրերին՝ այնպէս չէ, Բօղար,  
դու խօմ չես մոռացել Սաքօխս, դառնում էր  
նա շանը. կենդանին նայում էր խելացի աչ-  
քերով և կարծես ուղում էր ասել, հա, ի  
հարկէ չիմ մոռացել: Երեակալական պատ-  
կերը շարունակում էր, շունը լռում է, թա-  
ւալում է գետնին, փաթաթւում է նրա ոտ-  
ներին, կաղկանձում ուրախութիւնից: Ինքը՝  
Սուսանը, այդ ժամանակ նստած է սրահում,  
դէ ծեր է, աչքերը լաւ չեն տեսնում, համ էլ  
որդին փոխուել է, քանի՛ տարի է... նայում է  
և չի ճանաչում. ահա նա մօտենում է, մօր  
ոտները գողգողում են, փորձում է վերկենալ,  
ըայց չի կարողանում, բարձրանում է ընկ-  
նում, վեր է կենում, դարձեալ ընկնում, ա-

ռաջ է ծգւում բոլոր ուժով, ոյժ է զործ գը-  
նում և ծեռքերը տարածած փաթաթւում է  
նրա պարանցով.

— Ա՛խ բուանամ ես... դու ես, Սարօ  
շան... դու ես... դէ հիմա թաղիր ինձ, եկա՞ր...  
Ե՞րբ եկար... ախր ես մեղք եմ... Տիրամէրն  
ասաց կը դաս, և եկար, դէ հիմա թաղիր  
ինձ... և արցունքները թափւում են և Սու-  
անը երջանիկ է...

Օրական մի քանի անգամ այս սփոփիչ  
պատկերը գալիս է, անցնում նրա աչքի ա-  
ռաջից. նա ինքն իրան տեսնում է զրկախառ-  
նուած որդու հետ, լալիս է և արցունքները  
գովացուցիչ են:

Եւ ինչ լաւ է, լաւ է այդ բոլորը...

Մի ժամանակ նրա համար երգումներից  
գերագոյնը իր որդու արեն էր, որդու զուխն  
էր. վաղուց է, որ նա այդ թռղել է, այդ ա-  
րեր այժմ շատ է հեռու, շատ է թանկ, որ-  
պէս զի մայրը յանձն տռնի հեշտութեամբ  
«բերան բերել» ամեն անգամ. այժմ նա երդ-  
ում է որդու գալուստով.

— Որդուս գալուստը վկայ... և նա արտա-  
սանում այդ երեք բառը այնպիսի շեշտով,  
այնպիսի հաւատով. այդ երգումը նրա սրբու-  
թիւն սրբոցն է, նրա կեանքի սիւնն է, նրա-  
նով է ապրում, շնչում, հաւատում. նայում է

գուանը և սպասում այն թրիսկոցին, որ նուիրական գալուստը պիտի աւետէ:

Տարիներն անցնում են տարիների յետելից, ինձորենին ծաղկում է ու մերկանում, տարափոխիկ թռչունները գնում են ու գալիս, Սաքօն չը կայ, բայց Սուսանը շարունակում է աղօթել, շարունակում է հաւատալ ու երգուել.

— Որդուս գալուստը վկա՞լ...

Հարեանները լսում են, զլուխներն օրօրում:

— Խե՞ղճ կին, խե՞ղճ կին:

Եւ ծիրամէրը ժամում ժպտում է, յուսառու, պայծառ ժպտով. Սուսանն իրաւունք ունի կրկնել՝

— Որդուս գալուստը վկա՞լ...

### III.

Այն զիշե՞րը... ախ այս աշնանալին զիշերները ինչու իրանց խաւար ծալքերում բերում են միշտ այնքան սե, այնպէս անորոշ, խեղզող զգացմունք: Դրսից լսում է մանրամաղ անծրեի կրկտոցը, և կտուրներից կաթկաթում է չուրը անվերջ, յուսահատեցուցիչ միակերպութեամբ՝ նլըֆ, ճլըֆ, ճլըֆ... զրսում, մութ փողոցներում անց ու գարծը վաղուց գագարել է. այդպիսի չար ժամին ո՞ր աղտմորդին դուրսը կը մնալ:

Սուսանն անքուն է վեռ. նա նստած է և մտածում է իր Սաքօի մասին, ուր է նա այժմ, ո՞ր չոլում, ո՞ր ծորում, ո՞ր այրի մէջ, կամ ժայռի տակ կծկուած: Սարերում այժմ ինչպէս ցուրտ է, նա էլերեի թրջուած է, կրակ չունի, ի՞նչպէս վառի, նրանք կրակ չեն անում, այն թափառականները, որ վառեն, լաւ չէ, ասում են... հիմա ի՞նչպէս մրսում է իր Սաքօն, այսպիսի՞ զիշեր...

— Օ՛, քուանամ ես, որդի, հոգիս դուրս գայ քեղ համար. ով սուրբ Տիրամէր, քեղ եմ ապաւինել, դու բարեխօս եղիր:

— Ո՞վ զիտէ, դուցէ Սաքօն սարերում չէ, շարունակում է մտածել Սուսանը, գուցէ հէնց զալիս է, չար զիշեր է, բայց նա կարող է գալ, տղամարդ է, այն էլ սարերի տղամարդ, որ ուզի, կը գայ:

Անցեալ օրը ինքը թափառական գնչուին ֆալ բացել տուեց, նա ասաց. «Սարերին թառող արծիւր այս օրերս ցած կը սլանալ»:

— Յետո՞յ:

— Յետո՞յ... գնչուն նայեց իր եղունգին, մնաց մտածկու, կմկմաց, յետո՞յ... շարունակեց նա, յետոյ նորէն վեր կը բարձրանայ:

Վերջին խօսքերը լաւ չէին, մտածում է Սուսանը. «Սարերում թառող արծիւր ցած կը սլանալ», այդ լաւ է, «յետոյ վեր կը բարձ-

բանայ», ի՞նչ կը լինէր, որ անիծուածը վերցին խօսքէրը չ'ասէր. ուրեմն Սաքօն կը դայ, էլի կ'երթայ, բացատրում էր Սուսանը:

— Հա, հա, արի, արծիւս, արի՛, թառլանս, յած արի մէկ տեսնեմ, որ ողջ, առողջ ես, մէկ համբուրեմ սիրուն ճակատգ, մէկ երեսս երեսիդ քսեմ, մէկ զլուխդ կրծքիս սղմեմ, էս քոռացած աչքերովս մէկ կուշտ կուշտ նայեմ քեզ, ու էլի գնա, թո՞ղ Տիրամէրը քեզ պահի, որդի, թէկուզ սարերի վրայ, ծորերի մէջ. ու որ գնում ես, ես սևաւորս ի՞նչ կարող եմ անել, գու խօ արծիւ ես, գնչուն ասաց, արծիւ բալա:

Դրսում շարունակւում է քար լռութիւնը. շներն էլ չեն հաշում, նրանք անձրեի տակ ազկուած՝ քաշուել են զանազան ծակ ու ծուկ մտել, ոտ ու զլուխ իրար խառնած, կծիկ դարձած՝ մրափում են այս գէզի տակ, այն դռան առաջ: Եւ անձրել շարունակում է մաղուել, և զրերի ծայնը լւտում է միակերպ, անվերչ՝ ճլը՛ֆ, ճլը՛ֆ, ճլը՛ֆ... Չար, վատ գիշեր է, բայց Սուսանն էլի սպասում է իր որդուն, գնչուն ասաց՝ «արծիւր յած կը սլանայ, էլի վեր կը բարձրանայ»...

— Թող յած սլանայ և էլի վեր բարձրանայ, գոնէ տեսնեմ, թէ ազատ է յաւից, չոռպից, գոնէ...

— Թրը՛խկ, թրը՛խկ, թրը՛խկ...

Բակի դուռն են թակում, Բօղարը հռփաց և նետուեց գէպի այն կողմը:

— Թրը՛խկ, թրը՛խկ...

Սուսանը ցնցուեց ու դողաց բոլոր մարմնով, բայց ինքն էլ չիմանալով ինչու, մի վայրկեան մեխուած մնաց իր տեղում անշարժ և ամբողչապէս լսողութիւն դարձած, բերանաբաց, շնչակառը. նա լսում էր, թէ ինչպէս շունը կատաղաբար չանդոռում է դուռը և ինչպէս դրսից խփում են.

— Թրը՛խկ, թրը՛խկ...

Այս անգամ նա վեր թռաւ տեղից, երերալով վազեց տան դուռը բանալու, այդ սովորական դործն այժմ նրան չի յաշողում, մի բան է պատահել փակին և սողնակը չետ չի գնում. նա քաշըշում է, թափ է տալիս, ի զուր, իսկ շունը դրսում հաշում է կատաղաբար և դուռը թակում են դրսից.

— Թրը՛խկ, թրը՛խկ...

Վերջապէս նա գուռը բացեց և դուրս եկաւ խրճիթից, նա բակումն է, անձրել թափւում է զլխին, բայց նա դողդողալով, հետզով, ցեխերի միշից երերալով, տնքալով վազում է դէպի բակի դուռը. սաստիկ շտափելուց նրա ոտները խառնուում են զգեստի ծալքերին և երեսի վրայ ընկնում է ցեխերի մէջ. թըրերեսի վրայ ընկնում է ցեխերի մէջ. թըր-

չուռմ է իսպառ, այդ էլ նրա փոյթը չէ, նա  
վեր է կենում և դարձեալ փազում. ահա և  
բակի դուռը:

— Սուս, սուս, Բօղար. նա է, նա է,  
Ակուես դու, սուս, թող որ դուռը բանամ:  
Եւ դարձեալ դուռը չի բացւում, ծեռները դո-  
ղում են, սիրտը թոթուում է՝ ասես կրծքից  
դուրս փախչելու համար, վերջապէս ճռճռա-  
լով դուռը բացուեց, այժմ խաւարի մէջ նրա  
առաջ կանգնած է մի մուլթ մարդկային ստուեր,  
հազիւ հազ նկատելի:

— Ո՞վ է... ո՞վ ես դու...

— Ես... ես Աստուծու մարդ եմ... անվր-  
նաս ու անպէտք. դողում եմ ցրտից, թրր-  
չուած եմ, հեռուից եմ գալիս... ուշացայ, անձ-  
րեկի տակ մնացի, մութը վրայ հասաւ սարե-  
րում, նոր հասայ, ես անպէտք մարդ եմ. Աս-  
տծու արարած... Տե՛ս, ես դողում եմ, մի տեղ,  
մի կրակ, մի ճար, Տիրամօր սիրուն...

— Տիրամօր սիրուն, կրկնեց Սուսանը մե-  
քենայարար, մի վայրկեան լուց, յուսահատ  
զայրոյթով կրծոտեց շրթունքները մրմնչա-  
լով.

— Նա չի՝, նա չի՝, օ, անողորմ մարդ:

— Զար գիշեր է, շարունակեց անժանօթը,  
խեղճին ով տեղ կը տայ, քանի՛ դուռ եմ  
թակել, բացող չը կայ, փախենում են, ես

անպէտք մարդ եմ, էլի վախենում են, դէ ես  
էլ Աստծու ստեղծածն եմ:

— Աստծու ստեղծածը... հա, աղամորդի-  
ներն Աստծու ստեղծածներն են, ասաց Սու-  
սանը, բայց մտածում ուրիշ բան և քիչ  
մնաց ասէր՝ անողորմ, անաստուած մարդ,  
դու անպէտք ես, բայց ոչ անվնաս, տե՛ս, թէ  
ինձ ինչքան վնաս տուիր, սրտիս թելը կրտ-  
րուեց, ուսներս դողում են, ես թուլանում, ես  
մեռնում եմ... ում էի սպասում, ով դուրս  
եկաւ. մրսում ես, չհանդամբ թէ մրսում ես.  
թրչուած ես, էն լաւ է որ թրչուած ես. քո  
տեղն է, դու ինձ տանչեցիր, սարերում մէկը  
կայ, քեզանից լաւ է, նա էլ է թրչուած, նա  
էլ է մրսում և նա էս չար ժամին ոչ ոքի  
դուռը չի թակի: Սուսանը մտածում էր այս  
բոլորը, ուզում էր ասել բարձրածայն, ճչալով,  
ուզում էր դուռն էլ շրխկալով ծածկել ճամ-  
բորդի երեսին, թողնել, որ նա դողայ զրառում,  
բայց չը կարողացաւ, մտածածը չասուեց, ծր-  
նօտները փակուեցին, մի առժամանակ մնաց  
լուռ:

— Ղարիբի տէր եմ, դու էլ ղարիբ ես,  
ներս արի, ասաց նա վերջապէս:

— Տիրամէրը հասնի ղարիբին:

— Հա՛, Տիրամէրը հասնի ղարիբին. սուս,  
Բօղար, սուս, մի զայրացիր, ի՞նչ անենք, Աս-

տծու ստեղծածն է, խեղճ է, անճար է. Տիրամէր, բոլոր անհարներին, բոլոր տառապեալ-ներին հասիր, յետոյ նրան, մրմնչում էր պառաւը ցեխերի միջից դանդաղութեամբ քայլով և օտարականը հետեւում էր նրան:

Ներս մտան. ծիթէ ճրազը պլազում էր. պառաւը դարձաւ, նայեց օտարականին: Ծեր մարդ էր, սպիտակ մազերով ու միրուքով. Խղճուկ զգեստները ողջ թրչուած՝ ծլանքներից չուրը կաթկաթում էր: Նա դողում էր ցրտից ամբողջ մարմնով: Նրա մի ուսից կախուած էր մի պարկ, կիսով չափ լի հացով, իսկ միւս ուսից մի երկար բան, որ սազի էր նմանում: Սուսանը նայում էր ուշադրութեամբ.

— Աշուղ ես, հարցրեց նա:

— Չէ, մէրիկ, աշուղ չեմ, այլ դղրար, ես թափառում եմ գիւղից գիւղ, դռնից դռու, գզում եմ բուրդ ու բամբակ, ով տալիս է. այս էլ աշուղութիւն է, մէրիկ, տես ես զարկում եմ այս լարին, նա ցոյց տուեց իր գործիքը. և նրա հաստ լարը լաց է լինում իմ հարուածների տակ, և լալով բուրդ է գզում, այդ լացի գնով, ու օրով ես ապրում եմ. ի՞նչ անեմ, մէրիկ, չիւանները արնակոլ եղան մեր վերան աշխարհում, ես եմ մնացել, ժեր օրերիս, ու օրերիս դռնէ դուռ թափառական:

Անպէտք եմ, մէրիկ, անպէտք, Աստուած հոգիս էլ չի առնում, որ ազատուեմ:

— Սուս, սուս, ողորմելի, Աստծու դէմ մի խօսիր. նրա ստեղծած արարածների մէջ անպէտքը չը կայ. երբ նա կօժիցել է քեզ աշխարհ ձգել, լուս, պապանձուիր ու քաշիր նակատազիրդ: Դէ, հան այդ պարկդ, դէն դիր մէջքիդ գործիքները, լարն ու աղեղը, մօտեցիր թոնրին, տաքացիր, շորերդ չորացրու: Անհարին մի նար միշտ կը լինի, Տիրամէրը վկայէ, թող նա հասնի բոլոր զարիբ-զուրբաթներին, յետոյ նրան, նրան, էն սարերի արծւին.

«Ե՞րբ կը գայլ...» վերջին խօսքերը նա արտասանեց ինքն իրան:

— Շէն մնաս, մէրիկ, շէն մնաս, թող Աստուած քո սրտի բոլոր ուխտը կատարի, օշազիցդ՝ կրակ, տաշտիցդ հացն անպակաս անի:

Օտարականը վար զրեց իր պարկը, ցածքեց ուսից գործիքները, մօտեցաւ թոնրին, կծկուեց ու մնչց: Դրսում անծրել շարունակում էր, չուրը կաթկթում էր միակերպ անվերջ ծլրիցով, խաւար էր ու ցուրտ. Սուսանն տնբուն՝ գեռ երկար ժամանակ շարունակում էր մտածել նրա մասին, որ սարերում, ալրերում մրսում, դողում է այս չարգիշերին:

— Դու հասնես, Տիրամէր, դու բարեխօս  
լինիս, մըմնջում էր նա, և սիրտը ճմլում  
էր ցաւից:

## IV.

Լուսացաւ. անծրել դադարեց. բացուեց  
աշնանային մի ցուրտ ու պայծառ օր: Մար-  
դիկ դուրս սողացին բնակարաններից: Սուսա-  
նի հիւրը նոյնպէս պատրաստում էր դուրս  
բնկնել իր գիշերային ապաստարանից: Նա  
գանգաղութեամբ վերցրեց իր պարկը, կախեց  
ուսից, առաւ նաև բուրդ գզելու գործիքը և  
դարձաւ Սուսանին:

— Շէն մնաս, մէրիկ, օչաղդ վառ մնայ:

— Գնում ես:

— Հա, գնում եմ ցնցոտիներս ու անպէտք  
գլուխս երկրէ երկիր, գիւղէ գիւղ, գանէ գուռ-  
քաշ տալու, մինչև մի տեղ շանսատակ լինեմ  
ու մաշուած, տրորուած ոսկորներս հանգիստ  
առնեն: Եւ մինչ օտարականը խօսում էր, պա-  
ռաւը մտածում էր, տեսնես սա չի տեսել  
նրան, էն սարերի արծուին:

— Լսի՞ր, դու շատ ես ման եկել:

— Շատ, խիստ շատ:

— Սարերում, ձորերում:

— Սարերում, ձորերում:

Պառաւը գլուխը քաշ ծղեց ու լոեց:

— Ինչու ես հարցնում, մէրիկ:

— Է՞հ, հէնց էնպէս, տեսնում եմ, որ շատ  
տանջուած ես:

— Հա, մէրիկ, տանջանքը իմ եղբայրն է,  
մենք միասին ծնուեցինք, այժմ էլ անբա-  
ժան ենք:

— Տանջանքը քո եղբայրն է, էլ. խեղճ  
մարդ, ես էլ նրա պէս մի քոյլ ունեմ, ասում  
էր պառաւն ինքն իրան: Նա մտածկոտ էր,  
կարծես և՛ ուզում էր մի բան հարցնել և՛ վա-  
խենում էր պատասխանից: Օտարականը երեխ  
այդ նկատում էր և սպասում:

— Լսի՞ր, դու սարերում արծիւ տեսել ես,  
հարցրեց Սուսանը: Նրան թուայ, որ այս  
օտարականն էլ պիտի հասկանալ, որ արծիւը  
նա է, Սաքօն է: Տիրեց լուռթիւն, նրանք  
նայում էին իրար ուշադրութեամբ, օտարա-  
կանը չը հասկացաւ տարօրինակ հարցը. Սու-  
սանն այդ նկատեց և կարծես արդարանալու  
համար շարունակեց:

— Գնչուն ասաց՝ «Սարերի արծիւը ցած  
կը սլանալ, էլի վեր կը բարձրանալ», սպասե-  
ցի՞ ցած չը սլացաւ, ինչո՞ւ:

Օտարականն այժմ նայում էր աւելի զար-  
մացած, հարցն աւելի քան օտարոտի էր:

— Բան չեմ հասկանում, մէրիկ, ասաց նա,  
ես արծիւ չեմ տեսել. ու օր շատ եմ տեսել,

խեղճ ու. կրակ զզրար եմ, քո յարկի տակ աղ  
ու հայ կերայ, թէ բուրդ ունես, բեր զզեմ,  
իմ ցաւը հոգամ:

Պառաւի աչքերը փալեցին. նրա զլխով  
կարծես մի լուսաւոր միտք անցաւ. որդու  
անկողինը, այդ ի՞նչպէս է, որ նա մոռացել է.

— Բուրդ, հա՛, բուրդ ունեմ, ի՞նչ լաւ ա-  
սացիր, ողորմի հօրդ, զզելու բուրդ, որ փա-  
փուկ լինի, էնակս չէ, որ զզեն, բուրդը փա-  
փուկ է լինում, անկողինն էլ լաւ. մատերովս  
եմ քրքրել, բայց այդ քիչ է:

Եւ նա ծալքից ցած բերեց որդու անկողի-  
նը, քանդեց, բուրդը դուրս թափեց զզրարի  
առաջ.

— Ա՛յ, զզիր, զարկ, լաւ զարկ լարիդ. թող  
փափկի:

Օտարականը գործիքը ցած բերեց ուսից,  
հացի պարկն էլ մի կողմ զրեց, ծունկ չոքեց  
և սկսեց զարկել իր գործիքի հաստ լարին:  
Բուրդը զզում էր ամպերի պէս քուլա քուլա  
բարձրանում, իսկ լարն ասես լալիս, հեծում  
էր. նրա հարուածների տակ:

— Լաց, լաց ընկեր, մամոռում էր նա, ցա-  
ռով ենք ծնուռմ, լացով վաստակում, արիւնով  
գերեզման մտնում. լաց, լաց իմ խեղճ ընկեր.  
մեր աշխարհում ովչի լալիս, սար ու քարն

էլ է անքում: Եւ լարը հեծեծում էր և բուր-  
դը զզում բարդ, բարդ բարձրանում:

Սուսանը լսութեամբ և հիացմունքով նա-  
յում էր: Դորձը շարունակւում էր, զզրարն այս  
անգամ և՛ զարկում էր և՛ երգում, կարծես իր  
լարի հետ մէկտեղ հեծեծում էր ու լալիս. նա  
ասում էր.

«Գարահիսար լերան կրծքին նա էլ ընկաւ  
վիրաւոր,  
կուծըը պատռած, սիրտը խոցուած չար  
թշնամու գնդակով:  
Ժէռոտ լերան լերկ կատարից վար սլացիր  
սև արծիւ,  
թէերդ բաց, լայն թէերդ ու չիւանին  
հով արա:  
Խոցուած սրտից մուգ արիւնը կաթիլ կա-  
թիլ կը ծորայ,  
Ա՛յ չիւանի կեանըն է հոսում ցաւոտ կը ը-  
քի լայն վէրքեց:  
Ժէռոտ լերան լերկ կատարից վար սլացիր  
սև արծիւ,  
թէերդ բաց, լայն թէերդ ու չիւանին  
հով արա»:

Սուսանը լսում էր սկզբում ուշադրութեամբ,  
բայց կամաց-կամաց նա կարծես մի մեծ սար-  
սափի առաջ աչքերը չուցեց ու գունատուեց.

— Այդ ի՞նչ ես երգում... այ մարդ.

Օտարականը զլուխը բարձրացրեց, դործը թողեց, նայում էր, զարմացած այս կնոջ յուղմունքի վրայ և կարծես խօսք չէր գտնում պատասխանելու:

— Սուս, սուս, անողորմ, շարունակեց Սուսանը, թող ալդ սև արծուի երդը, ես սևը չեմ ուղում, դնչուն այլպէս չ'ասաց, վեր կաց շուտով հեռացիր, Աստուած քեզ հետ, երդիր քո սև արծիւն ուրիշ տեղ, ես վախենում եմ քեզանից, վախենում եմ քո երդից. ես դողում եմ քո շրթունքներից, նրանց շարժումներից, փակիր բերանդ, աղաչում եմ, քեզանից կախուած չէ, պապանձուիր, թող սև արծիւր սարի կատարին մնայ... Զիւան... արիւնաքամ... Տիրամէր, Տիրամէ՛ր, ես վախենում եմ այս ողորմելուց, դու ի՞նչ կ'ասես, եաման Տիրամէր... գնա, գնա:

Օտարականը շփոթուած՝ շարունակում էր նայել.

— Ինչու, մէրիկ, ի՞նչ արեցի, չէ զու ասացիր, որ բուրդ գգեմ, ի՞նչ վատ բան ասացի, մռմռում եմ ինձ համար: Սուսանը լսել էր ուղում:

— Գնա՛, գնա՛, գնա՛, ի սէր Աստուածոյ գնա՛ դու բէխէր մարդ ես, քո բերանից մահ թափում, ես դողում եմ, գնա՛...

Օտարականն այս անգամ վերցրեց գործիքն ու պարկը, ձգեց ուսերին և վճռական քայլուածքով զուրս եկաւ խրճիթից: Նա արդէն բակումն էր, արդէն մօտ էր գուռը բանալու և փողոց գուրս դալու, երբ Սուսանը վազէ վազ նրան հասաւ, կախուեց փէշից, աչքերը չռած, դողդողալով ու շնչակառը ճչաց:

— Կա՛ց, կա՛ց, չեմ կարող, չեմ կարող, ասա, աղաչում եմ, ասա՛ ինձ, ով է այն լեռնարանի վիրաւորը.

— Տէր Աստուած, ալդ հին բան է, շատ հին. ամենքը զիտեն, հին երդ է, ամենքն են երդում:

— Ի՞ն է... Սուսանը կարծես մի փոքր հանգստացաւ, որ «բանը» այնպէս հին է:

— Հին է, մէրիկ, քանի՛ տարի է ինչ երդում են ամեն տեղ:

— Ո՞վ է, ով է այն շիւան վիրաւորը:

— Զը զիտե՞ս, արար-աշխարհը զիտէ Գարահիսարի բանը, եաման բան էր. վէրան մնայ Գարահիսարը, քանի՛ մն էին...

— Ո՞վ է շիւանը քեզ ասում եմ, անողորմ...

— Միթէ չը զիտես, Սաքօն է:

Սաքօն... ուսուհ, տնաստուած, նզովք քեզ. ալդ ի՞նչ ասիր, նզովք քո շրթունքներին, քո եկած նանապարհին, քո մննդին... սուտ է, սուտ է, Տիրամէրը կայ, աղօթքս, մոմերը,

սուտ ես խօսում, չար սատանան ես դու,  
դուրս, դուրս, դուրս... բայց չէ, կաց, կաց,  
աղաջում եմ, սուտ էր, այնպէս չէ, դու սուտ  
ասացիր... լուռ է, լուռ է, անողորմը, դէ  
դուրս, դուրս, բէխէր ոտքդ կոտրուէր, դու  
եկել ես ինձ տանջելու, գեկերի բաժին դառնայ  
քո հոգին, դու սուտ ես ասում, գուրս...

Օտարականը կարծելով՝ որ կինը գժուեց,  
զլուխը կորցրած զուրս փախաւ փողոց ա-  
ռանց լետ նայելու, իսկ Սուսանը շարունա-  
կում էր ճչալ և երկինք աղաղակել։ Երբ նրա  
ծայնի վրայ հարեւանները չորս կողմից հա-  
ւաքուեցին, Սուսանը գեռ վազվզում էր բա-  
կում խելագարի պէս, կուրծքը բաց արած,  
չորացած ստինքները բռնած ցոյց էր տալիս  
երկնքին։

— Նայիր վերից կապուտոր Տէր, նայիր  
էս չորացած աղբիւրներին, քանիսին կերակրե-  
ցի սրանցով, քանիսին իմ միս ու արիւնը  
տուի, մեծացրի, էլ չը կան, չը կան, ոչ մէկը  
չը կալ... Մէկ Սաքօն է, Սաքօն, էն սարերի  
արծիւր, էն էլ... ի՞նչ ասաց անիրաւը... նիշա  
է, դու չը տեսմը... Սաքօն, սարը մթնեց,  
արծիւր սե կապեց, նիշա է... բա դու ի՞նչ  
ասիր, ի՞նչ արիր, մայր եմ, չէ մայր էի, էլ  
մայր չեմ, ութը ծնունդ, ութը երկունք, հա-  
գար ցաւ, հաղար խոց սեաւոր սրտիս...

ունեհ... Եւ նա շարդուած լնկաւ ինձորենու  
տակ, ծեր զլուխը կախուեց կրծքին, արցուն-  
քը թափուեց, թափուեց, իսկ վերեկց ծառի  
վերշին, զեղնած տերենները մէկիկ մէկիկ մաղ-  
ւում էին նրա զլսին և ծիւղերը մերկ ու  
գողգոջուն օրորւում էին աշնանային սառն  
քամու առաջ։

## V

Սուսանը հիւանդ է, Սուսանը մեռնում է...  
— Հին բան է որդի, հին բան, ասում էր  
նրա զլսավերել նստած ծերունի քահանան,  
որ եկել էր հիւանդին վերշին մխիթարութիւնն  
ասելու, վերշին հաղորդութիւնը տալու։

— Հին բան է, կրկնում էր մեռնողը, Տի-  
րամէրն էլ գիտէր, տէրտէր չան։

— Աշխարհ գիտէր, որդի, քեղանից բացի  
ամենքը գիտէին։

— Դու էլ գիտէիր։

— Դէ որդի, թէ քեզ էլ ասէինք ի՞նչ  
օգուտ, ցաւդ գրանով չէր թեթեանալ. այն-  
քան մալլեր լաց եղան, այնքան սրտեր վլշ-  
րուեցին, այնքան զլուխներ սե կապեցին, է՞հ,  
ի՞նչ անենք, մեր ճակատագիրն է։

— Մեր ճակատագիրն է, որ էսպէս արուն-  
արցունք քամենք, մղկտմներ... թող առաջուց  
ասէիր ինձ, թէ մեր ճակատագիրն է. քանի-

տարի է, մաշեցի ժամի դուռը գնալ գալով,  
մատներս տրորեցի մոմ վառելով, Տիրամէրը  
ժպտում էր, ժպտում, իսկ դու հիմա ես ա-  
սում մեր ճակատազիրն է:

— Դէ ի՞նչ ասէի, որդի, աղօթում էիր,  
դրանից ի՞նչ վնաս, աղօթքը սուրբ բան է,  
հաւատում էիր, հաւատը քաղցր բան է, ես  
ի՞նչպէս քո և Աստծու մէջ ընկնէի. երկի նա  
ուզում էր, որ դու չիմանաս «Էն բանը»:

— Տիրամէրը խաբեց, նա խօմ կարող էր  
երազով ինց յայտնել, կը գար երազիս ու կ'ա-  
սէր՝ «Սև կապիր Սուսան, սև կապիր, արեդ  
խաւարեց, օշազդ մարեց», բայց նա այդ չ'ա-  
սաց, նա խաբեց, ժպտաց ու խաբեց:

— Օօ, մի՛ ասա այդ, որդի, լսիր ինձ, ա-  
մենքս էլ մահկանացու ենք, հանդերցեալ կեանք  
կայ, հաշիւ ու համար ունենք տալու, դու  
էլ, դէ տարիքդ անցած է, ճաշակուիր որդի,  
ասա՝ մեղալ Աստուծոյ:

Պառաւը զլուխը տարուրերեց որպէս մերժ-  
ման անհամաձայնութեան նշան.

— Զէ՛, չէ՛, Տիրամէրը խաբեց, ես խոռվ  
եմ ժամից, պատարազից, Տիրամօրից, երկն-  
քից, թող այսուհետեւ դժոխքի բոցերին բա-  
ժին դառնամ:

— Մի՛ ասիր այդ, որդի, մի՛ ասիր, հոգուդ  
մեղք մի անիր:

— Ես հոգի չունեմ, իմ հոգին մոխիր է  
դարձած դարդի կրակից:

Տասներորդ անգամն էր քահանան կրկնում  
իր առաջարկութիւնը, տասներորդ անգամը  
նա ծեռքի հաղորդութիւնը մօտեցնում էր նրա  
շրթունքներին և Սուսանը միշտ մերժում էր,  
նա խոռվ էր Աստծուց, Տիրամօրից... արդէն  
ամիսներ էր, որ նա էլ եկեղեցի չէր գնացել.  
սարսափելի գոյժից յետոյ նա մի անգամ, մի  
վերջին անգամ երերազով գնաց, կանգնեց Տի-  
րամօր պատկերի առաջ, առանց մոմի, առանց  
աղօթքի և բոլոր ձայնով նչաց.

— Դու ինձ խաբեցիր, Տիրամէր:

Ժամաւորները յետ նայեցին, ամենքը կար-  
ծեցին թէ նա խելագար է: Սուսանն առանց  
ուշը գարձնելու իր շուրջը, դուրս եկաւ ժա-  
մից, գնաց, փակուեց իր տանը, մենակ ու  
սգաւոր:

Զատկին քահանան եկաւ տունն օրհնելու,  
միսիթարութիւն խօսելու, մերժեց. այժմ էլ  
հիւանդ ընկած անկողնում, նա մեռնում է և  
չի ուզում հաղորդուել: Հարեւանուհիները սոս-  
կում են այդ անաստուածութիւնից, նրանք  
հաւաքուած՝ համոզում, խնդրում, աղաչում  
են, ի զնւր, Սուսանն անդրդուելի է, ծնօտ-  
ները փակ և դէմքը վճռական:

— Զէ՛, չեմ ուզում, դիտմամբ չեմ ուզում,

որ հոգիս սատանացի բաժին դառնալ. ես կը կանգնեմ Աստծու զահի առաջ և Տիրամօրից գանգատ կ'անեմ և յետոյ այնպիսի բաներ կ'ասեմ, այնպիսի բանե՞ր: Ա՛յ էս չորացած ստիճներս ցոյց կը տամ ու կ'ասեմ, ի՞նչ արիր, Տէ՞ր, մեռանք, փոթոթուեցինք վարում, ճչացինք, աղերսեցինք, ձայներս աստղերին հասաւ և դու մեզ չը հասար. հիմա տար ինձ կպրի կարասը, ես ի՞նչ, ես մի կտոր բոց եմ, ծղիր ինձ կրակի մէջ, բոշը բոցին ի՞նչ կ'անի. հա՛, կպրի կարասը, ես այնտեղ կը պլպրլամ, կը վառուեմ ու կ'սպասեմ, որ ինձ նրան սեւառը բոլոր մայրերը բոց դառած հասնեն ինձ և մենք ամենքս միասին հրդեհ կազմենք, այնպիսի հրդեհ, որպիսին վարումն է, վերան, սև վաթանում, թող երկինքն էլ վառուի նրա պէս, թող երկինքն էլ մոխիր դառնալ, տար, տար ինձ կպրի կարասը, ես բոց եմ, մի կտոր կըակ: Ա՛յ այսպէս կ'ասեմ.

— Որդի, աղաչում եմ, ասաց լացակամած քահանան, այդ ի՞նչ ես ասում, տես, էս ծեր տեղովս ես քեզ աղերսում եմ, մի՛ ասիր այդ, քեզ համար ես էլ պատասխանատու եմ Աստծու առաջ:

— Պատասխանառն ես, դու էլ ասա Տիրամէրը խարե՞ց. մայր էր, սիրտ պիտի ունենար, բայց խարեց. ինքը երջանիկ է, ինքը

զաւակը կրծքին սղմած ունի, իսկ ուրիշին խարե՞ց...

— Տիրամէրը:

— Հա՛ Տիրամէրը:

— Նայիր այստեղ:

Քահանան ցոյց տուեց իր Աւետարանը, նրա երեսի խաչելու թիւնը: Խաչուած Քրիստոսի ոսների տակ սգում էր Աստուածածինը մի խուրծ սրեր միխուած սրտում:

— Ճանաչում ես, շարունակեց քահանան մատր դնելով Աստուածածի վրայ, սա էլ է Տիրամէրը:

Պառաւը նայում էր աչքերը լայն, բերանը բայց, զարմացած:

— Նայիր, նայիր, երկար նայիր, ասում էր քահանան, դու միայն երջանիկ Տիրամէրն ես տեսել, տե՛ս և այս սգաւոր, այս գժբաղդ մայրը: Պառաւը ձգուեց առաջ շնչակտուր, դողդոչուն ձեռքերը մեկնեց և բռնեց Աւետարանը, մօտեցրեց աչքերին:

— Տես, քանի՛ սուր է մտել սիրտը, չէ այն էլ նրա որդին է խաչուած վերեւում:

— Հա՛, հա, նրա Որդին է խաչուած:

— Նա մեռնում է աշխարհի համար, մեր բոլորի համար:

— Նա մեռնում է մեր բոլու համար... իսկ իմ Սաքօն...

— Սաքօն, որդի, է՞հ, նա էլ մեր ու ու  
վէրան աշխարհի... Այդպէս է որդի, մայրելը  
ծնում են երկունքով, պահում են ցաւերով,  
մարդակեր տշխարհը տանում է, տանում,  
ի՞նչ անենք:

— Մայրերը ծնում են երկունքով, պա-  
հում են ցաւերով ու աշխարհը տանում է.  
հա, հա, տանում է անողորմ աշխարհը:

— Սաքօն էլ գնաց, ուր շատերն են գնա-  
ցել նրանից առաջ, և ուր շատերն էլ կ'եր-  
թան նրանից յետոյ, ի՞նչ անենք:

— Սաքօն էլ գնաց, ուր սա՞ է գնացել, հա՛,  
տէրտէր, էս խաչի վրայ Մեռնողը:

— Հա, որդի, նոյն ձանապարհով, աշխար-  
հի համար:

— Մեղայ Աստուծու, մեղայ Աստուծու,  
ես մեղաւոր եմ. պառափ ծայնը կերկերաց,  
արդունքները թափուեցին, նա Աւետարանը  
ողմեց շրթունքներին՝ մրմնչալով,

— Խե՞զն մայրե՞ր, խե՞զն մայրեր...

1904

Վ Ե Ը Պ



ՀՀ Ազգային գրադարան



NL0328327

18.264